Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

ԵՐԿԵՐ

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
1986

ԳՄԴ 84 Հ 1
Մ 555

Կազմեց, ծանոթագրեց, առաջաբանը գրեց և բառարանը պատրաստեց Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆԸ

Մեծարենց Մ.

Մ 555 *Երկեր (Կազմեց, ծանոթագր. և առաջաբանը գրեց Ա. Ս. Շարուրյանը.— Ե.: Սովետ. գրող, 1986. 256 էջ.— (Հայ դաս. գրադարան).*

Արևմտահայ անվանի բանաստեղծ Միսաք Մեծարենցի ներկա ժողովածուն կազմված է ժանրային, ժամանակագրական սկզբունքով. բանաստեղծություններ, գեղարվեստական արձակ, հոդվածներ, նամակներ, թարգմանություններ ու փոխադրություններ։ Հրատարակության հիմքում ընկած է գրողի լիակատար ժողովածուն (Գ. Ա. հրատարակություն, Ե., 1981 թ.)։

Մ $\frac{4702080100\ (428)}{705\ (01)\ 86}$.Ց.86 «Ս»

ԳՄԴ 84 Հ 1

© «Սովետական գրող» հրատարակչություն
Կազմելու, ծանոթագրության, առաջաբանի, բառարանի և ձևավորման համար։ 1986

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

Եկար գունատ ու տրտում,
Աղոթեցիր ու անցար...
...Եվ բուրումներ մնացին
Երիցուկի և ուրցի,
Ու ասես ցավն աշխարհում
Դարձավ աղոթք մի պայծառ,
Ու ասես մահն աշխարհում
Փոխվեց անմահ զրույցի...

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Անցյալ դարի 90-ական թվականների վերջերից քաղաքական հանգամանքների հետևանքով վերածնվեց արևմտահայ գրականության «քաղաքական քարտեզը»: Հայկական ջարդերից հետո արտասահման փախան կամ տարագրվեցին Արփիար Արփիարյանը, Երվանդ Օտյանը, Արշակ Չոպանյանը, Լևոն Բաշալյանը, Երուխանը, Հովհաննես Սեթյանը, մի փոքր ավելի ուշ՝ Ռուբեն Զարդարյանը: Այս ու այն պատճառով Եվրոպայում ու Եգիպտոսում հաստատվեցին Տիգրան Կամսարականը, Ռուբեն Որբերյանը, Առանձարը, Վահան Թեքեյանը, Վահան Մալեզյանը: Օտարության մեջ նրանցից շատերը մնացին գրչի մարդիկ, չմոռացան գրողի ու քաղաքացու իրենց կոչումը, հրապարակեցին արևմտահայ գրականության շատ նշանակալի էջեր, որոնք համակված էին քաղաքացիական կրքոտությամբ և հասարակական նպատակամղվածությամբ: Արտասահմանում էլ առնականացավ Սիամանթոյի ու Վարուժանի հզոր տաղանդը:

Ճիշտ չէր լինի պոլսահայ գրական կյանքում տեսնել միայն անշարժություն, ջլատում ու թմրություն: «Զուլումի» տարիներին այստեղ ևս դանդաղ ու վեհերոտ, բայց և այնպես նկատելի էին դրական ինչ-ինչ տեղաշարժեր: Ավագ սերնդի բոլոր գրողները չէ, որ քաշվեցին ասպարեզից: Գրիգոր Զոհրապն, օրինակ, գրում ու հրապարակում էր

խորունկ մարդկայնությամբ շնչող իր նորավեպերը: Նրան էին հետևում նաև Զապել Եսայանը, Օննիկ Չիֆթե-Սարաֆը: Ամենևին պատահական չէ, որ հենց «Զուլումի» ժամանակաշրջանում ծնվեց ու ճյուղավորվեց «գավառական գրականությունը»: Գրական երիտասարդության առողջ ուժերը հետևում էին արտասահմանյան հրատարակություններին, որոնք Թուրքիա էին թափանցում գաղտնի ճանապարհներով: Տեղական առանձին պարբերականներ, մտահոգված գրականության ճակատագրով, ջանում էին հետաքրքրություն առաջացնել զանազան խնդիրների նկատմամբ: Այդպիսի նպատակներ էին հետապնդում նորավեպի շուրջը բացված բանավեճը, «վաղվան գրականության» առթիվ սկսված ասուլիսը, նորավեպերի ու բանաստեղծությունների մրցույթներ կազմակերպելը, առաջարկվող հարցարանները («Ինչպես կը գրեմ» և այլն):

Բոլոր այս այլաբնույթ տեղաշարժերն ու խմորումները սակայն տարերային ու պատահական էին, չկար գրական հստակ քաղաքականություն: Դարասկզբի արևմտահայ գրականության մեջ տիրում էր բարդ, հակասական, ինչ-որ չափով նաև քաոսային վիճակ: Պարարտ հող էր ստեղծվել միստիկ ու անկումային տրամադրությունների ծաղկման համար: Քաղաքական ու հասարակական հեղձուկ մթնոլորտում, «աղջամղջային» ու «մառախլապատ» բանաստեղծության հորձանուտում էլ հայտնվեց Միսաք Մեծարենցը, որին վիճակվեց կենարար հյութ ներարկել արևմտյան եղող արևմտահայ քնարերգությանը, հանել նրան թմբիրից և ստեղծել նոր որակ:

* * *

Միսաք Մեծարենցը (Մեծատուրյան) ծնվել է 1886-ի հունվարին, Ակնա գավառակի Բինկյան գյուղում: Բարձրիկ լեռներում, կապույտ երկնքի դեմ-դիմաց ծվարած այս գյուղը գուցեև հիշատակվեր աշխարհագրական բառարաններում ու երկրագիտական նյութերում միայն, եթե չդառնար «հիվանդ, հանճարեղ պատանու» ծննդավայր-ներշնչարանը: «Աշխարհից հեռու» այս գյուղն էր, որ պարգևեց նրան բանաստեղծի աստվածեղեն ձիրքը:

Հազիվ վեցամյա մանչուկ, Միսաքին տալիս են սովորելու Բինկյանի Մեսրոպյան վարժարանը: Բայց նա հետաքրքրություն ու հոգեկան բավարարվածություն է գտել դպրոցի պատերից դուրս. առանձնացել է բնության գրկում, ծաղիկներ փնջել, վազվզել այգեստաններում, ընկել թիթեռնիկների ետևից, Եփրատի ափերին ցեխից պատնեշներ է շինել, վեգ է գցել, մասնակցել գյուղական հանդիսություններին ու տոնախմբություններին, ունկնդրել մամիկների հեքիաթներն ու Ակնա անտունիները: 1895-ի աշնանը Բինկյանը ենթարկվել է հարձակման, և Միսաքը մոր հետ հարկադրվել է թողնել հայրենի գյուղն ու տեղափոխվել Սեբաստիա, երեց եղբոր՝ փաստաբան Գևորգ Մեծատուրյանի մոտ: Նա այլևս չտեսավ Բինկյանը, բայց հիշողության մեջ ընդմիշտ մնաց իր «մշկենի, ծաղիկ ու ծափ» գյուղը, մտովի թափառեց Արածանիի գետեզրին, որոնեց բիբլիական անտառներում թևածող «անտես ոգիներին», վայելեց Բինկյանի «երջանիկ գիշերները», արբեց փշատենիի բույրով, զգաց «ըղձանույշի սպիտակ ձեռքի» հպումը, հանդիպեց դյութական հուրիներին, ականջ դրեց պարտեզներում ծայր առած շերին ու պանդուխտի մորմոքուն հայրենիներին: Պատանին Բինկյանի կուսական անտառներից կտրեց իր «եղեգնյա սրինգը», նրա բնությունից խլեց իր կախարդական գույներն ու հնչյունները: Մեծարենցի ստեղծագործություններում հանդիպող գյուղակի դիմաց նստած «երիտասարդ ու պչրոտ» պարտեզները, դեպի գետակ շտապող եղնիկները, գետեզրյա ծառաստանները՝ լացող ուռիներով, բարդիներով, սոսիներով, թմբիներով ու ծայրիներով, բազում-բազում ծաղիկներն ու բույսերը՝ վարդն ու նարգիսը, շահպրակն ու ռեհանը, այծտերևն ու արծվաքաշ, թեֆարիգն ու լեռնակը, ծաթրինն ու հիրիկը, հուսամն ու ուրցը, մոլոշն ու կակաչը, անանուխն ու քրքումը, մրտենիի բույրից գինովցած հովը, այստեղ ու այնտեղ իր թոթով կափկափը ցանող արագիլը, ճամփից-ճամփա թռչող աղավնիները, կարկաչող լեռնային աղբյուրները, ամեն-ամեն բան մոտ ու մտերմիկ էին գյուղից:

Սեբաստիայում պատանին հեշտությամբ չհամակերպվեց նոր պայմաններին: Դաշտավայրային քաղաքն իր խստաշունչ կլիմայով, վամանների ճառակաանական խանութներով, շուկայով, իջևաններով ու գինետներով իսպառ չէր հիշեցնում ծննդավայրի բնությունն ու նրա գեղջուկ կենցաղը: «Գյուղի հագուստներով զինքը Սեբաստիա տարինք,— վերհիշել է բանաստեղծի մայրը:— Կը քաշվեր այգիներու շուքն ու ժամերով միայնակ ծառերը դիտելե վերջ, երեկոյան չոպանի պես տուն կը դառնար»: Այդ տարիներին Արևմյան ազգային վարժարանը բարվոք չէր, ուստի Միսաքը հաճախում է Սահակ Սերայտարյանի մասնավոր դպրոցը:

1898-ից Մեծարենցը դառնում է Մարզվանի ամերիկյան Անատոլիա կոլեջի գիշերօթիկ սան: Այստեղ նա հմտանում է անգլերենին, մասնակցում «Գրական միության» պարապմունքներին, ստանձնում դերեր դպրոցական ներկայացումներում, աշխատակցում «Սոխակ» աշակերտական թերթին: 1901-ին գրողի հայրը՝ Կարապետ աղան, որ սեղանավոր էր Պոլսում, որդուն կանչում է մայրաքաղաք, և Միսաքը նույն տարվա ամռանը, կիսատ թողնելով ուսումը, վերադառնում է Սեբաստիա: Մինչ կհաղթահարվեին անցագրային դժվարությունները, թուրք մսագործների երեխաները, որոնք սիրում էին դաշույններով խաղալ, թիկունքից վիրավորում են նրան: Բանաստեղծն ապաքինվեց, բայց մի քանի տարի անց, սեռական հասունացման հետ, մայրաքաղաքի խոնավ կլիմայի պայմաններում, դաշույնի հարվածը զգացնել տվեց՝ դառնալով հյուծախտի նախապատճառ:

1902-ի սեպտեմբերից Մեծարենցը Պոլսում է: Նա սովորում է Կեդրոնական վարժարանում, հրատարակում «Քահ-քահ» ձեռագիր երգիծաթերթը, զբաղվում առտնին գործերով և ստեղծագործում: Բայց

հիվանդությունը վերստին խորացավ, և 1905-ի փետրվարին բնաջնջող թողեց դպրոցը: Երեք տարի հետո՝ 1908-ի հունիսի 21 (հոդիսի 4)-ին բանաստեղծը փակեց աչքերը:

* * *

Մեծարենցն իր գրական նախափորձերը կատարել է տակավին Մարզվանում: Անատոլիա կոլեջում նրա երբեմնի դասընկերներից մեկը՝ Վահան Նարլյանը վկայել է. «Նիհար, միջահասակ, մելամաղձոտ, խոհեմ պատանի մըն էր Միսաք... Դասարանին մեջ գրիչը ձեռքը գիրքերուն կողը ոտանավորներով կը մրոտեր, նույնպես սերտարանին մեջ դասերը ձգելով, թուղթերու դեզը կը բանար ու կը գրեր շարունակ... Ենչարան կերթար քիչ մը անկողնին վրա երկննալու, հետո կելլեր ու սև մատիտը ձեռքը՝ մահճակալին ետևի պատին վրա ժամերով կը շարժեր. ամեն կողմ սևացուցած էր»:

Բանաստեղծի անդրանիկ ստեղծագործություններից ուշարժան է «Բաբախումներ» ժողովածուն, որ կազմել է 1903-ի գարնանը: Այստեղ ամփոփված են 13 տարաբնույթ քերթվածներ՝ բնանկար, վերհուշ, մահերգ, անձնական հույզ և այլն, որոնց սակայն միավորում է քնարական տխուր շունչն ու ապրումը: Յուրաքանչյուր բանաստեղծության մեջ զգացվում է հեղինակի պատանեկան սրտի բեկբեկ թրթիռը: Քանիցս նա խոսում է իր «մխացող խոհերի», «դառն հոգու», «սգավոր սրտի» մասին: Խայտացող բնությունը, ցերեկների հոծ ժխորը, քաղաքի մայթերին մարող քայլերի արձագանքները, մութ գիշերվա լռության մեջ մայթերը ծեծող տեղատարափը նրա մեջ միայն տխուր խոհեր են ծնում: Նա իրեն մենակ է զգում և հարցնում է.

Պիտի ըլլա՞ օր մ'արդյոք,
Որ դառնամ հին օրերուս,
Պիտի շնչե՞մ լիաթոք
Զովարթությունն անոնց կուս...

Ահա՛ պատանու վշտերի ակունքը. նրա «անհուն տենչերը», «վարդ բաղձանքները» հանգում են «հին օրերին», այսինքն՝ մանկական տարիներին, Բինկյանին ու նրա բնությանը: «Բաբախումներում» Մեծարենցի քնարական հերոսը հասկանում է, թե ո՛րն է իր մեծ վիշտը, զգում է, որ ինքը նույնպես «ցավով ճմած հոգի» է, բայց դեռևս չի կարողանում գտնել վերք-վշտերի սպեղանին: Նա մենակության «սգավոր» հեծեծում է, անհամար հույզերից նրա սիրտը փղձկում է («Տեղատարափ») և տենչում է մեռնելու: Դրա համար էլ նրան սիրելի են լոկ դեղին վարդերը՝ «Խորհրդանշան առանձնացած հոգիներու» («Դեղին վարդեր»):

Մեծարենցը մղվում է դեպի բնությունը, առավելապես դեպի գիշերը, բայց այդ մղումը «Բաբախումներում» տարերային է, ասես եռաթագիտակցական: Առայժմ նա իր համար հայտնագործում է գիշերվա խորհրդավորությունը. «Խորհրդավոր քողարկումի մութին տակ» է, որ թև են առնում նրա «կիսատված խորհուրդները», մութը արթնացնում է «բյուրավոր հիշատակ» («Հիշատակ»):

Բանաստեղը դժգոհ է եղել իր «կանխագույն» ոտանավորներից և դրանցից շատերը, այդ թվում «Բաբախումներ» ժողովածուն, չի տպագրել, իսկ լույս տեսածներն էլ, սակավ բացառությամբ, չի կարևորել: 1906-ի սկզբին Մեծարենցը կազմեց նոր ժողովածու և փորձեց հրատարակել «Մասիսի» մատենադարան» մատենաշարով: Սակայն Եղիազարի Արմենի հետ ունեցած հայտնի գժտությունը, գրաքննական խոչընդոտները պատճառ դարձան, որ հատորիկը ընթերցողին հանձնվի մեկ տարի ուշացումով՝ 1907-ի գարնանը:

Հեղինակը ժողովածուին տվել էր «Ոսկի արիշին տակ» խորագիրը, բայց գրաքննության պահանջով հրաժարվեց դրանից և անվանեց «Ծիածան»: Գրաքննությունը կարող էր «անհասկանալի» ու «կասկածելի» համարել նաև «Ծիածան» վերնագիրը, քանի որ գրքույկում բովանդակված 38 քերթվածներից ոչ մեկը ուղղակիորեն ծիածանի մասին չէ, այլև առհասարակ բացակայում են «ծիածանային» բնորոշ պատկերները: Եվ եթե այդուհանդերձ մեկ-երկու անգամ բանաստեղծը վկայակոչում է ծիածանը, ապա ոչ թե այդ հրաշալի օդերևույթով սքանչանալու, այլ իր հույզերն ու տենչերը նրա գույներով օծելու համար: Ժողովածուի խորագիրն ունի անառարկայական, յուրովի-փոխաբերական իմաստ: «Ինքնադատության փորձ մը» հոդվածում հեղինակը հուշում է, թե ինչու է վերնագրել «Ծիածան». «Տեսնենք հիմակ թե բանաստեղծին մտքին մեջեն ինչպե՞ս ծիածանվեր են հավիտենական զգացումներն ու մտածումները»: Զգացումների ու մտածումների ծիածանումը Մեծարենցի համար գեղարվեստական մտածողություն էր, գեղագիտական դավանանք, որ ինքը՝ գրողը բանաձևել է այսպես. «Բանաստեղծը Բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ բանաստեղծ չէ՛ իրապես. քերթվածները իբրև բան պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանույն զորությունը: Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա, բոլոր գոյությունների համադրական թրթռումովը տրոփուն»: Բանաստեղծին վերապահելով նման բարձր պաշտոն, Մեծարենցն ինքն էլ կիրարկում էր իր հռչակած սկզբունքը: Նրա տողերը թաթավուն են բնությամբ, բայց ոչ թե մեռյալ կամ քարացած, այլ շարժուն ու շնչող, զգացող ու կենդանի բնությամբ: Բանաստեղծը չի թաքցրել, որ «Ծիածանի» «միակ արժանիքը» «մարդու և բնության անմիջական հաղորդության» ձգտումն է: «Մարդու և բնության անմիջական հաղորդությունը», որին գրականագետները սովորաբար տալիս են բնութենապաշտություն անունը, իրոք Մեծարենցի աշխարհայացքի ու գեղարվեստական մտածողության տերապետող առանձնահատկությունն է:

Բնության հաղորդակցվելը իր զանազանակերպ դրսևորումներով Մեծարենցի քերթվածներում ունի հասարակական ենթիմաստ: Նա բնության միջոցով բաղձում է մի ուրիշ աշխարհ, որտեղ չմրսեին «հեք երազներն իմ որբուկ», որը նրա համար դառնար «ծափ ու ծաղիկ»: Գրողը տագնապած հարցնում է. «Ո՞ւր, արդյոք ուր պիտի հանգի Կույս ու ծաղիկ երազներիս դեղձան շառափը մարմրուն»: Հաճախ նրա անուրջի թելը «լուսածրար երկինքներու ճամբաներեն լայն ու լռին» տանում է «կայքն ադամանդ աշխարհներուն» («Կապույտ հածումներ»): Նա լսում է «դյութիչ» աշխարհների «տարտամ», «անուշ» ու «հեռավոր» ձայները, «որոնք անդին զիս կը տանեն երանաստան մը բաղձոտ» («Գետափի երազանք»): Նրա տենչանքների մեղուները թառում են «հեռավոր ծաղկաստաններում» («Մեղուները»), և բանաստեղծի հոգու մեջ անդրադառնում է «անծանոթ աշխարհներուն» «կըրկներևույթը գունագեղ» («Ցայգն է պայծառ...»: Մեծարենցը հավատում է իր Երազին և սպասում նրա իրականանալուն.

Անձուկին բոցը զիս պաշարե՞ց. Ըսպասման հիվա՞նդն եմ.
Հոգեսարս դողերով և հուրքով միշտ ցայգերն են հընդի.
Գիշերներն ես համբուն կըսպասեմ ծիրանի այն դարձին.
Ու ցայգուն ալ կանցնիմ ավազուտ ափունքեն՝ դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլցցուն:

«Ծիածանում» Մեծարենցը բնությանն առնչակցվում է ամենից առաջ գիշերվա միջոցով: Մինչև Մեծարենցը մեր բանաստեղծների համար գիշերը եղել է բնանկար, գիշերային պատկերները ուղեկցել կամ հանդիպադրվել են զգացմունքին, երբեմն կրել աշխարհայացքային ինչ-ինչ երանգներ: Մինչդեռ Մեծարենցի համար գիշերը ոչ անցողիկ հրապուրանք է, ոչ էլ սոսկ տևական թովչանք, այլ աշխարհայացքային առանցքային ու մնայուն գիծ: Մեր բանաստեղծության մեջ Մեծարենցն ստեղծեց իսկական գիշերերգություններ՝ դառնալով ամենամեծ գիշերերգակը: Նա հանձնվում է գիշերներին՝ ազատվելու համար աշխարհի սին ճղճիմություններից, ամոքելու «օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ» հոգին: Այդ միտումն անթաքույց է արտահայտված «Ցայգանվագ» արձակ քերթվածում. «Որքա՞ն քաղցր է սուզվիլ քո պայծառ խորհուրդիդ ջինջ անհունության մեջ, թո՛ղ որ հանգչեցնեմ հոգնաբեկ ճակատս սփոփանքիդ շողերով և մոռանամ պահ մը անսահման խանդաղատանքիդ մեջ փանաքի վրդովումներն աշխարհի ունայնություններուն, ո՛վ սուրբ ու պաշտելի գիշերը հոգիներու Վերածնունդին...»: Գրողը չի ուզում և չի էլ կարող ապրել այդպիսի «վրդովումներով»: Եվ գիշերը դառնում է «աշխարհի ունայնությունները» մոռանալու միջոց:

«Ծիածանը» բացվում է մի բանաստեղծությամբ, որ վերնագրված է «Զմրան պարզ գիշեր» և որը գիշերերգության մի ճշմարիտ գլուխգործոց է.

Համբույրիդ, գիշե՞ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

Պարզ, լուսածածան, հրաշալի՞ գիշեր,
Հոսե՛ սրտիս մեջ դյութանքիդ ալիք.
Ծերմակ երազիդ ցայտքերեն մեղրիկ
Պուտ պուտ կաթեցո՛ւր հոգվույս սիրաջեր:

Ընտրված են ամենանուրբ երանգները, ամենաշքեղ ու անսպասելի փոխաբերական պատկերները: Քիչ բանաստեղծների է տրված տեսնել ձմեռային գիշերվա **ճերմակ երազի** ցայտքերը, զգալ շաղերի **թաց կախարդանքը...** Բայց քերթվածը գիշերվա հրաշագեղությունների մասին չէ: Մեծարենցը չի գրել փառաբանություն-ներբող, այլ պաղատանք-երկրպագություն: Դրա համար էլ շեշտերը հոետորական-հանդիսավոր չեն, այլ աղաչական-աղերսալի: Գիշերն ամենից առաջ մի սրբություն է, որի անմեկնելի խորհուրդները միայն կարող են իրեն բերել ամոքանք, մոռացնել տալ «աղի» հուշերը: Բանաստեղծը ծնրադրում է գիշերվա առաջ՝ տենչալով անէանալ նրա մեջ.

Ցնորաբե՞ր գիշեր, ա՜հ, ընդունե՜ զիս,
Ընդունե՜, միստիք ո՜վ անդորրություն...

Նա միայն չգերվեց «անուշ», «հեշտագին», «հաշիշով ու բալասանով» օծուն գիշերներով, միայն կախարդված չբացականչեց. «Ի՜նչ հեշտին է մթնշաղն այս սատափե»: Արևելքի «ջինջ» շափյուղազարդ երկինքով» գիշերվա մեջ բանաստեղծը չտեսավ սոսկ «հեշտություն» ու «բուրմունք» («Ցայգանվագ»): Նրա հոգին նույնպես մի «անծիր ցայգ» էր, որ սպեղանու և գրգանքի կարիք էր զգում: Դեպի խավար խոնարհվող իրիկվա «բուրմունքներու հաշիշը» նրա հոգում ցանում էր նաև «հեշտանք մը թույլ» («Խոնջ իրիկունն արագորեն...»), նա հափրացած, ուշակորույս, ըմպում է «գիշերներու գինին խավարածոր» («Մեղուները»), վերջալույսի մեջ որսում «անրջածուփ, նվաղ բույրերն երերուն» («Իրիկվան ձայներ»), անձկում «հեշտ», փալփլուն գիշերներու անդորրություն մը ցնորական» («Ցնորոտ անդորրություններ»), գիշերների մեջ երջանկանում՝ ունենալով իր «երազի պահերը»: Մեծարենցյան գիշերները վեհացնում են ու երջանկացնում: Նրա գիշերերգերում, իր իսկ բառերով ասած, «սերը միշտ կը վերածաղկի»: Երբեմն գիշերն արթնացնում է «սիրո հուշեր լուսավետ», և բանաստեղծի հոգում վերստին այրվում է սիրած աղջկա աչքերի «ծիրանեծին բոցը հրուտ» («Կայծեր», «Թրթռումներ»): Երբեմն էլ մթության մեջ նա ավելի սուր է զգում «ցավոտ Սիրո հարվածը» («Նոպաները»): Հովից ու ծովից գիշերով եկող համբույրները նրա համար դառնում Տոն ու Կիրակի.

Բայց լայնամ իմ հոգեղույս քիչ քիչ կը մաքի,
Շրթունքս են ծարավ միակ համբույրին,...

Բանաստեղծի քնարական հերոսին նույնիսկ թվում է, թե իր հոգին ունի «սիրո խանդ ու հրայրքներուն ձանձրույթը»: Բայց սրանք վաղանցիկ պահեր են: Մշտակա է մեկ այլ զգացում, որ այնպես խոր ու սեղմ արտահայտված է «Այգերգ» քերթվածի մի տողում. «Տարիներով իմ երազս էր սիրո գարուն մը խաղաղիկ»: «Ծիածանի» սիրերգության մեջ իշխողն անա սիրո այդ երազանքն է, որով ապրում է Մեծարենցը: Նա այլևս չի որոնում իրական, երկրածին ու մարմնավոր սեր, սերը դատնում է «երազանքի թոշ ծաղիկ», տենչում է լոկ անրջական համբույր ու հուրիներ: Ու դարձյալ օգնության է հասնում ամենափոքրիկ գիշերը.

Այս գիշեր ջերմ ու երազված կայծեր հոգեղույս խորերն իջնան.
Կը մարեմ լույսը լամպարիս ու կերազեմ մը բարի գեղեն:
Ծանթե աչքեր, բոցե թեներ մը ուռածումիս կանցնեն քովեն.
Եվ հուրիներ՝ նոր հոլանած ալապաստրը իրենց կուրծքին՝
Որոնց համար շրթունքներս անթիվ իղձեր կը թրթռին:

«Ծիածանի» բնութենապաշտական հյուսվածքում գիշերը երազ է, Սեր, այլն՝ Սպասում: Գիշերվա խավարի մեջ բանաստեղծը միշտ էլ տեսնում է Լույսը, որոնում «լուսեղեն ճամբան»: Նա կապույտների խորհուրդի մեջ, երազում է «վաղորդայններն երջանիկ», «բողբոջ գարնան» արևաշող հույսերն են վերադառնում գրողին, երգում է «Արեվին կյանքն հրեղեն, Արևին փառքն անմտվեր» և թախանձում է.

Հիվա՜նդ եմ, բարի՜ արև, շողա՜, շողա՜...
Հոգիս թոչնիկ մը է,
Օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ...

Մեծարենցը չի նախապատվում ոչ քաղաքային կյանքի ժխորը, ոչ էլ բնության խոովահույզ պահերը՝ շանթ ու ամպրոպ, մրրիկ ու մոլեգին քամի: Նրա համար մտերմիկ են միայն բնության մեղմ ու տրխրաբույր պահերը՝ անտառների մեջ մենիկ լռվող հեղեղատի սիրերգը, լույս ու տապով գինովցած աքասիաները, բարդիների խարշափը, հնամի ծառերի տարտամ ձայները, ուտի հեծքը, մոմերի լույսի արցունքը, խունկի թավիշ մշուշը, արևմարքի ծիրանի հնքը, ուտիների հեղուկ նվագը, սոսիի թախծոտ օրհներգը, իրիկվան տարփոտ ձայները և այլն:

Մեծարենցյան բնապատկերներում հաճախ կհանդիպեք հեքիաթային հավերժահարսերի և ոգիների՝ օդանուշների ու պայիկների, ընձանուշների ու հուրիների, պարիկների ու ծաղկանուշների: Օդանուշը լոկ ոսկեծոպ լույս չի հյուսում, ոչ էլ պայիկն է հագնում լույսի մետաքսի թելերով բանված իմ պատմությանը. բանաստեղծը ոգիներից և փերիներից է ակնկալում իր երջանկությունը.

Ես կերազեմ ծառերուն տակ ու կքաղաքեմ խոլաբաղ
Լույս պարիկին՝ որ իղձերս պըտակեղու պիտի գար:

Մեծարենցի ազատաբնակ երազներն ու տենչանքները, ցնորքներն ու տեսիլները գեղագիտական ընդդիմություն էին ժամանակի ու իրականության հանդեպ: Միայն թե այդ դիմակայումը, նրա ցավն ու մորմոքը երբեք չընդունեցին կրքոտ, բուռն, հուզախոով ձևեր: «Երբեմն ուզած եմ ուժով գրել, բայց չեմ հաջողած,— խոստովանել է նա:— Իմ գործս չէ պոռալը, ես գորովոտ, ես եռանդապաշտ կուզեմ ըլլալ, ու իմ ձայնս շշուկ մըն է, փսփսուք մըն է ապպես»: Դրա համար է, որ Մեծարենցը Դուրյանի քնարը համարել է «թունդ», իսկ իր բանաստեղծությունները ոչ միայն շշուկ ու փսփսուք, այլև՝ «աղոթք» ու «պաղատանք»: Բանաստեղծը կարողացավ ներդաշնակել բնությունն ու զգացմունքը: Բնության խաղաղիկ և թախծաշունչ պահերը համատրոփ են «Ծիածանի» քնարական հերոսի զգացմունքներին, նրա շարժումները դառնում են պաղատագին, շունչն՝ աղերսալոծ, ճակատը՝ հոգնաբեկ, բազուկները՝ խաչանիշ: Ժողովածուում բնության և զգացմունքի կապը երկկողմանի է ու անլուծանելի: Նրա տաղերում բնությունը նույնպես արբեցնում է ու տխրում, այլև երազում ու ըղձում: «Գետը համբույրի մը երազով դեպի ափունք կը թեքի», «Դաշտերու մեջ հարսնուկներու բոսոր իղձերը կը ցամքին», «Ջահերն հիմակ կը երազե՞ն համակ զյումրյուր ու թարշիշ», «Այգն է ծաղիկ երազով լի...» և այլն: Չկա թեկուզ մի քերթված, որտեղ «զգացմունքներն ու մտածումները» լինեն ինքնագո, հանդես գան առանձնակի: Ամենուր դրանք հանդերձված են «տեսարաններով» «ծիածանված» բնությամբ:

«Ծիածանը» ոչ միայն Մեծարենցի ինքնահաստատումն էր որպես բանաստեղծի, այլև դարասկզբի արևմտահայ գրականության մեջ քնարական այնպիսի նոր մակարդակ, ինչպիսին Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն արևելահայ բանաստեղծության համար:

1907-ի աշնանը Մեծարենցը հրատարակեց «Նոր տաղեր» ժողովածուն: Դեռևս «Ինքնաստության փորձ մը» հոդվածում բանաստեղծը դիտել էր, թե «Ծիածանն» «ամբողջովին բնությունով տոգորված չէ» պարզաբանել էր. «Բնությունը գլխագիրով լեռն ու դաշտը, հեղեղատն ու առուն չեն մինակ»: Իր նոր գրքույկում անա նա բնությունը ներկայացրեց ավելի ընդգրկուն: Բանաստեղծը միայն չի գրգռվում իրիկուններին ու կարոտում արևին, սոսկ մառախուղ ու անձրև չի նկարագրում, զրուցում ծաղիկների ու լուսնի հետ կամ վազում աշնան հերարձակ հովի ետևից: Այստեղ նրա ստեղծագործական հիմնարար սկզբունքը՝ զգացումների ու մտածումների «ծիածանումը», բնավ չի խախտված, բայց բնության մեջ ներառված է նաև գեղջկական առօրյան ու մարդը: Մանկության զորեղ ու անջինջ տպավորությունները ավելի քան մեկ տասնամյակ հետո վերակենդանացան «Զրուցք» քերթվածում՝ ստեղծելով զարմանալի իրական, ամբողջական և հյուսքեղ պատկեր.

Հոյ՜ հո՜յ, գետը կը թրջե ցայգուն քամակն արծաթված,
Իր հորձքին մեջ ծեծելով անդուլ խարակն ու խութեր.
Հոյ՜ հո՜յ, առուն հորդառատ դալարին ծոցն է նետվեր
Գաղջ տարփանքովն իր ջուրին՝ ուր արևը կապրի դեռ։

Մեծարենցի սերը «Նոր տաղերում» դարձյալ երազային է, բայց «Ջուրեն դարձին» բանաստեղծության մեջ նրա սիրո առարկան միանգամայն երկրային է։ Նա գեղջուկ աղջիկն է՝ ներկայացված կենդանի ու տեսուն։ Ժողովածուում չկա մի բնանկար, որ չունենա «գյուղական ծագում», իսկ «գյուղին տեսարանները», ի տարբերություն «Ծիածանի», հաճախ վերարտադրված են նկարչական այնպիսի մանրամասնություններով, այնքան առարկայական են, որ արթնացնում են իսկական տեսապատկերային զգացողություն։ Ահա, օրինակ, գյուղի առավոտը.

Աղավնիներ, լաչակներու պես մետաքսե գունագեղ,
Ճամբե ճամբա կը թռչըտին թույլ ծածանքով վաղանցիկ։
Աղբյուրին լուրջ ջուրերուն մեջ ճառագայթ մը կիյնա շեղ,
Աղբյուրին հարթ քարին վրա՝ ձայնն հոտաղին երգեցիկ,
Աղբյուրին զով ծորակին հուպ՝ համբույրն հովին առտըվան։

«Գյուղին տեսարանների», գեղջկական առօրյայի և բնապատկերների նման նկարագրությունները աննախադեպ էին արևմտահայ բանաստեղծության մեջ։ Գավառը դարձել էր արձակագիրների՝ Թլկատինցիի, Ռ. Զարդարյանի, Մշո Գեղամի (Տեր-Կարապետյան) և այլոց ստեղծագործությունների նյութ, բայց մինչև Մեծարենցը իսպառ մնացել էր բանաստեղծների տեսադաշտից դուրս։ «Նոր տաղերով» Մեծարենցը ներկայանում էր այն անզուգ ստեղծագործողը, որը արևմտահայ բանաստեղծության համար հայտնաբերեց գյուղաշխարհն ու նրա հմայքը։

«Նոր տաղերն», իրոք, բանաստեղծի ծննդավայրի «հարազատ ցոլացուցիչն» է։ Բայց Բինկյանն ու գյուղական «մտերմիկ տեսիլները» չեն դառնում սոսկ հուշի և քնարական խորհրդածության առարկա։ Ժողովածուում ընդլայնված ու խորացված է «Ծիածանի» բնութենապաշտական գիծը։ Այստեղ բնության ըմբռնումը հիրավի համապարփակ է։ «Ինքնադատության փորձ մը» հոդվածում հեղինակը մատնանշել էր «Ծիածանի» առանձին բանաստեղծությունների «հիվանդագին, ընկճող տխրությունը», որի պատճառը սեփական խոստովանությամբ իր իսկ կյանքի անձնական հանգամանքներն էին։ «Նոր տաղերը» կազմելիս գրողն ավելի ծանր հիվանդ էր, զգում էր Անխուսափելիի շունչը։ Ժողովածուի մի քանի տաղերում նա վերստին խոսում է իր «մթոտ հոգու», «ցավի» մասին, բայց դա արդեն ուրիշ ցավ էր։ Անձրևը, համանուն բանաստեղծության մեջ, գրգանք ու անուրջ է պարգևում բանաստեղծին, տամկանում իր «ծարավահյուծ», «որբևայրի» իրիկունների կապույտ շուշանի վրա։

Մեծարենցն ունի երազների, ցնորքների, անուրջների, իղձերի, բաղձանքների ցավ։ «Ծիածանում» դրանք դեղնում էին անորոշ հեռուներում, որոնում «դյութիչ», «ադամանդյա» աշխարհներ»։ Իսկ «Նոր տաղերում» նա արդեն գտել է իր երանաստանը»։ Դա ընդհանրապես Բնությունն է, «բնությունը գլխագիրով»։ Բնության Հյուղում բանաստեղծն ընդհանրապես երջանիկ կլիներ, այն կարող էր իրենը լիներ, բայց իրենը չէր, մոտիկ էր ու միաժամանակ հեռու։ Այստեղից էլ Մեծարենցի տաղերում անթեղված ներքին, չճչացող, խուլ տառապանքը։ Բնությունը նրա համար մնաց որպես անհասանելի երազանք, որպես իղձ ու փափագ։ Ուստի «Նոր տաղերում» էլ «Ծիածանի» նման դարձյալ ու դարձյալ օգնության է կանչում պարիկներին, ծաղկանուշներին, նայադներին, օդանուշներին ու շահարիկներին՝ հասնելու համար իր Երազին.

Օ՜հ, զիս հիմակ Հյուղակին դուռը տարեք,
Լուսաշապիկ օդանուշներն իրիկվան,
Ավազանին մոտ, ուրիին շուքին տակ՝
Օ՜հ, զիս հիմակ Հյուղակին դո՜ւռը տարեք...

Սա այն է, ինչ Սիամանթոն անվանում էր **հայրենացավ**, իսկ Վարուժանը՝ **կարոտախտ**։ Մեծարենցի ստեղծագործության մեջ հասկանալի պատճառներով կարոտախտը չէր կարող ունենալ քաղաքական կամ հասարակական շեշտված միտում։ Նրա քերթվածներում Բնության կարոտը նույնանում էր ծննդավայրի, սիրո, երջանկության կարոտին, այդ ամենը միահյուսվում ու շաղախվում էր բնութենապաշտական ընկալումներով։

Բնության մեծարենցյան ըմբռնումները, անկախ դրսևորման եղանակներից, ուղեկցվում էին բացերև կամ թաքուն փիլիսոփայական խոհերով։ Անգամ «զուտ նկարագրական» տաղերում, որտեղ բանաստեղծը վարագուրել էր իր «եսը»՝ մնալով «չեզոք», նկատելի է բնության ու մարդու ներդաշնակությունը։ «Իրիկնային» քերթվածում արևն ու մշակը բաժանվում են միմյանցից հարազատի նման. «Լո՜ւռ՝ ձեռքերնին ճակտին դրած մեկմեկու. Ու՝ թիկնադարձ՝ արևն ա՜լ տուն կը դառնա Լեռներեն վեր՝ ինչպես մըշակն իջավ գյուղ»։ Բնության հետ գրողը սրտակից էր, հասնում էր ճշմարիտ փոխըմբռնման։ Ահա սքանչելի «Հովը»՝ մեկը այն «նկարագրական» գործերից, որը սակայն մղում է փիլիսոփայական մտորումների։ Աշնան հերարձակ հովը մատնահարում է բանաստեղծի պատուհանն ու անցնում։ Ինքը ընդունում է այդ հրավերն ու վազում հովի ետևից։ Բայց սա խույս է տալիս, դարպասում թփին, ջրին, տերևին, ընկնում լճակի գիրկը կամ թառում ծառի կատարին, քրքջում, «Շաչ, ապտակ մը կը զարնե երեսիս» ու նորից փախչում.

Եվ երբ հուսատ կը հեռանամ թիկնադարձ,
Կըռնակես վե՜ր կը մագլի,
Կամ մագերըս կուզե համրել, կամ հանկարծ
Ուժգին մեջքիս կը փարի։

Ո՛չ մի տրտունջ, ո՛չ մի քրթմնջյուն: Բանաստեղծը դարձյալ «օտար» է, ոչինչ չի ասում իր զգացածի ու ապրումների մասին: Դրա հարկը չկա էլ. այն անմիջականությունը, շարժուն, խաղացկուն տողերը, այն զվարթ ոճը, որով ներկայացնում է այս «անհշան» դրվագը, համոզում են, որ իրեն անչափ ախորժելի է «անառակ» հովի ընկերակցությունը: Նրանք հասկանում են միմյանց: Նրանք մտերիմներ են:

Ծաղիկները, բույսերը, արևը, լուսինը, տերևները, իրիկունը, անձրևը, հովը, մառախուղը դառնում են «տիեզերքի հետ խոսակցելու», հույզերն ու զգացումները «ծիածանելու» միջոց: Բանաստեղծն իր «անուրջի ցայտքերը»՝ «վարդով գծգծված անհուպ շուրթերու», «անկյուն» ու «անանց» համբույրը ակնկալում էր հուսամից ու ուրցից, վարդի թերթերից ու թեֆարիգից: «Բնության սիրով» բարախելու մեծարենցյան պահանջն ուղղված էր անհատապաշտության ու եսականության դեմ: «Եսին տաղտկալի ոչնչաբանություններին» ու «անմարդկային անձնաբանություններին» նա հակադրում էր բանաստեղծի սրտի «համաշխարհիկ բաբախումները»: Սա Մեծարենցի աշխարհայացքի առանցքային գիծն է, որի ամենաուժեղ արտահայտությունն է «Ըլլայի՜, ըլլայի» շարքը: Այս ընդհանուր խորագրի տակ ամփոփված բանաստեղծություններում հեղինակի ցանկությունը մեկ է՝ ամոքել, օգնել ու երջանկացնել մարդկանց: Բայց մարդասիրական միտումը դրսևորված է ոչ թե ավետարանական «սիրեցե՛ք զմիմյանս» բարոյախոսությամբ, ոչ թե անհատի ուժեղ կամքի դրվատմամբ, ոչ թե անձնազոհության ցույցերով, այլ իրիկուն, հով ու հյուղ դառնալու իղձով: Բնությունն ինքը ամենամեծ մարդն է և ավելի լավ կարող է հասկանալ ուրիշ մարդկանց: Ուստիև Մեծարենցը մարդուն ափոփելու համար բաղձում է փոխակերպվել իրիկվա, հովի կամ հյուղի: Բանաստեղծի համար իրիկունն, օրինակ, օրվա սոսկական պահը չէ. այն լի է թռչունների, մարդկանց երգով, տրոփուն է «տարրերուն աղաղակովը», լեցուն զանգակի «երկնաճեմ ղողանջներով», օվկիանոսի «գոռ ծափով» ու սյուքի «ծաղիկ մեղեդիքովն», այն նաև «համայնական է, չքնաղ, քաղցրիկ լուսագես»: Հետևաբար միայն նա կարող է «ամեն անցորդի», ամեն հոգիի» և «ամենուն» տալ իր համբույրը, հուրն ու ոսկին: Երբ Մեծարենցը խոսում է «ամենուն» պիտանի լինելու մասին, ապա սրանից չպետք է մակաբերել, թե նրա հումանիզմն ունի ինչ-որ անորոշ, վերացական կամ «տիեզերական» բնույթ: Հենց նույն «Իրիկունը» քերթվածում նա տենչում է իր ցոլքից «ոգևոր աղջկան մարող ճրագին» բոցեր տալու մասին, ինչը ամենայն որոշակիությամբ վկայում է, թե ո՛ւմ էին հասցեագրված նրա «ըլլայիները»: Դա ավելի են հաստատում «Հովը» և «Հյուղը» քերթվածները, որոնցում արդեն աներկմտորեն հիշվում են «ձկնորսները», «ձյունին մեջ սառող մարդը», «անճրագ խուղերը», հողի վրա գալարվող «տղաքերը», «անսվաղ մսնուկները», «որդեկորույս մայրը», «ձյունապատ հեք մարդը»: Նման հումանիստական ըմբռնումները հարկավ հայեցական են (ուրիշ կերպ չէր էլ կարող լինել բնութենապաշտությամբ տոգորուն հումանիզմը), բայց և

անտարակուսելի է, որ դրանք պատանու աշխարհայացքին հաղորդում են դեմոկրատական վառ երանգ:

Գրողը հրաժարվեց բառի սովորական, բառարանային գործածությունից, նախընտրեց բառի ու պատկերի այլաբանականությունը, բազմանշանակությունը, իմաստի տրամախաչումը: Դրանք նրա պատկերներին հաճախ են հաղորդում անսովոր ու ինքնօրինակ բնույթ: «Անիկա նկարիչ ծնած է,— գրել է Հակոբ Օշականը:— Ու անիկա զգացումներ իբրև գույն տեսնելե ետք, փափաքներ, ներքին էրևույթներն ալ իբրև գույն դուրս պիտի տա»: Անբարյացակամ քննադատները ջանացել են Մեծարենցին անվերապահորեն կապել խորհրդանշականության (սիմվոլիզմի) հետ: Բանաստեղծը չէր ժխտում, որ իրեն ազդակ է ծառայել նաև ֆրանսիական գրականությունը, սակայն անմիջապես զգուշացրել է, թե այդ ազդեցությունը չպետք է բացարձականացվի: Այս կապակցությամբ ուշագրավ կարծիք է արտահայտել ֆրանսիացի քննադատ Լյուկ Անրի Մարսելը. «Ան սիրեց ֆրանսիացի խորհրդապաշտները՝ առանց վարակվելու անոնց թերություններեն... Մոլորություններ չունի Մեծարենց՝ արվեստակյալ թե ոչ... Աչքերը բաց խորհրդապաշտ մ'է անիկա»:

Մեծարենցը տենչում էր վերադառնալ իր ծննդավայրը, փայփայում էր ստեղծագործական նոր ծրագրեր, որոնք տարաբախտաբար չիրականացան: Կյանքի վերջին տարիներին, ի շարս մի քանի գործերի, նա ստեղծեց նաև հայ բանաստեղծության ամենահոյակապ հրաշալիքներից մեկը՝ «Տո՜ւր ինձի, Տեր...» քերթվածը, որ հեղինակը համարել է «Արդի մարդուն Հայր մերը»: Դրանով իսկ նա իր աղոթք-բանաստեղծության մեջ դրել է նոր, ժամանակակից բովանդակություն, առաջադրել իր ընկալումները քսաներորդ դարի մարդու բարոյական դավանանքի վերաբերյալ, հակադրվել բուրժուական եսամոլությանը: Մեծարենցը պնդելով պնդում էր, որ արդի մարդու հավատո հանգանակը պետք է լինի հրաժարումը եսական երջանկությունից՝ հանուն այլոց երջանկության: Նա սոսկմամբ է մտածում, որ ինքը (կարդա՝ արդի մարդը) ի սեր անձնական ուրախության կարող է մոռանալ ուրիշների վիշտն ու հոգսը.

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական,
Ու չըլլա որ ուրիշներու կոծն ու կական
Խեղդել ուզեմ ջըրվեժին մեջ դափիս ձայնին:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական,
Ու չըլլա՜ որ ծափիս ձայնին երգը գուժկան
Եսիս սենյա՜կն ունենա՝ ցո՜ւրտ առանձնարան:

Երբ մտածում ես, որ այս տողերի հեղինակը մի պատանի էր, որ գամված էր անկողնին և զգում էր մոտալուտ մահվան շունչը, որ ամենից շատ ինքն ուներ «անձնական ուրախության» կարիքը, բայց տառապում էր «պարզ մարդերուն՝ գեղջուկին, բանվորին» համար, չես

կարող չխոստովանել, որ մեր առջև հիրավի մի վիթխարի անհատականություն էր՝ բանաստեղծական, քաղաքացիական ու մարդկային ազնվագույն նկարագրով:

... 1908-ը Միսաք Մեծարենցի կյանքի վերջին տարին էր: Պատանու երկրավոր կյանքը ողբերգականորեն կարճ տևեց: Բայց նրա մահվան տարեթիվը դարձավ սկիզբը մի «հրաշալի հարության», մի երկրորդ՝ ոգևոր կյանքի, որով ապրում են միայն մեծերը և որը երբեք չի ավարտվում:

ԱԼԲԵՐՏ ՇԱՐՈՒՐՅԱՆ

ԲԱԲԱԽՈՒՄՆԵՐ

<1901—1903>

ԳԻՇԵՐԻՆ ԵՐԱԶԱՆՔԸ

Աղջամուղջին մեջ գիշերը կ՚երազե
Պայծառ այգուն վառ շրթները կեռասե.
Ու ցնծության լույս աստղերը կը ժպտին
Հրաշափառ գոգն հրճվանքի կապույտին.

Բայց երբեմն ալ մղձավանջի մը մեջ թունդ
Գիշերն այգը կ՚երազե զերթ մեկ անդունդ.
Ու հեքեն վերջ ոռնումներու բիրտ հովին
Անձրևի հորդ արցունքները կը թորին։

1903, հունվար

ՀԻՇԱՏԱԿԸ

Կ. Մկրտիչյանի հիշատակին

Զմրան ցրտին հովերեն վերջ
Զըվարթ գարունը ժպտեցավ.
Ընձյուղեցան թուփերն, ու պերճ
Ծաղիկները ծլան կարգավ.

Բայց հիշատակն անոր, ավա՜ղ,
Հողին տակը թաղված մնաց.
Լքված հոգվույն անունը վաղ
Մոռացոնքի վիհին գնաց։

1902, հոկտեմբեր

ՓՈՒՆՋԵՐԸ

Գ. Շահինյանի հիշատակին

Դեռ չողջունած երազներու ջինջ առտուն՝
Հովեն փչված մոմի մը պես շիջար դուն։
Տերևին հետ հովերն ըզքեզ ալ տարին
Միացընել մահվան ահեղ շրջպարին։

Հիշատակի ծաղիկներու փունջեր թարմ
Քու շիրիմիդ վրա սրփռել կ՚ուղարկեմ.
Փունջեր՝ ցողված արցունքներուս շիթերեն,
Զոր հեռավոր բաբեկամեդ կը բերեն։

<1903, հունվար>

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Այս գիշեր հագված, սգված նոր տարին
Առտվան լույսին կըսպասե տենդոտ.
Ոգիներ անդարձ կորզեցին տարի՞ն
Մեր գրկեն հինին ձայները ծանոթ։

Նոր տարվո ընծա պայծառ լուսինկան
Սազեր է գյուղին լեռնեքը բոլոր.
Երգերը ծերին, ճիչերը մանկան
Կ՚արձագանգեն թունդ խազերով մոլոր։

Իղձերու շարք մը պլլված սրտին՝
Վառ հույզերու մեջ կ՚օրրե զայն ուժգին.
Բորբոքած հուրքովն հույզերու անշեջ
Կը ծփան սիրտերն ըղձանքներու մեջ։

Գիշերվա վերջին պահերուն լռին
Ձայներն ու լույսեր հանկարծ կը մարին.
Եվ բեհեզներովն կապույտ կամարին
Պճնրված աշխարհ կու գա նոր տարին։

1902, դեկտեմբեր

ԱՍՏՂԵՐԸ

Լույսի բիծեր ծիրանի
Կ՚ասղնտեն քողքը մութին.
Լուսնի ցոլքեր կ՚անհետին
Խորքը ծովուն հոլանի։

Կապույտը կը ծածանի
Կամարին ջինջ ու հանդարտ.
Հրապույրն անոր գեղանի
Կ՚առինքնե աչքերն անթարթ։

***

Աստղերը լուռ կը հալին
Մութին մեջ մինչև առաու.
Նման ցավոտ սրտերու,
Որ թաղված են առանձին։

Անշեջ հուրքով մը վառած
Կ՚այրին անոնք հավիտյան.
Իրենց վիշտը միշտ կու լան
Լույս արցունքով տխրամած։

1902, դեկտեմբեր

ԱՐԵՎԱԳԱԼԸ

Հորիզոնեն վար լույսի պար մը կ՚իջնե,
Ընդելուզված՝ ճաճանչներով ոսկեհյուս.
Շուտ կ՚անհետի մութն ու խավար կու տա խույս,
Աշխարհ արփվույն հուր գալուստը կ՚ողջունե։

Կենդանություն կը հագնին դաշտ ու լեռներ,
Ջվարթ երգերը միշտ կը լսվին գեղջուկին.
Ու զմրուխտի, ադամանդի երանգներ
Կը փողփողին մեջը լույսի վառ գըրկին։

Խորհուրդներու մրոայլը շուտ կը մարի,
Բընության այս հըրատ զարթոնքին հանդեպ,
Ու կը հրճվի հուսահատ սիրտը կարի՞։

Կը սրբըվին թոնուտ աչքերը տըխուր,
Ուրախության ժպիտներուն տակ անհուն.
Ցնծուն երգով կը լեցվի սիրտը թափուր։

<1901, հունիս>

ՄԱՐՄՆԻ ՎԵՐՔ, ՍՐՏԻ ՎԵՐՔ

Մարմնի վերքը՝ արտաբացված դանակե՝
Ի՞նչ արցունքներ դառնակայլակ կը քամե.
Ի՞նչ հուզումով ու տխրությամբ համակե,
Մարմնի վերքը՝ արտաբացված դանակե.

Սրտի վե՞րքը, ո՞հ, դառնագույն է, Աստվա՞ծ,
Սևով անքակ, խոցերով ժանտ է պատած.
Խեղճ ու թշվառ կամ տարամերժ ու լքված
Սրտի վե՞րքը, ո՞հ, դառնագույն է, Աստվա՞ծ։

Մարմնի վերքը սպեղանի ունի բույժ,
Անցնելով նա մոռցուկ կ՚ըլլա շատ կանուխ,
Ջանգակ չունի նա տխրահունչ, մահագույժ.

Սրտի վերքը մինչ գերեզմանն երկարած
Ուղի մ՚ունի, արցունքներու զերթ մեկ ուղխ.
Սպեղանին անոր երկինքն է պահված։

1901, հունիս

ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ

Ահաբեկիչ կնճիռներուն մեջ կյանքին
Լալահառաչ, սուր հծծյուններ ինձ ըսին.
«Ամեն հույսեր մեծ պարապին կը հանգին,
Ունայնություն մը կը պրկե կյանքը սին։

Ամեն ծաղիկ խամրում մ՚ունի իրեն մոտ,
Ու ամեն կյանք՝ մութ ստվեր մը իր ետին.
Ծաղիկներու բուրումին պես խնկահոտ
Ամեն հույսեր դեռ չըծլած կ՚անհետին»։

Բայց մխացող խոհերուս մեջ ծիրանի
Լույս մը հանկարծ սըպրդեցավ շողալով,
Կյանքի փարփառ երգն ոսկեսար, գեղանի,
Որուն ցվերջ ունկնդրեցի դողալով։

«Տխուր ողբեր թող չքանդեն քեզ,— ըսավ,—
Թող չցնդին ոսկի հույսերդ ցիրուցան.
Իր վերջն ունի ամեն կնճիռ, ամեն ցավ՝
Զինք մոռցնող ժպիտները լուսացան։

Ահա ի՞նչպես, տես, կապույտն ալ կամարին
Մերթ ամպերու գորշությունով կ՚աղարտի,
Անձրևին տակ իր ժպիտներն կը մարին,
Անձրևն,— այդ լաց,— սակայն երգն է ավարտի։

Ամեն անձրև արև մ՚ունի իրմեն վերջ,
Ինչպես ամեն լաց իր ժպիտն արփենի.
Ու տևական ուրախություն մը միշտ պերճ
Պիտ՚ հաջորդե ժպիտներուն երբեմնի»։

1903, հունվար

ՀԻՎԱՆԴԻ ՀԵՎՔԵՐ

(Ծայգեթգ)

I

Վանդակին մեջ փակված հեք
Թռչնիկին պես մենավոր,
Բանտըվեցան սրտիս սեզ,
Վարդ բաղձանքները բոլոր։

Դուրսն ամեն բան կը խայտա,
Մառ ու ծաղիկ կամ դալար.
Սրտիս մեջ սև պար մը կա
Նվագներու տրտմալար։

Թռչնոց ճիչին պես հիմար
Եվ նվաղկոտ կ'եղկեքին,
Թույլ խազերու մեջ տկար՝
Մութ եղերս կ'եղկաքին։

II

Լուռ քերթված մը կապույտի
Կ'երգե ցայգը լուսավոր.
Լույս երգերով կը ժպտի
Ցերեկներուն հոծ ժըխոր։

Մայթին վրա մոտավոր
Քայլերը միշտ կը շտապեն.
Արձագանգ մը հեռավոր
Թողլով իրենց ըշտապեն.

Կապված անոնց շշուկին
Կու լա սիրտս սրգավոր,
Խուլ թափի մը մեջ ուժգին։
Պատուհանեն հեռավոր,

Երգեհոնի ձայնը մը ցունց
Կը հանե սիրտը տխուր.
Իր շեշտերուն թափն ու ցունց
Կը խըռովեն ալիս անկուր։

III

Անշարժ կեցած մեկուսի
Կը հեծեծեմ սգավոր.
«Վայելքն ինձմե կը խռսի,
Կը հատնի կյանքն օրե օր։

Պիտի ըլլա՞ օր մ'արդյոք,
Որ դառնամ հին օրերուս.
Պիտի շնչե՞մ լիաթոք
Զըվարթությունն անոնց կույս...»։

Բայց բնության հըրճվանքեն
Հուշս ու ժպիտ կը քաղեմ.
Լույսեր հանկարծ կը ճեղքեն
Մտածումներս դժխեմ։

Եվ անուրջներ ոսկեզօծ՝
Լուռ՝ մաքիս մեջ կը պարեն,
Դուրս վանելով անոր հոծ
Թուխպը լույսի փապարեն։

1903, Հոկտեմբեր 29, 30, 31

ԴԵՂԻՆ ՎԱՐԴԵՐ

Փթթեցե՛ք միշտ, դեղին վարդեր, լքվա՞ծ վարդեր,
Խորհրդանիշն առանձնացած հոգիներու.
Միշտ կը հուզեք դուք իմ հոգիս խռովքով մ'աղու,
Անհուսության դալուկն հագած տժգույն վարդեր։

Անհուսության դալուկն հագած տժգո՜ւյն վարդեր,
Ձեզ հավետ պիտի սիրեմ ես սրտագին.
Ու միշտ սիրել պիտի չուզե իմ դառն հոգին,
Կարմիր ու ձյուն ճերմակ վարդերն ուրախաբեր։

Կարմիր ու ձյուն ճերմակ վարդերն ուրախաբեր
— Սուր հեգնանք մը ցավով ճմլած հոգիներու,
Ինծի երբեք անույշ հրապույր մը չեն ազդեր...

— Կույս ու զվարթ երանությամբ օծված վարդեր,
Երգեցե՜ք միշտ ընկճվածի երգերն աղու,
Լքված հոգվոց դուք մըտերիմ, տժգո՜ւյն վարդեր։

1902, մայիս

ՀԻԾԱՏԱԿ

Գիշերն է լուռ, մութը պատած է չորս դին,
Մըտածում մը կը սավառնի վեր, ետին,
Ստվերամած ու մթասքող ամպերուն.
Եվ կիսատված խորհուրդներս թև կ'առնուն.

Մտածում մը կը սավառնի վեր, հեռո՜ւն,
Խորհրդավոր քողարկումի մութին տակ.
Ու աչքերս խորհրդամած, սևեռուն,
Բյուր խորհուրդներ կը բերեն ինձ անհատակ.

Խորհրդավոր քողարկումի մութին տակ
Լուռ անձկություն մը կը պրկե զիս հանկարծ.
Կ'արթննա մեջս բյուրավոր հիշատակ։

Լուռ անձկություն մը կը պրկե զիս հանկարծ.
Մութը խորին, ու բույլ մ'անշեջ հիշատակ
Սարսուռներով կը համակեն զիս անկարծ։

1902, հունիս

ՏԵՂԱՏԱՐԱՓ

Մութ մը թանձր ու հոծ պատեր է չորս դին.
Ամեհի հեքը կը լսվի ծովուն.
Տենդեր, բյուրավոր խորհուրդներ մթին
Կը ցնցեն հանկարծ միտքս վրդովուն։

Օձաձև լույսի երիզներ ճերմակ
Կը փայլատակեն շողյունով արագ.
Եվ որոտումներ, ահավոր համակ,
Գոռ դղրդումներ կը տեղան վայրագ։

Հորդ անձրևներու տարափներ թոնուտ
Խոլ ջրվեժներով մայթը կը ծեծեն
Խառնակ շողյուն մը երկարելով բութ՝
Իրենց մոլեգին ու վայրագ ծեծեն։

Իմ սիրտս ալ տրոփուն կը փղձկի հանկարծ,
Եվ զայն կը ծեծեն հույզեր անհամար.
Անհաս տենչերու ճիգեր մշտարծարծ
Կը լուսավորեն իր մռայլ կամար։

[1]903, փետրվար. 12

ԱՆԴԱՐՁ

Գյուղին արևը կը հատնի լռին.
Նեղ արահետեն, մոտեն բլուրին,
Կապույտ-Դարն ի վեր դագաղ կը տանին.
Հոն կը նիրհե խոր, դժբախտ պատանին,
Ճերմակով հագված անդա՜րձ ուղևոր։

Ճերմակով հագված անդարձ ուղևոր,
Կը թողու հայր մ'ու մայր մը սրգավոր.
Սև օճախի մը մեկ հատիկ բոցն ալ՝
Ցուրտ հովեն փչված պիտ՝ չըշողա ալ.
Խրճիթն ալ պիտի մխա օրե օր։

Խրճիթն ալ պիտի միտա օրն օր,
Ինչպես գիշերն որ կը խոկա տխուր,
Արագ խուսափումն արևին փարփառ՝
Զոր ուրվականներ տարին անբարբառ,
Բոց դրոշներով, ցնծումով կարմիր։

Բոց դրոշներով, ցնծումով կարմիր,
Այգուն կը տոնեն սեգ վերադարձն իր,
Ու սև պրկումներ զայն շուտ կը թողուն։
Բայց կսկիծը սուր, սուգը վրդովուն,
Ճերմակ պատանքն ա՜լ չեն քակվիր տղուն։

[1]903, փետր. 15

ԾԻԱԾԱՆ

1903—1906

ՁՄՐԱՆ ՊԱՐԶ ԳԻՇԵՐ

Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
Ու ղով շաղերուդ կախարդանքը թաց։

Պարզ, լուսածածան, հրաշալի՜ գիշեր,
Հոսե՛ որտիս մեջ դյութանքիդ ալիք.
Ճերմակ երազիդ ցայտքերեն մեղրիկ
Պուտ պուտ կաթեցո՜ւր հոգվույս սիրաջեր։

Կ՝ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
Ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ.
Կ՝ուզեմ որ մեռնի՜ն տիվ ու ժամանակ՝
Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր։

Ու դաբիրներո՜ւդ իյնամ ծնրադիր,
Այս պաղատագին շարժուձևիս մեջ,
Ու մինչ կ՝ողողեն զիս ցոլքերդ անշեջ,
Աչքերս ալ մոռնան տակավ այս նատիր։

Ցնորաբե՜ր գիշեր, ա՜հ, ընդունե՜ զիս,
Ընդունե՜, միստիք ո՜վ անդորրություն,
Իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն,
Եվ համբույրն անանց՝ զոր կու տա հոգիս։

Սենյակս է լեցուն հուշքերովն աղի
Երեկի հովին վայրագ տարփանքին.
Ու դեռ կը հծծեն խորշերն ողբագին
Վախը գրգանքին անոր կատաղի։

Նե՜րս խուժե ուժգին, նե՜րս պատուհանես
Ու լեցուր խցիկս, մինչև կաթոգին
Քու սրբությունով իր խորշերն հորդին,
Եվ ես արթննամ վաղնջուց քունես։

Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
Թո՜ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց։

ՍԻՐԵՐԳ

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղեն ճամբեն ես կ՝անցնիմ գինով՝
Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն...

Համբույրներ կու գան հովեն ու ծովեն,
Համբույր՝ լույսեն, որ չորս դիս կը ծաղկի,
Այս գիշեր Տոն է հոգվույս՝ Կիրակի՜,
Համբույրներ կու գան հովեն ու ծովեն։

Բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ կը մաշի՜,
Շրթունքս են ծարավ միակ համբույրին...
Ցնծագին գիշերն է լույս ու լուսին՝
Բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ մը մաշի...

ԿԱՅԾԵՐ

Հոգվույս դափ ու թմբուկի
Կ՝իջնե ծիծաղն այս գիշեր.
Ծնծղաներու պես ցնծուն՝
Ծափ կը զարնեն իմ հուշեր։

Բամբիռներու երգին հետ
Քու շահենի աչքերուդ
Ծիրանեծին բոցն հրրուտ
Կ՝այրի հոգվույս մեջ նորեն։

Գինով՝ աննյութ նեկտարեն
Համբույրներուն ծաղկանույշ՝
Հոն խոլաբար կը պարեն
Շարժուձևեր բամբիշի։

Ցայգն համրորեն կը մաշի՜,
Ա՜հ, քի՜չ մըն ալ, քի՜չ մըն ալ,
Կ՝ուզե հոգիս գինովնալ
Նայվածքիդ մեջ հրահոսան։

ԹՐԹՌՈՒՄՆԵՐ

Լույսի բիծեր ծիրանի
Կ'ասղնտեն քողքը մութին.
Լուսնի ցոլքեր կ'անհետին
Խորքը ծովուն հոլանի։

Հըմայքներով փողփողուն,
Հեշտություն մը կապույտի,
Հանդարտորեն կը ժպտի
Հոգվույս մըռայլ տենչերուն։

Սիրո հուշեր լուսավետ,
Դողդոջուն ու ցնծագին,
Արագորեն կը ծագին,
Հըպարտ կ'անցնիմ երբ քովեդ։

Ըզգացում մը բյուրեղե,
Միածանի երանգով,
Ցավոտ հոգվույս մութին քով
Լույս ակոսներ կը պեղե։

ՑԱՅԳԱՆՎԱԳ

Կու գա սիրերգն հեղեղատին
Անտառներու մեջ մենիկ,
Երբ ժըխորներ պահ մ'ընդհատին,
Հասնի գիշերն երջանիկ։

Արևելքի գիշեր մը ջինջ,
Շափյուղազարդ երկինքով,
Ուր հեշտություն է ամեն ինչ,
Ամեն իր լի բուրմունքով։

Ծառաստվերի տակ սխրալի,
Բուներուն մոտ ու հեռու,

Ջինջ հեղեղը կը թափի
Արծաթացող լույսերու։

Ու կը շրջի անտես ոգին
Հոն անտառի ծառերուն՝
Խարշափն որոնց, թույլ, հեշտագին,
Կը նըվագե օրորուն։

Պիշ կը դիտեմ սաղարթախիտ
Արահետները նրբին,
Ու երազներս ականակիտ
Հետզհետե կը թափի՜ն...

...Դեռ մինչև ե՞րբ, ըսե՛, հոգի՛ս,
Դեռ մինչև ե՞րբ տառապիմ
Պրպտելով անրջանքիս
Թոշ ծաղիկը մաերիմ։

Գուցե վաղը մթնե հոգիս,
Գուցե դո՛ւն ալ թարշամիս,
Մ'եղծեր հըմայքն անրջանքիս
Ու ծաղիկը պաշտումիս...

ԵՐԱԶԻ ՊԱՀԵՐ

Լույսը մարած սենյակիս մեջ,
Ուր կը հոսին գալար գալար
Հորդ ալիքները մութին,
Ու կ'անհետին
Արծաթ շողերն երազի.
Ես կը փնտռեմ մըտամոլար
Ըղձանույշի ձեռքն այն փափուկ, երկնային՝
Որ պիտի տար ինծի ծաղիկն ըսփոփանքին։

Ես կը փնտռե՞մ,
Ըսպասումեն հոգիս համակ պարտասած,
Ու տենչանքով մշտահաճ.
Ես կը փնտռեմ,
Հորիզոնին վրա նըստեմ,
Լույսի շող մը՝ զոր կը մարեն անդուլ վարանքն ու կասկած։

Ու տակավ,
Կ'իջնե ձանձրույթն երազանքիս,
Հանդիսավոր ու տրտում,
Ու կը պատե իր մըշուշե պարուտակին մեջ հոգիս
Անձկությունով անպատում։

Մըտածումը, ինչպես ճամփորդ ուղեկորույս,
Կ'անցնի փութով, անձկագին,
Երկարաձիգ, մերթ լուսավոր ու մերթ անլույս,
Ճամբաներեն իմ մտքին։

Ա՜հ, կը շտապեն, կը փախչի՞ն
Ճամբաներու լույսերն ամեն,
Հանկարծական խուճապի մը մատնըված.
Ճառագայթի հազիվ վերջին
Բիծ ու խաղեր կը համեն
Քովը ճամբուն մթամած՝
Ուր համագրավ կը տարածվի վեհունի ցայգն համոբեն։

Ես կը փնտռե՞մ,
Պատըշգամին վրա կանգուն,
Զույգ մը աչքեր՝ մեղեսիկե, որոնց ճըրագը վառի
Հոգվույս մեգ ու խավարի
Անդոհության մեջ դժխեմ։

Պատըշգամին վրա կանգուն,
Ձեռքս հոգնաբեկ ճակատիս,
Մինչ կը հոսի գիշերն ինչպես ծով անհուն
Դեպ ի ափունքն երազիս՝
Ես կը սպասեմ հորդ ու վըճիտ լույսերուն՝
Որոնց բոցը պիտի ցոլա անծիր ցայգուն մեջ հոգվույս։

ՇԵՐԱՄԻՆ ՆԻՆՋԸ

Շերամատան մեջ կը հնչեն բոժոժները զիլ՝ դափին,
Որուն հուշիկ կ'ընկերանա ձայնն երգեցիկ կիներու,
Եվ կը մարի մերթ ճարճատուն ծիծաղներուն մեջ ծափին,
Պատուհանեն լուսնի լույսի շափրակներ ներս կը թափին։

Ըսթափանքի ժամն է պլրոտ, փափկամարմին շերասին՝
Խածումն որուն՝ կը քթքթա տերևուտքին մեջ դալար.
Ու սատափներ, ու զյումբյուներ, ու շողակներ... միասին.
Մեկ փաղփի մեջ կը նույնանան շերամ, տերև ու լուսին։

Երազանուրբ անասնիկին օրհասն ու մահն ըսպիտակ,
Վերջին քունն ալ դափ ու ծափով պիտի տոնեն վաղ գիշեր,
Օդանույշի ձեռքով բանված զանակածոպ լույսին տակ
Հինգ աղջիկներ հուսկ օրորը պիտի երգեն վաղ գիշեր...

ՄՏԵՐՄԻԿ ՏԵՍԻԼՆԵՐ

Ու կը դառնան ջըրանիվներ ծերունի,
Կափկափելով համբարուի հեքեաթներ.
Թախծապատում բարբառի հո՜ծ կշռութիւն,
Որ կ'ակոսե լուռն աշնանի գիշերին։

Ու մարմանդին զյումբյութ՝ պայիկն օդանուշ
Նոր կը հագնի լույսի մետաքս թևերով
Շարամանված պատմուճանն իր մշուշի՝
Ուր մերթ շողակն օդաքարին կը վառի,

Ու բոժոժին ձայնեղ՝ գանգյունն արծաթե...
Ու սայլորդին ըստվերն որ՝ գո՜ռշ՝ կ'երկարի՜,
Ու սիկառին ծուխն՝ որ բիլ բիլ կ'ամպանա՝
Ու լազվարթե գիծը ճամբուն հեռացող...

ՃԵՐՄԱԿ ՎԱՐԴԵՐ

Ըսպիտա՜կ վարդեր, ըսպիտա՜կ վարդեր,
Ջոր հովն անտեսեց այս ճամբուն վրրա,
Շամբուշ հովն աշնան՝ որ կը դղրդեր
Մոլեգին՝ հողին ընդերքն համորեն։

Ճերմա՜կ գաղափար, ճերմա՜կ գաղափար,
Աշնան մոլուցքեն գաղահար հիմակ,
Համբո՜ւյր շուշանի, դյութանք ծյունեղեն,
Փերթ փերթ լուսինկա, ապրշում համակ։

Թե՜ր ինծի իղձիդ կաթը խանդաղատ։
Մենավո՜ր վարդեր, որ մելամաղձիկ
Մառախուղներուն մեջ դեռ կը ժպտիք,
Ապրեցե՜ք հոգվույս մեջ հավերժորեն։

ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ

Ծաղիկներեն Հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,
Ի՜նչ հեշտին է մրթնշաղն այս սատափե։

Աքասիաներ, գինով լույսե ու տապե,
Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան.
Մինչ կը ծյունե ծաղիկն իրենց հոտևան՝
Ջոր խոլաբար հովը գրկել կը շտապե։

Ու լույսն անոնց, անխոս հուրի՜ դյութական,
Հրմայագեղ ու վարսքերով արծաթե,
Շատրվանին կ'իջնե գուռին մեջ կաթե։

Ջուրը ցայտքեն ծաղիկ ծաղիկ կը կաթե.
Վրճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
Նրվագն անոր կը հեծեծե հեշտական։

Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե...

ԱՅԳԵՐԳ

Սարերուն մեջ կը կոծկոծի այգուն՝ կոչնակը վանքին,
Եղնիկները մրթնշաղին դեպ ի գետափ կը դիմեն.
Աղջիկ մըն է կարծես հովը՝ գինով մուրտի բուրումեն՝
Որ ջուրերուն վրա կը դառնա սարսուռի պարն հեշտագին։

Վանքին քովի արահետեն կարավանները կ'անցնի՜ն,
Բոժոժներուն երգը լալով գիշերին մեջ տրտմորեն.
Մինչ կըսպասեմ ջինջ լույսերուն՝ որոնք ծագիլ կը համեն.
Ու կը լըսեմ շշուկներն՝ որ կը հեծեն մեջը ցանկին։

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գյուղանըկարը փռված,
Տարտամորեն, հսկայական, արծիվի մը ձևերով,
Մագիլները խորասուզած խորշերու մեջ մրթամած։

Ուրբշիռ բույրեն՝ զոր կը բերե ինծի առտուն անխրոով,
Ես կ'երազեմ ծառերուն տակ ու կըսպասեմ խոլաբար,
Լույս պարկեշտն՝ որ իզձերս պըսակելու պիտի գար։

ԳԵՏԱՓԻ ԵՐԱԶԱՆՔ

Գյուղն համորեն կը մըրափե ծոցն արևոտ ժայռերուն.
Տիվանդորրի պահն ըմպած է մեղկ հեշտություն մը սյուքի,
Որ ջուրքերուն վրա կը ցանե գինովի դողն իր թրթռուն,
Գետն համբույրի մը երազով դեպ ի ափունք կը թեքի։

Գետեզերյա ծառաստաններ, միջօրեանքի այս պահուն,
Ինձ անծանոթ թավուտքներե կը խրկեն բույրն հեշտանքի,
Որ համրորեն կը ծավալի ծաղիկներեն այն լեռքուն,
Ասդին անդին տարտղնված՝ որոնց հոգին կը ցամքի։

Եվ հընամի ծառեր զյումրյուր միայնությանց ընդմեջեն,
Կ՝արտածորեն մուշկի բույրեր ու ժպիտներ ալ բոսոր.
Կիսամըրափ կ՝երազեմ, զիս աղաղակներ կը կանչե՞ն...

Ձայներ՝ դյութիչ աշխարհներե, տարտա՞մ, անո՞ւշ, հեռավո՞ր՝
Որոնք անդին զիս կը տանին երանաստան մը բաղձոտ
Ու կը նիրհեմ արբշիռ՝ հովին դյութիչ նեկտարն ըմպած հոտ։

ԽՈՆՋ ԻՐԻԿՈՒՆՆ ԱՐԱԳՈՐԵՆ...

Խոնջ իրիկունն արագորեն կը խոնարհի դեպ ի խավար,
Բուրմունքներու հաշիշն հոգվույս մեջ կը ցանե հեշտանք մը թույլ,
Երգի խազեր կը կրքոտին տակավ տենդոտ հուզումնավար։

Անօրինակ մըրափի մը մեջ կիսազգած կը թափառիմ,
Ցնցված ձայնեն ճոկաններուն՝ որոնք կու լան դուրսը անդուլ.
Պատուհանեն կը խրկե ինձ հովիկն համբույրն իր մտերիմ։

Մութ սենյակիս մեջ կը շրջիմ առջի համբույրն անրջելեն,
Ու շրթունքներս են բոցավառ ջերմութենեն երազային.
Փակ են աչքերս, և կամ հանկարծ մերթ անձկությամբ դուրս կը նային,
Ա՜հ, լրությունն որ կը տևե՞, և ըստվերներն ու կը քալեն...

Շուրջիս անփույթ իրերն համակ հարցումներուս հանդեպ խուլ են,
Հանդիսատես կ՝ըլլամ մտքիս պատկերներուն քայքայումին...
Դուն չե՞ս գիտեր թե ի՞նչ կըզգամ գուրգուրանքես երբոր իմին՝
Քեզի համար տենդով հյուսած երազանքնե՞րս խակ կը խըլեն...

ՑՆՈՐՈՏ ԱՆԴՈՐՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեշտ, փալփըլուն գիշերներու անդորրություն մը ցնորական...
Դոդոշներու մերթ կեղերջներ լուռին սրբույթը կը ալեն.
Ծովախորշին մեջ ընկղմած լույսե աչքեր՝ որ կը խոկան՝
Հոգնա՞ծ, մաշա՞ծ իրենց տարփոտ, իրենց բոցեղ տրտմութենեն։

Ցայգն է ժայթքած իր շողակի շատրվաններն անրջական,
Հեռուներեն ուտի մը թավ հեծքը կու գա դողդղալեն.
Այս գիշեր ջերմ ու երազված կայծեր հոգվույս խորերն ինկան,
Կը մարեմ լույսը լամպարիս, ու կ՝երազեմ մըրափելեն։

Շանթե աչքեր, բոցե թևեր մըտածումիս կ՝անցնին քովեն.
Եվ հուրիներ՝ նոր հոլանած ալապաստրը իրենց կուրծքին՝
Որոնց համար շրթունքներըս անթիվ իղձեր կը թոթովեն։

Որմին վըրա տրտմություն մը կը ցանե բիլ եղրևանին,
Դաշտերուն մեջ հարսնուկներու բոսոր իղձերը կը ցամքին.
Մինչ ես կ՝ըմպեմ հաշիշն անհագ ցընորաբեր այս գիշերին։

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԳ

Կսկիծ կա սրտիս մեջը վիրավոր՝
Ջոր արևին լո՞ւյսն անգամ չի բուժեր.
Խորունկ ու ցավոտ մորմոքում մը որ՝
Ա՜հ, պիտի լայնա՞ երբ իջնե գիշեր։

Կը հյուծին ցոլքերն լույսին հեռավոր,
Խարույկի մը պես՝ որ վաղ է մաշեր.
Բայց դեռ կը հուզե զիս տեսիլք մ՝աղվոր՝
Ջոր ինձ կը բերեն անցյալին հուշեր։

Ու պիտի ապրի՞մ, վիշտը նոր ուժեր
Կը բերե հանկարծ հոգվույս սիրավեր,
Կյանքին կը դառնամ դեռ չըրած գիշեր։

Փուշեր նետվեցան օրե օր վերքիս,
Ու հոն հեծեծանք մը բերին հովեր,
Բայց սիրո հույս մը կ՝արևե հոգիս։

ԿԻՐԱԿՄՈՒՏՔ

«... Եկե՛ալքս ի մտանել արեգակամն
տեսաք զլոյս երեկոյիս...»

Հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լույսն է զըվարթ...
Ոսկի թելեր՝ պլլըված խունկի թավիշ մըշուշին.
Կապույտ ծոպեր, ծիածան, ծըփուն ձայներ, միստի՞ք վարդ,
Լույսե արցունք մոմերու՝ որոնք հանդարտ կը մաշին։

Խունկի ծարավ իմ հոգիս կը ծըծե պահն այս հանդարտ,
Ոսկեկըրակ աչքերով բուրվառներն երբ կը ճոճին.
Պակուցում մը հոգեգրավ հոն կը թողու զիս անթարթ,
Կը զգամ համբույրն իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին։

Մեղեսիկի երանգներ կ՝օծեն պարույրը խունկին.
Խորհուրդին եմ ծնրադիր բազուկներըս խաչանիշ՝
Ու կըսպասեմ որ ծագի հոգվույս պայծառ Կիրակին...

Ջահերն հիմակ կ՝երազե՞ն համակ զյումրյութ ու թարշիշ...
Կամարներեն, խորանեն կը ծագին լույս ու ծիծաղ.
Հոգիս քիչ քիչ կը թաղվի անուրջին մեջ այս չքնաղ։

Հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լույսն է զըվարթ...

ՆՈՊԱՆԵՐԸ

Մթության մեջ վըհուկի մը պես թախծադեմ,
Ցավոտ Սիրո հարվածն է որ կ՝իջնե կուրծքիս.
Ու Տենչանքի ծիրանիեն հրաշեկ հոգիս
Դեռ կ՝ընդգրկե հիշատակներ՝ զորըս կ՝ատեմ։

Բոլոր լույսերն ալ մարեցան հետըզհետե.
Ես կը սիրեմ այս խավարը տառապագին,
Ուր վիշտ մը լայն՝ սիրտըս կուրծքես դուրս կը նետե,
Եվ ես կ՝ըմպեմ սև հեշտանքը ցավոտ Կյանքին։

Խավարին մեջ չունիմ խարխափն Երազանքին,
Ու կը դադրիմ սերերու շուրջ թափառելեն.
Բոցեղ աչքերս ունին կայծակ մը թախծագին,
Սիրտես ցավերն հեծքեր վայրագ լոկ կը խըլեն։

ՏԱՊԻ ՆՈՊԱՆԵՐ

Ջըրաշոգին գետին վրայեն ամպանըման կը բարձրանա.
Կը փողփողին լազվարթ գույներ ճամբան ի վեր Կապույտ-Դարին.
Շինականներ արևահար ծերունի մը գյուղակ տարին.
Արեգակի բորբ ընձյուղներ կ՝այրեն ամեն իր անխընա։

Դարուղիեն կ՝անցնին դանդաղ ուղտերը գորշ կարավանին,
Թաթավելով իրենց հոգին հըրայրքին մեջ այս տոթական.
Երազանքնին կիսատ թողած, գինով գինով վարդերն ինկա՞ն,
Առանց սյուքի ու պլպուլի կը հեծե ցավն իր վարդենին։

Տիվագոլի երակներով բացավայրերն են բոցափայլ,
Ծաղիկներու հոգեվա՞րն է, ժամն արևոտ տաղտապանքին.
Բազմազեղուն բուրմունքներն են հեշտագրգիռ ու տապագին,
Մենաբաղձիկ անտառին մեջ ո՞չ հեծություն կա, ո՞չ դայլայլ։

Ժայռերն անփույթ դեռ կը տաքնան, հանդարտորեն, լուսափողփող,
Գիրկն անդորրին այս կիզանուտ և երազին տակ բոցավառ,
Հնձողներու ձեռքեն հոս հոն հանկարծ կ՝իյնա գերանդին վար,
Ամենուրեք կը խըլրտի նոպան տապին տափտապարող։

Ըսպասումն է հեղգ ու ջերմին, կ'ուշանա դեռ հովն իրիկվան,
Որ զովացիկ, պիտի մեղմե տենդն անպարփակ այս թալուկին.
Ջերմակարոտ, փաղփուն օձեր լեռներեն վար կը սողոսկին,
Եվ՝ հրաշունչ արբշիռ ու բոցերազ՝ մերթ կը հևան։

Դաշտերու մեջ ընկուզիներ կը քընանան հոս հոն ցանցիր,
Ո՛չ ճամփորդ կա, ո՛չ ալ թռչուն իրենց շուքին տակ ապաստան.
Հսկա խորխի պես կ'երկարի, լայնատարած, մենիկ ճամբան՝
Ուր սըլացքի ու քայլերու հետին մրմո՛ւնչն իսկ չի հածիր։

Թուրինջ գույներ ջըրանըկար... ծիրանի հե՛վք արևմարին...
Մըշակներ ու ձիավորներ պարտեզներեն կը դառնան տուն,
Խարխուլ կամուրջն անոնց բեռին տակ կը հեծե խոնջ ու նրկուն,
Գետեն անդին երանգ ու ձայն հետզհետե կը մարմըրին։

Ահա գիշերն ալ ծանր ու մեղկ կը գըլորի սարերեն վար,
Ու տապահար դաշտավայրեր կը հագենան աղջամուղջով.
Կենսանորոգ շունչ կը բերե ըսթափանքի կազդուրն այս զով,
Բայց ցորեկին դեռ կը տևե բազմալեզու տենդն հրրավառ։

ԱԾՆԱՆԱՅԻՆ ՀԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրիկուններն ես կը խոկամ,
Ամայության երգը կ'անցնի
Պատուհանիս երբ առջևեն,
Անկապ ձայներ զիս կը թովեն,
Հոգվույս մեջեն մերթ Աշունի
Կ'անցնի հանկարծ ուրուն տարտամ։

Գիշերն համբուն ես կ'երազեմ
Ցավը կյանքի Աշուններուն,
Ու շամբուշ հովն՝ որ կը տանի
Դեպ ի տամուկ խորշեր նըսեմ՝
Ջորս տերևի տեսիլն աղփուն
Որ օդին մեջ կը տատանի։

Եվ ցուրտ այդուն միշտ կը դիտեմ
Պարուտակը մըշուշներուն,
Ջոր գիշերվան անտես ձեռքեր
Թույլ միջոցին մեջ են ձըգեր,
Վըհատության պես մոլորուն՝
Ջոր քաշած է սերն հոգվույն դեմ։

Բայց թափառի՛լ կ'ուզեմ ընդմիշտ,
Մառախուղին ու հովուն դեմ,
Ու դաշտերուն մեջ ամայի,
Ուր աչքն ահով միշտ կը նայի,
Դիտել՝ տժգույն ու դալկադեմ
Բարձունքներուն տամուկն ու վիշտ։

Հոգիս հիմակ հափրանքն ունի
Սիրո խանդ ու հրրայրքներուն,
Ու ծաղկալից եղկ ջերմության
Վայելքեն վերջ բազմաբուրյան,
Կ'ուզե մըշուշն այս օրորուն,
Ու ցրտագին զովքն Աշունի։

ԳԱՐՈՒՆԸ Կ'ԱՊՐԵՑՆԵ

Կը թանձրանան
Տերևներուն
Շեղջեր լըքուն,
Մինչ կը դառնան
Դեռ ծառերուն
Մեջ համորեն
Հովերն աշնան,
Պարն ամեհի։

Ու դեպ ի տուն
Միշտ կը դիմեն
Շեշտերն ամեն
Ծիծաղներուն.
Միշտ դեպ ի տուն

Ու գնա՛ ի ներս
Բոլոր իզձերս
Ա՛լ տարիր դուն,
Զքնա՛ղ աշուն։

Դեպ ի տամուկ
Պատուհանին
Ա՛լ կը հառին
Աչքերս հիմակ,
Ու սե՛ր համակ,
Երգըդ կ'իջնե
Սրտիս՝ ուր նե
Իզձ մը ճերմակ
Պիտի զտնե։

Չէ՛, հովերուդ
Հետ ցավը չէ՛
Որ կը տանջե
Սիրտըս հըրուտ.
Այլ կը գառնան
Ինձ, հուզմունքեդ
Բողբոջ գարնան
Արևաշող
Հույսերն հավետ։

ՀՈՎԻՆ ԱՆՑՔԸ

Անդնդագալար օվկիանի պես
Կ'ուզի այս գիշեր հովն ալիք ալիք,
Կը ծրծեմ լեղի սարսափն իր ճամբուն...
Իր լալոնին մեջ սենյակս է ծրփո՛ւն,
Հոգիս՝ իր անհեղ կոչին խաղալիք՝
Մինչ լույս շավիղ մը կ'երկարի մտքես...

Լեռներեն կ'իջնե հևքն իր մալեկան,
Իրար բերելով ձեռքերս՝ անձկագին
Մինչ ես ծնրագիր՝ կ'ունկնդրեմ Երգի՛ն,

Երգին խոլարձակ, Երգին թախծագին...
Ե՞րբ պիտի հասնի իր հանգըրվանին
Արհավրոտ Ուխտին այս գոռ կարավան...

Բուռն համեմունքով իր շունչն է լեցուն.
Ու կ'առնե ծովուն գույներն աղտաղտոտ՝
Մինչ զայն կը տանին պայերն ամբարձիկ,
Համբույրն իր կու գա մինչև իմ խցիկ.
Եվ ես հրպումեն կը փախչիմ գաղտուկ,
Հրպումեն՝ վայրի վիշտով ակաղձուն։

Մարած է քրքում լույսը լամպարիս,
Հորդող մութին մեջ հևալեն տրտում.
Ես դեռ կըսպասեմ ալեկոծ Անցքի՛ն,
Նայվածքըս լեցուն իզձով կաթոգին,
Ա՛հ, քո՛ւկդ եմ արդեն, ո՛վ մխաթիք ցնցում,
Ո՛վ ձայն, մինչ ուժգին հոգվույս կը փարիս...

ՍՈՆԱԴԻՆ

Միջոցին մեջ կը թոշնի
Լույսի ծաղիկը թրթռուն.
Ըմպած մրոայլն ամպերուն,
Տըխուր է ծովն աշունի։

Ցորեկներուն կը հակին
Գորշություններն հոգվույս մեջ՝
Ուր գիշերվան երգը գեջ
Լացավ թոնով մը մեկին։

Ամայության մը տրտում
Կու գա ինձ ցավն երբեմնի.
Եվ երազանքս անպատում
Կը կոծկոծի՛, կ'արյունի։

Հովը կ'ոռնա խուլորեն,
Ու գիշերը կ'երկարի՛.
Ալիքներու ժըխորեն
Ու սարսափեն խավարի։

Դալուկ սիրո մ՝աշնանային
Կը կաթե դողն հոգվույս մեջ,
Ուր հուրիներ կը նային
Անրջածին, լուսամեջ։

Բայց կը վախնամ որ նորեն
Խուսափի՝ լույսն երազին,
Ու մըշուշներ գաղտորեն
Վայելքներուս շուրջ հածին։

Աղաղակ մը, մեջն հոգվույս,
Արագորեն կը ձայնե
Մահվան պարը սրտահույզ,
Մեռա՞ծ է կույսը ձյունե։

Տարփատենչիկ, զաղփաղփուն,
Աղջիկն է ան անուրջիս,
Երազունակ ու փաղփուն
Հոգին կանգնած է առջիս։

Ու կը տեսնեմ դեռ շողուն
Փայլը սրտին իր նրսեմ.
Մոգութենեն աչքերուն
Հափշտակված կ՝երազեմ...

ԿԱԾՐԿՅԱՆՆԵՐ

Ո՞վ սիրական խավարներ։ Կենդանի՞ երազ դանդաղ գիշերներու, ուր կի՛րքը միայն նայվածքներ ունի։ Ու մի՛շտ, մի՞շտ, անխո՛նջ կերպով, անպատում մելամաղձությունը Համբույրին։

ՌԵՅՄՈՆ ՊՈՒՅԵԵՌ

Հրրայրքիս մեջ գիշերը զայն կ՝երազեմ,
Շրթունքներրս պատրաստ իր մեղկ համբույրին.
Բայց ժրխորին մեջ կը մոռնամ վերստին
Այն պահերն՝ ուր զայն սիրած եմ մոլեգին։

Ու կը մոռնամ ես նոպաներն ալ բոլոր.
Հորդ կիրքերու ժամերն ամեն ըղձածոր՝
Երբ կ՝իյնամ ոտքն իր տեսիլքին՝ մինչև որ
Անշարժանամ պաղատանքիս մեջ մոլոր։

Ու չեմ հիշեր ցորեկն ասոնք, երբ խունկե
Ա՛լ ավելի հեշտ բուրմունք մը մեղկօրոր
Իր ծրփանքին մեջ հույզերրս կը լլկե։

Այդ բուրումի եղկությունն, որ միշտ անկե
Կը ծորի և կը պարուրե զիս՝ բոլոր
Հոգիս անծիր մոգությամբ մը կը խնկե։

. . . . . .

ԱՅԳԵՐԳ

Այգն է ծաղիկ երազով լի ու բալաձիգ՝ թեթևորեն.
Մըշուշն անծալ ջրվեժի պես ամբարտակեն վար կը հոսի.
Իր շրփոյթին մեջ կը շիկնի ոսկի աղջիկն արշալույսի,
Այգն է ծաղիկ երազով լի ու բալաձիգ՝ թեթևորեն։

Երկու բոցե թևերու մեջ ծովանըկարն է սխրալի՜.
— Կապույտի՜ փառք ամրափակված շրջագիծով ոսկեդրվագ,—
Ուր ցնծալից թևճակներու հեշտերգն ունին կուր ու նավակ.
Երկու բոցե թևերու մեջ ծովանըկարն է սխրալի՜։

Պիտի ըմպե՜մ բոցն արևին, ճառագայթի՜ եմ ծարավի.
Պիտի ծըծեմ բույրն առտրվան՝ հոգվույս համար՝ որ հիվա՜նդ է.
Հոգվույս համար՝ որ կ՚երազեր գգվոտ ու մեղմ շունչն հարավի,
Պիտի ըմպե՜մ բոցն արևին, ճառագայթի՜ եմ ծարավի։

Քիչ մըն ալ դո՜ւն ժպտեիր, ա՜հ, հոգվույս համար՝ որ հիվա՜նդ է.
Նայվածքի խաղ՝ որով դառնա աշխարհն ինծի ծափ ու ծաղիկ,
Տարիներով իմ երազս էր սիրո գարուն մը խաղաղիկ,
Քիչ մըն ալ դո՜ւն ժպտեիր, ա՜հ, հոգվույս համար՝ որ հիվա՜նդ է։

Սեր-Արևիդ բոցն երկարե խորերն հոգվույս իմ պատանի,
Ջերթ արևին լեզվակն ոսկի՝ որ կը ծըծե մըշուշն այգուն.
Ո՞ւր է ճաճանչն, հուրքը ջերմին՝ որ մառախուղն առնե տանի,
Սեր-Արևիդ բոցն երկարե խորերն հոգվույս իմ պատանի։

ՄԹՆՇԱՂՆԵՐ

Վերջալույսի աղջիկն է իր կուսության մեջ քրքում.
Ինչո՜ւ մինակ մընացի երազիս հետ թախծագին.
Թմբիներու բույրին տակ, նուռիներու ծաղիկին՝
Ա՜հ, ինչո՞ւ ես մընացի գիրկն երազին այս տրտում։

Ո՜վ դուն հիրիկ ծաղկանույշ, երբ անցար հետ լույսերուն,
Բան մը փըլավ հոգվույս մեջ, քայքայումով ողբագին.
Դարձիդ քի՜չ մըն ալ ժպտե սա՛ լուսաբաղձ հիվանդին՝
Որ քիչ առ քիչ կը մեռնի՜ կառչած իր խոլ հույսերուն...

Մութը կ՚իջնե հոգվույս՝ ուր վազո՜ւց գիշեր է արդեն.
Ըսպասումի՜ ցայգ՝ ուր դեռ չըշողաց լո՜ւյսն երազին.
Հազիվ քիչ մը բույր ծըծած մոռացումին ես վարդեն
Նորեն քեզի՜ կը դառնամ, ա՜կն արևիս ոսկեծին։

Լուսնի պայծառ տիվին տակ պիտի համբեմ անդադար
Բուստե զարկերն ոգևոր՝ առույգ սիրո երազին.
Ա՜հ, քիչ մը լո՜ւյս, ժըպի՜տ մը՝ որ կյա՜նք ինծի պիտի տար,
Եվ փարատեր լըքումն՝ որ կը ծանրանա իմ ուսին։

Եկո՜ւր, արդեն կը մըսի՜ն հեք երազներն իմ որբուկ,
Ա՜լ հոգնած եմ անցնելեն կածաններե մենավոր,
Անձրև կ՚իջնե հոգվույս մեջ, կըզգամ մահվան սրսըփուք,
Ձեռքս է պարապ մընացեր դատարկին մեջ սրգավոր։

ՆԱՎԱԿՆԵՐԸ

Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամենն ալ՝ ծըփանուտ երազիս ափունքեն.
Անձուկին բոցը զիս պաշարե՜ց. Ըսպասման հիվա՜նդն եմ.
Հոգեսարս դողերով և հուրքով միշտ ցայգերն են հրդի.
Գիշերներն ես համբուն կը սպասեմ ծիրանի այն դարձին.
Ու ցայգուն ալ կ՚անցնիմ ավազուտ ափունքեն՝ դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլըցուն։
Դարձուցե՜ք նավակներս հողմավար, ջրանո՜ւյշ պայիկներ,
Դարձուցե՜ք նավակներս դյութավար, իրիկվա՜ն հովիկներ...

ՄԵՂՈՒՆԵՐԸ

Տենչանքներրս, տարագնացի՜կ մեղուներ,
Ոսկի երիզ մը բանալով
Ու զանակներ անձրևելեն
Թրռան գացին երամ երամ.
Անցան գացին դարուղիեն,
Կիսաթափանց մշուշներու ապրշում քողքը պատռելեն
Եվ հածելեն մեջն արևին ոսկեծաղիկ մառախուղին։

Արևակի, սուտակներու ու զյումրյութի
Փաղփուն երանգը ծրծելով իրենց չորս դին.
Ծործորներեն, բացավայրեն
Ու ցորենի գադիշներեն անցան անդին.
Ես գետափին մոտ մընացի վարատակա՜ն,
Մելամաղձիկ երազս հրդած
Դեպ հեռավոր ծաղկաստաններ՝
Ուր թառեցան մեղուներն իմ տենչանքներուս։

Մեղուներն իմ տենչանքներուս՝
Միջօրետքի պահերեն վերջ,
Որոնց դարձին ես կրսպասեմ՝
Ուղեկորույս զակատելով։
Ահա՜ օրն ալ մրթագնեցավ,
Եվ ես ի զո՜ւր տարաժամ
Դեռ կրսպասեմ անոնց հեքոտ ու մեղրաղօծ վերադարձին։

Ա՜հ, այս ցայգուն
Պիտի անցնիմ դարձյալ Վախիս ճամբաներեն.
Ալ հափրացա՜ծ, ուշակորույս,
Գիշերներու ըմպած գինին խավարածոր,

Պիտի անցնի՜մ ես այս գիշեր՝
Երկյուղիս սեպ ճամբաներեն,
Իմ գանկիս տակ
Հույսի ոսկի բոցին անուրջն առկայծելեն։

Ալ հոգնա՜ծ եմ
Ըսպասելեն տենչանքներուս մեղրին անույշ,
Ու տարաժամ այս հածումին մեջ երջանի՜կ պիտի ըլլամ՝
Եթե թունեղ խա՜յթ իսկ բերեն
Ուղեմոլար մեղուներն իմ տենչանքներուս։

ԲՅՈՒՐԵՂԻ ԴՅՈՒԹԱՆՔ

Մանուկ մըն է, որ կայներ դեմն հրրածամ արևին,
Կ՚օծե հոգին իր շուշան լուսացնցուղ երազով,
Ու կը ծրծե հոտևան խտղանքն ու դողն այգուն զով,
Մինչ մեղեսիկ աչուկներն Եսին ցոլքով կը վառվին։

Նրշուլագեղ ու պայծառ ցոլքով վճիտ իր Եսին՝
Երկինքն՝ որուն հրճվանքի ակեր ունի կապուտակ.
Ու կյանքի սերն հորդած է հոն լեռնածին զերթ վրտակ՝
Ուր կաթիլներ ու ցայտքեր հետզհետե կը հոսին։

Բյուրեղ մը կա ձեռքին մեջ՝ զոր կը ճոճե դարձդարձիկ,
Յոթը գույնին տե՜ն՚ն ունի, լույսի անհուն խաղերուն.
Երանգներու, շողերու կ՚ըղձա անուրջն օրորուն,
Եվ արևին կը նայի միշտ կաթոգին ու բաղձիկ։

Ա՜հ, ի՜նչ դյութանք, ծիածան ծոպե՜ր ունի ամեն բան...
Շափյուղակնե՜ր... կարկեհա՜ն... զյումրյո՜ւթ, շողակ ու թարշիշ...
Ծովն է լեցուն գույներով ու ծիրերով ոսկենիշ,
Ինչպես դաշտերն ու լեռներ, ինչպես մարմանդն ու ճամբան։

Ծափ կը զարնե, ծիծաղեն ծըլե՜ր է ծիրն իր այտին,
Անո՜ւյշ արև մանկական, ամպ ու մեգի անգիտակ,
Իմ երկինքս ալ կը հրճվի ոսկեծիծաղ լույսիդ տակ,
Ու մոռցրված բուրմունքներ զիս կրզգլխեն վերստին։

Պրիսմակ մըն ալ ե՜ս ունիմ, ու կը դիտեմ ցնծագին
Սիրույդ արևը պայծառ, սիրույդ արև՜ը ջերմին,
Ու խանդաբորբ իմ հոգիս հանդեպ անոր պաշտումին,
Մանո՜ւկ մըն է որ կայներ դեմն հրրածամ արևին...

ԻՂՁԵՐ

Կես գիշերվան բուրումնահեղց վարդերով,
Որոնք գինով ցող ու շաղի կըսպասեն,
Պիտի հյուսեմ մանյակ մը նուրբ
Շուրջն սպիտակ պարանոցիդ.
Եվ այգուն
Պիտի գտնես ցողված՝ վարդերն այդ անուշ՝
Իմ արցունքիս ցողերով։
Ու օր մըն ալ,
Երբ թարշամի
Քայլն այդ ծաղիկ անուրջին,
Պիտի հյուսեմ նոր նարոտներ ոսկեվար
Անոր հուշքին տեղ բոսոր,
Իմ համբույրիս բոց ու բուրյան վարդերով։
Երազանուրբ ձյունաթորմի ձեռքերուդ
Պիտի բերեմ մեղեսիկե մատներ՝
Ու քողեքներ արևակե.
Եվ երբ անոնց ցոլքը մարի աննշույլ,
Տենչանքներուս բազմերանգ
Բոցով զանոնք պիտի վառեմ անդադար։
Ու լարերուն տեղ վինին հինավուրց
Պիտի դընենք արծաթ թելերն ըղձանքներուդ՝
Որոնք հավետ պիտի թրթռան
Տրոփումներովն իմ սրտիս։
Գինով՝ դյութիչ բուրմունքներեն ծաղիկներուն ըզգլխիչ
Ո՜վ դյութանուշն իմ սրտիս,
Պիտի հածինք միասին,
Ընթադրելով բույս ու ծաղիկ ու դալար,
Ու լալով
Բուրումնացան մահն անոնց,
Պիտի հածի՜նք,
Լույսի արծաթ անձրևին տակ
Ու ծոցին մեջ
Թավուտքներու կիսաթափանց գիշերներուն,
Ո՜վ երազին իմ ազջիկ։

ՑԱՅԳԱՆԿԱՐ

Համատարած անդորրության մը մեջեն,
Կիսաթափանց մըշուշներուն մեջ հալած
Ուրվագիծը տուներու՝
Որոնց լայնաքթիթ պատուհաններեն
Կը ժայթքեն
Լույսի ցայտքեր՝ տարփագին ծաղիկներուն պլլըված։
Ու հեշտոտ ու մարմրուն
Աղաղակն ալ նըվագներուն լարավոր
Կը ծաղկեցընեն դյութանքն անդորրիկ,
Գիշերվան մը երջանիկ։
Ու կ'երկարի՜, կ'երկարի՜
Խմբանկարը տուներուն՝
Տարտամորեն փաթթըված
Մեջն ապրշում մըշուշին,
Ու լայննալո՜վ, լայննալո՜վ
Դեպ ի ծովափն՝ ու երկչոտ
Կըսպասե
Ալիքներու համբույրին։
Ու եզերքեն հանդիպակաց
Ծայրը դալար հրվանդանին,
Ուր վաղուց
Մեռան ճիչերը ցորեկին,
Ծովին փոթ փոթ երանգածուփ թավիշին վրա
Միապաղաղ կ'անդրադառնա
Ուրվանըկարը խուսափուկ
Լույսի ծըփուն ծաղիկին՝
Որ կը ծըլի փողփողուն ծովեզերքի փարոսեն։
Ու դեռ հեռուն,
Քաղաքեն ու բացավայրեն ալ անդին,
Կ'ընդնշմարեմ արտևանները ցրցուն
Մանիշակե լեռներուն
Մարմաշի մեջ պլլըված
Հսկա հարսեր հեշտամոլ՝
Որոնց տարփանքը կըզգաս
Հեռուներեն, հեռուներե՜ն...
Ու կը լըսեմ վարերեն թևճակներու նըվագն ալ,

Ջուրերուն վրա թրթռուն,
Ու կը լսեմ ծաղիկներուն ալ երգը
Աղաղակ մը սիրածուփ՝
Սահած ծոցեն դաշտերուն՝
Ուր ցաները կը վետվետին սիրատարփ։
Ուր երկինքն ալ կը քնանա,
Կապույտներու խորհուրդին մեջ երազելով
Վաղորդայններն երջանիկ։

ԱՐԵՎԻՆ

Հարավի մեղմ ու լիաշունչ հովին հետ,
Որ վաղուց երազված համբույրի մը պես
Իմ սիրակարոտ հոգիս հեշտանքով կը լիացնե,
Շողա՛, ո՞վ արև, շառափներովդ ոսկեծայր,
Մառախլապատ երկունքիս մեջ՝
Ուր Մտածումը կը դեգերի ուղեմոլար,
Շողա՛, շողա՛, բարի՞ արև, հիվա՞նդ եմ...
Պատուհանիս հեղուկ ծոցին մեջ ինկած խելահեղ,
Միջօրեի հեշտադալար ու բոցակապ երազին գիրկը,
Թևատարած կըսպասե՞մ.
Պլլե՞ զիս բոցեղեն ցանցերուդ մեջ
Ու օրորե՞ ջերմագին
Ու կիզանուտ համբույրիդ տակ.
Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ
Մանուկներն ընդարմացած։
Մինչև որ
Կանգնիմ նորեն ու անցնի՞մ դարձյալ
Տարփանքիս խանդաղատ ճամբաներեն։
Հիվա՞նդ եմ, բարի՞ արև, շողա՛, շողա՛...
Հոգիս թռչնիկ մըն է,
Օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ,
Բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի,
Անտես ու ստվերոտ սանդուխներու վրա
Կ՚իյնա շնչահեղձ։
Շողա՛, շողա՛, բարի՞ արև, հիվա՞նդ եմ...

Ճառագայթող գոլիդ մեջ հեշտագրգիռ,
Մինչ կը խժա տարօրինակ, խոլ պարը զամբուռներուն՝
Հուրքե՛դ գինովցած՝
Ու, մինչ թուփ ու ծաղիկ ծարավեն կը մարմրին,
Ես կ՚ըմբոշխնեմ խտղտանքն անանուն՝ երջանիկ տիվանդորրիս,
Համբորեն ու գիտակից
Գինովությամբ հեշտագին։
Քի՞չ մըն ալ դեռ,
Ա՜հ, շողա՛, շողա՛, բարի՞ արև, հիվա՞նդ եմ...
Վերջին անգա՞մ մըն ալ,
Դեռ իրիկո՞ւն չեղած
Ու, դեռ տամուկ գիշերին վըհուկը զիս չընդգրկած,
Վերջին անգա՞մ մըն ալ,
Փարե՛ հոգվույս խանդաբորբ ու կաթոգի՞ն,
Հիվա՞նդ եմ, բարի՞ արև, շողա՛, շողա՛...

ՑԱՅԳԱՅԻՆ

Լուսնի մահիկն երբ
Սանդուխներու վրա
Մեղմով կը տեղա
Լույծ, անձրևակերպ
Սահանքն իր լույսին։

Եվ երբ մանիշակ
Գոլորշիներուն
Մըշուշն անապակ
Կը ծաղկի թրթռուն
Ծովերուն վրա։

Խորն իմ սենյակիս
Կը հանգչի հոգիս.
Փակաչք ու անթարթ
Կը ծրփամ հանդարտ
Ըստվերի գորշ գորշ
Լրճակներուն մեջ։

Հայելիներուն
Հոգին պբրիսմակ
Կը դողա համակ
Երբոր սարսբռուն
Աշտանակներուն
Ծիրանի ցոլքեր
Կը սահին անոր
Վրձիտ ծալքերեն։
Հոգվույս ալ մեջեն
Տակավ կ՝երկարի
Փափուկ արծաթի
Շավիղ մը ձայնի։
Ու ճառագայթներ՝
Որ զիս կը կանչեն
Հոգվույդ ալուցքեն
Կը հասնին ինծի։

Հապո՜ն, կը մեկնին
Իմ անրջանքին
Թիթեռներն ամեն,
Ու միջոցին մեջ
Հուշիկ կը գրծեն
Շառայլ Թրոիչքին
Ակոսն հեշտագին։

Ակոսն հեշտագին՝
Որ ձայնիդ կառչած
Կ՝երկարի մինչև
Քու սրտիդ արև...

ՍԻՐԵՐԳ

Ճառագայթի պես ոսկեվարս ու նրբին,
Երբոր ճամբեն կ՝անցնի հրպարտ, լուսարագ,
Բան մը սրտես կ՝ըլլա բոցեն պատարագ
Իր աչքերուն՝ ուր կը մոռնամ ես արփին։

Երազային, ծաղիկի պես նրբավոր,
Երբ կը ժպտի պատուհանին ետևեն,
Թռիչներ հոգվույս մեջ լուսաբաղձ՝ կը թևեն
Խոլ անուրջով կապույտներու հեռավոր։

Ու երբ կ՝երգե ջութակին հետ սարսբռուն
Մեղմածավալ հեշտերգն իրեն ցայգային,
Կարծես աչքերն իր լուսափաղփ կը նային
Տենդոտ պահին՝ մեջն իմ հոգվույս ալքերուն։

ՈՒՌՈՒՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ...

Ա

Ուռենինե՜ր, լացե՜ք, լացե՜ք անդադրում,
Արտասուքնիդ շիթ շիթ հոգիս կ՚արծաթե.
Ես կը փարիմ մենիկ պահին այս տրտում՝
Ուր ձեր հեղուկ նրվագն հուշիկ կը կաթե։

Ծաղիկներուն գոտին դեղին, լայնարձակ
Արոտներու զյումրյութ իրանն երբ գրկե,
Ու միջօրի արևն ալ՝ խուրձ ու տրցակ
Շողերն իր՝ բիլ ժապավենով մը պրկե։

Կուգան կույսերն իմ անուրջիս, հերարձակ,
Մանիշակե բըլուրներեն ու դաշտեն,
Ես կ՚ունկնդրեմ հապշտապ ու համարձակ
Քայլերուն՝ որ լուռն ուժգնորեն կը շեշտեն։

Ու կը պարե՜ն, իրենց նազանքն հարսենի
Ու նայվածքնին քողքած կազի մը շուշով,
Իրենց վարսքին հետ կը խաղա սյուք մը զով
Եվ այտերնին կակաչի պես կը շիկնի։

Իրենց մարմինն՝ ակնվանի թափանցիկ,
Իրենց հոգին՝ համբույր համակ ու շուշան,
Իրենց սիրտը՝ հուր շրջմոլիկ ու բաղձիկ,
Իրենց ծիծաղն՝ արշալույս մը ջինջ գարնան։

Բ

Ուռենինե՜ր, արտասվեցե՜ք տրտմագին
Գորովակաթ արցունքը ձեր արծաթե.
Քաղցր է ինծի զեղումն այդ ձեր թախծանքին՝
Որ տրտմանույշ կայլակներով կը կաթե։

Տիվանդորրին համբուն՝ ժամերն են ոսկի,
Ձեր սաղարթին գորշ ու տարփոտ շուքին տակ՝
Ուր բուրմունքը կու գա ծաղիկ ու հասկի
Եվ կը հնչե հուշքերուս ծափը խայտակ։

Ուր մերթ ձայնն ալ թմբկիկներուն հեռավոր,
Ու ծիծաղը բամբիոներուն արծաթի,
Ու գնչուհի երգիչներու տարփավոր
Սիրերգներուն արձագանքն ալ կը ցաթի։

Ու երբ դարձյալ հովիտն համակ ընդգրկե
Անդաստանին վայրի Լուռը թևավոր,
Ու երբ ծառուտքն ալ արբեցած խոնջենքե
Անշարժանա իր խոկին մեջ մենավոր։

Արագիլ մը կ՚անցնի հանկարծ անվրդով,
Ցուցադրելով կարմիրն իրեն կտուցին
Ու կը տաքնա մեջն արևին հուր ցանցին,
Ու կը ցանե հոս հոն կափկափն իր թոթով։

Գ

Ուռենինե՜ր, շիթ շիթ արցունք ցողեցեք,
Մինչ բուրմունքնիդ իմ հոգվույս մեջ կ՚ամպանա,
Եվ այս չքնաղ անդորրության հեց՝ թող հեք
Երազանքըս պահիկ մը գեթ հեշտանա,

Եվ երբ իջնե լեռնեն հովիկն իրիկվան,
Ու սրսրփա թախծոտ օրհներգը սոսին.
Երբոր ցայտքերն ավազանին մեջ հոսին
Ու ձեր շուքին տակ թռչնիկներ թովբռան.

Ու երբ արևն ալ քրքմաներկ վրձինով
Ոսկեզօծե սրգատամուկ ձեր հոգին,
Երբ համբույրի պես փաթթվի ձեր շոգին
Անոր ցոլքին՝ եղկ, տարփագին ու գինով.

Միշտ, համրագին կաթկըթեցեք դուք նորեն
Արծաթելու համար խորհուրդն անպարփակ
Որ շուքե շուք կը թռչըտի լայնորեն
Ընդգրկելով ամեն դալար շրջափակ։

Ու երբ ցայգն ալ ծառաստանին մեջ սահի
Սև մագիլով ձեր ջինջ հոգին ճանկելու,
Լացե՛ք նորեն, դուք համակերպ ու հընչուն
Դողդըղագին ձեր տագնապին մեջ ահի։

ՑԱՅԳՆ Է ՊԱՅԾԱՌ...

Ցայգն է պայծառ անհունորեն
Ցոլցըլանքովն իր խոլապար.
Օդանույշներ՝ որ մեղմաբար
Քնքշանքով զիս կը պարուրեն։

Բուստ համբույրով՝ որուն կարմիր
Կարոտովն իմ հոգիս կու լար,
Ինչպես փանդիռ մը մեղմալար՝
Պոնդերու տակ մեղկ ու ցանցիր։

Պարզկա ցայգուն անուրջին մեջ
Լրվալ կ'ուզեմ հիմակ հոգիս,
Եվ հրրահրել՝ երբեմնի շեջ
Աշտանակներն իմ երազիս։

Մըտածումըս կ'անցնի նորեն
Շավիղներեն իր լուսավետ,
Հեշտություններ հոգվույս հավետ
Բերելով իր ճամբաներեն։

Գինո՛վ եմ ես ծաղկանց բույրեն,
Տարաշխարհիկ ու գբրավիչ,
Ու ձայներն ալ՝ որ քիչ քիչ
Իմ երազներըս կ'օրորեն։

Եվ անծանոթ աշխարհներուն՝
Անեզրին մեջ խորհրդաղեղ՝
Կ'անդրադառնա մեջն իմ հոգուն
Կրկներևույթը գունագեղ։

Գիտի ըզգա՞մ ես տևաբար
Բուրումն անոնց ծաղիկներուն,
Որոնք հեշտին կը դառնան պար՝
Լուսացնցուղ ցողով լեցուն։

Գիտի ծրծե՞մ ես անդադար
Հոծ երազանքն անոնց բալին,
Ու շողերն՝ որ կը փալփըլին՝
Ոսկեպաղպաջ՝ ինչպես նեկտար։

Գիտի անցնի՞մ ես խանդավառ
Այդ լուսոռոգ ուղիներեն.
Ես՝ ուխտավոր ուղեմոլար՝
Խորհրդածուի թափառելեն։

Գիտի անցնի՞մ ես Անհունին
Հավերժալուռ երկինքներեն,
Մինչև հույզերս ամեն թոշնին՝
Ու ես երկիր դառնամ նորեն։

ԻՐԻԿՎԱՆ ՁԱՅՆԵՐ

Կ'ալեկոծին տարփոտ ձայներն իրիկվան,
Հորձանքին մեջ հոգնակոհակ հովերուն.
Անրջածուփ, նըվաղ բույրերն երերուն
Վերջալույսին մեջ ոսկեզօծ՝ կը հևան։

Խրախուության աղաղակներ հեշտալուր
Կը պլլըվին այդ ցնծաձայն նըվագին.
Ու կ'անհետին՝ մեջն այդ ծրփուն հորձանքին՝
Հեշտերգության թույլ ծրվեններ կցկըտուր։

Զիլ գեղգեղներ ու նըվագներ վրդովիչ,
Ու ջութակի սարսուռին գիծը կարմիր...
Արևմարքին ծաղիկն, որ չի՞ թառամիր,
Ինքն ալ գինով ըզգլխանքեն այս թովիչ։

Աղմկահար սույլն ու արշավն հովերուն,
Հծծյունները ծաղիկներուն խատուտիկ,
Բարտիներու խարշափն ու ծափն հանդարտիկ,
Եվ համերգը խանդոտ՝ գետին մոլորուն։

Կըստվարանա ալիքն հրճվոտ այս ճիչին,
Ու կը բաղխի հոգվույս պորփյուր քարափին,
Ու կ՝ոռոգե զիս փրփուրին մեջ ծրփին
Երբ խնկագույն լույսերն ինձմե կը փախչին։

Արծաթ լույսերն հիմակ տակավ կը ծաղկին,
Ու կը ցայտե թավ հեծեծանքն ուտերուն,
Լազվարթ ժամեր լուսնի շիթ շիթ կաթիլքին
Մեջ կը թրթռան իրենց համբույրն անանուն...

Եվ հոգիներ կ՝իյնան անոնց ծնրադիր,
Սիրերգությանց ըմպած հրմայքն հրրեղեն.
Պայեր անոնց միստիք ճամբան կը պեղեն,
Ու կը ցնծան լույսով՝ զենիթ ու նատիր։

Ու կը բացվի փալփլուն՝ գիշերն երջանիկ,
Արձագանգներ կը խաղան դեռ հոս ու հոն.
Քերթված մըն է ցայգն համորեն, ջի՜նջ գեղոն՝
Որ կ՝երփներգե ծափ ու ծիծաղ ու ծաղիկ։

ԱՌՏՎԱՆ ԱՐԵՎԻՆ ՄԵՋ

Ահա՜ կ՝անցնի ցայգս անքուն,
Մութին ծածքը կը մաշի.
Ու կը կայթե կույսն այգուն
Իր քողքին մեջ մըշուշի։

Անցան սայլերն ալ դանդաղ,
Ու մըշակներն երգեցիկ,
Ու բանվորներն ու հոտաղ՝
Ճամբաներեն բալաձիգ։

Ճառագայթներ խուսափուկ
Լիճերուն մեջ կը խաղան,
Եվ հանկարծ թույր մը դեղձան
Կը ներկե ջուրը փափուկ։

Ու բոցեղեն լեզվակներ
Կը ծրծեն մեզն համորեն,
Արևին կյա՜նքն հրրեղեն,
Արևին փա՜ռքն անըստվեր...

Հոգիես ներս կը՝ խուժե
Քրքումն ալիքի նրման,
Եվ հովիկին առտրվան
Գինովությունն հաշիշե։

Լիճը բոսոր հարսնուկի,
Ցորենի ծովը կանանչ,
Կը հծծին տաղն անճանաչ
Մրտերմասաց շըշուկի։

Ու մարմանդները ճանճկեն,
Ու սարերը կապտորակ
Եղկ հծծյունով մը կ՝երգեն
Լույսին ոսկի պատարագ։

Տունկեր ոեհան ծաթրինի
Կը ծրխեն խունկ մը վայրի,
Որ կ՝ամպանա ու կ՝այրի
Բուրվառին մեջ արփենի։

Հոգիես նե՜րս կը խուժե
Քրքումն՝ ալիքի նրման,
Եվ հովիկին առտրվան
Գինովությունն հաշիշե...

Կը դառնան ժիր կախիլներն իմ ապրըշումն անրջանքիս,
Ոլորելով դեղին, ճերմակ մահն երբեմնի շերասներուն.
Խրոովանքիս մեջ կըսպասեմ, ո՞ւր, արդյոք ո՞ւր պիտի հանգի
Կույս ու ծաղիկ երազներուս դեղձան շառափը մարմըրուն։

Դառն հրճվանքով ես կը դիտեմ խելխոլ շրջպարն այդ դարձդարձիկ,
Գիրկն անդորրիս կիսամըրափ և անձկանքիս մեջ ամրափակ,
Տենչ մը դալար բաղեղի պես կը պլլըվի հոգվույս բաղձիկ՝
Զոր տենդագին կը գալարեր հուր սերերուն ուժգին պապակ։

Հապո՞ն, անցի՞ր, ծրծե՛ հեշտին համբույրն անույշ լեկներուն,
Ու թևաբախ սուրա հոն՝ ուր զույգ մը դաշտեր քիլ սմբուլի
Քեզ կըսպասեն՝ խնկապատար ցայգուն ցողովը թաթավուն,
Իրենց անհուպ միայնության մեջ՝ սրգավոր ու հեշտալի։

Շրջանն ըրե մարմանդներուն ու ծաղկածին հովխտներուն,
Անցիր տըմույն ըստվերներու մեջ աղոթող անտառներեն,
Գոտի հյուսե շուրջն ալեոր քարշեպներուն ու գալարուն
Գետին վըրա՝ որ կը վազե հրոնդալեն ու հեալեն։

Անցիր փաղփուն հյուսիսայգին բորբ աչքերու շամանդաղին,
Մինչև երդեմն արտոսրազօծ՝ կանացի բոց հոգիներուն,
Ըսե կրակոտ նայվածքներուն թե մանո՞ւկն եմ իրենց խաղին
Ու տար անոնց դողն ըստվերոտ պաղատանքիս իմ մոլորուն։

Այս իրիկուն, լուռ, անշըշուկ, օրհասին հետ բզկյումներուն,
Ու խաղաղիկ հորձանքին մեջ թռչուններու ցայգանդորրին,
Այս իրիկուն, թե՞լն անուրջիս, գընա՛, անցի՞ր, հուշիկ հեռո՞ւն՝
Լուսածըրար երկինքներու ճամբաներեն լայն ու լրին։

Խոլ դարձիդ մեջ, գընա՛ պահ մը կայքն ադամանդ աշխարհներուն,
Ժապավենիդ վրա շարելով անոնց արցունքը գունագեղ.
Խորասուզե ծոպդ ոսկեզօծ՝ ծովածիծաղ ու թրթռուն
Քընարին բիլ նայվածքներուն ծփծփանքին մեջ հոբդազեղ։

Ու շնչահատ վազե մինչև միգամածներն ոսկեփոշի,
Ու ցնծագին անցիր անոնց մըշուշապատ շավիղներեն,
Բայց անոնց բյուր շըլացքներեն քու ճղճիմ հուրքդ երբոր մաշի,
Փութով ինծի՛, փութով ինծի՛, փութով ինծի՛ դարձիր նորեն...

ՆՈՐ ՏԱՂԵՐ

<1906—1907>

ՎԱՅՐԿՅԱՆ

Թույլ շրշյուն մը, հեռո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար.
Երազներու պերճուհին է որ կ'անցնի,
Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար։

Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար,
Եվ ալիք մը թևը բացած կը վազե
Գրկել ափունքն իղձիս ոսկի ավազե։

Ո՞վ քաղցրությունը նայվածքին իր ծաղիկ.
Ո՞վ պերճությունը գընացքին իր հրպարտ.
Ճամբուն վըրա՝ իր քայլերուն հետքը վարդ՝
Ուր հեշտորեն կը հածի դեռ իմ մենիկ

Սիրտըս՝ բո՞ց մը՝ մըթնշաղին՝ մեջ անհետ...

ՋՈՒՐԵՆ ԴԱՐՁԻՆ

Երբ բըլուրն ի վար
Աղբյուրեն դարձին,
Իր վարսքի խուրձին
Մեջը սողոսկի
Նուրբ մատիկն ոսկի
Արևի լույսին.
Հիր սափորն ուսին
Երբ բըլուրն ի վար
Աղբյուրեն դարձին,
Մեղմով ծածանի
Լաջակն հողմավար՝
Թևով թռչունի.
Ու ծիածանի
Թույրով պսպըղա
Աչքն իր գեղանի.
Եվ երբոր ցնծա
Հնչյունը՝ ծնծղա
Զարդոսկիներուն.
Տենչանքով անհուն
Հոգիս պիտ՝ ըղձա
Գանձեր՝ զոր չունի։
Ծարավ շիղին պես
Պիտ՝ ըղձա անի
Երկու կաթիլ ջուր
Շուրթերուն իր կեզ։
Եվ իր ճակատին՝
Զովացքը ցրտին,
Ճակատին կըրակ՝
Զովացքը ցրտին,
Կարմիր սափորի
Ջուրին սառնորակ
Ցողովը բերրի՝
Կակաչ ձեռքերու...
Ա՜հ, այս իրիկուն
Սափորն իր ուսին
Աղբյուրեն դարձին՝
Սիրույս անանուն
Ջերմ սարսուռներով
Կը դողա սոսին...

ՄԱՌԱԽՈՒՂ

Նայ շոգոլին կապտորակ, թևատարած կը նստի
Ավաններուն լըռանիստ՝ նըվաղումին մեջ ոսկի.
Կարծես ծուխ մը հողն անդուլ դուրս կու տա իմ ծերպերեն։

Ու կը խայթե իմ հոգիս պարապն այս հոծ կապույտին,
Բիլ պատմուճան լուսաթել՝ որուն փախեր է կույսն հին։

Ու մըշուշը կը լայնա, ու մըշուշը կը լենա
Արտերուն մեջ՝ ուր խարտյաշ խուրձերն ինկան գիրկ գրկի։

ԱՆՁՐԵՎ

Բացաստանը վարագուրեց անձրևին քողքն ամպային.
Գյուղակն համբուն ողողեր է ջուրին ծափծափն ընդհանուր.
Անդերու մեջ կը կաթոտի ճերմակ փրփուրն արծպային։

Օ՜հ լիությունն որ ամեն կողմ հրճվանքի պես կը գեղու.
Օ՜հ, քաղցրությո՜ւնն ուր կը թառի անուրջս անհագ զերթ մեղու։

Տարափն անդուլ կը լըճանա, կը շափշափե միշտ խայտակ,
Եվ արևի պես կը փայլի ճամբուն սալարկն ըսպիտակ...

ԱՆԴԱՐՁ

Լուսնի լույսը ծառերեն ծաղիկի պես էր կախվեր.
Ապրիմ-մեռնիմ մը ձեռքիս՝ սիրույս ճամբան ես ինկա.
Ա՜հ, լըսեի՞ր, տերևին հովը ինչեր կը հծծեր։

«Կը սիրե՞ զիս, չի սիրեր, քի՞չ մը, բընա՜վ... տարվագի՞ն...»
Մեկիկ մեկիկ փետտեցի, գաղձերուն հետ ձանձրույթիս
Եվ արյունող փուշին հետ սրտիս մխվող թախծանքին։

Ինչպե՞ս կրկնեմ բարբառը երիցուկին մարդարե,
Հե՞ք ծաղիկ, զոր խեղդեցի զայրկյանի մը մեջ անհույս՝
Ուր ձեռքիս մեջ կը սուրար ձեռքիդ երազն համպարե։

Ինչպե՞ս կրկնեմ տաղերը նարկիսներուն ու վարդին,
Ու վիպերգը՝ կեռասե բաղրոններուն վրա ձյունող
Ճերմակ բուրյան շափրակի բաղդիներու մեղեդի՞ն։

Շամանդաղին մեջ՝ թել թել կ՚իյնա ջրցայտքն անտարբեր.
Լուսնի լույսին կ՚երկարին առվակի զույգ մը թևեր,
Ու շրջավայրը կ՚ըլլա աղապատանք մը տարփոտ։

Ճամբուն վըրա կը կրկնե ադբյուրն անվերջ հնչեցնելք,
Գուռն հիացիկ մանուկի աչքի մը պես է բացվեր.
Ջըրաբքին մեջ կ՚ուրվագրե լուսինն աղջկան մը պատկեր։

Թավուտին մեջ թեւաբաց, ահա՜, ակիլդ է կայծեր.
Այծտերևին հոտեան մատներն հերքըդ կը ջոյեն,
Ու տերևներ վեհերոտ կու տան իրենց համբույրներ։

Մառախուղով կը լենա հին շրջապիծն երազիս,
Ուր ամբարձիկ մարմինդ հըպարտ շուշանն է կեցեր.
Հոգվույդ կարմիր կարոտին, ա՜հ, պատարա՜գ ըրե զիս։

Ապրիմ-մեռնիմ մը ձեռքիս՝ նորեն դաշտերն ես ինկա
Ու տենչանքներըս գրկած լացի մարմինդ ըսպիտակ.
Դարձիս՝ ճամբան՝ սառե՞ր էր՝ տամուկ՝ լո՜ւյս ու լուսինկա...

ՍԻՐԵՐԳ

Տրցակ մը հուսամ ու տրցակ մը ուրց
Բե՞ր, ձեռքերովըդ դիր զույգ քունքերուս
Խուցիս մեջ ցանե յուղեր հինավուրց։

Դափը ձեռքս առնեմ նորեն այս գիշեր,
Ու ձյուն լույսին հետ հոգվույս ցրցքնե
Բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր։

Բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր,
Բուրյան շոգիներ համպար ու մուշկի,
Որ կ՚երփնաղօծեն երեկվան հուշեր։

Քիչ մը թեֆարիգ, քիչ մը վարդի ջուր,
Աբև ծիծաղի, ծաղիկ ծամերու,
Ջարդոսկիներու բազմաճաճանչ հուր։

Եվ համբույր աննյութ, և համբույր անանց
Վարդով զծգծված անհուպ շուրթերու
Կուսածին այգեր՝ փաղփուն լուսացանց։

Անուրջի ցայտքեր, ըղձակաթ գիծեր,
Դո՜ւք, շարժուձևեր կաքավ ու պարի՝
Հոգիս բանտեցիք դղյակին մեջ ձեր։

Հոգիս բանտեցի՞ք դղյակին մեջ ձեր,
Ճերմակ ըստեղներ հուր դաշնամուրին,
Գըղինձի թույրեր, ոսկեցոլ կայծե՞ր...

ԶՐՏՈՒՔ

Հոյհո՜յ, գետը կը թրջե ցայգուն քամակն արծաթված,
Իր հորձքին մեջ ծեծելով անդուլ խարակն ու խութեր.
Հոյհո՜յ, առուն հորդառատ դալարին ծոցն է նետվեր
Գաղջ տարփանքովն իր ջուրին՝ ուր արևը կ՚ապրի դեռ։

Հակուրջի մը առկախած գյուղակն անդին կ՚օրորեն
Անրջական հյուսվածքով խումբ մը ժայռի ըստվերներ.
Վանքին բակը՝ կ՚աղոթեն հսկա ծառեր տարորեն՝
Որոնց տամուկ շուքին մեջ Աստվածամարն է կայներ։

Ու գյուղակին դեմ նստած, երիտասարդ ու պշրոտ,
Պարտեզները՝ վերեն վար վազող ջուրին կրսպասեն.
Ա՜լ հափրացած խոլ գետին անարգավանդ դարպասեն,
Ու լրությունը խածնող լուտանքներեն արհավրոտ։

Գիշերային ջրտուքի ժամն է. լույսին մեջ կայնած,
Մըշակն անքուն կրսպասե՜, ոտքը բոպիկ, բահն ուսին.
Պարտեզներուն վրա կ՚իջնե թեթև քողք մը միգամած,
Ու ծղրիդներ՝ լուսնակով արբշիռ՝ անվերջ կը խոսին։

Ու կ՚երկարի լուսարծաթ ժապավենն այդ բարբառին,
Ինչպես փախչող ասուպի կոթունները կաթնավետ.
Ավազին վրա ջուրերու կ՚իյնա շառաչը վետվետ,
Խարույկները՝ ոսկեբաշ՝ ուրեք ուրեք կը վառին։

Հոյհո՜յ, առուն կը հասնի ցանկապատին քովերեն
Եվ երգի քուղ մը կու գա պլլըված իր գոտիին.
Սյուք մը կ՚անցնի, տերևներ ծա՜փ կը զարնեն ցնծագին.
Վարեն ջուրը կը խայտա, կը խնդա լույսն ալ վերեն։

Թումբերն անդուլ կը բացվին, ջուրն անդադար կ՚ոռոգե
Վարդենիքը, թրթաստանն և ածուները բոլոր.
Բահի երկու հարվածով նայիս առուն կը թեքե
Օձաճապուկ ձևերով հեղուկ իրանն իր ոլոր։

Ջուրն անընդմեջ կը հոսի, ածուները կը լենան,
Ու, դարձուցե՜ք, կը կանչե ծեր մը մութին ընդմեջեն.
Խիճերուն ու սիկին մեջ, բահերը՝ խո՜ւլ կը հնչեն,
Ու, դարձուցե՜ք, դարձուցե՜ք, կը կոչե ձայնն անխափան։

Աղջընակ մը, արիշին տակ նստած, շե՜ր կը կանչե,
Ու հոգնաբեկ մըշակին օրորի մը պես կու գա.
Հողը ծըծեց ջուրերուն տարփանքն՝ որ դեռ կը հնչե,
Եվ հիմակ՝ թա՜ց՝ կը խոկա իր երկունքին ապագա։

ԱՍՏՎԱԾԱՄԱՐ

«...Ահա կաթիլ մի կաթին քումդ
կուսութեան յանձն իմ անձրևեալ...»

ՆԱՐԵԿԱՑԻ

Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մեջ,
Մեղեսիկի փոշի մըշուշն ըլլամ ըսփյուռ,
Եվ առիգածն արծաթ՝ ջուրին վրա հոլանի.
Ու ձա՜յն ըլլամ, ըլլամ ծաղիկ, ըլլամ զեփյո՜ւռ՝
Ամեն իրի հըպիմ փափուկ թևերով գեջ։
Ըլլամ ջրվեժ, ըլլամ գետափ մը գեղանի,
Ըստվե՜րն ըլլամ խնկագունած այգիներուն,
Կամ գետերու հողմիկ ավաշն, ու գետաձայն
Հովին անցքը՝ երկնասլացիկ կատարներեն։
Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մեջ
Պատկե՜ր ըլլամ սրբազնացած ես համայնին.
Օղամանյա՜կ մ՚ըլլամ ես թանկ և անմարմին.
Ու շուշփա մը՝ հաղորդությանդ կաթնաձիր.
Գետեն անդին կանչե՜ս ինծի. Անցի՜ր, անցի՜ր.
Մեծ դյութության կայծակ մը տաս մըթար հոգվույս,
Ա՜հ, չըգայթի՜մ կոհակն ի վար ցընորքներուս.
Թող համբուրե՜ աչքիս ջահումն աչքերուդ կույս,
Ու չըգայթի՜մ կոհակն ի վար ցընորքներուս։
Ահա՜ մագիմ պիտի ցավիս սարակն ի վեր.
Երազներու սատափ ճամբեն ցրվե ամպեր.
Եվ իղձերուս կապույտին վրա, վարդ ամպը դուն,
Վարդ ամպն եղիր՝ մերթ լուսինկան պատմուճանող.

Դո՜ւն, աստվածյան գեղեցկության արփաբո՜ր հարս,
Սրբության հո՜ւյսը ձյունաձիր ու հրավառ
Գիշերին մեջ կ՚իջնե դեռ ուղիը լուսեղեն,
Դաթիլ մը կաթ՝ ծովացած քու սրբութենեն.
Ու տե՜ս, ահա՜, կը մանկանամ, Աստվածամայր,
Ու տե՜ս, ահա կը մանկանա՜մ գիշերին մեջ՝
Ուր լրսեցի ես աստվածյան ձայնին վայրէջ՝
Որ կը շաչեր աստվածարյալ հոգվույս համար։

ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ

Այսօր կաթվարդ երազե մը արթնցա,
Գիրկս անսահման գրգանքներու է բացվեր.
Այսօր, Հոգի՜ս, պիտի բերեն քեզ ընծա՝
Նոր տարփանքիս թիթեռնիկին հիր թևեր։

Այսօր իղձով իմ հոգիս է կաթոգներ.
Ու վարդի պես կը բացվի սիրտս իբր ընծա
Այն լուսոռոգ պատարագին սրբանվեր՝
Զոր ծափեցին իմ երազներըս ծնծղա։

Երեկ գիշեր իմ հոգիս էր ինկած, ա՜,
Թավիշին մեջ կախօրրանին ոսկելույս՝
Զոր ճոճեցին մինչև առտու, մինչև Հո՜ւյս,
Ըղձանույշներն իմ Տենչանքիս նախընծա։

Այսօր լույսի ծովի մը մեջ արթնցա,
Գիրկս անհամար գգվանքներու է բացվեր.
Այսօր, Հոգի՜ս, պիտի բերեն քեզ ընծա՝
Մանուկ բույրեր և աղջկան պես հովեր։

Մանուկ բույրեր և աղջկան պես հովե՜ր՝
Որոնց շուրթերն էին փնտռեր ընդերկար,
Ու գրկանքին խանդաղատ գիրկս էր բացվեր.
Երանությո՜ւն, լույս բոպեին մեջ երկա՜ր...

Եկո՜ւր, անցնինք ծառաստանեն այս լույսին,
Ու բացատքեն Գույնին, Ձևին ու Թույրին.
Եկո՜ւր, Հոգի՜ս, եկուր երթա՜նք միասին,
Մինչև Աստվա՜ծամայն, մինչև կրկին...

ԱՆՁՐԵՎ

Համբույրն անձրևին կը թրջե շափշափ
Վարդի գիծն անտես բերանի մը շուրջ.
Օ՜հ, աս ի՜նչ գրգանք, օ՜հ, աս ի՜նչ անուրջ,
Որ կը տամկանա, գաղտ ու հապշտապ,
Իմ ծարավահյուծ, իմ որբևայրի
Իրիկուններուս շուշանին վրա լուրջ։

Անձրևոտ գիշեր, գրթա՜ծ քահանա,
Թոթվե՛ սրբենի այդ տեղատարափ,
Ջերթ մասունքի ջուր, մինչև որ լենա,
Մինչև որ լենա՜ բաժակն այս պարապ
Իմ երազներուս՝ որ ոսկեմբրապ
Կեցեր է ցրտոտ մարմարին վրա։

Օ՜հ, աս ի՜նչ գրգանք, ո՜հ, աս ի՜նչ անլուրջ
Կու տաս դուն ինծի, անձրևո՜տ գիշեր,
Դո՜ւն, բարեբարի, գրթա՜ծ քահանա,
Որ հին էլկանքին ժողվեցիր փուշեր,
Եվ հնչեցուցիր բարբառդ՝ ոսկի՜ մուրճ՝
Որ մտքիս նոր նոր ղուռեր կը բանա...

ՁՅՈՒՆԻ ՑՆԾՈՒԹՅՈՒՆ

Պարտ է ձյունին, փրսփրտուքը պարփկներուն,
Որ տանիքին վրա ճերմակ էջ մը կ՚ըլլա՝
Ուր կը հաձի դիրն անուրջիս իմ օրորուն.
Որ հոգվույս մեջ ալ ըսպիտակ հորձք մը կ՚ըլլա,
Ու կը խուժե սարերեն վար գորշ խոհանքիս։

Եվ արևի՜ն կըսպասեմ ես ցնծապատար,
Միտքս երազով լեցուն համակ, ձեռքս ծափո՜վ.
Ունկնդրելու զանգակն անոր պատարագին,
Ու դիտելու լույսե աղջիկն՝ որ պիտի տար
Առքի բոցը՝ հուզումներուս մարած ճրագին։

Ու տոնելու՝ ճերմակին փառքն այս ձյունեղեն,
Որ կապույտին կը լրծորդվի հորիզոնին,
Ու կանչելու համար հոգվույս մեջ վերըստին
Ճերմակ հույլ մը վաղընջական անուրջներեն,
Ու ծիածան մը գույներե վայրավատին։

ՄԵՌԵԼՈՑ

Զըմեռ օր մը, ձյունին մեջեն, մի՞ս մինակ,
Ձյունին մեջեն, տարի դամբանն իմ հոգվույս,
Ժըպիտով մը ծընած նախկին սեր մը կույս.
Ըսպիտա՞կ վարդ՝ որ սառեցավ ձյունին տակ։

Գարուն մըն էր, և համբույրով մը բացված
Դամասկյա՞ն վարդ, գինով արփին գաղջ գոլեն,
Նըվաղեցավ ուրիշ սեր մը. սե՞րն, Աստվա՞ծ՝
Զոր թաղեցի՝ հուսատ՝ կյանքին կանչելեն։

Ամրան վերջն էր, նայվածքով մը բողբոջած
Դեղին վա՞րդս ալ ինկավ աշնան շունչին տակ.
Ձայն վերցուցի՝ արդե՞ն եղած հիշատակ՝
Ու նետեցի փոսին մեջ, ցա՛ծ, ա՞հ, շա՞տ ցած։

Հիմակ ամեն մեռելոցի ես կ՝երթամ
Անոնց մարմար դամբանին վրա ցրտաշունչ,
Աղոթքով մը, կորած մեգին մեջ տարտամ
Անոնց հուշքին, մըտաթափառ, լուռ ու մունջ։

Ու մըտածումս ալ, հե՞ք նժդեհ քահանա,
Խաչ հանելով կ՝ըսե բառեր լուսեղեն.
Ու նայվածքս կը բաժնըվի երբ հողեն,
Հոգիս զանոնք անգա՞մ մըն ալ կը մոռնա...

ԵՐԿՈՒ ՍՐԻՆԳ

Սըրինգ մը կա մեջն երկդիմի այս առտվան,
Ծայրիի մեծ ծառին դիմաց ու փըլուզակ
Մոլոշագույն որմին ներքև. սըրինգ մը որ
Կը սրսրփա ցավը լույսին, որ չի՞ ծագիր...
Երգը՝ իղձի և հառաչի թել մըն է հիր՝
Որ կը հյուսվի անկյուններու մեջ արփավոր
Ու կ՝անհետի մըշուշին մեջ՝ որպես սուզակ՝
Որ ընդերկար հավետ չի՞ գար ա՛լ երևան։

Սըրինգ մըն ալ այս առտվան մեջ մանիշակ.
Սըրինգն է ան այծհորանի անդեորդին,
Որ մեգին մեջ կը ծագեցնե երգ մը՝ արև
Ու ասմազուն ըմպած դաշտին տեսիլն ոգող։
Ու տրտմությունն այգուն՝ կ՝իյնա պահ մը զերթ քող.
Ու պարիկ մը քումայթ՝ հոգվույն կու տա բարև.
Ու ծառերու ծաղկանըկար սրահակն հեշտին
Ընդնշմարել կու տա լիճին կույսը խաժակ։

ԱՆԱՆՈՒՆ

Վայրի՞ ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսե՛, մասուր ու կանանչե
Ցանկապատին շուքին նստած
Վայրի՞ ծաղիկ, անունդ ի՞նչ է։

Ըսպիտակ, կաթ ու մազտաքե
Բուրող ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսե՛, քի՛չ մը գեթ չե՞ս դողար,
Հովիկն անույշ երբոր փըչե...

Հրպա՞րտ ծաղիկ, անունն ի՞նչ է
Պարիկին, որ անցավ քովեդ,
Հեզուկ ու սև սաթի վետվետ
Ցայտք մը ձրգած իր քամակեն։

Գիտե՞ս, ծաղի՞կ, անունն ի՞նչ է
Դողին՝ զոր քեզ տըվավ հովիկ,
Ու ձայնին՝ որ գիս կը կանչե...

ԻՊԻԿՆԱՅԻՆ

Հորիզոնեն վար՝ քայքայված ու ցրվուն՝
Ոսկինարգես շառայլի փունջ մը կ'իյնա՝
Իրենց մորկան կաթին կանչող ուլերուն
Ժեռուտ ճամբեն գյուղակ դարձող հոտին վրա։
Բաժնըվեցան իրարմե արփ ու մըշակ,
Լո՜ւռ՝ ձեռքերնին ճակտին դրրած մեկմեկու.
Ու՝ թիկնադարձ՝ արևն ա՛լ տուն կը դառնա
Լեռներեն վեր՝ ինչպես մըշակն իջավ գյուղ.
Առանց գոլեն ղուլգ մ'հոգածու ձեռքերու,
Բացավայրին մեջ կը մընան հատկ ու չյուղ։
Գիշերին հետ անգա՜մ մըն ալ մեռ մինակ...

Սարերուն վրա կանանչ լույս մը կը ցաթի,
Ապրյուրներուն կ'եկլե խմբերգն արծաթի...

ԱՅԳԱՅԻՆ

Տանիքներուն վրա մըշուշը անդուս լաթեր կը փըռե,
Ճամբաներուն վրա արևը՝ շոգոլիներ ոսկեման։
Որմին մոտիկ սըրինգն անվերջ՝ մեղեդիներ արուլրե,
Որմին վըրան՝ աքլորն ըսթափ զարթոնքի ճիչն անսահման.
Որմին դիմաց աղջըկակ մը տարփոտ երգեր կ'ոլորե։

Աղավնիներ, լաչակներու պես մետաքսե գունագեղ,
Ճամբե ճամբա կը թոռչըտին թույլ ծածանքով վաղանցիկ։
Աղբյուրին լուրջ ջուրերուն մեջ ճառագայթ մը կ'իյնա շեղ,
Աղբյուրին հարթ քարին վըրա՝ ձայնն հոտաղին երգեցիկ,
Աղբյուրին զով ծորանքեն հառա՝ համբույրն հովին առտրվան։

Խա՜չ հանեցեք ու ծա՜փ զարկեք, կարմրություներ հինայի
Եվ արփածին թույրեր հագած՝ առտուն մեզի կը նայի։
Սառերուն վրա թոչունները խմբերգն հիմա կ'ունձրևե,
Սառերուն տակ ծիծաղը ջինջ, մանկան՝ հոգնած փաքավե,
Սառերուն քով բույրը ծաղկին՝ ամեն դուլեն ու ձեն...

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Ա

ԳԱՐՆԱՆ ՀՅՈՒՂԸ

Դաշտին գոգը՝ արահետի մը եզերք՝
Հյուղակ մը կա կանանչներով ողողված.
Իր առջևեն կ'անցնի ամեն տըվարած,
Ճանդուկներուն կը կարկաչե հոն խմբերգ,
Ու տատրակներն ալ՝ ծիածան ուլերով՝
Քմշոտ գիծ մը կը գըծեն շուրջն երագե։
Ու պորերը, խոշոր շարժուն շուշաններ՝
Կ'երազեն մեջն ավազանին տաղին զով,
Ուր Ծորակին մեներգն անվերջ կը վազե։
Մասրենիներ, վարդենիներ, մորիներ
Հոն, ձեռքձեռքի, գարնպար մըն են բոլորեր.
Ծաղկանույշներ, ապրիմմեռնիմ, մանիշակ՝
Բուռ բուռ բերեր որմերուն տակ են ցաներ։
Թաղարներեն մեխակի հույլ մ՝ աչքերներ
Կը ծպտերգեն հյուղին հրճվանքն անտարակ։
Օ՜հ, գաղջ ավիշն՝ որ չորս կողմեն կը պոռթկա՝
Ընձյուղներով, շաքիլներով անհամար.
Օ՜հ, արևոտ խայտա՜նքն արբուն աղջըկա՝
Որ կը զեղու բորբոք, արբշիռ ու հիմար,
Կուրծքեն գարնան՝ որ թևերովն իր բաղեղ՝
Տաքփո՜ւռ՝ հյուղին կը պլըվի, ու հեղեղ
Դանդաղով մը կու ուա համբույրն իր գալարե։

Բ

ՀՅՈՒՂԻՆ ԳԱՐՈՒՆԸ

Թարեխս քնուած էր բաժակը մեղրախառթ
Ճամբուրներու՝ նայադը ծով երազին.
Ու չըլլքած դեռ ափունքները ակատ
Ցրթունքներու՝ քանեն ընդոստ արթնցար
Ու գրեթե մեջ գլուտ ամառուն լուսոտ։

Առտուն, մանուկ՝ որ զերթ ծաղիկ կը ցնծա՝
Եվ հոգիին կը բերե բույրն իր նորոգ։
Եվ ամեն կողմ երթալ ուզող զերթ մանուկ՝
Առտուն՝ իմ ալ թևես բռնեց ու տարավ
Բլուրեն վեր, դեպի դաշտերը տամուկ։
Եվ անապակ իր աչքերուն նայեցա,
Եվ աշխարհնե՜ր տրվավ հոգվույս իբր ընծա.
Հորիզոններ՝ ուր լույսն անհուն կը ցնծա։
Եվ հոտևան ձեռքին եղա ուշադիր՝
Որ շեշտակի Գարնան Հյուղը ցույց կու տար,
Որուն դրրան առջին կանգուն կը խայտար
Ծաղկապատար Հյուղին Գարունն անպատիր։
Ծաղիկ մըն էր, ա՜ն ալ, փափուկ ու բուրյան.
Ծաղիկ՝ վարսերն ոսկինարգես՝ ու ծաղիկ՝
Թարթիչներն ու աչքեր, ճակատը շուշան,
Եվ այտերը կակաչ, բերնակն ատրուշան,
Թուշը շափրակ, այծտերևի՝ իր ձեռքեր։
Եվ իր հոգին բուրմունքի հեշտ երգն ուներ,
Արփիացող, ջերմին ինչպես ծաղկանոց։
Ու կը կանչեր գունեղ Գարունն Հյուղին՝ զիս
Իր համբույրին՝ ինչպես նայադն երազիս...

Գ

ԵՐԳԸ

Ժամը վեցն է. հյուղակը ծառերուն դեմ կը խնդա,
Ու չարանճար հովիկն ալ՝ ծաղիկներուն խաղընկեր՝
Կը պզպզջա անհանդարտ, պզտիկ երգեր կը կարդա,
Եվ կամ նայիս մերթ գաղտնի լըճակին ծոցն է ինկեր։
Ես երազուն, ջըրեզրի ուռենիին կոթընած,
Միջօրեին մեջ անհետ՝ թելն ըղձանքիս կը փնտռեմ
Մըտամոլոր. և հանկարծ նուրբ կամրջակ մը ոսկի՝
Հյուղեն երգ մը՝ կ՝երկարի մինչև ափունքը նըսեմ,
Մինչև ափունքն իմ հոգվույս՝ ուր կոհակ մը հեղակարծ՝
Ոսկի գետեն արևին՝ եղկ ու հանդարտ կը պառկի։
Օ՜հ, Գարունն է Հյուղակին, շատըրվանը իմ հոգվույս՝
Որ լուսասփյուռ ցայտք մըն ալ ինծի նըվեր կը խրկե.

Ու միջօրեն բովանդակ մետաքսահյուս ցանց մըն է,
Ուր բռնըված կը կանչե բաղձիկ թռչնակն իմ հոգվույս։
Պիտի սիրե՜ քեզ հոգիս, պիտի սիրե՜, սիրո՜ղ ձայն,
Քու հոգիեդ բաժնըվող ցայտուն կոհակն արծաթի՝
Որուն փըշուրն անհամար աստղերու պես կը ցաթի
Տիեզերքին մեջ հոգվույս՝ ուր ոլորտներ կ՝իյնան լայն...

Դ

ՄՐՈՒՐԸ

Իրիկունը, մետաքսներու պես փափուկ,
Իրիկունը՝ շարբաթներու պես քաղցր է.
Իրիկունը բաժակն է՝ շուրթը տամուկ՝
Ջոր նայադ մը հրրամցընել կը բերե։

Օ՜հ, զիս հիմակ հյուղակին դուռը տարեք,
Լուսաշապիկ օդանույշներն իրիկվան,
Ավազանին մոտ, ուռիին շուքին տակ՝
Օ՜հ, զիս հիմակ հյուղակին դո՜ւռը տարեք...։

Այս բաժակին հեղուկն ո՜րքան հոտևան,
Այս բաժակին հեղուկն ո՜րքան հեշտին է.
Թավուտքներուն մեջը քիչ քիչ կը մթնե՜.
Պիտի փշրի՜, ավա՜ղ բաժակն իրիկվան...

Շրթունքներըս վերջին պուտին են ծարավ,
Ու ես Գարնան Հյուղին տարփոտ շուքին տակ
Կը մոտեցնեմ երկչոտ՝ բաժակն իմ բերնիս.
Դիրտ մը կա հոն, զոր հեգ հոգիս դժվարավ

Ու դառնությամբ կ՝ըմպե մինչև իր հատակ.
Հյուղին կույսն է՝ որ մըթնշաղն իմ սրտիս
Կը սեցընե՝ հեծկլտուքով մը գիշեր...

Կը հեծեծե՜, ու չի՜ գիտեր թե քարին
Քսվող սի՜րտս ալ ինկավ ցայգուն մեջ խորին։

Ծ

ՀՅՈՒՂԻՆ ԱԾՈՒՆԸ

Այծամարդեր հովին քընարն են կապտեր,
Ու պարտեզին մէջ անդադար կը զարնեն
Խառնանըվագ եղանակ մը խոլական,
Որուն ջուրն ալ կը խառնե մերթ իր կերկեր։
Շահպրակները մընացեր են առանձին,
Լըճակին շուրջ, թաղարներու մէջ թիթեղ,
Ուր կայլակ մը կ՚իյնա կարմիր, ամեն հեղ
Որ հովն անխիղճ ենթարկե ծառն իր ցունցին։
Հյուղն աներազ կու լա ժըպիտ մը դաժան.
Պատուհաններն՝ անվարագույր, անթաղար,
Տժգույն բաղձանքն ունին լույս ու կապույտի։
Ու ցավագին և անթարթիչ զերթ կոպեր,
Ուր անծաղիկ աշնան մը թուխպը խաղար՝
Հոն անանուն թախծություն մը կը փթթի։
Բայց, երիզված ժապավենով ճառագայթ՝
Ամպերու գորշ վիժակներուն ետևեն՝
Կ՚երևա բիլ շարեշապիկ մը անգայտ՝
Որ երաղել կու տա հյուղին, ոսկեղեն
Պերճությունը նոր գարունի մը կուլսին...

ԸԼԼԱՅԻ՜, ԸԼԼԱՅԻ՜

<1> ԻՐԻԿՈՒՆԸ

Սա իրիկունն ըլլայի ես
Եվ հրպեի ճակտին ամեն անցորդի.
Ջքնաղագեղ ու նրվաղուն համուրդի
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի երգովը թռչուններուն, մարդերուն,
Ու տարրերուն աղաղակովը տրոփուն՝
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկո՜ւնն ես ըլլայի,
Թույլ, նազելի, շըղարշային, վարդաբույր,
Ու ծրփայի զերթ ոսկեսար վարագույր
Վրան ամեն հոգիի։

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի զանգակին զողանջներովն երկնաձեմ.
Խնկապատար, օծուն, ջահված ժամի պես՝
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Իմ անդորրիս մեջ ոգևար աղջըկան
Մարող ճրագին բոցեր տալու իմ ցոլքես.
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի գոռ ծափովն օվկիանի ջուրերուն.
Սյուքին ծաղիկ մեղեդիքովն ակաղձուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Որ կը մարի սատափ բարձին վրա ցայգուն.
Թոթափող վարքսը գունագեղ ու ծրփուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,
Համայնական, չքնաղ, քաղցրիկ, լուսագես.
Եվ ամենուն տայի հուրքես, ոսկիես։
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

<2> ՀՈՎԸ

Ալիքներուն վրա ոստոստող հովն ըլլայի,
Ու ջուրերուն խուլ մրոունջին մեջ ամայի՝
Ձկնորսներու ականջն ի վար փսփրսայի
Սիրված երգեր, քաղցրությունով օծուն բառեր։

Հովն ըլլայի կատարներուն վրա պարանցիկ,
Ու ձյունին մեջ սառող մարդուն համար լայի.
Հովն ըլլայի՝ հողվրտիքին մեջ երգեցիկ՝
Ու ծրծեի տակավ գաղտնիքն ես Անդիի։

Ձմեռներուն ես ամպավար հովն ըլլայի,
Եվ անճրագ խուղերու ճիչն հորձքիս ձուլած,
Անցորդներու հոգվույն վրրա փշրվեի
Իբրև ալիք։ Ու տանեի հոն կոծն ու լաց

Տըղաբերին, որ հողին վրա կը գալարի
Եվ անսրվաղ մանուկներուն, ու գրկաբաց
Մատաղատի, որդեկորույս մորն ալ՝ որուն
Տարիքին բոցն հոգվույն մուխին մեջ կը մարի...

<3> ՀՅՈՒՂԸ

Դաշտի ճամբու մը վրրան,
Կամ ըստորոտը լերան,
Ուղևորին ժամանման
Ըսպասող հյուղն ըլլայի։
Ու գգվանքիս կանչեի
Ես ճամբորդներն անժման,
Ու ճամբուն վրա մենավոր,
Ու ճամբուն վրա ոսկեման,
Եկվորներուն դիմավոր՝
Ծրխանիս ծուխն ամպեի։

Ու գրգանքիս կանչեի
Ուղևորներ պարտասուն,
Ու բարևի մը փոխան
Հազար բարիք ես տայի։
Հազար բարիք ես տայի.
Գոլը կրակին ճարճատուն,
Կութքը բերրի դաշտերուն,
Բոլոր միրգերն աշունի,
Ու մեղր, ու կաթ, ու գինի...

Ու լըսեի ես ցայգուն,
Քովը կրակին ճարճատուն,
Երգն իրիկվան եկվորին.
Ու ջամբեի ես ցայգուն
Երազներով պատարուն
Նինջ՝ իրիկվան եկվորին։
Ու լըսեի ես այգուն,
Սրտապատար ու տրոփուն

Գովքն իրիկվան եկվորին.
Ու դիտեի ես այգուն,
Ու խոկայի օրն ի բուն
Երթն իրիկվան եկվորին...

Ու ձմեռներն ալ համբուն,
Հըրավիրակ զըվարթուն,
Կանգնեի քովը ճամբուն.
Ու ձյունապատ հեք մարդուն
Ես հայրորեն, լայնաբաց
Երկու թևըս պարզեի.
Մի՜շտ քաղցրագին, նյութացած
Հըրավե՜ր ես ըլլայի։

Ա՜հ, ըլլայի՜, ըլլայի՜,
Դաշտի ճամբու մը վրան,
Կա՜մ ըստորոտը լերան,
Ուղևորին ժամանման
Ըսպասող հյո՜ւղն ըլլայի։

ԲԱՂՁԱՆՔ

Արտաշես Հարությունյան բանաստեղծին

Բարձունքներու լայնշի ճամբան ըլլայի,
Որ ծաղկահյուս կողերե վեր կը մագլի,
Ու գագաթին հասած՝ նոր ու հեշտալի
Հորիզոնին սնգուս գիծին կը նայի։
Ու տանեի հոն հոգիներն ըսպառած,
Ձանձրույթն՝ որոնց ոլորտին վրա կը փլչի,
Ու ցույց տայի՝ լայն հորիզոն անուրջի՝
Բերրի դաշտերն ու ճամբաներն անմոռաց՝
Ուր քաղցրությունն հոգվույն կ՚ըլլա հակուրջի։

Կատարներուն, հագած երանգ հինայի,
Մրգաստվենին, այգիներուն, դաշտերուն
Մեջ պարագնաց հովին խմբերգն ըլլայի։
Եվ ըլլայի ձայներիզը թրթռոուն,
Աղբյուրներուն, կապուտաչվի ակերուն,
Լիճին խազաղ, ծալծալ մրմունջն երերուն,
Շառաչն հզոր՝ օվկիանին, գետերուն,
Համայնական Ձայնն ըլլայի, Ձայնն անհուն
Ու խնծիղովս անպարագիծ ու կայտառն
Քերթողներուն լեցվեր հոգին ամայի։

Անտառներու մենության մեջ ափրալի,
Ամբարձուղեջ ծառերու մորճ թևերուն
Վրա թառող լռությունն ու գրայի
Կամ ըլլայի արահետը խնկեղուն,
Ծառաստվերի մութ ձորձին մեջ պլլբվող։
Կամ ըլլայի կոհակուռույց ալելուն
Հարևանի հեղեղատին լուսաշող,
Ու քերթողին տաղես վանկեր ես տայի։

Երգն ըլլայի թռչուններուն ծնծղաձայն,
Ու դառնայի ուրախության ճիչ մը լայն,
Բանաստեղծի հոգիներուն մեջ նրկուն,
Ուր կը թախծի խոհանքն ամպոտ, անանուն՝
Ինչպես որի՝ թառած շիրմի մը գլխուն։

Եվ ըլլայի լույս, Ձև, Երանգ, Թրթռում,
Կյանքի փաղփուն պատմուճանը ծիրանի,
Կենսաբաղձիկ հոգվույն երազն անպատում.
Եվ անձրևեն վերջ անարև ու տրտում,
Հառաչաձայն անձրևեն վերջ երբեմնի,
Նըշուլեի ես վայրկյաններ երջանիկ,
Արևաշող ժըպիտ, ծափեր ու խնդում՝
Բանաստեղծի հոգիներուն մեջ մենիկ։

ՀՈՎԸ

Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին.
Ձարահնճի ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ դրան ետին մոռցըված՝
Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին։

Իր ետևեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շըվարուն ու հոգնած.
Ինք խույս կու տա իմ գրգանքես, թևերուս
Պարապնդումն է դատարկ.
Բայց ա՜նառակ՝ երկու ձեռքես կը փախչի,
Մինչ ետևեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շըվարուն և հոգնած։

Մինչև դաշտերը կը վազեմ հետապինդ,
Մինչև անտա՜ռն իսկ կ՚երթամ.
Բայց ամենուն կրնա ընել ինք դարպաս.
Թուփին, ջուրին, տերևին.
Ու լըճակին գիրկը կ՚իյնա, կամ տեսնես
Ծառին կատարն է թառած։

Մանուկի պես կը պլլըվի երբեմն ալ
Մայր թուփերու քըղանցքին.
Եվ երբ զինքը կը կանչեմ ես սրդոդած՝
Կը քրքըջա ինք անդին։
Շա՜ղ, ապտակ մը կը զարնե մերթ երեսիս,
Նույն վայրկյանին կը փախչի,
Եվ ես ի զո՜ւր կ՚իյնամ նորեն ետևեն,

Մինչև դաշտերը կը վազեմ հետապինդ՝
Մինչ անտա՜ռն իսկ կ՚երթամ...

Եվ երբ հուսատ կը հեռանամ թիկնադարձ,
Կոնակես վե՜ր կը մագլի,
Կամ մազերըս կ՚ուզե համբել, կամ հանկարծ
Ուժգին մեջքիս կը փարի։

Եվ երբ ցասկոտ նորեն ետիս ես դառնամ՝
Վաղո՜ւց փախեր է արդեն,
Ու չորս կողմըս կ՚ավրըշտըկե ու վարդեն
Կ՚առնե անոր սակավարյուն շափրակներ.
Ու, դարձյալ՝ երբ կը հեռանամ թիկնադարձ՝
Կըոնակես վե՜ր կը մագլի...

ՏԵՐԵՎՆԵՐԸ Կ՚ԸՍԵԻՆ...

Ոսկի շաղով օծեցիր
Կապույտ ծաղիկն ակերուն,
Լիճերու պորտը սարսռուն,
Ու գետակներն ափնածիր։
Արև՜, մե՜զ ալ ոսկեզօծե, արև՜, մե՜զ ալ, ա՜հ, մե՜զ ալ...

Ոսկի թույրեր սրսկեցիր
Բըլուրներու կողն ի վար.
Փայփայեցիր հողմավար
Դաշտերուն վարսքը ցանցիր։
Արև՜, մե՜զ ալ գգվե մոտեն, արև՜, մե՜զ ալ, ա՜հ մե՜զ ալ...։

Ոսկի մատիկդ հըպեցիր
Եվ համբույրիդ դըրիր բոց,
Իրիկվան մեջ այս հեշտին,
Մարիներուն ու մարդոց,
Աղջիկներուն՝ կաթնածիր
Ու վարդ մըշուշ ճակատին։
Արև՜, մե՜զ ալ ողջագուրե, արև՜, մե՜զ ալ, ա՜հ, մե՜զ ալ...

Ոսկի կյա՜նքը մեզ տըվիր.
Եվ առանցքը դուն եղար
Մեր ավիշին հոծ տենչին.
Տակավին մի՛ բաժնըվիր
Եվ հնչեցուր ոսկելար
Անհուն քընարդ՝ հե՜ղ մըն ալ.
Ուզե քիչ մը համենալ,
Համբուրե՛լ մեզ վերըստին։
Ու չը ծագած դեռ ջնջին,
Բայց անգորով ու ցրտին
Լույսն անհունեն մոլորած
Լուսավորին առաջին
Կենսավետե մեզ ամենս ալ, արև՜, ամե՜նս, ամե՜նս ալ...

Կ՚ԵՐԹԱ ԱՐԵՎՆ ԻՐ ԶԱՏԻԿԻՆ...

Կարմիր, նախշուն հավկիթի պես
Կ՚երթա արևն իր Զատիկին.
Ահա՜ կ՚առնեմ, կրկին կրկին,
Մեղույշ բարևն՝ իր ծառերեն
Ներս երկարող հույր թաթիկին։
Անցա՜վ ծովեն մեծ կույսն հրավառս,
Ու կապույտին եղավ ինք հարս։

Ու ջրծաղիկ մը զերթ՝ լայնշի
Լրճակին մեջ. ամպ-մշուշի
Լրճակին մեջ հորիզոնին՝
Դեղին թերթերն իր կ՚ընդառնին
Ձենիթին երգը վարդագոն։
Եվ երկինքի նոր տարփանքին
Եվ հիացքին զերթ նշանակ՝
Կ՚ընծայվի թանկ ու փառունակ
Շողակն առջի լուսավորին։

ԻՐԻԿՎԱՆ ՄԵՋ ԽՈՐԻՆ...

Իրիկվան մեջ խորին,
Երբ օդահած կը թռչի,
Միրանեծաղիկ փետուր անուրջի՝
Հիր ճառագայթն արևին՝
Հեծքն է աղբյուրին մեջն ամեն ճիչի։
Իրիկվան մեջ խորին,
Երանգներ երբ ջուրին
Մեջը մարմրին,
Ու թանձրամած ժրխորին
Իյնան թևերը մեկեն.
Իրիկվան մեջ խորին՝
Կարկաչն աղբյուրին կը կանչի հատակ՝
Հովիկ նաժիշտն՝ իր ջուրին
Խամ հանդերձը փոթելու։
Եվ իրիկվան մեջ խորին,
Ծանրը ինչպես ալելու,
Կարկաչն աղբյուրին կը կանչի հատակ,
Դեռ համեցող հոտն ըսպիտակ
Գառնուկներուն՝
Որոնք հեռո՞ւն՝
Մբթնշաղին մեջ կ՚իյնան
Բաղիներուն պես ձյունին։
Եվ իրիկվան մեջ խորին,
Իրիկվան մեջ ծաղալատան ու բուրյան,
Կարկաչն աղբյուրին,

Իր շրջակայքի
Հովանոցներուն մեջ կը պըտուտքի,
Հոն ծաղիկներուն ու տերևին հետ,
Ըսպասելու որ ծագի
Լույսն առաջին լուսավորին։

ԻՐԻԿՎԱՆ ԻՂՁ

Օրիորդ ՆԱՐԴԻԿԻՆ

Իրիկվան մեջ անհետելու հույսն ունենալ,
Եվ հանձնըվիլ նուրբ կածանի մը քըմայքին.
Խորխի մը պես թողո՞ւլ ձանձրույթն ու հափրա՞նքն ալ,
Եվ անդորրով պատմուճանե՞լ հիվանդ հոգին։

Ու լույսերո՞վ պարածածկել հիվանդ հոգին.
Քույր ունենալ ջուրին կարկաչն ու կապույտ բաղ,
Եվ ամենդրել ճամբուն քովերն երգող այուքին,
Մեծ քաղցրությա՛ն մը խառնըվիլ, ու մենանա՞լ։

Ընկե՞րն ըլլալ ցորեններուն. մրգաստանին
Դուռը բանալ զավկի մը պես, մըտերմորեն,
Ու թողուլ որ շահարիկներ ըզքեզ տանին

Թևապարփակ՝ լայն լըռության մը համորեն։
Հոն շրջապտյուտ ծառերուն հետ եղբայրանա՞լ.
Տարփո՞ղն ըլլալ ծաղիկներուն. ծովածավալ

Իրիկվան մեջ՝ անհետելու հո՞ւյսն ունենալ...

ԻՐԻԿՈՒՆՍ

Բանաստեղծ Վահրամ Թաթոյի

Իրիկունս է բարի՜, բարի՜, ու լիաձեռն ու հոտևան.
Ոսկի ուղ մը՝ կամուրջ եղած ընդմեջ տիվին ու գիշերվան։
Վարսադիտակ ծառերուն տակ կը կղկաթիմ լույսին համար.
Արևին պերճ լույսին համար՝ որ կը փաղփի քրքմանբկար
Մեջն հոտևան ծայրիներու ծայրածավալ ծաղիկներուն՝
Ուր դիցանվեր բաժակներու քամեց ամբրոսն անհագ մեղուն։
Ծառոց ետին ճաճանչավուխտ պաստառ մըն է արևն ոսկի,
Ուր ծաղկածին ուղեշներու ճամուկ հյուսքը կը սողոսկի։
Ու զեփյուռն ալ, կայտառուն համբույր, մանկություն մ՚է վերադարձած.
Ու ջրցայտքն ալ՝ փսփսուքն է բարեկամին՝ մըտերմասաց։
Սյուքն աղջընակ՝ որ հյուսիսեն կը քնքշանա հոգվույս վրան.
Ու ջրցայտքն՝ որ լաջակ կ՚ըլլա նարկիսներու գլխուն դեղձան,
Կամ արտասուք՝ աչքերուն մեջ շահպրակներու հույլին ցիրցան
Ու քաղցրությամբ կ՚օծե մենիկ ծաղիկներուն այդ լրոարան։
Ու թերթիկներ՝ շահարիկի շընորհք՝ կ՚իյնան ափերուս մեջ,
Բաց ափերուս՝ որ կ՚երկարին լույսի խուրձին փողփողենէջ։
Ահա՜ կ՚անցնի, մըշուշված բիլ կազով տեսիլ մ՚ալ զերթ ալիք.
Զարմանուհի մ՚է վարսագեղ, կաթ ու վարդի՜ հրրաշալիք...
Հավերժահարս կաթ ու վարդե, ծաղիկ, ճաճանչ, ջուր ու զեփյուռ...
Շա՜տ էր լեցուն հոգվույս, ո՜վ Տեր, բազմազեղումն այս շրջասփյուռ...

ԼՈՒՍՆԱԿ ՔՈՒՐԻԿԻՍ

Ա

Երեկ գիշեր մոռցեր էիր,
Լուսնա՜կ, գիտե՞ս,
Երեկ գիշեր մոռցե՜ր էիր պատուհանիկս իմ համեստ.
Պատուհանիկս իմ անտես՝
Ուր մութ մը գորշ վիժակի պես էր կախվեր։
Հոգ չէ՜ր, այդ մութն ըրի խորան հսկումի՝
Ուր պաշտանքի ո՜չ մեկ ծաղիկ կը թոռմի,
Ուր մութի տակ լոկ նինջ մը կա լուսանվեր։

Երեկ գիշեր անցար քովես,
Անցար, գո՜ւցե անգիտակ,
Անցար՝ և ես՝
Քու հեռավոր պերճանքներուդ շլացքին տակ՝
Ջուրի ցայտքի մը պես զրվարթ՝ հծծեցի։
Օ՜հ, պարտեզը չէ՜ մոռցեր,
Եվ արիշն ու սարբինան
Իր լույսերովն է օծեր։
Ու նայեցա հանդիպակաց ծաղկաստանին ալ վրան,
Լելակներուն վրա կապույտ,
Ջքնաղ, պչրոտ ու անփույթ՝
Դաստակդ էիր երկարեր։
Ու դիտեցի,
Չէիր մոռցեր սա ծրխանն ալ դրրացի,
Չէ՜իր մոռցեր և ճամբաներն ամայի,
Չէի՜ր մոռցեր...
Չէ՜, այսօր ալ զիս մոռնայիր,
Եթե այդպես պետք էր ըլլար, որպեսզի
Արծաթեիր շուրջս անխըտիր
Ամեն դալար ու ծաղիկ։
Որովհետև ես քեզի
Մտքիս թևո՜վն ալ կը հասնիմ երջանիկ.
Քանզի նույն իսկ եթե ըլլաս
Ամպին ետին ալ պահված՝
Ես կը հասնիմ անկասկած,
Քու պերճ կայքիդ՝ հեք իրերուն համար անհաս։
Ես կը հասնիմ անկասկած,
Քեզի՜, քեզի՜, քո՜ւյր աստված,
Եթե երբեք իմ հոգվույս
Լուսախորշին մեջ պահված
Վերջին նըշույլն ալ՝ անլույս
Խոռոչի մը ծոցն իյնա.
Վերջին նըշույլն այն ցոլքերեն՝ զոր գիշերներն եմ ժողված.
Լիալուսնի արծաթաշող գիշերնե՜ր...

Բ

Մահի՜կ ոսկեսար, այս գիշեր նորեն
Սարսռացի լույսիդ մեջ երանական.
Եվ հոգիիս մեջ ինկան
Խայտանքի նոր թիթեռներ.
Միածանի սանդուխեն վեր՝
Նոր երանգներ տարորին։
Մահի՜կ ոսկեսար, այս գիշեր նորեն,
Մոռցրված երգի ծրվեն,
Կամ անուն,
Անհուշության ոլորտներուն
Միգամածին մեջ կորսրված՝
Դուն՝ ծաղիկներ ցնծության
Նշուլեցիր հեղակարծ,
Հոգվույս մեկ փրլուզակին վերև,
Հինավուրց որմի մը բացատքեն։
Մահի՜կ ոսկեսար, այս գիշեր նորեն,
Մեկ լուսեղեն վայրկյանով,
Տարագրեցիր հոգվույս մրռայլն համորեն։
Օ՜հ, աս ի՜նչ ճախրանք, օ՜հ, աս ի՜նչ գորով,
Այս գիշեր, նորեն,
Պատուհանես ներս սահեցար հուլորեն.
Շոշափեցիր վարագույրներն ըսպիտակ,
Եվ աշտանակն արույրե,
Եվ հայլիին մեջ վառեցիր նոր ճրագ։
Եվ ամեն մեկ հրպումիդ
Հոգի՜ս էր որ ինկավ լազվարթ ձեռքիդ տակ։
Ներե՜, ա՜հ, ներե՜,
Որ վայրկյան մը վերջ, հիմակ,
Սեղանին վրա նյութե լամպարս եմ վառեր,
Ըսելու համար թե քեզ չե՜մ մոռնար, թե քեզ չե՜մ մոռցեր...

Ի՞ՆՉ ԱՐԲԵՑՈՒԹՅԱՄԲ...

Գեղամ Բարսեղյան բարեկամիս

Ի՞նչ արբեցությամբ, ծառեր, լույսին մեջ,
Ծառեր հովին մեջ և անձրևներուն,
Վարսավոր ծառեր, ծառեր երկնուղեշ,
Ու ծառեր մատաղ՝ ծովածուփ կանանչ
Ցորենի ցանքին գոգն ինկած շվարուն՝
Ամենն ալ կյանքին կ՝ըմպեն հոգդ ճաճանչ։
Ի՞նչ արբեցությամբ խոտն՝ որ հողեն վեր
Կ՝ելլե, ըզմայլո՞ւն՝ կը բանա լույսին՝
Վայրկյան մը ապրող իր ցողե աչքեր։
Ի՞նչ արբեցությամբ ծաղիկներ շաքին,
Ծաղիկներ լույսին, մրտերիմ ձեռքին,
Ըսպասումներուն մեջ կը նրվաղին։
Ի՞նչ արբեցությամբ ամենմեկ արոտ,
Ամենմեկ բլրակ՝ իր կանանչ ճակտին
Կը կապե երփնած ծաղիկե նարոտ։
Ի՞նչ արբեցությամբ դաշտերեն խորան,
Եվ հարս հովիտեն՝ կարմրրոտանի
Կ՝առնե արագիլն իր դարձին կարոտ։
Ի՞նչ արբեցությամբ սայրակներն, արթուն,
Լո՞ւյսը կը ծրծեն, լո՞ւյսը կը հծծեն,
Մրգաստաններու մեջեն սաղարթուն։
Ի՞նչ արբեցությամբ ձյուն ճայեր, ծրփին,
Բարձրեն՝ օդաճեմ լյուղ կու գան. արփին
Մեջ կ՝ոսկեզօծին ու կը թևանան։
Ի՞նչ արբեցությամբ տատրակն հարսենի,
Առագաստ՝ ըրած ծառի հովանին՝
Կըսպասե տարփոտ իր վարուժանին։
Ի՞նչ արբեցությամբ թիթեռն է բացեր,
Լեյակի մանրիկ լիճին վրա փրփրուն՝
Առագաստաշեն իր կաթ թևիկներ։
Ի՞նչ արբեցությամբ ծիրանի դաշտին
Շեկ ծաղիկներուն մը վազե մեղուն,
Ծրծել իգայի պտկունքներն հեշտին։
Ի՞նչ արբեցությամբ ծովերն են կապույտ,

Գետերն՝ հորդաջուր, աղբյուրներ՝ զեղուն,
Լիճեր՝ խաժագույն, առուն՝ շուտափույթ,
Լոռածամ առուն՝ որ կ՝անցնի քովեն
Ուռեստաններու գեջ, լսնակապույտ։
Ի՞նչ արբեցությամբ ամպեր կը թոթվեն
Հրաշալի հեղուկն իրենց ըստինքին՝
Որ զերթ ասղանի վար կը սողոսկի՝
Մարելու երկրին պասուքը ոսկի։
Ի՞նչ արբեցությամբ զայն կո՞ւշտ կը խըմեն
Համագրավ տապեն սարսատած հողին
Ծընունդներն ամեն, ծակտիքներն ամեն։
Ի՞նչ արբեցությամբ հոգին կ՝ընդգրկե
Ալյակն հորդահոս՝ ծայրիի բույրին,
Ծաթրին, անանուխ, վայրի ռեհանի
Բազմաբուրումներն ըստաշխ ու խունկե։
Ի՞նչ արբեցությամբ կ՝ընդգրկե անի.
Բոլոր ձևերն ու երանգներն ամեն,
Բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն
Իր մեջ անդրադարձ ծիածանումեն՝
Աստվա՞ծն՝ որ եկավ՝ չե՞ս գիտեր ուրկե՞...

ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1901

ԵՐԳԸ

Լուսինն հայլվույն մեջ առվակին հեզասահ
Զույլ արծաթի դեմքն իր անույշ պատկերե,
Լուռ ու պարզկա գիշերին մեջ կ՝ազդեն ահ
Գունդեր հրսկա՝ կազմակերպված ծառերե։

Հեռո՞ւն, հեռո՞ւն ձայն մը հուզիչ, տխրաշեշտ,
Գունդերուն մեջ հրսկա ւ՝ահեղ ծառերուն,
Կը մարմրրի, տրխուր սրրտի սփոփ հեշտ,
Փրփրոտ ծփանք ցավի հորդ ալիքներուն։

Հեռու քաղքի ժըխորներեն տաղտկալի,
Խորհրդավոր լռության մեջ գիշերին,
Երգով մ՝անշեջ, սիրով, հույզով, խանդով լի
Թաղել կ՝ուզե կարծես սերերն իր սիրտին։

Լուսնակն աղու դալկության մեջ նվաղի,
Առվակին ձայնն ալ կորսվի, կ՝անհետի,
Բլրույն կատարն սուրբն ալ քունի մեջ թաղվի
Մասնակցելով մարդուն երգին սև սուգի։

1901, օգոստ., Սվազ, Ս. Հակոբ

ՄՈՒԹԻՆ ՏԱԿ

(Սոսկում)

Կիսալուսինն հազիվ թե շող մ՚արձակած,
Թաղվիլ կ՚երթա մութ-գույն ամպերուն ետին,
Տարտամություն մը կը պատե խորհրդաղդած,
Լուսավորներն և հուսկ իրերն ալ հետին։

Այդ անորոշ, տարտամագին մութին մեջ
Գորշ ցցունք մը կողին վրա սեպ սարերուն
Կը ներարկե երակներուս դող մ՚անշեջ,
Մութ սոսկում մը արհավիրքով պատատուն։

Ու կ՚ունենամ անդրադարձում մը կյանքիս,
Լույսերն երկնի կ՚ըսեմ հույսերս էին վառ,
Որոնք սիրտիդ բաղխելով քու համակ սառ,
Անհետացան՝ թողլով միայն մո՞ւթ՝ սիրտիս։

Սարին ցցունքն ալ այդ մթին, ըստվերոտ,
Մտաբերել կու տա լքումդ ինձ անգութ,
Բաժնվեցանք մենք իրարմե, օ՜հ, շատ փուլթ
Ըսկսած դեռ, հազիվ, սիրույն մեր կյանքոտ։

190<1>, Սվազ

1902

ԻՐԻԿՎԱՆ ԴԵՄ

Հեշտ այգուն մոտ երազեցի, մբրափիս մեջ,
Վառ գույներով դրասանգված երգը կյանքին.
Եվ դողդոջուն ծիածաններ մետաքսառէջ
Ու փաղփածոպ, կ՚երկարեին աշխարհ մ՚անգին։

Օրվան կյանքի տրվայտանքներ՝ իմ հորձանուտ
Երազներուս հրմայքն ի սպառ փարատեցին.
Ու դիտեցի կյանքը մոտեն, զերծ՝ պատրանուտ
Խոլ խաղերե,— կոտտանքներով դաժան խոցին։

Իրիկվան դե՞մ... Ըստվերները կ՚իյնան արագ։
Զուր առտրվան երազանքներս ես կ՚որոնեմ.
Ըմպեց անոնց լույս շիթերը սեր մը վայրագ.
Հեծեծանքիս հետ մընացած մինակ, հո՜ն եմ...

1902

ՀՈՒՇԱՊԱԿ

Թուղթին վրա ճերմակ
Էջ մը սարսրուն,
Կամ դանկերուն տակ
Հույլերն հուշերուն,
Կը ձուլեն հրստակ՝
Հիշատակն անհուն...

Եվ թող անապակ՝
Նկարն այս սիրուն,
Զոն ըլլա՝ շիտակ
Թարգման սիրտերուն.
Զոնը՝ հիշատակ՝
Անձայն, բայց խոսուն։

1902, Սվազ

ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ

<1> ՓՈՇԻՆ

Ռուբեն Զարդարյանին

Շարքովն եղերված բարտիներու հոծ
Լայն ճամբուն վրա, քաղաքին մուտիկ,
Իրիկնամուտին, պայծառ, խորոտիկ,
Փոշիի պար մը կ՝ելլե հողմակոծ։

Կ՝ոլորվի թախծոտ, կը շրջի տխուր
Ուռեցած շունչովն բիրտ հովին հըսկա.
Սիրտըս հուզված է, միտքըս կը խոկա
Նենգություններուդ, դավերուդ անլուր։

Եվ ինչպես հովը կը քալե արագ,
Փոշիի անթիվ ամպերուն բոլոր
Ցրվելով խառնակ տարրերը մոլոր,
Տիրապետումի հույզերով վայրագ։

Արհամարհանքիս հովն ալ անխընա
Պիտի ընդոտնե փոշին կեղծ սիրույդ,
Եվ ժըպիտներուդ մեջեն պատրանուտ
Սիրտըս միշտ կանգուն պիտի բարձրանա։

<2> ԾԱՂԿԵ ՔԱՌՅԱԿ

Քերթողի վառ խանդով գրված
Քառյակներեն ավելի,
Ես կը սիրեմ նրբակազմած,
Գունեղ քառյակը ծաղկի։

Նկարագեղ ոճով գծված
Պատկերն հուզիչ է նվազ,
Քան դաշտերե լայնատարած
Քաղված ծաղիկն հեշտանազ։

Հո՜ն, բաժակին մեջ ծաղիկին
Ոսկեփոշի թևով գեջ,
Սիրով պատած սիրտի մ՝անգին
Կ՝առնե պատկերն ելևէջ։

Այդ պատկերը շատ ավելի
Հուզիչ է՝ քան քերթողին
Հույզով մ՝անհուն, անպատմելի
Գրած տողերն քառյակին։

<3> ՄԵՐԺՈՒՄ

Մեկ համբույրըդ զիս պիտ՝ ըներ երջանիկ,
Դուն զլացար ինծի շնորհն այդ գողտրիկ,
Դժնե «ոչ»ըդ թքիր ինծի անտարբեր.
Ես այն օրեն կը տառապիմ տարուբեր։

Դուն զլացար ինծի շնորհն այդ գողտրիկ
Ու սևերու մեջ թաթխեցիր իմ մեղմիկ
Ժպտիս ցոլքը, մերթ վառվռուն, մերթ հանդարտ.
Ես այն օրեն եղա թշվառ մը անբախտ։

Դժնե «ոչ»ըդ թքիր ինծի անտարբեր,
Այդ «ոչ»ըդ սուր սիրտես սորեց արյուններ.
Մերժումի այդ սառ լախտն, ավա՜ղ, վշտածին
Գալարեցուց սևերու մեջ իմ հոգին։

Ես այն օրեն կը տառապիմ տարուբեր.
Վիշտը սիրտըս իմ ըրավ քանդ ու ավեր.
Այն օրերն երբ սև բաժակըն այդ թույնի
Ըմպեցի ես, սիրտըս բյուր բյուր կ՝արյունի։

1902, Սվազ

ԴԵՂԻՆ ՎԱՐԴԵՐ

Դեղին վարդեր մայիսի,
Բուրումներով խնկավետ,
Թալկութեան մը մեջ հավետ
Կը տժգունին մեկուսի։

Հեք սիրաբերու մըտերիմ,
Տժգո՜ւյն վարդե՛ր մայիսի,
Հեշտ նազանքով մը կույսի,
Ու, հասնումեն ոխերիմ,

Կու լան։ Հեքով նրվաղկոտ
Եղկ բուրում մը կը խուսի
Տժգույն վարդեն մայիսի.
Ու կանգ կ՝առնե իսկույն հոտ։

Լքված հոգին մեկուսի,
Որ կը մրխա անտերունչ,
Մինչև խամրի ալ անշունչ
Վարդերուն պես մայիսի։

ՀԻՇԱՏԱԿ

(Սիրերգ)

Մութ ըստվերներ, ծավի լույսեր ցիրուցան՝
Ցուրտ սարսուռով, լույս-հույզերով պարուրված,
Հրպումով մը ազդու՝ եկան ու անցան,
Հուրքոտ բոցեր միայն թողով շրջահաց։

Այդ բոցերը փաղչեցան հոս մըրտարծարծ,
Մեր վառ սիրույն հընոցին մեջ ոսկեծին,
Անէացած, խելահեղած հեղակարծ՝
Պլլվեցա հիշատակիդ առանցքին։

* * *

Անցար, գացիր, բայց թողուցիր արյունոտ
Ասղընտունքը տագնապահույզ լքումիդ.
Բոց սերեն վերջ՝ լքումի վի՞շտը մըրկոտ։

Չէ՛, մի՛ ըլլար, անգո՜ւթ, այդչափ եսասեր՝
Սըրտիս՝ որ դեռ չէ՛ վարժըված աներկմիտ
Մոռացոնքին։ Ան չի՛ կրնար սասիկ դեռ։

ՏՂՈՒ ՄԸ ՄԱՀԸ

Գարուն է, ծիլ առին ծաղիկն ու դալար,
Կը շողա լույսն եթերին մեջ կապուտակ.
Զըմրան խոժոռ երկինքը որ միշտ կու լար՝
Բիլ հըրճվանքով մը կ՝ողողվի ա՜լ հիմակ։

Կյանքի գարնան մեջ դուն ծաղի՜կ նորածիլ.
Աղետաբեր խորշակով մը խամրեցար.
Մանուկ հոգիդ ալ — հեշտ բուրում մը — հածիլ
Գընաց կապույտ անհունին մեջ լայնատարած։

Անվերադարձ մեկնումդ, ավա՜ղ, մենք կու լանք
Խուլ հեծքերով ու արցունքով դառնագին,
Եվ կը մարի մեր սըրտին խինդն ու տենչանք

Քու արևիդ շիջումին հոծ շուքին տակ՝
Զըխորհելով թե անքսավեր քու հոգին
Զըվարթունի վերացում մ՝է ա՜լ հիմակ։

ԲԱԺՆՎԱԾ ՍԻՐՏԵՐ

Հեքոտ շունչեր կու գան ման,
Ու հրճվանքով կը ժըպտինք.
Կ՝երկնեն կապույտ մ՝աննըման
Բիլ ծովն անհուն ու երկինք։

Եվ բուրումներ կու գան ման,
Ոգևորում մը հեշտին
Արբշըռանքով մը հուզման
Կ՝ամոքե վերքը վըշտին։

Հոգիս ունի խինդն այգուն,
Ու դայլայլը թրոչունին.
Սիրտըս քընար մ՝է անքուն
Որուն երգեր ցավ չունին։

***

Երազի մը պես գացին,
Տարիները սահեցան
Այն օրեն՝ երբ ըզգացին
Սիրտեր ցունցը բաժանման։

Երբեմն արցունք մը ցավի,
Ձիս վըրդովեց խրոովքով.
Երբեմն ալ հույս մը ծավի
Շողաց հոգվույս մութին քով։

Բաժանումեն վերջ, իրա՜վ,
Ի՞նչ գորովով, ի՞նչ խանդով
Կը փարին սիրտեր, ծարավ՝
Միացումին հեշտանքով։

***

Երազանքներ զիս կ՝օրրեն
Օրորումով մը հանդարտ.
Հեռուն լեռնեն, ձորերեն,
Միշտ կը հառիմ ես անթարթ,

Ծածանումիդ մոտալուտ
Հույսերովը մոլորուն,
Տենդով կըսպասեմ գալուդ,
Ցընծումին մեջ երգերուն։

Ալ սիրտս ունի խինդն այգուն,
Ու դայլայլը թրոչունին.
Հոգիս քընար մ՝է անքուն
Որուն երգեր ցավ չունին։

Կ. Պոլիս

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

Լուռ, մարմարակերտ դամբանին խորեն,
Հանճարի աչքերն անքույթ կը նային,
Լույս ոգիներու կյանքովն երկնային,
Ա՛լ մեկուսացած ունայն ժըխորեն։

Մեռա՜վ, խանդավառ սերերն երգելեն՝
Ու պիտի հավետ միտքերն հըմային
Իր թունդ քընարեն, ու երգերն ալ հին
Պաշտումով ըզմեզ միշտ պիտի գերեն։

Հույզով մեռա՜վ ան, հուշքով՝ կ՝ապրի դեռ,
Ծառերուն նըման՝ որ թարմ ու դալար,
Իր գերեզմանին կ՝ելլեն քովն ի վեր։

Հիացքներ կ՝երթան իրեն ետևեն...
Եվ իր հուշքերն ալ, հավետ անմոլար
Ու միշտ ոգևոր՝ դեռ պիտի տևե՜ն։

<8 հուլիսի, 1903>

ՍԻՐՈՒՅԻՆ

Ուղի մ'ունիմ ես նրբանոյշ,
— Սիրույս ուղին մետաքսավետ,—
Որուն հրմայքն երջանկահուշ՝
Կ'ոգևորե զիս առ հավետ։

Քընքույշ հյութեր կը փթթին հոն,
Ու հարսնուկներ հրրահոտան.
Հոն կը հյուսեմ երգ ու գեղոն,
Ե՛ս, սիրավառ, խանդո՜տ գուսան։

Իսկ երբ օր մը խլեն աչքես
Իմ պաշտելի ուղիս՝ անհետ,
Մութ գիշերներն՝ ու ոսկեգես
Զբցոլա ա՛լ արևն հավետ,

Նորեն գըտնեմ պիտի ես հար
Սիրույս ճամբան, մի՜շտ անմոլոր.
Բավ է անոր ես անդադար
Հրայրքն ունիմ, պաշտո՜ւմ բոլոր։

ԱՇՆԱՆ ԾՈՎ

Տառապագին աշնան հզոր ծովը լրքուն,
Երազողն է, միշտ այլայլած, ու միշտ դաժան.
Իր տենդահար ալքերուն մեջ կա միշտ մ'անհուն,
Զոր ալիքներ մերթ հուզումով դուրս կը պոռթկան։

Դեպ ի բարձունքն ամպերու գորշ գուլաններուն,
Իր դողահար նայվածքները կը հառե ան.
Լրքվա՜ծ, սիրող, տենչանքներով, հույզով եռուն,
Որ կ'երազե միշտ դալուկ մը ճակտին վրան։

Ու իր ցավը կըսանի լուռ խարակներուն,
Որոնք ընդմիշտ կ'արհամարհեն զայն անտարբեր,
Փափաքելով կարծես անկե խառիկ հեռուն։

Ծովեզերքեն մարդիկ կ' անցնին մերթ անգիտակ.
Անկարեկիր՝ լայն ցավին որ զինքն է լափիկ.
Մեծ տառապողն ա՛լ երազուն է միս միտակ...

<1908, հուլիս>

ՀԻՇԱՏԱԿՈՒ

Փըրփուրները քարափին
Կ'երկնեն երազն հեշտավետ
Իմ խոնջ հոգվույս մըրափին.
Հույսի շող մը զիս հավետ

Կը կապե նորոր կապույտին.
Կը խաստանա ծովն անհուն.
Ու ալյակներ կը ժըպտին
Հոգվույս տենդոտ իղձերուն։

Անույշ արցունք մը սըրտիս
Քուն կը բերե զովասուն,
Ու դուն ինծի՛ կը մոտիս
Քինջ նրկարով մը խոսուն։

Ու սիրավառ, ես հանկարծ
Անհյութ տեսքեդ խելահեղ,
Կը պըլլըվիմ, մըշտարծարծ
Հիշատակիդ, ամեն հեզ։

ԱՂՔԵՐԴ

Փոքրիկ Արշալույսին

Սընդուսե գըգվոտ եթերն աշերուդ
Զյունափայլ ճակտիդ պարփակումին տակ,
Գոհարատուփն է հրմայքով ջերուտ,
Մետաքսաուէջ, նուրբ կողքով ըսպիտակ։

Բայց ադամանդի զերթ ցոլք փալփլուն,
Արցունքի երբոր շիթն հոն չի՛ դողար,
Թովանքը կապույտ այդ երկինքներուն
Կը խուսափի, զերթ անծաղիկ թաղար։

Եվ կամ գոհարի տուփին պես փայլուն,
Բյուրեղ արցունքն, ուր երբեք չի ցոլար,
Արևակին կամ թոշ սուտակներուն,
Զբրկված շողեն, ցոլքեն դողահար։

ԱՇՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Կը խամրին աշնան ծաղիկներ տրժգույն.
Լքված, անտերունջ հոգիներու պես.
Կը ցընդի անոնց բույրն անուշ ու վես,
Հոգեվարք սիրտի հուսկ շունչին հանգույն։

Գոս տերևներուն հետ, արագ արագ,
Կը խամրին աշնան ծաղիկներ տրժգույն.
Սիրազեղ բույրն ու թովքն իրենց հոգվույն,
Կը մեռնին, հովուն հեծքերեն վայրագ։

Արևուն վերջին ցոլքերն աննըշույլ
Կը մարին գոգը ամպին մրթագույն.
Կը խամրին աշնան ծաղիկներ տրժգույն,
Օր մըն ալ ձյունեն սառելով բույլ-բույլ։

Եվ հուզված սիրտն ալ սիրատանջ մարդուն
Անըզգայության ձյունին տակ, ավա՜ղ,
Կը սառի օր մ՚ալ, ինչպես որ դեռ վաղ
Կը մեռնի՜ն աշնան ծաղիկներ տրժգույն...

<Բերա 1903>

ՄՇՈՒՇԻՆ ՄԵՋԵՆ

Բամբ սույլ մըն է՝ որ դեռ կը տառապի
Այս գորշ առտվան մշուշին մեջեն.
Տարտամ նայվածքներ դեռ կը դանդաղին
Մըշուշին մեջեն, որ կը խոպոպի։

Խոլ հսկան է ան՝ որ կը տառապի
Հառաչ մը թողլով իր հիմար կողեն.
Ձայնը՝ որ կու լա մըշուշին մեջեն
Կարծես հոգեվար երգ մ՚է կարապի։

Թոշ ամպիկներեն դեռ կը վարանի
Բոց տարփանքներու ցանցերովն հյուսված,
Երազը կապույտ, հույսը ծիրանի։

Հուրի մը սերբս անոր կը տանի.
Թույլ մըշուշներուն մեջեն թանձրամած,
Մինչդեռ կը հեծե սույլը տիտանի։

<1903>

ՔՈՒՆ

Ցուրտ Աշուն մը սարսռագին
Կը հևա իմ հոգվույս մեջ.
Կ՚իջնե գիշերը. Կյանքին
Գիրքը կու լա էջ առ էջ։

Սրսփանքներ տենդագին,
Ու հծծյուններ հիվանդոտ
Հոն կը հածին, կը հանգին
Եղերերգի մը տենդոտ։

Ու,— ծյուռեռազատ հե՞ք քընար,—
Իմ վեհ սիրտըս կը լըռե.
Ու հոն հեծքն ալ չի մընար.
Լոկ սարսուռն հոն կը բերե

Իր վիշտերը խոլական,
Ու տենչանքիս իմ հիվանդ՝
Ծաղիկները ա՛լ չըկան,
Չըկա՞ն անոնց բույրն ու խանդ...

<1903>

<1901—1903>

ԵԿԵՂԻՆ

(Սիրերգ)

Եկո՛ւր, տաղտկալից կյանքըս խաղաղե,
Ըզգալ տո՛ւր ինծի գորովանքն ու հույս.
Պիտի գա օր մ'որ հոգիդ ավաղէ
Արագ խուսափումն երազին այս լույս։

Եկո՛ւր. վաղը դուն գուցե՞ թարշամիս,
Եվ գուցե տենդով մը մեռնի հոգիս,
Մի՝ խամրեցըներ հույզը պաշտումիս։

Թո՛ղ որ նայվածքիդ ըմպեմ բոցը ջինջ,
Մոտեցի՛ր, քնքույշ ծաղի՛կը կյանքիս.
Համբույրի մը մեջ մոռնամ ամեն ինչ։

Ա՜հ, այս կյանքն աղվո՛ր որքա՜ն դանդաղ է։
Եկո՛ւր, ձանձրույթը հալեցուր հոգվույս.
Լույս երազի մը մեջը զիս թաղե,
Թե՞ր ինծի սրտիդ գուրգուրանքը կույս։

Սկյուտար

ՄԱՀԸ

(Մանուկները կը խոսակցին)

— Հիմա աղբյուրեն անցան։
— Հիմա այգիե՞ն ալ անցան։
— Հիմա գերեզմանատո՞ւնն են։
— Հիմա թաղեցի՞ն...
— Հիմա կը կարդան վրան. կը լսե՞...
— Հիմա ա՞լ չի լսեր։
— Հիմա ա՞լ չի տեսներ։
— Հիմա թուքը չի՛ կրնար կլլել։
— Հիմա չի կրնար պոռալ։
— Հիմա հալեցա՛վ...
— Հիմա կը դառնան։
— Հիմա մի՞ս մինակ է...
— Հիմա ալ չը՞ պիտի գա։
— Հիմա ալ չը՞պիտի գա։
— Հիմա ալ չը՞պիտի գա։
— Հիմա ալ չը՞պիտի գա...

1904

ՑԱՅԳԵՐԳ

Դադրեցան ձայներն ամեն,
Ցերեկվան ժըխորներուն,
Կը հընչեն բայց հոգվույս մեջ
Դեռ սիրույդ երգերն անհուն։

Կը հյուծին ցոլքերն հիվանդ,
Գիշերվան մեղկ լույսերուն.
Կը փայլի հոգվույս մեջ վառ
Տարփանքիդ բոցը սիրուն։

Կը նիրհեն քունի մեջ խոր
Թըմբիրով իրերն ամեն.
Կը հուզվի հոգին արթուն,
Քու սիրույդ թունդ պաշտումեն։

Թո՛ղ մարին լույսերն ամեն,
Ու մեռնին հույզ ու ժըխոր,
Կ'ուռճանա, կյանքոտ հավետ,
Սերդ անչինչ իմ հոգվույս խոր։

ԵՐԱՋ ՕՐԵՐ

(Քանթիլեն)

Կարմիր ծաղիկ մը գարունի
Առտու մ'ինծի նըվիրեցիր.
Ըզգացի թե տենդեր ունի
Երազկոտ միտքըս ուշացիր։

Խանդաղատանք մը հորգեցավ
Իմ նրվաղկոտ լանջքիս տակ՝ ուր
Դողաց սիրո սարսուռն անցավ՝
Ու թովանքը համբույրին հուր։

Եվ ըղձակաթ իմ հեգ հոգիս
Ըզգաց սիրտիդ հուրքն արծարծուն,
Ու մետաքսե ուղի մը զիս
Սեր-Ծաղիկին տարավ ածուն։

Հոն ժըպտեցավ կյանքը ինծի,
Հրմայքներու հույլովն անցավ,
Եվ ուրվական մը կասկածի
Անոր մոտեն երբեք չանցավ։

ՍՊԱՍՈՒՄ

Բողբոջ տենչեր բյուրավոր,
Արագ արագ կ'անհետին,
Ըսպասումեն՝ մինչև որ
Մինակ մընամ ես մըթին
Խոհերուս մեջ տարուբեր։

Եվ աղեկոծ, փոթորկուտ
Մըտածումներ զիս հանկարծ՝
Հորձանքներով, հիվանդոտ
Երազանքով մըշտարծարծ,
Կը պաշարեն տրխարաբեր։

Հեքոտ ծովուն փրրփուրին,
Կամ եզերքին ես հառած,
Հորիզոնե՞ն ալ անդին,
Սիրականիս հեռացած
Ուրվականը կը տեսնեմ։

Բայց կ'ուզենա՛, ան չի՞ դարձ,
Ինչպես այսօր ու վաղն ալ,
Եվ հատնումով ցավագար,
Կը թրվիմ խենթ մը դառնալ՝
Ցընորքներու մեջ դըժխեմ։

ԻՐԻԿՈՒՆԸ

Ածուներուն մեջ հիրերուն քընքույշ
Կը վարանի հուսկ հրմայքն հոտեան.
Պերճ ցոլք մ'արեւեն կը գրգռի անուշը
Փայփալանքներով ծաղիկն իրիկվան։

Խանդաղատանքի մեջ, ցոլք ու ծաղիկ,
Բաժանումներու ցավին անգիտակ,
Արբշիռ փարումով սիրո խաղաղիկ
Վայելքին թովքը կ'ըմպեն անուշակ։

Ու մեկը չ'ըսեր անոնց, «Իրիկուն
Պիտի ընե ձեր գրգվանքին վրան».
Կ'անհետի ցոլքը մութին մեջ, նրկուն,
Ու կը թարշամի ծաղիկն հոտեան։

Բերա

ԱՆ ԻՄ ՍԻՐՏՍ Է...

Հովը պոնդեր կու տա տամուկ գիշերին,
Որ կու լա խոլ, թրթրուն,
Ինչպես տավիղն եվոլական,
Որուն հրզոր լարերուն մեջ բընավ չրկան
Հեշտությունն ու մեղկ գգվանքը թույլ խազերու,
Այլ կը դողան հեծքով, անթիվ հոն ձայներ՝
Հովն երբ պոնդեր կու տա տամուկ գիշերին։

Գիշերն անվերջ կ՝անցնի տրխուր ու թունոտ.
Դեռ լարերը կը դողան,
Ըմպած անդուլ հույզերն՝ ուժգին պոնդերուն.
Խավարին մեջ մոլորուն
Կարծես Տենչը միջոցին մեջ կը թևե,
Մինչ գիշերը կ՝անցնի տրխուր ու թոնոտ։

Ա՜հ, սի՜րտս է ան, սի՜րտս, գիշերը մըթին,
Աշնան գիշերը լացող,
Ուր կը դողա անհուսության հովն ուժգին,
Մինչ անձրևին կ՝իջնե ցող,
Մինչ ես կու լամ՝ կու լա՜ հոգիս, կու լան լարերն իր բոլոր
Ու կը խորհիմ թե սիրտս ալ է Աշնան գիշեր մը լացող...

1905

ԱՂԵՐՍԱՆՔ

Կաթեցուր հոգվույս մեջ հույզը կյանքին,
Դո՜ւն, երազներու ծաղիկ դողդոջուն.
Դո՜ւն՝ որ գիշերին մեջեն մըթագին
Հծծեցիր պարերգն իմ տենչանքներուն։

Դո՜ւն՝ որ ժըպտեցար, դուն՝ որ կը ժպտիս,
Ինծի տուր կաթը խանդաղատանքին.
Կիրքե՛ր տո՜ւր հոգվույս, հըրայրքներ սրտիս,
Տենդոտ պահերու հուզմունքներն հեշտին։

Նոր բարբառումներ ու հոգվո համբույր,
Նոր նոր կսկիծներ ու ցա՜վ տուր ինծի.
Վարդավետ ցոլքով ծաղկին հեշտաբույր
Թող որ շուրջն հըրուտ երազանքս հածի։

Պահե՛ր մոլուցքի, տենդի վայրկյաննե՛ր,
Տո՜ւր ինձ երազին ոսկեբար նարոտ.
Երջանիկ ըրե սիրտս՝ որ լըռին էր,
Եվ կյանքս՝ որ հիմակ հույզի է կարոտ։

Կաթեցո՜ւր հոգվույս մեջ հույզը կյանքին,
Դո՜ւն, երազներու ծաղիկ հեշտալիր,
Դո՜ւն՝ որ գիշերուն մեջ հեծեծագին
Կյանքի վարդենիքն ինծի ցուցուցիր...

ՍԻՐԱԶԱՅՆ ՀԱՅՑՈՒՆՆԵՐ

Տո՜ւր համբույրիս խանդոտ՝ շրթունքդ բուստե
Հուրի՜ աննյութ, փաղփուն ծաղիկ երազի,
Ըսպասումի հովեն տենչքս կը մսի՜,
Ա՜հ, քու սիրույդ ջերմությունով զիս պատե։

Կույս գրկիս մեջ նետե գլուխդ չքնաղ.
Ջինջ նայվածքի զույգ եթերներդ ինծի՜ տուր,
Ցանե հոգվույս մեջ սիրակայծ սրտիդ հուր
Եվ հնչեցուր առջի սիրույն հոն թակաղ։

Սև սաթի գույն վարսերուդ թավքը բոլոր,
Ու ծաղկալից հոգվույդ շունչը վարդաբույր,
Լեցուր գրկիս, լեցուր սրտիս մեջ թափուր,
Թո՜ղ գգվանքիդ ըմպեմ հեշտանքն անսովոր։

Ա՜լ կը հաշմե հոգիս պաշտումն իտեալ.
Լոկ հեռուեն ժպտող քու սերդ ալ չունի
Ինծի համար իրեն թովանքն երբեմնի.
Եկո՜ւր, մոտեն զիս սիրովդ պատե ալ։

1906

ՏԵՍԻԼ

Երբեմն ամպոտ երկինք մը՝ շո՜ւտ կը պարզվի,
Ու լեղակի լիճ մը կ՚ելլա՝
Հոգվույս շլացիկ ծովուն դիմաց։
Եվ իրարու կը ժպտին
Լիճն այն լեղակ ու ծովն հոգվույս,
Քույր ծաղիկներ աներկրային՝
Զոր մերթ հովի հոսանք մը կույս՝
Անզսպելի ինչպես ալիք գորովի՝
Կը խոնարհե իրարու դեմ։

Ու լիճին վրա կապույտի,
Կը բողբոջի հանկարծ կղզյակ մը բուստե.
Ու կղզյակին վրա, երփներփուն
Ամպիկ մըն ալ կը ցայտե,
Անրջածին ամեն գույնով կը ծպտի,
Ծաղիկ կ՚ելլա, թռչուն կ՚ելլա, կ՚ելլա նայվածք ու ժըպիտ։

Ու շիկնոտ Իղձս ալ, թիթեռնիկ բոցաթև,
Կը թռչըտի ծաղկաստանին մեջ սրտիդ։
Ու գունագեղ ամպին ետև
Բուստ կղզյակին վրա ծըփուն՝
Չքնաղակա՜ն կ՚երևնաս դուն։

Ու տեսլական ձևեր կ՚առնե դեմքդ համբուն.
Մազերդ՝ անթոշ նարկիս կ՚ելլան.
Ճակատդ՝ ձյուն կատարներուն՝
Զոր վարդագնեց արփն իրիկվան.

Եվ աչքերդդ կ'ըլլան զույգ մը ծառուղիներ՝
Ուր կը ճրչէ թռչնակն արձակ ու ճռվողուն
Իմ խայտանքիս. ու շուրթերդ ալ՝
Ոսկեզօծ եզրը բաժակին՝
Ուր կը հակին,
Վարդ ու հարսնուկ, կակաչ, նարդոս, գարնածաղիկ, նունուֆար...

10 ապրիլ, 1907

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կը թռվրռա զանգակին վանկը թռչուն,
Ոսկի նափորտ հագած շաբաթ իրիկվան
Տիրանըվեր քըղանցքին տակ դողդոջուն,
Ու ծուխին մեջ մըթնշաղին երեկվան։

Անդոհության ալիք մը ներս կը խուժե
Պիրկ հորանջքեն պատուհանիս կիսաբաց.
Հովին ծեծեն, մարդուն քաղցեն խուսափած՝
Թռչնիկ մըն է՝ որ իր ցավը կը գուժե։

Եկեքանիկ մը՝ դեղնակիտված, հողմահար
Թևիկներով՝ իրիկվան մեջ մոլորուն.
Անծայրածիր իրիկվան մեջ դողահա՛ր՝
Կ'եղբայրանա խուցիս գըթած իրերուն։

Իրիկունս է խունկ ու ցավով միգամած.—
Խնկամանն է ծուխով, թռչնիկն ոգևար։
Հոգիիս մեջ կըզգամ շարժում մը դժվար.
Անդրաշխարհին հակող շարժում մը կամաց։

Նրբանցքին մեջ մայրս աղոթք մը կը հծծե,
Կ'ապրեցընե սիրելիներն իր ամեն,
Լույսերու մեջ ընկողմանած՝ մեկնումեն
Վերջ իրիկվան՝ ժպտող, անտես մեկ խուցե։

Թռչնակն հոգին տախտակներուն կը ծեծե,
Ու պատերուն, ու հոգիիս վրդոված.
Թռչնակն՝ հոգին կ'ուզե անտես մեկ գիծե՝
Անծանոթին մեջ որոնել իր Աստված։

Խունկը ճամբա կ'ուզեր անցքին անդրաշխարհ,
Հեք թռչնակին հոգի՞ն կ'ըլլա այդ ճամբան,
Ու թռչնակն ալ կ'ուզեր աննյութ մեկ դամբան,—
Խունկին ծուխը կը պարուրե իր նշխար։

Աներկրային, խաղաղ ձայնը կը լըսե
Մեռածներու հուշքին՝ հոգիս իմ հանգիստ.
Օ՜հ, ես չըկա՞մ իրիկվան մեջ լըռանիստ.
Հոծ իրիկվան մեջ այս երանգ ու լույսե։

Մայրս աղոթքեն վերջ արցունքը կը սրբե.
Խաչանիշ մը կ'ըլլա թռչնիկն՝ օրհնական
Այս վայրկյանին՝ զոր կ'արծաթե լուսինկան՝
Կ'ողջագուրե՞ իր ծոցին մեջ սատափե։

<16 օգոստ., 1907>

ԿԱՂԸ

Նոր պտղեր է լիալուսնակը բուստե,
Որ կ'ընկղմե մեջն իր շառայլ անդոհին,
Կապույտներով պատարուն կաղ մանկուհին՝
Որ մարգին վրա թռչնիկի պես կ'ոստոստե։

Թռչնիկի պես կ'առնե թևթափն իր ուժգին,
Կ'ըլլա ծաղիկ, կախված անտես մեկ ոստե,
Մատն անծանոթ՝ արարչության մը ձեռքին՝
Որ համաչափ քայլերն անոր կը շեշտե։

Շուտ, կորագիծ քայլե՞րն անոր կշռական.
Ո՜վ դաշնավոր չափակցություն, ուր կու գան
Թռչունին սլացքն ու ջրվեժի մեջ վայրէջ։

Եվ անծանոթ գրքի մը գերթ անծայր էջ։
Մարդն՝ երկյուզած՝ ու լռնազօծ ու կանանչ՝
Պահեց աղջկան քայլին դբրոշմն անճանաչ։

ԽՈՒԼԸ

Շուրթի վարդին վրա կ՚առնե ընդմիշտ թառ,
Իր նայվածքին մեղուն՝ տարփոտ, հև ի հև.
Օ՜հ, շարժո՛ւմ մը, որ ընտանի ձև՛ը տար,
Որ մե՜ղրը տար բառին ծանոթ։ Ու թեթև

Ու փախըստյա փըսփըսո՛ւք մը՝ մերթ օտար
Ու անսովոր ձայնի մ՚ըլլար կշռույթ՝ և
Օ՜հ, հնչական լըսելության, անվրթար
Պայծառ բոպեն ծըներ, մանկի՜կ բոցաթև։

Բայց լռությո՜ւն. շուրթ-ծաղիկն է աննեկտար.
Լըսելիքն ալ չունի հնչյունն անսովոր.
Կը թևածե լոկ անուրջին բոցը՝ որ

Մերթ մեղվաժիր իր աչքերեն կը խայտար,
Եվ հոգիին մեջ սուզելով, հոգեթով
Կը բերե բոցն՝ ըղձալի բառը փութով։

ՀԱՄՐԸ

Պիտի հծծեր անհուն բառն իր տարփանքին,
Աղբյուրին քով, աղջիկներու ականջին.
Բայց անհունը գեթ չըլլար վա՜նկ մը չնչին.
Ջուրն՝ խրեն տեղ՝ կ՚երկնե սիրերգն այդ անգին։

Իր խո՜կն է ծներ բառն՝ որ հծծյունն է այուքին։
Ջուրին կարկաչն, հովին մրմո՜ւնջն խակ վերջին,
Անհունորեն քաղցրաղըվարտ և ուժգին՝
Սլացիկ թևն են իր մեղեդի անուրջին։

Պիտի ըսեր, ա՜հ ամենն ալ, ամե՜նն ալ...
Բայց չէ՜ կերպեր տակավին բառն առաջին.
Քանզի կ՚ըղձա անհունին մեջ միշտ մընալ,

Քանզի բնությունն ալ՝ պարզ ու մեծ՝ միշտ կ՚ըսե,
Մի՜շտ կ՚ոլորե, մեջն երգեցիկ իր շունչին՝
Մտքին վանկերն, հոգվույն ներվագը լույսե։

1907, օգոստոս

ԸԼԼԱՅԻ՜, ԸԼԼԱՅԻ՜

ԱՌՏՈՒՆ

Սա առտուն ես ըլլայի,
Թույր ու ճառագայթ հոսելու համար
Խոռոչներու մեջ մըթին, ամայի։

Լուսաժպիտ մոմեր վառելու համար
Սեղանին վրա հոգիներու վշտահար,
Սա առտո՜ւն ես ըլլայի։

Վարդ պարեգոտով ու խարտիշագես
Ա՜հ, սա առտո՜ւն ըլլայի ես.
Ու կաթիլ մը տայի աննյութ նեկտարես,
Ու գեթ ցո՜ղք մը տայի ոսկի իմ հուրես
Մութ հոգիի ճըրագներուն ցրտահար։

Ա՜հ, սա առտո՜ւն ըլլայի ես։

ԹՂԹԻԿԸ

Ամառ գիշերն՝ անույշ մեղր ու կաթի պես՝
Խուցեն ներս է հոսեր արծաթ ծորակով.
Այծտերևին շուլլըվեր է որմեն վե՜ր՝
Պատուհանեն ներս նայելու ըղձանքով.

Իր տարփանքը բույր՝ հովիկին պինդ փարած՝
Կ'երթա մինչև շուքին անկյունը լըճակ՝
Ուր ծաղկահեր գլխով աղջիկն ըսպիտակ
Մահիճին մեջ ընկողմանած՝ աչքը բաց՝
Ձեռքը թուղթին՝ թուղթը սրտին՝ կ'երազե...

Տա՛ք է, մեկ կողմ կը նետե շուտ իր վերմակ
Ու կը հանե շապիկն ալ՝ գաղջ ու ճերմակ.
Ու կը կայնի հոն, հերարձակ, հոլանի,
Հայլիին դեմ, ձեռքն ըստինքին, երազո՞ւն,
Ինչպես բոց մը, ինչպես խուրձ մը ցորենի.
Թղթիկին պես հայլիին քաղցր է լեզուն...
Թղթիկին՝ զոր դեռ իր կուրծքեն չէ՛ բաժնած
Զոր գոց գիտե, զոր սրտին մե՞ջ է դըրած։

Ու կը սահի ճյուղ մը վարսքեն մետաքսե,
Իր ծիծերուն մինչև ծմակը շուշան.
Ու պտկունքներն հեշտությունով կը սարսռան,
Ու թղթիկը իր բոց բառերը կ'ըսե,
Իր տառե՞րը կը տըրոփե մութին մեջ...
Եվ հաճոյիկ, անույշ, բարի՞ լուսինկան
Վարագույրեն շողիկ մը ներս կը խրկե՝
Որ շեշտ կ'իյնա ձեռքերուն մեջ աղջկան՝
Լուսավորել թղթիկն՝ որ դեռ կը հծծե...

1908

ԱՐԴԻ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՅՐ ՄԵՐԸ

ՏՈ՞ՒՐ ԻՆԾԻ, ՏԵՐ...

Դուրյան սրբազանին

Տո՞ւր ինծի, Տե՞ր, ուրախությունն անանձնական.
Ծաղիկներո՞ւ պես զայն ժողվեմ ճամբուս վրան՝
Նայվածքներուն մեջ ամենուն և ամեն օր։

Տո՞ւր ինծի, Տե՞ր, ուրախությունն անանձնական.
Եվ ես՝ հանգույն երփնալուցկի վառող մանկան՝
Զայն գունաժպիտ տեսնեմ ուրիշ դեմքի մը վրան։

Տո՞ւր ինծի, Տե՞ր, ուրախությունն անանձնական.
Զանգակներո՞ւ պես զայն կախեմ ամեն դըրան՝
Ու զերթ նարոտ ամեն դըրան զայն պըսակեմ։

Տո՞ւր ինծի, Տե՞ր, ուրախությունն անանձնական.
Ճըրագներու պես զայն բոցեմ բազմաստեղնյան՝
Խավարին մեջ ամեն երդ ու խրճիթներու։

Տո՞ւր ինծի, Տե՞ր, ուրախությունն անանձնական.
Զայն սրբասաց իմ հոգյակիս ընեմ խորան՝
Զայն իմ մտքիս ծըխեմ՝ զերթ խունկ բազմաբուրյան։

Տո՞ւր ինծի, Տե՞ր, ուրախությունն անանձնական.
Ու չըլլա որ ուրիշներու կոծն ու կական
Խեղդել ուզեմ ջըրվեժին մեջ դափիս ձայնին։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Ու չըլլա՜ որ ծափիս ձայնին երգը՝ գուժկան
Եսիս սենյա՜կն ունենա՝ ցո՜ւրտ առանձնարան։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Ու սեղանիս վրրա դրված մեն մի նրկան՝
Զույգ մը խինդե՜ր գիթ ունենա թող խաչանիշ։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Ու բաղխեմ զայն սրտիս ժայռին՝ իբրև մական՝
Որ բղխեցնե ջուրն աներկմիտ երանության։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Զայն ջուրերուն վրրա ձրգեմ իբրև ուռկան,
Զայն իբր արոր ակոսներո՜ւն ձրգեմ վրրան։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Զայն իբր անձրև ցողեմ ամեն դաշտի վրրան,
Զայն իբր արև բաշխեմ ամեն հորիզոնի։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Զայն ընդգրկած իտեալին ըլլամ սրսկան.
Զայն լաստ ըրած ես Լույսերու նավո՜րդն ըլլամ։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Ժողվել՝ հոգվույն մեջ ծերերուն, կույսին, մանկան,
Պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական.
Ժողվել՝ հոգվույն մեջ ամենո՜ւն, համայնական
Հոգվույն ամեն մասնիկներուն մեջ՝ ամեն ժամ։

Ճամբաներեն, ու գետերեն, ու դաշտերեն,
Անտառներեն, ու լեռներեն, ու ձորերեն,
Տանիքներեն, ու տուներեն, ու դուռներեն՝

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախութիւն անանձնական։

ՄԱՆԻՇԱԿ ՈՒ ՄԱՄՈՒՈ

Ժայռերու զով շուքին տակ
Կանանչ խոտի խուրձ մը կար՝
Որ ունենալ կը ցանկար
Քարին գույնը կապուտակ։

Ինքը ցողի՛ պետք ուներ,
Որ գույներով զանազան
Կազմեր ծաղիկ, ծիածան՝
Երբոր արևը փայլեր։

Քարն երջանիկ էր ո՜րքան...
Առանց ցողի ալ՝ գույներ
Ու ծաղիկնե՜ր կը շիներ՝
Շողերուն հետ օգնական։

* * *

Խոտին խուրձը բարձրացավ
Քիչ մ՝ամեն օր քարն ի վեր,
Որուն՝ սրտիկն իր բացավ,
Պատմեց բազմանքն ու ցավեր։

Ըսավ. Ի՜նձ ալ, ա՜ղբրրուկ,
Տայիր գույներ անուշակ
Ու նրվերիդ փոխանակ՝
Գույնիս ընծա՜ն առ խաժուկ։

Ցանկալի՜ քույր, ա՜ռ, որքան
Կ՝ուզես գույնեա և ընծան.
Տուր կանանչիդ կենսական՝
Երակներուս անկենդան։

***

Գիշերն համբուն քաղցրացան
Քարն ու խրձյակը խոտին...
Եվ երբ շողերն ավոտին
Հորիզոնեն բարձրացան՝

Ժայռի շուքին տակ գըտան
Խոտին ծաղիկն ու բաժակ,
Եվ երբեմնի անկենդան
Քարն ալ՝ ժպտուն ու խաժակ։

Եվ այն օրեն մանիշակ
Ծաղկեցավ թուփն, ու դաժան
Ժայռեն եղավ անբաժան՝
Մամուռին գույնն անուշակ։

ՀԱՆԳԱՊԱՏՈՒՄ

«ՍԵՆՊՈԼԻԶՄ»Ը

Ալփասլանին
Հանգական խոնարհությամբ

Կեցեք որ պատմեմ ձեզի արկածներս...
Օր մ'Հայ Դպրության մտա սեմեն ներս.
— Դոնապան չկա՞ր, բարեբա՞խտ էի,
Բախտ՝ զոր քիչերուն պիտի մաղթեի...—
Արդ, Հայ Դպրության մտա սեմեն ներս
— Ա՜հ, ի՞նչպես պատմեմ ձեզի հուզումներս...
Ուղղեցի քայլերս երկչոտ ու տըկար,
Սանդուխներեն վեր՝ ուր գավթակ չկար,
Սանդուխներեն վա՜ր՝ ուր չկա՞ր սենյակ.
Զո՜ւր հնչեցուցի ես երգ ու ձայնյակ,
Զո՜ւր ես պարզեցի երկնամփոփ աղեղ,
Զո՜ւր պատ շարեցի, տնկեցի բաղեղ,
Քար քարի վրա դրի ես հարմար.

Տունն այս Դպրության, ավա՜ղ, չէ՞ր շեննար՝
Թե քար շարեին հազար հավիտյան
Դավիթ Կուլանն իսկ և Առյուծն Ալփյան...

***

Հանկարծ ուրիշ դուռ մ'երևաց աչքիս.
Պարտեզին դո՜ւռն էր, ու թրթռաց հոգիս։
Քնարիս անցուցի նոբբզնոր թելեր,
Ու ճիշդ այն պահուն մեկը դուրս կ'ելլեր,
— Մեռճան Բալսամյա՜ն, ձայն մ' ըսավ ներսես—
Ու սըպրդեցա նոր դուռեն ներս ես։
Պարտեզին մեջ կար... սոխ, սխտոր, բանճար,
Ներեցե՛ք... կաղամբ ալ, և անպատճառ
Ամեն ինչ՝ որուն կ'ըլլար միշտ վրճար,
Զոր կողովալիր ծախելուն կար ճար։
Կար քիչ մ'ամեն բան, ածու մ'ալ ծաղիկ
Զոր կը հոտոտենք, թե չըսրդողիք։

***

Երբ ներս մըտա ես, ավա՜ղ, ի՜նչ մեծ ցավ,
Ամենմեկ ծաղիկ հանկարծ մարդացավ։
Ավանդ Տերանցյան, բացած իր գլխարկ,
Ըսավ.— Ըզգացումդ՝ հըրա՜շք. ու չէ խակ
Երբեք լեզո՜ւն ալ զոր կը գործածես,
Համբավիդ պիտի կատարեմ ես ծես։
Մեռճան Բալսամյան նոր ներս կը մտներ,
Այս անգամ Նովիք Առմանն ալ հետն էր։
Նովիք Առմանին փսփսաց Մեռճան,
— Ո՜չ Զագմագճըլար, և ո՜չ ի Մեռճան,
Ջին, Ճաբոն, Սեյլան, ո՜չ մեկ գրավաճառ
Պետք չ'է այսպես գիրք հանե ի վաճառ։
Ի՞նչ, իմ համբավիս քայքայե՜լ տաճար,
Ու քու ցորենիդ տեղ դընել հաճա՜ր.
Ես ժանյակներու անհուն կրպակն եմ,
Եվ ազնվական կըրունկ կը պագնեմ.
Մինչ անոնք կ'երգեն գորտ, շերամ, պաճար,

Ամեն ինչ՝ որ է գոհիկ, անհանգստ,
Անոնց գրչակը կ՝եղծե չարաշար։
Այս մոլար կապկումն ո՞վ է մեզ բերեր.
— Նովիք Առման էր որ կը փրրփրրեր.—
Դուն մե՜ծ համբավովդ եղիր անվեհե՛ր.
Անոնց ու քու մեջ կան անդունդ, վիհե՛ր.
Դուն երազանք ես, անոնք՝ զառանցանք,
Դուն՝ ծաղիկ, պատրանք, իսկ անոնք՝ փորձանք։
Դուն դարիճենիկ՝ անոնք... քարմաբցանկ։
Ու Նովիք Առման, ճիգերով դժվար,
Լոլիկի գույնով բըլուրե մը վար
Գլտորեց հանկարծ պարապ մեկ տակառ.
Ու գինով անոր աղմուկեն վայրէջ,
Կըսկսեր մոռնալ ինքզինքն էջե էջ։
Անկոպ Քարակոփ, բացած իր թևեր,
Կ՝ըսեր. Վե՜ր անցիր, մի՜շտ ավելի վեր։
Եվ ամեն ամի՜ քերթող Դրանիկ Ճրագ
Կը հծծեր. Ա՜վաղ, ի՜նչ աղբյուր ճրճրագ,
Ե՛ս մեկ հորդումով ծածկեմ ավազ, ակ.
Ինձմե՜ է գողցեր ամենն... ավազ ակ։
Ճաճանչ Եկուրյան շուտ արձագանգեց.
— Ճիշդ է, մե՜ծ մասը անկե՜ց է, անկե՜ց։
Թագվոր Զատիկյան ոտք ելավ. Արի՜,
Դուն պիտի ըլլաս քերթող մեծ կարի՜։
Օհան Ապտակցին հնչեցուց իր փող.
— Կ՝արժե որ կարդանք մենք ասոր ներբող.
Քանզի ունի ան գաղտնիք, մոգություն,
Ճառագայթ Ռեոնթկեն ու ճառագայթ... Տյո՜ւն։
Այս պահուն մեկն՝ որ խիստ ըզբաղված էր,
Հանկարծ բարկությամբ կուրծքը կը ծեծեր։
Ի՞նչ, ի՞նչ «Սենպոլիզմ». խե՜ղթ է, ո՜վ դիք, էՐ
Դուք ասոր ոտքն ու ձեռքը չեք կապեր.
Մանավանդ... ձեռքերն, ա՜հ, ձեռքեր, ձեռքե՜ր,
Որ կը հանգգնին ութ հարյուր տողով
Առուն գլտորել իմ կութքիս կողով։
Դավիթ Կուլանյան կըսեր՝—Պո՜շ, չա՜դժեր...
Է՜հ, գեշ չէ... շա՜տ լավ... սակայն իր ուժեր
Հանճարի հըզոր կամք մը չէ՞ շարժեր։

Դրամ Տեւտեանյան կ՝ըսեր. Արշալույս
Ու արև ծագեց ձեզ և... եղկելույս։
Ու Զանդիկ Քոշյան. Էա՜վ է, գեղեցիկ
Քայլերնիդ դեպ ի Պառնաս ուղղեցիք.
Բայց երբ հարկ ըլլա ձեզ գտնել տարտամ՝
Ես կարավանին առջևեն կ՝երթամ։
Եղյամ Պատտեղյան դատած էր. Կեցցե՜...
Տաղարանդ, իրա՜վ, մեզ համար գա՜նձ է։
Նոր քերթողության ուսահարդն ես դուն.
Ճակատագի՜րդ իսկ՝ լուտանքը մարդուն։
Եդուարդ Արփիյան. «Լա՜վ է, լա՜վ,— ըսավ—
Երբեք գիրքերուն չկարդանք պարսավ.
Չի հեղինակն ալ պետք չէ՞, որ հա՜րկավ,
Իր ջանքին ի վարձ կ՝ըլլե հող ու... կավ։
Զատիկ Արգագիր. Ո՜հ, ամենն են մուխ.
Դուն՝ բո՜ց մը մաքո՜ւր ծախի՜չ խորամո՜ւխ։
«Խո՜սք կ՝ուզեմ, պոռաց Գիստրոս Փաթեթյան՝
— Հապա ուրեմքն ե՜ս ալ գամ առյան.—
Որ մեծ գիրքերու ետին ապաստան,
Կը շիներ իմս ու իսթերու լիսթան։
Բայց, ավա՜ղ, խոսքի կը տիրեր մե՜ծ սով.
Ու խոսք չըտվին իրեն ... ամիսո՜վ։

* * *

Երբոր պարտեզեն պահ մը դուրս ելա,
Մեկը կը հծծեր. Ի՞նչ քաղցրիկ լիլա.
Մյուս մըն ալ. «Ո՜վ Տե՜ր, ի՜նչ... խաստա-պելա...
Մեծարենցի տեղ գտավ՝
ՀՐԱՉՅԱ։

ՍԻՐԵՐԳ

Զյունին վրայեն կ՝երթաս, արև՜ ձյունածաղիկ,
Քայլիդ չափն է կոչնակին ձայնը ժամուն,
Շուրջդ է ծիածան, օ՜հ, առտվան այս ժամո՜ւն,
Սիրտդ՝ ուխտադիր սրբության մը խաղաղիկ։

Ձյունին վրայեն կ՝երթաս, արև՜ ձյունածաղիկ,
Մնջելով ունկն ի վար աղոթքդ անծանոթ,
Ու շփելով շուրթիս սյուք մը մյուռոնհոտ։
Հիմա կ՝երգեն, օ՜հ, «Զարթի՜ք, փառք իմ, զարթի՜ք...»։

Ձյունին վրայեն կ՝երթաս, արև՜ ձյունածաղիկ,
Կ՝երթաս, ո՜վ կույս, ձյունին վրայեն իմ սրտիս,
Հորինելով գունյան կայծեր ու աստղի՜կ.
Իմ տաղարանս՝ ուր դուն կ՝երգես, կը ժպտիս։

ՄԻՏՔ ՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Միտքս անդադար պատճառներու կը կանչեր,
Ինչպես շան մը լիալուսնին դեմ հաչյուն,
Կամ կոհակին ամբարտակին դեմ շողյուն.
— Մեկուն պես շփոթ, մյուսին պես լե՜ռ մըռունչե։

Փյունիկ մըն է միտքս, իր թևերն են «ի՜նչ է»,
Որ կը սլանա դեպի «քանզի»ին լույս հնչյուն,
Հոն տատրա՜կ մը կը վերածնի իր աճյուն՝
Զույգ թևերով ծիածան ու ճաճանչե։

Աղաղակի կ՝ըլլա մըրրիկ ամպաթև,
Միտքս՝ որ հասնող* «ինչու»ներուն հնձանն է.
Զոր կաթոգին ձեռք մը հանկարծ կը բռնե,

Կը պարուրե՜ խաղաղությամբն իր թեթև,
Հրաշալիո՜ն արեգակ ու կապույտի՝
Որ համասփյուռ ամեն բանի կը ժպտի՜։

---

* Հասնող՝ en fermentation։

ԻՐԻԿՆԱՎԵՐՋ

Կը ցնծա ուտն ալյակին հետ,
Ճարճատելով ճիչ մը զըվարթ,
Չի կը սփռե հարսն արփավետ՝
Համայնին վրա՝ մաղերն իր վարդ։

Կը ցնծա՜ ուտն ալյակին հետ,
Երբ կանգ կ՝առնե կույսին նավակ.
Ու բզզալով ջուրն ու նըվագ՝
Կ՝երթան հոգվույն այն ծաղկավետ։

Կը ցնծա՜ ուտն ալյակին հետ,
— Օդն է քաղցրի՜կ զերթ մանանա,—
Երկուքին վրա երբ կը բանա
Լուսին աղեղն՝ արծաթ իր նետ...

ՍԻՐԵՐԳ

Երբ կը մեկնիմ ես քու քովեդ,
Կ՝ըլլամ շիկնոտ ու թրվըռուն՝
Ինչպես կ՝ըլլա՝ բուրումնավետ
Վարդենիքեն անցնող առուն։

Եվ ջուրին պես այն թրվըռուն,
Քու նախընծա գրկանքիդ հետ,
Մոլորելով կ՝ըլլա անհետ՝
Գետ հոգվույդ մեջ՝ սրտիս առուն։

Ու գետին պես՝ սրտիս առուն
Կը տանիս քու մահվան ճամբեդ՝
Զարնելով զայն մերթ ծաղկավետ
Ափունքներուն՝ մերթ քարերուն։

ԽՈՒՆԿ ՈՒ ԱՐՑՈՒՆՔ

Շիթ մ՚արցունքով՝ կաթիլ մը խունկ
Սրբանոթին մեջ կը ցանե
Մայրս՝ որ կ՚անցնի անտես դռնե,
Եվ երջանիկ՝ կը դընե ունկ

Անդրաշխարհեն եկող ձայնին։
Աչքերուն՝ որ զինք կը դիտեն
Կիրակմուտքի խունկին ատեն՝
Ձեռքն անընդհատ կու տա խա՜չն հին։

Եվ ամենուն կու տա բաժին՝
Ծուխեն ծաղիկ մը ծափելի։
Ու ցայգամուտն է հայելի՝
Ուր կը ցոլա բոցն աշխուժին՝

Լուսահոգի զվարթուններուն՝
*Զորս արբեցուց այս իրիկուն
Շաբաթօրյա խունկն ու արցունք։

Մայրս ալևոր չոքեր է ծո՜ւնկ...

ԱՆԹՎԱԿԻՐ ՏԱՂԵՐ

ՏՎԱՅՏԱՆՔ

Անոր ցավը՝ հո՜ւր է վառող ինձ համար,
Ինչպես սերն է՝ կյանք հորդաբուխ և անշեջ...
Քանի դիտեմ դեմքն ըսպիտակ զերթ մարմար,
Շիթ շիթ արցունք կը քարանա սրտիս մեջ։

---

* Ժողովրդական հավատալիք մը կ՚ըսե թե Կիրակմուտքի տնային խնկարկութեանց միջոցին «լուսեղեններ»ը իրենց սիրելիներուն կայքերը կ՚երթան, ակնկալու աչքերով, ստանալու համար իրենց ընծայված խունկն ու արցունքը, կամ հուսավրեպ, գլխիկոր ե՞տ դառնալու համար...։ Ժողովրդական հավատալիքը կ՚ըսե ուրեմն, և ո՞վ պիտի չըսեր թե հիշատակը կը վերապրեցնե հոգիները։ Եվ ի՞նչ ավելի հիշատակելի հիշատակարան՝ քան աստղաշիթ աստվածատուր արցունքն ու հոգեպարար վերամբարձ խունկը։

Թարշամներ է կաթնաբուխ ցո՛լքը բերնին,
Իր ժըպիտին քնքույշ ծաղիկն հոտեան,
Ուր կը վառեր կյանքի ըղձանքը ջերմին,
Լի հըրայրքովն հուզումնալից իր գարնան...

Եվ գլխիկոր՝ ինչպես եղնիկ վիրավոր,
Կը տեսնեմ, երբ հուրն երազանքն իմ ծաղիկ,
Կը դաշունեն գիս մորմոքներ բյուրավոր,
Խավարելով անուրջն հոգվույս խաղաղիկ...

ԽԵՆԹԵ՜Ր

Ա

Մթնշաղին բոցերուն մեջ երփնագույն,
Երկու ձեռքը կը կարկառե, և իսկույն
Կ՚ուզե բռնել՝ հասկերուն վրա ցորենի՝
Փախչող լույսին թռչնակները ծիրանի։

Կ՚ուզե թրջել ճակատն՝ ինչով բոցարծարծ՝
Ճերմակ թռչնիկ ծփանքներուն վրա ծովուն.
Վարազի պես կը խոյանա վրդովուն՝
Բայց մոր գի՜րկն է որ կը բանտե զինքն հանկարծ։

Խե՜նթն է, կ՚ըսեն, անխի՜ղճ գութով, և հանգույն
Ասուպներու՝ իրենց խոկին կը դառնան.
Հորիզոնի դալկության մը պես տժգույն՝
Մայրն անդոհով կու լա պտուղն իր գարնան։

Մայրը կու լա երջանկությունն իր զավկին.
Ու կը կարծե փուշեր ժողվել, ուր վարդեր,
Արձակունակ ծաղիկներու քաղցրագին
Եդեմներ նոր՝ տըղուն անուրջն է գըտեր։

Տըղուն՝ որ գո՜հ փակեց թևերն ու կարծես
Կը հավատա անհունություն մը գրկել։
Կ՚ուզե մինակ ըլլալ. վազե՜լ անարգել
Անրջական ի՞նչ կույսի մը ոսկեգես...

Ու ջուրերուն եզրը կեցած, երբեմն ալ,
Երկա՜ր ատեն, կը բաղձա հոն մենանալ,
Մթնշաղին բոցերուն մեջ վարդագույն,
Երկու թևը պարզած՝ խաչի մը հանգույն։

Խա՜չ՝ որուն ցավն ու ըստվերները գորշագույն
Կ'անդրադառնան՝ ինչպես մրոայլ ուրվական՝
Լուրթ ջուրերուն վրա ծով հոգվույն մայրական,
Մթնշաղին բոցերուն մեջ վարդագույն։

Բ

Մութնուլուսուն պատրշգամին վրա է.
Եղյամին վրա, ոտքը բոպիկ, գլուխը բաց.
Սբրինգ մ'անտես իր շուրթերուն է հրպած,
Եվ ջուրերու թույլ շրշյունին կ'ունկնդրե։

Պի՜շ կը նայի ծովեն անդին, լրջացած
Հորիզոնին. կը կարծե ի՜նք կերպեր է,
Իր անանուն սրինգով՝ բոլոր դաշն ու ցած
Ձայնաշարը՝ զոր սյուքն հեղիկ կը բերե։

Մեծ, ճշմարիտ ու նախնական այդ ձայնով,
— Իր նրվագով,— ա՜յնքան կ'ըլլա ինք գինով,
Որ կը պատե գրկած արևը ծագող։

Բայց առաջին նայվածքներեն, ինչպես գող,
Ներս կը սուրա ընդոստ խուցեն. իր շուրջի
Մարդաձայնեն ինք զինքն հիշած՝ կը փախչի...

Գ

Դեռ կըսպասե՜, մտքին մութին մեջ դաժան,
Զոր ցանցեր է շրջուն թալուկն անդունդին.
Կ'ուզե նայիլ անգա՜մ մըն ալ իր չորսդին,—
Քաղցրություններն արդյոք կու գա՞ն, ա՜հ, կու գա՞ն։

Համակրության պզտիկ բառ մը մեղրանույշ,
Պզտիկ ճրագ մը գորովի բոցարծարծ՝
Որ նշմարել տա խավարին մեջ հանկարծ
Հին սիրական ուղին, հոգ չէ՛, ա՜յսքան ուշ...

Դեռ կըսպասե՜, մտքին մութին մեջ, դաժան
Քարշեպին վրա. վարեն մըթար ջուրերուն
Զինք կը կարթե շարժող տեսիլն ուրվական.
Վարե՞ն. մրոայլ տարփի ձայներ կը վըժան...

Փնտռեցե՜ք այս տըղան, ո՞ւր եք, ո՜վ սուրբեր.
Թողե՜ք անկյունն՝ ամուլ ձեր գութն ու մատյան.
Աստվածն ա՜ն է, ա՜ն՝ որ արցունք է սրբեր,
Ա՜հ, քաղցրություն, գոնե շի՜թ մը քաղցրության։

Դեռ կըսպասե՜, մտքին մութին մեջ դաժան,
Նըշույլներո՜ւն դեռ՝ սիրաշարժ շրթունքին,
Դեռ սիրածագ բոցին՝ աչքի մը անգին...
Դեռ կյա՜նք կ'ուզե, անոնք Մա՜հն իր կը կարդան։

Սև լաթի մը պես կը նետեն երեսին
«Խենթ» բառն անհուն. բառ անգորով ու դաժան.
Ու կը դառնան ապրիլ իրենց կյանքն ոսին,
Սև եղբայր մը մատնած ցավին անբաժան։

Դեռ կըսպասե՜ պզտիկ բառ մը մեղրանույշ,
Դեռ կըսպասե՜ գորովանքի ճրագն արծարծ
Դեռ կըսպասե՜ որ խավարին մեջ հանկարծ
Հին սիրական ուղին ցույց տան, ա՜յսքան ուշ...

ԵՐԳ

Քո՜ւյր, մոտեցի՜ր կըրակին,
Ծըխե տերևն այս բուրյան,
Զի ամեն բան ինձ կրկին
Կը դարձընե հոտն արյան։

Քո՛ւյր, մոտեցի՛ր դարակին
Ու բեր հեղուկն հրնծանյան,
Զի ամեն բան ինձ կրկին
Կը դարձընե համն արյան։

Քո՛ւյր, մոտեցի՛ր ճրագին,
Մարե՛ զայն, թո՛ղ լուսինկան,
Զի ամեն բան ինձ կրկին
Կը դարձընե գույնն արյան։

Քո՛ւյր, մոտեցի՛ր նրվագին,
Երգե՛ դաշտերն ու ցորյան,
Զի ամեն բան ինձ կրկին
Կը դարձընե ձայնն արյան։

Քո՛ւյր, մոտեցո՛ւր իմ ձեռքին
Աստվածարոցն հրբացան,
Զի ամե՛ն բան ինձ կրկին
Կը հիշեցնե վրե՛ժն արյան...

ԱՐՋԱԿ ԷՋԵՐ

1904

ՑԱՅԳԱՅԻՆ

Կը սիրեմ ես թափառել գիշերին մեջ. գիշերին մեջ, ուր այգուն դեմ, երազի անո՛ւյշ ծաղիկներ, ձյունե փթթումներով, կը բացվին հոգիներու շուշան համբույրին, գիշերի՛ն մեջ, ուր գետեզրին մոտեն լսվող կոչնակին գանգյունը կը ծավալի սարե սար ու խորհրդավոր կերպով կ՝օրրե զգացումները։

Կարավանը կ՝անցնի՝ լերան արահետներեն, ու բոժոժներու ձայնին միստիք մելամաղձությունը հեռուն հեռու կը լսվի գիշերին մեջ, որ լուռ է, գիշերին մեջ, որ մթին է և ահավոր։

Եզնիկները,— անրջային ու պաշտելի՝ կենդանիներ,— թեթև, թեթև, գետափն ի վար կը սուրան, գետափն ի վար՝ որուն մեջ կըստվերանկարվին լուսնի լազվարթային սատափացումներեն, ինչ որ ունին խոլագիծ ու խուսափուկ ու անշոշափ՝ երազի մեջ վարշամակված իրենց ամպային ձևերը։ Ու իրենց մեղրիկ նայվածքներուն լույսը կ՝առկայծի գիշերին մեջ, որ լայն է, հեշտագին ու համապարփակ։

Ու բոլոր մրտենիները, բուրումնալիր, դալար համբույրներ կը սոսավեն հոլանի միջոցին մեջ։ Պարզկա գիշերվան սյուքը կ՝անցնի տերեվափափ թավուտքին ճիշդ սրտին ընդմեջեն, սարսուռներ պտտեցնելով հոն։ Ու ես կը մտածեմ, աչքերս կիսափակ ու հոգնած, գլուխս քարի մը հեցած և հոգիս հեշտանքով ու տենդով լեցուն, ես կը մտածե՛մ...

Հո՛վը, գինով աղջիկ մըն է կարծես հովը, ծփացիկ պարեգոտով հո՛վը, գիշերվան զովահար ու բուրումնավե՛տ հովը, որ ջուրերուն վրա խող ու տատանուտ ջրշաղար մը կը դաձնա հուլորեն, գիշերին մեջ, որ ցրտին է ու դողդոջուն։

Կը սիրեմ ես թափառիլ քու հոգիիդ գիշերին մեջ, ո՜վ կին, գիշերին մեջ քու հոգի՜դ, որ տրտում է և ահավոր, լայն ու հեշտագին, կրքոտ ու խանդաբորբ, ցրտին ու դողահար...։

<1904>

1905

ՑԱՅԳԱՆՎԱԳ

Պարզկա գիշերվան համատարած սպիտակ լույսերուն մեջ ո՞վ չզգար խորհուրդն անծայրածիր Գոյության. ո՞վ չի լսեր ձայները՝ որոնք միջոցին մեջ հավիտենության անծայրածիր գաղափարը կ՚երգեն։ Ծնունդի խորհրդասքո՜ղ գիշեր, ուր հոգիները կը վերածնին ու Մտածումները կը սլանան դեպ ի անհուն բարձունքը դարավոր խորհրդանիշին. ադամանդե երազունակ ու լայնալիճ նայվածք, որ հոգիներու վրա կը քրքի ու կը հալածե մշուշն անոնց ըստվերոտ ծալքերուն։

Զանգակները կը հնչեն, երգերը կ՚ոգեվորեն, ու բոլոր ձայները ցնծագին համերգության մը մեջ կը միանան. հոգիներու ծնո՜ւնդն է։

Լուսավորները կը վառին, խունկերը կը բուրեն, լույսերն ոսկի բոցերով կը փայլին. հոգիներու ծնո՜ւնդն է։

Շրթունքները մեղմագին կ՚աղոթեն, նայվածքները կը բոցափայլին, ու ձեռքերը կը վերանան, կը վերանա՜ն. հոգիներու ծնո՜ւնդն է։

Տաճարին մեջ, լուսավառ սեղաններուն վրա, ոսկեհուռ թավիշե բահվանդներով միստիք գիրքեր փակ ու լռին կ՚աղոթեն. վայրկյանի լռություն մը հոգիներու մեջ անծանոթ դողեր կը թափանցե, ու նայվածքները, գութի ու գորովի տամկություններով լեցուն, կը պսպղան. հոգիներու ծնո՜ւնդն է։

... Երգերը կը վերսկսին, զանգակները դարձյալ կը հնչեն, մրրմունջներն անդուլ կը բարձրանան, կնդրուկներն անընդհատ կը բուրեն, և սիրտերը միշտ, մի՜շտ, անհուն սլացքներով, կը վերանան. հոգիներու ծնո՜ւնդն է...

***

Քու խորհուրդիդ վեհության առջև, ո՜վ սիրական ու պաշտելի գիշե՛ր, կ՚զգամ որ ձեռքերս, ներքին հզոր աղդեցությենե մը մղված, կը միանան, ծունկերս կը խոնարհին, շրթունքներս կը դողդոջեն, ու նայվածքներս կը մոլորին իրենց տենդահույզ թափառումներուն մեջ։

Ո՜վ սուրբ գիշեր, հոսեցուր սրտիս մեջ կաթը քու սպիտակ խորհուրդիդ և զիս քու ամբիծ գորովանքիդ հավիտենությանը մեջ ապրեցուր, քու հրայրքիդ բոցավառ ծիածանը շողացուր հոգվույս խավարին մեջ և էությանս պարապը քու հույզերովդ, քու սուրբ ու կենսառատ հույզերովդ լեցուր։

Դուն ուր Կյանքը տվիր ինծի, ո՜վ Տեր, ապրի՛լ սովրեցուր, ցողե իմ հոգիս ցողովն անհուն գթության, ու թող ձյունե սրտիս մեջ հավերժական սպիտակությունը քու սրբություններուդ, տո՛ւր ինծի, ո՜վ Տեր, քաղցր մոռացոնքն աշխարհի մորմոքներուն և հետադարձ մոլորանքին ցավն ինծի խնայե։

Քու սատափե երազիդ գունագեղ շողերուն մեջը զիս թաղե, ո՜վ սուրբ գիշեր, և հագեցուր անսահման պապակն որ անդադար կ՚այրե հոգիս։ Մանուկը՝ որ կը նիրհե իմ հոգվույս խորը, արթնցուր և հնչեցուր դարձյալ վաղեմի ձայնը՝ որ լռած էր սրտիս մեջ։

Ո՜րքան քաղցր է սուզվիլ քու պայծառ խորհուրդիդ ջինջ անհունության մեջ. թո՜ղ որ հանգչեցնեմ հոգնաբեկ ճակատս սփոփանքիդ շողերով ու մոռնամ պահ մը անսահման խանդաղատանքիդ մեջ փանաքի վրդովումներն աշխարհի ունայնություններուն, ո՜վ սուրբ ու պաշտելի գիշերը հոգիներու Վերածնունդին...

ՀԱՏՎԱԾԻԿՆԵՐ

Կը լսեմ որ էությանս մեջ կը հեծե անույշ սարսուռը սերերուն, որոնք պիտի ծաղկին ցավոտ սրտիս մեջ, ուր հիշատակներու փոշին կը քնանա՝ հառաչանքի մելամաղձիկ օրորներուն տակ։

Ու կը փախչի՜մ, չեմ գիտեր թե ինչե՜, թերևս իմ հոգիես, իմ ցավատանջ հոգիես, ուր Տառապանքը լոկ երգեց երգը անծանոթ ու խորին տրտմության, որ իմ էությանս մեջ կ՚ապրի։

***

Հորդառատ ծուխ մը կը պլլվի Տենչանքիս խորտակող բոցին, որ սուտակային գոտիի մը պես կ'երկարի։

Անծանոթ դիցուհիներու շարագուշակ ձեռքեր՝ մշուշի խոպոպներով կ'աշնաներփեն երազագույն հոգիս, որ կը թվի թե կ'անէանա համրորեն, համրորեն։ Մահերգի ուրվային թախծություններ, ջախջախող ու անբուժելի, հեռուներեն կը նվագեն ինծի մահը ծաղկատի աղջկան. «Մեռա՜վ ան, ո՜վ դուն, անվերապա՜հ տարփավոր, միամի՜տ աղա, ու անկասկա՜ծ։ Թափառիկ ու դյուրաբեկ ստվերայնություն, որ կրցար քու հույզերդ պտտեցնել խավարշտին ու անել բավիղներու եզերքը, խեղդող պարապության մեջ, որ ծնրադրած կը թվեր քեզի՝ զգացումին ուժգնության առջև։ Բայց, անխորհո՜ւրդ, գիտցի՜ր մեծ խորհուրդը ու կրկնե՜ մեզի հետ. «Քնացա՜վ,— ու գուցե ընդմիշտ չ'արթննա՜. անիկա իր անգոյությունը կ'ապրի հիմակ, ա՜հ, իր անգոյությունը...»։

***

Ալյակներու ընդհատ ընդհատ շաչող սրսփունքները, որոնք ավազին վրա կը մեռնին դողահար, ու ծովափին խուսափուկ լույսերուն ծիրանի երանգավորումները, որոնք կը թոշնին հանկարծ, տարտամ գույներու աղոտ ճաճանչումներ ու թերի լուսաժապավեններու երազունակ գիծեր սփռելով գորշ ծովախորշին վրա, կը թափանցեն հոգվույս մեջ հավիտենական գաղափարը խուսափուկ Գոյության ու մահագուշակ անդորրություններուն։

Ա՜հ, լուսնային անհուն, կապույտ, մետաքսե քաղցրություննե՜ր... փախչող վրդովմունքներու սպիտակ երազայնությունը... ծովուն աղաբույր շունչը, որ խորունկ զգացողության մը պես կստվարանա ու կը ճնշե տակավ հոգիիս։

Մահվան անդնային զգայնություն մը՝ մահագույն մտածության միտապաղաղության մեջ։

Եվ մահական վանկեր, որոնք կը մագլցին սառ հանդարտություններու մեջ, նվագի մը պես, որ կը թմրեցնե՜ հեշտին...

Բայց չի՜ լռեր երբեք աղաղակը հոգվույս, որ դեպ ի կյանք կը վազե, խանդավառ ու բաղձալից...

ՋՐԻՆ ԾԱՌԸ

Գետը, դեռ գյուղ չհասած, կը թոթվտի իր հողե անկողինին մեջ՝ փրփրալից ու հեստ. ու շաչելով, շչելով կ'անցնի հպարտ, խարակներուն առվեն, որոնց մեջ կարծես զայն իր ամպարագիծ հոխորտանքին մեջ արգիլելու շարժումներ ընողներ կան. ահա՜ մեկը, որ իր տեղը թողած զացեր կեցեր է ճիշդ հոսանքին մեջտեղը, ու, անտարբեր ու լուրջ, կուրծքը հեղուկ խարազաններու հարվածներեն կապուտցած, զայն պիտի պատվարե՜ր կարծես. քիչ մը վարը, ճիշդ հոն, ուր ափունքի քարշեպներուն շղթայեն պրծած, գյուղ պիտի մտնե վիժանուտ ջուրը, երկու հաղթ ժայռեր, դեմ դեմի նստած, իրենց թուխ բազուկները կ'երկարեն իրարու. հոն գետը, ա՜յնքան նեղցած ու ամփոփ ու լռին է, որ կարծես, պղտիկ ճի՛գ մըն ալ, ու ժայռերը հավիտենապես պիտի ցցեին հոն իրենց անընկճելի ամբարտակը ու կապտեին խեռ տղան։ Բայց ջուրը ճապկըտուն է և ճուկ կու տա կը սահի գնդերոտ բազուկներու կամարին տակեն. ու դարձյալ, շարանճար, կը վազե դեպ ի գյուղ, մյուս ժայռերուն առջևեն, իրենց անգասնումին մեջ մեկուսացած, որոնց բացատքին ընդմեջեն երկինքը կը հեռանկարվի և անոնց գլխուն վրա կը հանգչի կապույտ կափույրի մը պես. մինակ թե, երբ հոսանքը պիտի անցնի կամուրջին տակեն, հոն, ուր ժայռերուն հպարտանքը կ'ինչնա, և սպիտակ, գմբեթարդ Աստվածամարը կը ժպտի անույշ, կամուրջին տակեն՝ կը սահի անշշուկ, հանդարտած, և բարի Աստվածամարը, ղինքը շրջապատող ամբարձուղեղ ու բազմաստեղ ծառերեն, ստվերի խունկ մը՝ օրհնություն մը կը թոթվե, որ կը շղարշանա իր դարավոր անկողինին մեջ երկարած գետին ողորկ ու դողդոջուն մարմինին վրա՝ գրեթե հոլանի։ Ու այս այսպես կ'ըլլա միշտ. գյուղին էն տարեցն անգամ պիտի վկայեր թե, գետը, իր գարնային հորդումներուն ամենեն հուռթի ու տարփոտ պահերուն իսկ, գեթ անգամ մը վեր չէ ելած ջուրին ծոցը իջնող վանքին քարե սանդուղներեն։

***

Տարի մը, կ'ըսեն, գետը, գարնան ատեն, անսահման տարածված, տարածված էր. ամայի դաշտավայրերեն անցած պահուն, հանկարծ իր կայքեն դուրս նետված, և իր ափունքեն շա՜տ անդին, բոլոր դալար թու-

փերուն, բոլոր խատուտիկ ծաղիկներուն, քումայթ ու թուխ հողերուն իր բազուկները երկարած, անոնցմե բուռ բուռ խլած, առած, փախած էր. և որովհետև գետը անսահման քմայքներ ունի, պչրանքի նոպայե մը գրավված այդ ժամուն չէր խնայած նույն իսկ իր դրացի ալոճիներուն, ժանտ-թուզերուն, ու բոլոր այն բաներուն, որոնց, իր անցքին մեջ, ցանկությամբ նայած էր այնքա՜ն ատեն, ու գրկած տարած էր զանոնք ամենն ալ. ու խեղդած էր իր ընթացքին մեջ գտնվող խութերը, պարեխները, կղզյակները, ամե՜ն բան. որովհետև գետը անսահման քմայքներ ունի։

Բայց իր ցանկությունը չէր հագենար տակավին և հայրատ, իր կուրծքին վրա երկարած ծառերուն փարելե վերջ դեռ կ'ըղձար. վարար աղջկան մը պես, կ'ըղձար, կ'ըղձա՜ր, ժայռերու բարձունքին վրա թառած տուներու տանիքներեն, ապշահար ու հետաքրքիր զինքը դիտող մարդերուն ալ կ'ըղձար. կ'ուզեր զանո՜նք ալ իր թևերուն մեջ ունենալ, հոգ չէ թե անկենդան, անոգի՜։ Եվ այս մոլեկան բաղձանքով չէ՞ր, որ արդեն պարտեզ գացող կնկան մը քղանցքին փակավ ու քաշեց իր վիհ սրտին մեջ. և այս խոլ տենչանքեն չէ՞ր, որ իր ափունքին վրա խաղցող զույգ մը կայտառ մանուկներ ալ առավ տարավ. առավ տարա՜վ այն տղեկները, որոնք իր կարմրորակ ջուրին մեջ ձեռքերնին լվալու և իր վայրի գեղեցկությունը ըմպելու եկեր էին. և այս անպարփակ, շամբուշ քմայքով չէ՞ր վերջապես, որ նույն գետը, անծայր ցանկության վայրկյանի մը մեջ, կամուրջն ալ առեր վար էր իջեր, անոր վրա քանի մը մարդեր գտնելու հույսով։

Անհագ արշավը դեռ կը տևեր սակայն, գետեզերքի աղբյուրներն ալ խղդեր թաղեր էր իր ծոցին մեջ. ջաղացքին դուռը ափ առած, ջրանիվները խորտակած էր. և առուեն նախանձոտ, վազած էր ծործորն ի վեր, իրեն անծանոթ վարդերուն բույրը ծծելու ու նշենիի ծաղիկներեն քանի մը շափրակ խլելու իղձով, ու ոռոգած էր ամբողջ սև խաղողի այգեստան մը ու պարտեզի մըն ալ ծառերը հետը տարած։

***

Ի՞նչ մնաց այդ բոլորեն... շաբաթ մը վերջը, երբ հորդումները դադրեցան ու գետը դարձավ ինք իր մեջ ամփոփվելու, ավազ ու սիկի անկողիննե՞րը մինակ, բայց չէ՞. առջի օրերը աննշմար, հետո քիչ մը նշանակելի, հետո քիչ մըն ալ ավելի, ծառի խլյակ մը ծանծաղ ջուրերուն մեջեն իր երկու թուխ դաստակները դուրս կը ցցեր. քանի մը օր վերջը, երբ ջուրերը ամբողջովին վերադարձան իրենց անկողինը, այդ ծառը արմատացավ, բարձրացավ, մնա՜ց հոն. ու պաղատագին, կարեկից բան մը կար իր շարժուձևին մեջ, ջուրերուն մեջտեղը. ի՞նչ պիտի ըսեր արդյոք ու չէր ըսեր, չէ՞ր կրնար ըսել. ինքը հմայքի պես բան մը ուներ իր չորցած զույգ մը բազուկներուն մեջ. և երբ ամառ իրիկուններու քաղցր ու տարածուն, բուրումնավետ դաշնակությունը, թավշափափուկ կը շոշափեր հոգնած դադարած գեղջուկներուն քրտնխաշ հոգին, երբ հոգնած մարմիններին գետին մեջ երթալ թաղելու, ջուրը ծծելու, զովանալու, ապրելո՜ւ անընկճելի պետք մը կը զգային, կարծես «ջրին ծառը», ինչպես կը կոչեին զինքը, ավելի կը ցցվեր իր ինքնության մեջ, իր պաղատանքին մեջ, իր կարեկից շարժումին մեջ։ Օր մըն ալ, լուսինկա գիշեր մը, քանի մը մարդեր գացին ծառին տակ լոգնալու, և երբ հանված ջուրը պիտի նետվեին, շշուկ մը կառչեցավ իրենց ականջին. կարծես ծառը կը խոսեր. խոսեցա՜վ, բայց բո՜ւհ, ծառը կը խոսի՞ միթե, ու բլը՜մբ, նետվեցան ջուրին մեջ, ջուրին տակ. գացին ու ալ չեկան...

***

Հիմակ գեղացին կը հասկնա ծառին լեզուն, կը հասկնա լեզուն այն երկճյուղ ծառին, որ թևաբաց կայներ է ծանծաղուտքին մեջ և լոգանքի գացողներուն մի՛ի մը պես ցույց կու տա իր առջև սյունացող պտույտքը։

Ու երբ իրիկվան արևին, կամ լուսնի լույսին մեջ, իր սիլուեթը կը գծագրվի ջուրերուն վրա, ինքն ալ խղդվող մը կը թվի իլլալ՝ բազուկները միայն ջուրեն դուրս մնացած։

ՈՐԹԻՆ ՏԵՐԵՎԸ

Իրիկնավերջը դալկոտ տերևի մը պես հողմավար անցեր է. բացաստանին մեջ գիշերը թևաբաց կ'ընկողմանի. գաղջ, բուրումնացան նազելի գիշերը։ Աշխետ ղամբիկս նյուսը կը թոթվե ու քվքվալով կ'անցնի այգեստանին մեջեն, ուր խաղողին զգլխիչ բույրը, գինիին նախերգանք, ու ցորեկվան արևին եղկ շոգոլին կը բարձրանան։

Հեռաստանին մեջ հարսենի, գեղանի լեռը նստեր է տարփատենչիկ շարժուձևով, մշուշի տարտամորեն հոգնաթույր քցաբ մը ուսն ի վար կ'իջնե. զույգ մը ծառեր թխլիկ դաստակներու պես արևակեզ իրաննին կ'երկարեն, և իրենց տերևուտքը կը բացվի. լերան դալար ափն է ան, ուր ահա՜ լիալուսինը կը զետեղվի, շառագույն նրբարվեստ հողմահարի

մը պես, որ հետզհետե կ'երփներփվի՝ ոսկեթույր, խնկաթույր, քրքում ու արծաթ։

Կ'անցնիմ, կ'անցնի՜մ անվերջ այգեստաններուն մեջեն, ուր անտես <գետի> մը մշկենի ալիքը կը ծփծփա. ու պտղառատ լիաբերրի հողին արգավանդ ծոցը կ'ուռի, գոյության եթերածին երակ մը անդադրում կը բաբախե. ա՜հ, վայրկյանին քաղցրությունը։

* * *

Գյուղ կը դառնամ. ատեն ատեն կը շոյեմ ճայիկիս բաշը, որ լուսնի ծիածանումին մեջ կը փալփլի. ան սուրալով կ'անցնի դեղնորակ ճամբաներեն փոշիե ուրվանկարներ հորինելով, ատեն ատեն սանձը կը քաշեմ, ու կը կենա. պահին գեղեցկությունը շարժումի գաղափարը կը մոռցնե, ու տիեզերքի սրտին մեջ բաբախող բոլոներուն ու վայրկյաններուն զարկը ա՜լ չզգացվիր. ամեն ինչ իր սքանչացումին մեջ կ'արձանանա. հովը, ծաղիկը, տերևը, մարդը. օ՜հ, վայրկյանին երանությո՜ւնը։ Շրջանկարը կը դիտեմ անկշտում. գյուղակները՝ մանուկներու պես նստեր են բլրակներու ծունկին, հովիտներու գոգը, կամ գետին քղանցքին մոտ. զավակներ, զոր արգասավոր ամոլ մը ցանցներ է հոս հոն։ Ահա՜ հեռուներեն սպիտակ իրան մը կը ցցվի, կ'ուռի. հովիտին աղջի՜կն է, գետը, իմ սիրականս, իմ տարփուհիս, որ լուսինեն արծաթ թռաններ կը քաղե իր ծփանուտ քղանցքին համար։ Բայց պահը անցավ, ու ես ձիս խթանելով կը հառաջանամ, վայրկյանին արձանիկ դադարեն վերջ, ուր հավիտենությունը կը մղվեր կը խտանար. հիմակ աշխույժով կը լսեմ դարձյալ իրերուն ձայնը, կյանքին աղաղակը, բոպեներուն ուժգին զարկը։

* * *

Դեռ չհասա. տափաստանը այնքա՜ն ընդարձակ է, ա՜յնքան ծայրածավալ, որ գավազանի չափ երևցող ճամբան, առաձիգ, քմահաճ, ոլորված տրեզի պես հետզհետե կը քակվի, կ'երկննա։ Ճամբուն վրա ալոճիներու, ընկուզիներու պզտիկ կայաններ կան. շուրջս, այգիները, այգիները, անվերջ այգիները՝ որթի տերևներ, ամե՜ն կողմ. գետնին վրա ու կապտորակ օդին մեջ ալ, որթի խնկագույն տերևներ. դիմացս, ետիս, գլխուս վրա, շուրջս, ամե՜ն դի, անջրային թիթեռնիկներու պես պարանցիկ կը դառնան. ի՜նչ երազի մեջ եմ։ Ու այս տերևի բույլերուն մեջեն, հեռո՜ւն, հա՜ռ մը, գեղեցիկ, հսկայական, լուսաջոդ, շե՜շտ կը

նկարվի, իր դրասանգներուն շուրջը բիլ երիզ մը կը պտուտկի. ու իր երակիկները, մեղրամոմի պես տժգույն, իր դալար ծոցին մեջ կը խաղան. տեղ տեղ հրանյութ կայծեր, ոսկի աչքեր կը քթթին. կոթունը, փոշեգույն, պիրկ կը շեշտվի. ես այդ տերևին, ես այդ տեսիլքին կ'երթամ գրկաբաց. ու ինքն ալ, ժպտուն, խանդաղատ, ինծի կը սպասե, զի՜ս կը կանչե կարծես. ա՜հ, ի՜նչ երազի մեջ եմ։

Կը քալեմ, կը քալե՜մ, կը քալեմ և ահա՜ մոտեցա. մոտեցա ու կը բարձրանամ, փոշեգույն կոթունն ի վեր, կաթոգին, սրտազեղ. և ահա՜ կոթունին ալ ծայրն եմ արդեն ու պիտի սուզվիմ դալարին մեջ։

— Բարև՛, տնաշե՛ն։

— Բարին արևի՛գ,— կ'ըսեմ, ու տեսիլքը հալեր փախեր է արդեն. մոմագույն երակները սակայն դեռ կը խաղան քիչ մըն ալ ու կ'այլափոխվին հանկարծ. գյուղիս փողոցներն են, սալարկված միափայլ փողոցները. ու կոթունն ալ զոր մագլցեցա, գյուղիս ճամբան էր, տերևաձև գյուղիս ճամբան։

Վա՜խ, տեսիլքը փախե՜ր է, բայց ա՜հ, իրականությունը հոն է. իմ մշկենի, ծաղիկ ու ծափ գյուղս հո՜ն է։ Երազը գնաց, բայց խանդաղատանքը դեռ կը մնա...

ԱԾՆԵՐԳ

Ե. Պ.-ին

Սա՜րն ի վեր, թռա՜վ գնաց հոգիս սպիտակ աղավնին. անո՜ւշ հոգյակ. բայց իր թռիչքին ճերմակ աղոթքը, բայց իր նայվածքին մեղրիկ կաթիլքը, հոգվույս մեջ է դեռ. հոգվույս մեջ է դեռ։

Ամրան տաք երազիս, այդ ճերմակ թռչունը, սահեցավ անցավ աշնահար ծառերուն սրսփուն հեծեծանքին մեջեն ու ծովուն ալեդող աշնահար ծառերուն սրսփուն հեծեծանքին մեջեն ու ծովուն ալեդող փերփերուններուն վրայեն. մինչև հորիզոնին ծայրը, ավելի անդին՝ հոգվույս հուսաբեկ դառնանույշ գալարումին վրա. ավելի՜ անդին՝ կորսված հորիզոնի մը ոսկեջինջ արշալույսին մեջ, օ՜հ, իմ երազիս ճերմակ աղավնի՜ն։

Հո՜վը, հովը՝ որ ահա պատուհանս փակեց. հովը, գիսախոիվ, մոլեկա՜ն Սեպտեմբերին հովը՝ որ ահա՜ կ'իջնե մինչև հոգվույս ալ լուսոոգ պատուհանները, մինչև ծիրանի ճրագները իղձիս, իր անձրևոտ, ցուրտ ու փրփրուն շունչը նետելու համար հոն. հո՜վը, որքա՜ն մանցուց

արդյոք հոգյակդ, ա՜հ, որքա՜ն, որքա՜ն, երազանքիս սպիտակ աղավնին։

Ամպամած գաղջ իրիկուն մըն է հիմակ, հոգվույս համար, հոգվո՛ւյդ համար. լուսինը՝ տիրամոր քաղցր, թախծագին, լացող նայվածքի մը պես ժպտեցավ այս իրիկուն ամպերուն շեկ շղարշին մեջեն. ու մանրհատ անձրև մը ուրախության արցունքի քաղցրությամբ իջավ մինչև հոգվույս հուշքերուն մեջ, ուր սիրացող նայվածքներուդ ողկույզն է կախվեր՝ անշիջանելի։ Այս իրիկուն, օ՜հ այս իրիկուն, ի՜նչ անբացատրելի քաղցրություն է որ կը ծորի լուսնին փախստյա նայվածքներեն, ի՜նչ երանություն, ինծի համար, որ լուսնին ուխտավորն եմ, երբ ան մթագին գիշերներու ապաշխարանքին մեջեն հանկարծ կը բացվի լիարծաթ, լիաբակ, վազքի մը պես՝ որ հորիզոնին ծայրը կը բարձրանա՝ աղոթավոր, քմայական, միստիք շրջագիծով. օ՜հ, ի՜նչ քաղցրություն է այս՝ զոր անտես ցայտք մը սրտիս մեջ կը հոսեցնե. ա՜հ, այն ոսկի արշալույսին կուսությանը մեջ թառած, դո՞ւն ալ, սպիտա՜կ աղավնիս, դո՞ւն ալ լուսնին նայեցար...

ՏԿՇՈՐԻՆ ԵՐԳԸ

(Արձակ բանաստեղծություն)

Իրիկնալույսին ծիրանի ծովուն մեջ կղզիացած արտասվող ուռիներու շուքին տակ, հովիտին խորը, ահա՜վասիկ իմ երգս, արոտներուն շունչովը լեցուն. ահա՜վասիկ իմ երգս, առվեզերքի աննուխին ու ռեհանին խունկովը օծուն. ահա՜վասիկ իմ երգս, հնձված արտերուն ու հերկված հողերուն բույրովը, արևեփ խաղողներուն ու մեղրացած թուզերուն անուշությամբ ակաղծուն. իմ երգս՝ իղձի մը, արցունքի մը պես պարզ ու վճիտ, որ իրիկվան ոսկի հրեշտակին հետ թև առած կը թռչի, սարերն ի վեր, կապո՜ւյտն ի վեր։

Ավանները, անշարժ անդորրիկ իրիկվան մեջ, իրենց ծխնելույզներեն փթթող ծուխի մանիշակները կ'ոսկեշրեն. տարածուն ու դաշնավոր քաղցրություն մը կը մշշանա անդաստաններուն վրա, ջուրերուն վրա, գյուղակներուն վրա։ Իրիկունը, շեկլիկ հերարձակ, առույգ արքենի իրիկունը շահասպրամներով, մանիշակներով, վարդերով զարդարված, իրիկունը, ոստոստուն, կը սահի կ'անցնի քովես։ Ես իրիկվան տարփավորն եմ. ու իմ երգս պարզ, պարզ, իմ երգս, անանուն դողերով, անհամար թրթռումներով լեցուն է հիմակ, ուռիներու շուքին տակ, հովիտին խորը։

Ցերեկվան արևին հուրքովը գինովցած պարտասո՛ւն հոգիներ, ճերմակ լաթերով դաշտի՜ մշակներ, եկեք ունկնդրել իմ երգիս. իմ երգիս, որ բյուրազան բուրմունքներու խուրձ մըն է. իմ երգիս, ուր ձեր քրտինքին, ձեր երանությանց ու ցավերուն աղաղակը, ձեր սիրական հովերուն, ձեր սիրական ջուրերուն, ձեր սիրական, մտերիմ, դրացի արագիլներուն ու թռչուններուն համերգությունը կա թառած։ Ահա՜ կ'անցնի իրիկվան բամբիշը. ահա՜ անցան իրիկվան օդանույշներ, ջրանույշներ, ա՜լ թողեք բահը. հերի՜ք հերկեցիք, հերիք հողին նայեցաք, հերի՜ք անոր հակեցաք այսքա՜ն ատեն. ստվերները կը լճանան տակավ. իրիկուն է. անգամ մըն ալ վե՜ր նայեցեք, դեպի կապույտին փառքը. ու ձեր մտածումը, հողին գորշությենեն հափրացած, թո՜ղ սավառնի հոն. եկեք շարվիլ ծառերու շուքին տակ. թո՜ղ երազնիդ վազե՝ անծանոթ նազելի հուրիներուն ետևեն, դեպ ի անտես նիմփարաններ. նայեցեք անծայր, անծիր դաշտերուն, ծավալական ջուրերուն, մինչև որ հեռապատկերներուն հոգնությենեն ձեր կոպերը խտղտին, պրկվին, փակվին. ու փակաչք՝ ունկնդրեցեք իմ երգիս։ Ո՜վ բարի մշակներ, ականջ դրեք իմ երգիս, ուռիներու շուքին տակ, հովիտին խորը։

Ահա՜ ծիծեռնակներու պարը. սարերեն վար իջնող ստվերի փերթերուն հետ, ծիծեռնակները՝ իրենք ալ թանձրացած մարմնացած ստվերներ՝ խուսափական լույսերուն հետ գրկված կը պարեն իրենց իրիկնային պարը. կը դառնան, կը դառնան և իրենց շրջշրջումին մեջ երբեմն ա՜յնքան կը մոտենան, կը հպավորին իմ կուրծքիս, ա՜յնքան, ա՜յնքան որ՝ նոր անծանոթ հորձանք մը իմ երգս կ'ալեկոծե. և անոնց թռիչքին երգը, պլլված իմ նվագիս, իրիկնավերջի սղոխին փայփայուն դաշնակության հետ, վիտակ վիտակ կը գծգծվի ասմազուն միջոցին մեջ, որ հետզհետե կ'ամպարծաթի։ Ես պիտի թրթռամ, տերևներուն հետ, թռչուններուն հետ, հովին հետ. բոլոր ձայներուն, բոլոր երանգներուն, բոլոր բուրումներուն հետ, ես տակավին պիտի սարսռամ հոս իմ երգս, ուռիներու շուքին տակ, դալարստվեր հովիտին ծոցը։

Դարձե՜ք ձեր օրվան աշխատությենեն, դարձե՜ք, բարի՜ մշակներ. գիշե՜ր. կիսալուսինը ոսկեզօծ. ձեր միգապատ տներուն ծիրանեցող բիբերը կը փթթին բլուրին կատարեն. ձե՜զ կը կանչեն. դարձե՜ք, դարձե՜ք, և ահա՜ տանիքներուն վրա ձերինները կը պարեն, ձեռքերնին իրենց ճակտին քիվ ըրած, հորիզոնին լուսալիճ անդորրին մեջ երազուն ձեր սիլուեթներուն ետևեն թափառելով. ամբողջ տունը թևաբաց կըսպասե ձեզի, դարձե՜ք, դարձե՜ք։ Երդիքին ետին, արուսյակը մշտածիծաղ կը

թարթափի, հեռավո՞ր, պայծառ ու լուսարձակ՝ ինչպես ձեր խղճին ձայնը, որ ձեր աշխատանքին արևոտ տիվեն վերջ, ձեր գոհունակ հոգիներուն զովասուն երջանիկ գիշերին մեջ կը ճառագայթե։ Օ՜ն, դարձե՜ք, ձեր օրվան աշխատութենեն, դարձե՜ք։ Տունը դեռ գրկաբաց կըսպասե ձեզի։ Տունը, որ գիտե ձեր հոգնությունները, ամբողջ օրվան մը ձեր շարքաշությունները, ձեր բովանդակ հոգերն ու հոգին. և ի՜նչպես գիտե ժպտիլ, ամոքել, սիրե՜լ։ Դարձե՜ք, դարձե՜ք, ու երբ տանիքներու վրա փռված ձեր անկողիններուն մեջ, լուսավորներու աննյութ անձրևումին տակ անդորրավետ քնանաք, կիսալուսնին ոսկելույս համայիլն ալ պիտի տակախվի, մնա հոն՝ ձեր երդիքներուն վրա։ Օ՜ն, դարձե՜ք ձեր օրվան աշխատութենեն, դարձե՜ք. որովհետև իմ երգս ալ ահա՜ գիշերվան մեջ կը հալի՜, կը հատնի. որովհետև չեմ ուզեր ա՜լ փեթոտել երջանիկ լռությունները ծաղիկ ցայգերգը՝ որ թո՜ղ՝ կը բացվի հովիտին խորը, ուտիներու շուքին տակ։

ՊԶՏԻԿ ԵՐԳԵՐ

ԱՌՏՈՒՆ

Ինչպես բարի քույր մը, սպիտակ առտուն, լուսեղե՜ն աստված, ձեռքը դրավ ճակտիս և համբորեն անցավ հոգվույս մեջ, իր շառ քղանցքին հետ անձրևելու շրշյունը մետաքս։

Ինչպես բարի քույր մը, ցանկալի առտուն՝ լուսացավ հոգվույս մեջ՝ կարոտով մթագնած. ինչպես բարի քույր մը, ինչպես շուշան մը՝ անձավի մեջ ծաղկած։

Ինչպես բարի քույր մը, գորովազեղ առտուն, իր խունկ ձեռքերով ամենն ալ զգվեց. զգվեց ամենն ալ ցավիս ծաղիկներուն, որոնց բաժակները բարձրացան, բարձրացա՜ն՝ անոր նայվածքին լույսովը թրջվելու։

Եվ ինչպես բարի քույր, ինչպես բարի քույր՝ վաղաժամ մեռած՝ քնացավ առտուն, իր գորովանքով օծած՝ հասկերը իմ տարփանքներուս։

1907

ՄԵԾՄԱՅՐԻԿԸ

Ճրագը ձեռքը ննջասենյակեն ներս մտավ ծերունի կինը։ Դուրսը գարնային անձրևը կը հոսեր լիատարափ. դուրսը դաղջությունն ու մութը ծովացեր էին։ Հերարձակ անձրևը ջուրի վեժքեր կը ցրցքներ ապակիներու վրա, պատերուն վրա, մայթերուն ու տանիքներուն վրա։

Ծերուհին լուսակալին վրա դրավ ճրագը ու գնաց պատուհանին հպեց ճակատը. որքա՜ն պետք ուներ այդ զովացքին։

Տարափը կը տենդոտեր ու մարակներու հույլի մը պես կը շաղեր սալարկին սպիտակ քամակին վրա, և հետո շարաճճի ձեռքի մը նման գգվական ծեծիկներ կու տար ապակիներու երեսին։

Ծերուհին ընդերկար մնաց այդ դիրքին մեջ, ճակատը ապակիին հեց, նայվածքին նշույլը դուրսի մութին ու գաղջության մեջ տարտամած և կամ՝ մերթ՝ կայծակներու քրքում և օձագիծ խաղերեն լուսավառած։ Ծերուհին ընդերկար մնաց այդ դիրքին մեջ, հոգին անսահմանելի անդորով մը պրկված։

Անձրևի հորձքերը կը վերսկսեին խաղալ տանիքներուն հետ, բույսերուն ու ծառերուն հետ, մայթին ու մութին հետ։ Ու կը վերադառնային ցպրտալ ու արցունքոտիլ ապակիներուն վրա. և երկնային ջուրը իր ինչպես զայն իր խոհանքեն։ Եվ երկնային ջուրը հմայական ձեռքի մը պես՝ լուսեղեն տեսիլ մը կ՚առկախեր հանկարծ խավարին մեջ. քաղցր ու դժնդակ պայծառություն, որ կը շրջագծեր մեղրանույշ ու նրբագիծ դեմքը իր թոռնուհիին։ Եվ ի՞նչ տեսիլ կրնար թելադրել իրեն գիշերային այս մենությունը, եթե ոչ անորը։ Ահա՜ տասներկու տարիե ի վեր ցերեկնե՜ն իսկ անոր երազովը կը մտաթափառեր...

Տեսիլքը՝ վայրկենական՝ ժպտեր ու գացեր էր սակայն, դուրսը լեզու ելեր էր դարձյալ ջուրերուն խուժող բարբառը. ու ծերուհին հեղ մըն ալ կը պարուրվեր իր մտահոգությանց անարև ու տրտում մշուշով։ Երբեմն կը ցնցվեր թեթևակի. կը բաժնվեր քիչ մը ապակիեն, բայց ճակատին ջերմությունը՝ հանկարծորեն զգացված՝ դարձյալ կը մոտեցներ գլխքը պատուհանին, ու նայվածքները անգա՜մ մըն ալ կ՚ընկղմեին մութին մեջ...

***

Աշտանակին մոմը սպառելու մոտ էր. սենյակին լույսը հետզհետե կ'անոսրանար, քանի մը նշույլներ տակավին կ'ոգևորեին։ Հանկարծ սենյակը մթագնեցավ, ծերուհին արթնցավ իր մտածությանց քունեն. որքա՜ն ատեն մնացած կրնար ըլլալ այդպես պատուհանին առջև. ո՞վ գիտե։

— Տե՜ր Աստված, զորությանդ մեռնիմ, վաղը պայծառ արև՜ մը... վաղը սո՜ւրբ, սո՜ւրբ օր մը տայիր...

Ու բաժանվեցավ պատուհանեն, ու մութին մեջ լույսին առջև ծընրադրեց, հոգեկան հորձանք մըն էր իր աղոթքը, որ մերթ զգայության ալիք մը կ'ըլլար ու կը տարուբերեր հոգին մեջ և կամ մերթ բառերու շուշանական փրփուրով կը ծաղկեր իր շուրթերուն վրա...

— Հիսո՜ւս Քրիստոս, զորությա՜նդ մեռնիմ, Սո՜ւրբ Աստվածամայր, բարեխո՜ս եղիր, ամենակարո՜ղ Տեր, դուն գիտես... ուզածս տո՜ւր հոգիս առ, ուզածս տուր հոգիս առ...

Աղոթքը լմնցավ, ծուփքը հանդարտեր էր անշուշտ ու հոգին թեթևցեր, այսքան տարիե ի վեր ուրիշ ի՞նչ ամոքանք ուներ արդեն այս վշտագնած հոգին։

Մութին մեջ խարխափելով լուցկիին տուփը գտավ ծերուհին, լամպարը վառեց ու սեղանին առջև նստավ. դեմքեն կը զգացվեր գոհունակությունը, իր դեմքեն՝ որ գրեթե կը ճառագայթեր այլևս։ Իր դողդոջուն ձեռքերով գզրոց մը բացավ, պահարան մը դուրս հանեց, բացավ, լուսանկար մը մարմարին վրա դրավ, հետո մոտեցուց լամպարին. մեռած աղջկանը պատկե՜րն էր։ Կաղամախի նազելի հասակ մը, ճաճանչագեղ դեմք մը, գլխուն վրա հորդառատ պտույտք մը վարսերու՝ որոնց փափկությունը շոշափելի զգայություն մը կը դառնար գրեթե, աչքերը՝ թանկարգին քար, զույգ մը խոշոր կայլակներ՝ առույգ ու տխրագին բոցով։ Ծերուհին կը նայեր, կը նայեր, կը նայեր, ու տամուկ թարթիչները կը ծիածանվեին լամպարին դեղձան լույսին տակ։

Գիշերային աղոթքեն վերջ իր մյուս պաշտամունքը եղած էր այդ լուսանկարը. նորեն ու նորեն կը նայեր անոր, լույսին կը մոտեցներ, կը հեռացներ, զանազան դիրքեր կու տար, քովնտի կը նայեր, շեշտակի կը նայեր, դառնորեն կը ժպտեր, ցավագին կը շարժեր գլուխը, նորանոր վերհիշումներ կ'ունենար անոր կյանքեն, կը վերապրեցնե՜ր զայն ամեն գիշեր։ Եվ ամեն գիշեր, ամենմեկ նայելուն, նոր խանդաղատանք մը կըզգար ու կենդանագիրը կը մոտեցներ անդադար աչքերուն ու շուրթերուն, շուրթերուն ու աչքերուն...

***

Այս գիշերվան հափշտակությունը սակայն ամեն օրվանը չէր, պատկերը անշնչացած սիրելիի մը հուշքին լուսագրությունը չէր մինակ այս անգամ։ Այս անգամ լուսանկարը բոլորովին կ'անձնանար կարծես, մազերը ոսկի-շագանակագույն շողեր կ'առնեին, աչքերը՝ մեղույշ, վառվռուն կենդանություններ, արյունը վարդագույն կը մշշանար այտերուն ու ձեռքերուն վրա, շնորհալի ամբողջը կը նորաստեղծվեր։ Որովհետև այս գիշեր մանավանդ, պատկերը իր զավակը չէր միայն, այլ և թոռնուհին՝ Արփինե՜ն, ա՜հ, Արփինե՜ն, որուն անունը մինակ կրցեր էր պահել իր մտքին հեռավոր մեկ խորշին մեջ, իր սրտին մոտավոր մեկ անկյունին ծոցը։ Արփինեն, իրեն համար, իր աղջկանը ցո՜լքը մինակ կրնար ըլլալ, նույն վարսերով, նույն դեմքով, նույն հասակով, նույն շարժուձևով, նո՜ւյն հոգիով։

Աղջկանը մահեն վերջ, թոռնիկին առաջին մանկութենեն ասդին, այլ ևս տեսած չէր զայն, չէի՜ն թողուր որ տեսնե։ Արփինեին հայրը, իր կնոջ մահեն վերջ հեռավոր արվարձան մը փոխադրված՝ անգամ մը էամբել տված էր մեծմայրիկը, որ իր թոռնիկը ողջագուրել գացեր էր՝ աղապատանքով լեցուն, ու գլխիկո՜ր ետ դարձեր էր՝ կարոտով ու կըսկիծով զեղուն. այդ օրեն ի վեր ահա՜ տասներկու տարի է, որ զայն վերստին տեսած չէր։ Ահա՜ տասներկու տարիե ի վեր գրեթե ամեն շաբաթ սիրտմաշուքով կ'ելլեր գյուղին զառիվերեն, թոռնիկին տան դուռը կը բաղխեր, ու... կը ճամբվե՜ր, չեխով ու լուտանքո՜վ կը ճամբվեր. անգամ մը սպառնալիքը խիստ ու վճռական եղավ։ Հույսը չկտրեց նորեն, չդադրեցուց իր այցելությունները. ա՜լ դուռը չէր զարներ. տունին շուրջը կը դեգերեր, իր հույսը դիպվածն էր մինակ, հեռուեն թերևս կարենար տեսնել սիրելի դեմքը, մազերուն մեկ գիսա՜կը գոնե։

Տարիներով այսպես պարապ գնաց եկավ մեծմայրիկը. Արփինեն մեծցեր ու դպրոց կ'երթար. անգամ մը ելավ նույն իսկ դպրոց գնաց. «Օրիորդին տերտս հասկցնեմ, հելպեթ կը թողու...»։ Ես Արփինեին մեծմայրիկն եմ ըսավ. շատ իսկ էր հայտարարությունը. ներս չառին զինքը. տնտես ախպարը բաներ մը մրթմընթաց, չըլլար, չի կա՜, ըսավ. վարժուհին վերի պատուհանը նստած՝ իր ակնոցին տակեն անտարբեր կը դիտեր ծեր կնոջ հուսահատ վերադարձը... Ծերուհին անգամ մըն ալ հուսախաբ կ'ըլլար, որովհետև ամեն ինչ նախագուշակված ու պատվիրված էր արդեն...

Բայց սերը հուսահատիլ գիտե՞. տարիները անցեր էին, թոռնիկն ալ մեծցած կ'ըլլար հարկավ, չճանչցվելու աստիճան մեծցած. ծերուհին չէր հուսահատեր սակայն. գեթ հեռուն անոր դեմքը ընդնշմարե՞ր. հավատքի պես կրզգար թե պիտի ճանչնար զայն։

Վերջին անգամ երբ դարձյալ կատարած էր վերելքը, թոռնիկին դրացուհիներեն մեկը հետաքրքրված ներս առեր էր զինքը ու տերտը հասկցե՞ր։ Եվ արդեն շատոնց ծերունի կինը ուշադրության առարկա եղեր էր. ո՞վ էր այդ սևավոր կինը՝ որ կանոնավորապես կու գար կը դեգերեր այդ կողմերը. իրարու մեջ փսփսացեր, հետաքրքրվեր, հասկցեր էին վերջապես դրացուհիները. Արփինեին մեծմայրի՞կն է եղեր. և անոնցմե մեկուն սիրտը չէր դիմացեր այս անգամ, ներս կանչեր էր մեծմայրիկը, սփոփեր ու Արփինեն տեսնելու ժամադրություն մը խոստացեր էր. օ՜հ, ի՜նչ ուրախություն, վերջապես պիտի տեսներ իր ձագուկը, իր խուզի՜ն. հոգ չէ թե հեռուն մինակ, դրացի տան պատուհանեն՝ որուն դիմաց կայնած կ'երևակայեր արդեն իր սիրական սրտահատորը։

— Ո՜ւյ, Աստծու խնտաք հեմեն, հիմա խենթենամ պըտոր...

Աստծո՜ւ խնտաք, Աստծո՜ւ խնտաք, ըսեր ու մեկներ էր։

Ու վաղը ժամադրության օրն էր. լուսանկարը անգամ մըն ալ համբուրեց, լամպարը մարեց ու քնացավ ծերուհին, երջանիկ քնացավ։

***

Առտվան դեմ անձրևները դադրեր էին, անամպ ու միապույլ կապույտին վրա արևը վիժակի մը պես կը նշուլարձակեր. առտվան սյուքը՝ գարնայլին ծաղիկներու բուրումով խնկավետ՝ հեշտագին կը զովանար։

Ծերուհին, որ բաց պատուհանին առջև հագված, պատրաստ նստեր էր և արևածագին կըսպասեր անհամբեր՝ վերջապես զոհունակ ու լայն շունչ մը առավ. ուրեմն ահա պիտի երջանկանա՜ր։

Դողով ու նախազգացումով լեցուն՝ խաչ հանեց ու ճամբա ինկավ. շոգենավերուն հեռավոր սույլին հետ քայլերը կը փութացներ, տենդոտ ու անգիտակից գրեթե։

Ղալաթիա հասեր էր. առաջին մտածումը եղավ մում մը վառել Ամենափրկիչին. ահա՜ մոտեցեր էր իր սիրական գաղափարին իրականացման, մում մը չվառե՞ր։

Աղոթքը ըրավ, ժամեն դուրս ելավ, շոգենավ կա՞ր։ Ճիշդ ժամանակին կը հասներ, տոմսակը առավ, ներս նետվեցավ. նույն պահուն վերջին սույլը կ'արձակվեր, ու շոգենավը մեկնած էր արդեն։

Առտվան հաճելի արև մը կ'ողողեր խցիկը, ուր ծերուհին նստած էր՝ մինա՜կ՝ իր երջանիկ ակնկալության ու խռովանքին հետ։ Վոսփորը ոսկիով զանակված կապույտ ու երկարաձիգ շալի մը պես կը վետվետեր. նոր կտրված ձմերուկի հեշտավետ բույր մը կ'արտածորեր ծովը. շոգենավը կ'երթար թնաբախ՝ ծիրկաթինին ձյունաթույր ուրախությունը ձգած իր ետևեն։

— Յուսկյուտա՜ր...

Առտվան ցանցառ ուղևորներուն մեջ ծերուհին առաջինը եղավ դուրս ցատկող։

Վերելքը վայրկենական երևցավ իրեն. բան մը չտեսավ ճամբուն վրա, բան մը չլսեց։ Առաջին բանը որ զինքը հափշտակութենեն արթնցուց՝ ձայնը եղավ զանգակին, որուն կոճակին կը հպեր իր դողդոջուն ձեռքը։

Ճիշդ ժամանակին հասեր էր. Արփինեն արդեն դիմացի պատուհանեն կը խոսակցեր բարի դրացուհիին աղջկան հետ։

Պետք եղավ որ քիչ մը սպասե ծերուհին, շունչ մը առնե, սուրճ մը խմե, հետո ըսին որ կրնա պատուհանին առջև նստիլ ու սպասել,— չուզեցին հանկարծակիի բերել։

Բայց իր հոգիեն կը լսեր արդեն թե Արփինեն արդեն հոն էր. կթոտելով ու շնչահատ՝ ելավ վերի հարկը պատուհանին առջև. արևը լիաշող կը ծավալեր, և անոր շլացքին մեջեն ծերուհին ընդնշմարեց մինակ իր հոգիին երազը. ա՜յնքան ատեն իրականությունը երազ մը մինակ երևցած էր իրեն. ուրեմն Արփինեն էր անիկա, իր սրտահատոր թոռնուհին՝ Արփինեն...

— Ո՜ւյ, արևուդ կշտանամ, լուսերու պես աղջիկ, թպխսի մարն է, պոյդդ, պոսրդ սիրեմ... ֆուլիա մազերդ սիրեմ, հոգի՛դ սիրեմ, զավա՜կս, ձագո՜ւկս... պոյդ պոսդ սիրեմ... ֆուլիա մազե՜րդ սիրեմ... լուսերո՜ւ պես աղջիկ, լուսերո՜ւ պես աղջիկ...

Օ՜հ, շա՜տ էր այսքան ուրախություն հեք սրտի մը համար, որ այնքան ծարավ, ծարավ՝ հանկարծորեն կը լենար և կը զեղուր։

Մեծմայրիկը մեռե՜ր էր...

ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ...

(Արձակ բանաստեղծություն)

Այս իրիկուն, թուրինջ ջրաներկ իրիկուն մը, քաղաքեն դուրս, քառուղիին բերանը, սոսիին տակ նստեր էի. սոսին վաղնջուց ծառ մըն է, ճամբուն վրա, մրգաստաններուն ու դալարուտներուն մեջտեղը, համայնական օրհնենքի մը պես բարձրացած։ Գարունները՝ չարաճճի՜ աղջիկներ՝ նազանքով, գեղով, հեշտությունով լեփլեցուն՝ եկան անցան իր առջևեն. ամառները, արգավանդ ամառներն ալ, և հուռթի պտղաբեր աշունները՝ ամենն ալ տարիներով անցան իր քովեն, իր հոգիե՛ն ալ։ Օր մըն ալ, ամպգոլի տոթագին օր մը, բոցագիծ ելեկտրաթև հոսանուտ մը անցավ իր ծոցեն, մինչև հոգիին ալքը կայծա՛կն էր և բունը՝ քարայրի պես բերանաբաց՝ երբեմն անցորդներու օճախը կ'ըլլա, և հոն վառող կրակը կայծակին հիշատակն է կարծես, որ մերթ կ'արթննա հոն։

Սոսիին տակ, ուրեմն՝ նստեր էի այս իրիկուն։

Երկու տարեց կիներ անցան ցանկորմին քովի արահետեն. մեկը կը խոսեր գթոտ շեշտերով իր ձիուն վրա՝ որ արդեն հյուծավո՛ր՝ վաղահաս աշնան ցուրտին չէ դիմացեր՝ մեռե՛ր է. հեյվա՛խ, կ'ըսեր մյուսը, հեյվա՛խ... քայլերը մեռան, ձայները փոշիացան, հեռացեր էին, ա՛լ չլսեցի...

Հանկարծ կեռասաստանին ծայրեն երեք տղամարդեր երևցան, ճառագայթող դեմքերով. մեկը կը պատմեր իր սիրային անցքերը. կնոջական արևոտ, վարդավետ անուն մըն ալ լսեցի... զիս տեսան, լռեցին անցան. քիչ մը անդին պատմությունը վերսկսած էր, ունկնդիրները կը քրքջային...

Քիչ մը վեր առի գլուխս. ճյուղատ սոսիին վրա պարս ելած մեղուներու պես, բուռ մը տերև կը խժային, բայց կանանչ, կա՛փկանանչ... մինչդեռ դիմացի կեռասիներուն տերևները կարծրեր են ցուրտեն, և աքասիաները կարծես թալուկե բռնված. մեր ծերունի, օրհնաբեր սոսին երիտասարդի ծիծաղներ ունի։ Տերևուտքին մեջ շշնկոց մը կա, որ հովինը չէ. վայրկյան մը կը դադրի, հետո հեռո՜ւն կսկսի, խելահեղ թրրթրուն ցող մըն է. երկու վայրկյանեն, հանկարծակի, գորշ զույգ մը թռվռալով վար կ'իջնե սաղարթներու սրահակը բանալով. հևքոտ, արագ, կը բաժնվին կը հեռանան երկու տարփավոր թռչուններ... օդահած տարփանքներու երջանի՜կ թաքստոց՝ վաղնջական սոսիին հետամնաց երիտասարդությունը... Խճուղիին վրայեն սայլորդ մը, արևակեզ, ժպտագին գեղջուկ մը՝ երգելով կու գար. երկու սիրուն ճերմակ եզներ, որոճալով, տատանելով, դանդաղելով կը քաշքշեին սայլը քաղքի բարիքներով բեռնավոր։ Մտածեցի որ այս սայլորդը տուն կը դառնա հիմակ. հոնա, բլուրին ծայրն է տունը. բուխերիկին ծուխը՝ քմահաճ՝ կապույտ ծաղիկներ կը ցրցքնե օդին մեջ. օճախը վառած է... ժամ մը ամբողջ պիտի երթա այդ ծուխին, այդ տանիքին, այդ հորիզոնին նայելով, ժպտելով տարփավորի պես, հոր մոր պես, սիրական, կաթոգնած. կաթերը կթվեցան, լճացան հիմակ անոթներուն մեջ. հանին քնացած ըլլալու է. եղինձը եփած պատրաստ է մաղմաղին վրա. պզտիկները կըսպասեն՝ հայրիկը ի՞նչ պիտի բերե քաղաքեն. հազա՜ր բարի, որովհետև ածուխը լավ ծախվեցավ. վաղը, կանուխ, նորեն բեռնա տանի քաղաք... սայլը անցեր հեռացեր է շատոնց. սայլապանին երգը կը լսվի դեռ, միօրինակ երկարաձիգ, տարածական երգ մը, արևոտ թախծություններով լի՜, ճիշդ իր դաշտավայրերուն պես, բայց անույշ, անո՜ւյշ, ու ես...

Ուրիշ կառապան մը կը վերադառնա, քաղքեցի. խրոխտ, ամբարձիկ, աննկատ կ'անցնի, մտրակը շաչեցնելով ու շաչեցնելով. ձիերը կ'ըմբոստանան պահ մը՝ այնքան հոգներ են մինչև իրիկուն. բայց կառապանը քաղքեցի է՜,— կը կատղի, կը փրփրի, հեք կենդանիներուն ամբողջ ազգահամարը ձեռք կ'առնե... փոշիին մեջ կորսվեցավ կառք. մտրակը կը շաչե տակավին, կը ծիծաղի՜...

Հինգ գնչուհիներ, սիրերգելով, կայթելով, կողովներ շալկած՝ կու գան դաշտերեն, քաղաք կը դառնան, եղերդ ու մոլոշով լեցուն կողովները վար կը դնեն. առտուն արևը չցաթած գացեր էին. ամբողջ օրվան մը հոգնությունը հոգերնին չէ. կու գան կը շարվին ճամբուն եզերքը, ծառերու շուքին տակ, կը խոսին, հայրատ կատակներ կ'ընեն, կը ժպտին, կը ծիծաղին. հետո երգ, մատի ծափիկ, պորտախա՜ղ... սիկառներ կը վառեն ու դարձյալ շաղակրատելով կայթելով կը դառնան տուն...

Ես կը մնամ սակայն, սոսիին տակ, անշարժ. այս իրիկնային համերգության մեջ, մեկնող արևին ոսկի գիրը, հեռավոր ծովուն կապույտ տառը, տերևներուն, թռչուններուն թրթռուն վանկը կը հեգեմ, կը հեգե՜մ։ Բայց չգտա դեռ անսահման բառը, որ դյութական բալլիքի պես պիտի բանար ինծի այս փակ դուռները՝ ճամբաներուն վրա, ծառերուն տակ, ամբոխին մեջ, անցորդները՝ ամենն ալ՝ աներևութացան. ես տակավին մթնշաղին մեջ կսպասեմ։ Ո՜հ, ըսեք, ըսե՛ք ինծի գունագեղ անսահման բառը՝ այս իրիկուն...

ՁԵՌՔԵՐԸ

Ծովեզերքի պատշգամին վրա նստած, լուսաբաղձիկ մանուկի հափշտակութիւններով, ու քիչ մը վախով, ու քիչ մը արցունքով, լույսերուն մեկնիլը կը դիտեի ամեն իրիկուն։

Ամեն իրիկուն, մթնշաղին ստվերախառնութիւններեն անդին, լեռնագիծ հորիզոնին հուսկ բոցին մեջ, զույգ մը ձեռքեր՝ թափանցիկ լուսեղեն ձեռքեր՝ կ'անրջագծվեին։

Երանգներու և լույսերու համեցումին մեջ, քիչ մըն ալ դեռ, ձեռքերը ցոլարձակ կը մնային հոն ու երբ մութին հոծ ծուխը կ'իջներ ու կը շրջագծեր զանոնք, ձեռքերը գլխիվայր դարձած զույգ մը շուշաններու կը փոխվեին, որոշակի կը շեշտվեին իրենց զանգակի ձևերուն մեջ՝ ոսկեծայր թակաղներով։

Բայց լուսավորներու առաջին ծիծաղին հետ շուշանները կը թոշնեին հանկարծ, կ'ինքնամփոփվեին, հետո երկու բոլորշի կաթնաթույր լույսերու կը փոխարկվեին, հետո կը պզտիկնային, զույգ մը փոսուռաներ՝ զույգ մը արծաթ զանակներ կ'ըլլային ու վերջապես կը խեղդվեին ստվերներու մածնումին մեջ։

***

Ծովեզերքի պատշգամին վրա նստած, լուսաբաղձիկ պատանիի հափշտակութիւններով, ու քիչ մը վախով, ու քիչ մը արցունքով, տակավին լույսերու մեկնումը կը դիտեի ամեն իրիկուն։

Ամեն իրիկուն, մթնշաղին ստվերախառնութիւններեն անդին, լեռնագիծ հորիզոնին հուսկ բոցին մեջ, զույգ մը ձեռքեր՝ լուսեղեն թափանցիկ ձեռքեր՝ կ'անրջագծվեին դեռ։ Իրիկուն մը, այդ կենսական ձեռքերուն ճերմակ դյութանքին մեջ ընկղմած իրիկուն մը, խոովանքի կոհակ մը անցավ հոգիես, ու հեռավոր ճերմակ ձեռքերուն վրայեն ճշգական նրբաթել քողք մը փեթրոտեցավ, ինկավ. աչքերս արթնցան անոնց հրաշալի գեղին վրա...

Տեսա որ ձեռքերը զի՞ս կը կանչեին...

Առաջին րոպեին, հանկարծածին խանդավառութեանս մեջ, ուզեցի վազել, վազե՞լ այդ տեսլական ձեռքերու գրգանքին. բայց անհունութիւն մը կ'անրջպետեր մեզ. ու խորհեցա այն ատեն բոլոր այն բաներուն վրա՝ զոր պիտի կրնայի երկարաձգել կամուրջի պես՝ մինչև սպիտակ ձեռքերուն կայքը. բայց մտածումս ամեն բան պզտիկ գտավ հոգիիս մեջ...

Մյուս իրիկունը նստա դարձյալ պատշգամին վրա, թաղարներեն ցայտող բույրերուն ողողումին տակ. և սպիտակ ձեռքերը՝ անգամ մըն ալ հորիզոնի լույսերուն մետաքսե վարշամակը թոթվելով ծաղկեցան իրենց անրջական ձյունաթույր, նրբենի մատներուն գրգոտ շարժումներին մեջ։

Սպիտակ ձեռքերուն այդ շարժումները կո՞ՉՆ էր արդյոք, աղապատանքի կաթոգին հրավե՞րը, թե դրժումը, դաժան, դաժա՜ն դրժումը. չէի հասկնար, ու վարանքը կը պարապնդեր հոգիս։

Եղավ որ, երազի այդ հրեղեն իրիկուններուն մեջ, կոչին կեսս գիտակցութիւնով արբեցած, եղավ որ հոգիս սահի երթա մինչև հանդիպակաց ծովափունքը, իրիկվան արևին ջուրին վրա գծած շառայլ ուղիներեն, եղավ որ վազեմ մինչև կեսս ճամբան. բայց այդ պահերուն, ձեռքերը՝ ճիվաղային դժնե տեսիլներու փոխված հանկարծ կը ցցվեին քարացած, ժխտական շարժումներով, ու ես ահաբեկ, անսահման զզվանքով տոն կը դառնայի նորեն։

Երբեմն ալ, խաղաղիկ իրիկուններ, կը կարծեի լսել ձայն մը համբուրներեն ավելի գգվոտ՝ որ հոգիս կը փայփայեր. երկարաձիգ, մեղեդի սլվլյուն մըն էր այն, բուրումնավետ ժապավեն՝ որուն հեշտութենեն ուռնգեբս կը սարսռային, ու ճիշդ այդ պահուն կը տեսնեի զույգ ձեռքերը՝ որոնք հեշտին ծափի մը մեջ կը համբուրվեին. և հետո կը բոլորվեին անտեսանելի բերնի մը շուրջ. ձայնին ժապավենը դեռ կ'երկարաձգվեր. ու ես արդեն կենսանըվաղ...

Այսպես, ծփացի շարք մը իրիկուններ այդ տարուբերումին մեջ և ալ բնավ, բնա՜վ չտեսա նախկին շուշանները, փոսուռաները, զանակները, ձեռքերը, հիրիկի հեշտալի ձեռքեր միայն կը մնային՝ անփոփոխ իրենց բացխփիկ շարժումներին մեջ։

***

Ծովեզերքի պատշգամին վրա նստած, լուսաբաղձիկ հափշտակութիւններով, ու քիչ մը վախով, ու քիչ մը արցունքով, լույսերուն մեկնիլը կը դիտեի ամեն իրիկուն։

Ամեն իրիկուն, մթնշաղին ստվերախառնութիւններեն անդին, լեռնագիծ հորիզոնին հուսկ բոցին մեջ՝ զույգ մը լուսեղեն թափանցիկ ձեռքեր կ'անրջագծվեին։ Իրիկուն մը, վերջապես, անշիջանելի ավյունի իրիկուն մը, վարանքին պարապնդումը ի սպառ թոթափած, անցա դիս տեսիլքեն բաժնող անջրպետին հորանջումին վրայեն, սուրացի մինչև ծովափունքը, ու վեր, մինչև ձեռքերուն հորիզոնը. ու հոն տեսա որ երկու

լուսեղեն աղջիկներ դյութական պարտեզ մը ցույց կու տային ինծի...

Վերադարձիս մութը արհավիրքի պես թանձրացեր էր, ձեռքերուն տեսիլքը չկար։

***

Ծովեզերքի պատուհանին վրա նստած, անհուն թախծանքով, հիմակ ալ լույսերուն մեկնումը կը դիտեմ դեռ, ամեն իրիկուն։ Ամեն իրիկուն, մթնշաղին ստվերախառնություններուն մեջեն, կը հառիմ լեռնագիծ հորիզոնին բոցին՝ ուր դյութական ճերմակ ձեռքերուն տեսիլքը թոշնեցավ՝ ա՛լ չվերածաղկելու համար...

Եվ ամեն իրիկուն, հոգիիս մեջ՝ հեռավոր ձայն մը կը կանչե պաղատագին.

«Ո՛վ իմ հորիզոնիս վրա շուշանացած ուրվային ձեռքեր, անգամ մը, անգա՛մ մըն ալ գեթ երևցեք ինծի. ո՛վ շուշանե ծաղիկներ, անգա՛մ մըն գոնե հիշել տվեք ձեր վաղնջուց լռություններուն երգը մոռցված, ո՛վ լուսոռոգ փոսուռաներ ու զանակներ, հեղ մըն ալ գեթ պսպղացնեիք ձեր փարփառ շիթերը՝ հորիզոնին մութին մեջ»։

Ձայնը ա՛յնքան հուզիչ է որ հեռավոր հորիզոնին մութին մեջ ձեռքերու տեսիլքին տեղը՝ բոց մը կը փայլատակե՝ որ սակայն՝ ավա՜ղ, վաղեմի սպիտակ շուշանական տեսիլքը չէ՞։

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1905

ԳՐԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ

<1> ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐՅԱՆ

Բոլորովին հակառակը կարգ մը հոխորտ ու ճղճիմ իմացականության, Եղիշե եպիսկ. համեստության տիպարն է։ Ճշմարիտ ու մեծահոգի բանաստեղծը՝ որ իր առօրյա զբաղումներեն դուրս ունի հոգելից ներշնչումներու և միստիք վերացման իր պահերը, երբ իր հոգնաշխատ միտքն ու վաստակաբեկ մարմինը հոգվույն սիրական հրճվանքներովը կը կազդուրվին ու անոնցմով կը հանգչին, երազանքի բեղուն ու խորհրդավոր վայրկյաններ ուր բանաստեղծ միտքը կը բաժնվի մերթ աշխարհի ունայն աղմկումներեն, ու Մտածումը կը սլանա թևաբախ դեպի հոգեկանը, որ իրեն կ՚սպասե արդեն անանուն և զգլխիչ նեկտարին քաղցրությամբ ամոքելու համար թոիչքին հոգնությունը։

Ինքը բանաստեղծ ծնած է արդեն, ինչպես իր եղբայրը։ Եվ ի՜նչ մտերիմ, ի՜նչ սերտ շեշտ մը, ինքնաբուխ զգացման, բառի ու բացատրության տեսակ մը, ի՜նչ շնորհալի ու գողտրիկ բանականություն ունին երկու եղբայրներն ալ, որոնք կը նույնանան մեր դատումին առջև։ Միևնույն միջավայրին մեջ ծնած, Սկյուտարի մեջ միևնույն բանաստեղծականությունը շնչած,— ու մանավանդ արդեն իսկ բանաստեղծ ծնած,— Միհրանիկը վաղամեռ Պետրոսին հարազատ շարունակությունը կը թվի ըլլալ։ Կարծես միևնույն Դուրյանն է որ կը խոսի մեզի, միևնույն Դուրյանը՝ որ սակայն կրած է տարիքին ու կոչումին հարկադրած փոփոխությունները. և մեծ հաճույք մը չէ՞ միթե տեսնել մեր վաղեմի սիրական քերթողին շարունակությունը՝ իր հարազատին մեջ։ Ու ո՞չ ապաքեն Եղիշե եպիսկոպոսը մեր երևակայած Պետրոսն է. հասուն տարիքեն բա-

նաստեղծը, նվազ մելամաղձիկ, ավելի խոհուն ու հզոր, մի՛շտ քաղցր ու մի՛շտ խանդավառ։

Բավական երկար լռութենե մը վերջ՝ բանաստեղծի իր տաղանդը, տեսիլքի մը, դյութանկարի մը պես գունագեղ ու փողփողուն հիմակ, եկավ մեզի հիանալի փետրավոխության մը հմայքը վայելել տալ. ու մենք, որ վարժված էինք միօրինակ ու ձանձրացուցիչ հարթավայրերու տաղտուկին, մենք, որ երկարաձիգ ու հոգնեցուցիչ անապատի մը մեջ հազիվ երբեմն կրկներևույթներու պատիր հմայքը վայելած էինք լոկ, հոգիի ճշմարիտ հրճվանքով մը ըմբոշխնեցինք իր սրբագեղ բանաստեղծություններուն թովքը։

Իր սակավաթիվ քերթվածներուն անստգյուտ հովինվածքը, զգացումներու նրբին ընդելուզումը, երաժշտական բառերու ադամանդազարդ ագուցվածքը, ու վերջապես գաղափարներու ներուժ արտահայտությունը, իրարու միացած, բանաստեղծի բնածին տաղանդին հետ մեզի կը հայտնեն նաև ճշմարիտ արվեստագետին տաղանդը, որ ազնվական ու շնորհալի մոգություն մըն ալ կ՝ավելցնե իր բանաստեղծությանց թովանքին վրա։ Ապաքեն ո՞վ պիտի կրնար մատնանիշ ընել մեզ իր քերթվածներուն մեջ գաղափարի անճարակ կաշկանդումներ, բացատրության բանաքրոսիկ դարձվածքներ և զգացումի անճահ արտահայտություններ, և մանավանդ ո՞վ պիտի կրնար այնքան զգայազեղ ու խանդաբորբ բնականությամբ մը ներկայացնել մեզ, օրինակի համար, Անառակորդիին զղջումի այն հոգեխոր ցավերը՝ պոռթկացող ուժգնությամբ մը տոգորուն։

«Անեծքդդ, Հայր, փոխեց ոսկիս մութ պրդինձի,
Բայց քանի որ շամբուշ կոտք մը պետք էր ինծի՝
Ես պրդինձով ալ պատրանքներս ձուլեցի։
«Անեծքդդ, Հայր, փոխեց կընդրուկս անարդ գուղձի,
Բայց քանի որ զգլխանք մը պետք էր ինծի՝
Ես այդ գուղձովն ալ երազներս ծխեցի։
«Անեծքդդ, Հայր, գոհար քարերս գարձուց խեցի,
Բայց քանի որ գիրկ մը գըրգանք պետք էր ինծի՝
Թամարներու կուրծքեն զանոնք ես կախեցի»։

Գրություններ կան, որոնցմե մարդ մեջբերում մը ընելու կը վարանի. և միթե անիրավություն մը չէ՞ գեղեցիկ ամբողջության մը դաշնությունը հատվածել, քայքայել երազի նրբահյուս ու ճարտարագեղ այն շենքը, որուն ամբողջությանը վրա պետք է հիանալ մանավանդ, զայն վերստին ու վերստին կարդալով ու վերջապես զայն գոց ընելով։

Տեսնենք նաև սա հատվածը, նմանապես Ս. Գիրքեն առնված նյութի մը բանաստեղծացումը.—

«Կը սիրե՞ս զիս», երեքկնեց Տերն ու Կեփաս
Ամպի մը պես խռոված՝ ըզգաց ներսիդին
Ուրացումի ահեղ անկումը շանթին,
— Ա՜հ, գիտես դու, գիտես ամեն ինչ, ո՞վ Տեր,
Թե կը սիրեմ ըզքեզ, ցորչափ Սերդ անհաս
Ճառագայթի մը քաղցրությամբ թափի վրաս...
Քո՛ւկդ են բոլոր մեր հոգիներն ու սիրտեր։

Եվ իբրև պատասխան՝ Հիսուս կը հրամայե անոր երթալ արածել իր ոչխարները. (և ասիկա՝ իր ալ պարագան)։

«Մինչև այն օրն՝ ուր իմա ցուպդ ի գետին,
Եվ ուրիշներ կապեն մեջքիդ թույլ գոտին»։

Դիտեցեք պատկերին նկարչականությունը. վաստակաբեկ ծերունին, տարիներու հոգնությանը տակ ընկճված, աչքերը անրոց ու տկարատես, անկարող իր դողդոջուն ձեռքերուն մեջ նույն իսկ ցուպը բռնելու, իր շրթունքներն ալ անզոր՝ վաղեմի սիրական սրինգին վրա տաք համբույրի մը խանդաղատ հպումին, և սակայն ավելի քան երբեք գոհ՝ կատարված պարտականության մը երջանիկ զգացումովը զեղուն։

Այս քերթվածին մեջ իր իսկ հոգիեն բան մը դրած է Դուրյան, ինքը՝ իր աշխատության խոնարհին նվիրված. ինքը՝ եռանդագեղ ու կորովի մինչև հոն՝ ուր ա՛լ մաշած և ուժաղուրկ մարմինը մերժե ծառայել իր տրխրարբեկ այլ խղճահանգիստ մտածումին։

Իր ուրիշ մեկ քերթվածը Տեառնընդառաջն է, հիանալի՝ սկզբնավորութենեն իսկ.

«Հոտ մը կ՝առներ Ծերունին խոլ հեշտանքի՝
Խանձարուրին տաքուկ, ճերմակ խորշերեն,
Հյութե ցամքած մարմնին համար՝ ուղխորեն
Արբում մ՝էր այն ըզգայության ու կյանքի»։

Երևակայե՞լ պատկերը ալեփառ ծերունիին, ըղձացված դիրքի մը մեջ, գրկած Գերագույն-Մանուկը, անոր վրա հակած խանդաղատորեն, և այս մերձեցումեն և այս հպումեն խելահեղ...

«Ու երբ շուրթերն ալ դողահար ու տրմույն
Համբուրեցին մաքուր կայծակը՝ Բերնին,
Ճունչե կտրած ծոցին համար ի՞նչ չերմին՝
Կաթում մ՝էր այն՝ որ շարժեց լարը հոգվոյն»։

Ու գերագույն ու աստվածային վայելքեն վերջ, հուսկ գուրգուրանքի անհուն հորդումեն վերջ, անոր գոհ ու հանդարտիկ աղաչանքը՝ որ հեծ-կըլտուքի մը կը փոխվի.

«Ա՜լ արձակե զիս, Տե՜ր, եկավ ժամանակ,
Որ ոսկորներս խաղաղին.
Բայց մեյ մ'ալ դո՜ւն զիս գըրկեի՜ր, որ համակ
Հրոյը չը՜լլամ դաղաղին»։

Քերթվածին ամբողջությանը մեջ կա նույն ներդաշնակ, կորովի ու զգայագեղ թափը՝ որ երբեք չի կասիր։

Ու մտածե՜լ որ իրապես արժանավոր ու հոգելից այսպիսի մտավորական մը այսքան ո՜ւշ հրապարակ կ'ելլե, ամփոփված ըլլալով իր հուժկու և բանաստեղծ Եսին մեջ, ու խոնարհած՝ իր կրոնաշունչ Մտածումին սրբանույշ խորանի առջև. մինչ ուրիշներ, բանաստեղծի վատառողջ գոյություններ կամ շպարված, սիրուն ոչնչություններ, միշտ երևալու, միշտ խոսվելու նիհար ու ճղճիմ փառասիրության մեջ մոլորած, և կամ իրենց անունին քով ներբողի երկու բառ տեսնելու շատ տղայական անձուկ բռնված, ասդին անդին կը թափառին, հոս ու հոն ծիծաղելի ուրվագիծեր նկարելով, և հուսկ հետո իյնալով տղայական և ունայնամիտ հոխորտանքի մը մեջ։

Այս ամենեն վերջ, ինչ որ ամեն բանե ավելի բաղձալի պիտի ըլլար մեզի՝ ամենուս համար ալ, անտարակույս բանաստեղծ եպիսկոպոսին քերթվածներուն հատորի մը մեջ ամփոփված տեսնելն է։ Պիտի սիրեինք ուրեմն մտածել թե իր վերապահ ընթացքը համեստության գաղափարին հետ այս մտածումին ալ վերագրելի է։

<2> Գ. ԶՈՀՐԱՊ*

Վերադարձի գիշերն է... «Գետինը կակուղ է, փետուրներով շինված բարձի մը պես... հոս հոն՝ ծերացած ինկած ծառերու բուներ. ոմանք տարիներու բեռան տակ փճացած ու ոմանք իրենց առուգությանը մեջ օր մը կայծակեն զարնված... Մութ է չորս դինիս. հսկա ծառերուն շուքը վերահաս գիշերին սևությամբը կը թանձրանա...»։ Քիչ ատենեն սակայն պայծառություն մը կը ժայթքե, և դեղնորակ ճամբաներուն վրա կը ցասնե հեշտանվաղ լազվարթի երանգներ. և մենք հափշտակված կըսպասենք անոր՝ որ իր գորովալիր ծաղիկներուն ազնվական բույրը պիտի բերեր մեզի. այս սպասումը կ'երկարի սակայն. ան չի՜ գար, ու մեր երազները քիչ քիչ կը ձանձրանան. լռությունը ա՜լ տաժանելի կը դառնա. ու մենք կըսկսինք խոսիլ իր բուրումնավետ ծաղիկներուն տարաշխարհիկ հմայքին, իր եղրևանիներուն և իր երիցուկներուն վրա. վտիտ փունջ մը տխրագին համակերպությանց և հեծեծող մոռացոնքներու...

Ինքը՝ որ սեգ հոգի մըն է՝ վեհ իտեալներու հեռավոր գգվանքը կը սիրե, ու գերագույն համակերպության մը մեջ, տոգորված ճշմարիտ փոխադարձության մը երջանիկ համոզումով, կը մրմնջե.

Դուն լայն ճամփեդ գընա՝ ա՜ղվորդ,
Ես կ'երթամ մութ արահետես,
Երջանիկ՝ այն համոզմամբ որ
Սրտով գոնե ինծի հետ ես։

Եվ կամ մերթ կ'անդրադառնա անցյալին. վայրկենական դող մը կը թափանցե իր հոգվույն մեջ՝ զոր ո՞վ գիտե գուցե տարակույսը ցանցած է արդեն. և հանկարծ կ'իյնա մտահոգ ու տենդոտ հարցապնդումի մը մեջ.

... Ըսե՜ ինծի, կարոտը հին սերերնուս
Կ'անցնի՞ երբեմն ներսեդ, արագ ու թեթև,
Գինովցընող պաշտումներեդ կը զարթնո՞ւս
Անցյալին մեջ զարթումով մը կարճատև։

Տխրություններ ու հեծեծանքներ վերջապես, որոնցմե սակայն կը բղխի քաղցր հուզում մը՝ որ չի՜ ջլատեր, չի՜ խորտակեր. ունենայինք գուցե մտածողներ՝ որ դատապարտեին այս տխրությունը՝ զոր չեմ գիտեր թե տխրություն կոչելո՞ւ ենք. տխրությո՞ւն է միթե հոգեկան վիճակի մը հարազատ նկարագրությունը, որ քերթողին համար երանության վայրկյան մը կ'արժե և գիտակից ու ազնվական մտածողին համար ալ թանկագին հուզման պահեր կը հայթայթե։

Բանաստեղծը կը սիրե նաև ըսել սրտազեղումով իր մտատիպարին՝ որուն մարմնին ամբարտավանությունեն կը գինովնա զմայլուն.—

... Շքեղ արձա՜ն, միշտ ըզմայլիչ գիծերով,
Ամբարտավան կո՜ւռը, մարմարե ծիծերով...

* Կարգը մը թյուրիմացություններ ուղղելու և ուրիշներու ալ տեղի չտալու համար պետք կըզգամ հայտարարելու թե այս «Դեմքեր»-ը կենդանագրած եմ լոկ բանաստեղծական տեսակետով։

Եվ սակայն այդ համակերպութենեն և զմայլանքեն վերջ հանկարծ կու գա պահ մը՝ երբ հոգին տխուր գիտակցության դողով մը կ՝ուսումնասիրե, և քերթողը, որ իր ճակատագրին նմանություն մը գտած է բյուրեղե կլկլակին մեջ, կը հնծե.

Անկյունը՝ մարդ մը, աշխարհքին պահող քեն,
Վայելելով իր Նարկիլեն և ախորժ
Ըզգալով այս հեծկլտուքի նվագեն,
Եվ օդին մեջ ցընցող մութեն թույլ ու գորշ։

Եվ իսկույն քե՛զ կը հիշեմ, երբ անխրոով
Կ՝ունկընդրես միշտ հառաչանքիս և կարծես
Հաճույք կըզգաս, այդ մարդուն պես, դիտելով
Մութը սրբոտիս կրակին՝ զոր դուն կ՝ապծարծես։

Ասոնցմե զատ, իր ամենեն տխուր ոտանավորն է թերևս «Զատկի առթիվ»ը, որ իր մյուս կարճ չափով ոտանավորներուն պես հիանալի պարզության հետ ունի խորունկ տխրություն մը, որ սակայն, ինչպես միշտ, թույլ ու ընկճված հոգիի մը նկուն ողբը չէ.

Անկյուն մ՝ունիմ սրտիս մեջ ուր՝
Կ՝առանձնանամ ատեն ատեն,
Վերհուշումներ երբոր տրխուր
Երկրես զիս պահ մը կ՝անջատեն։

Հոն կը կենամ ես ծնրադիր
Ինչպես առաջը խորանին,
Եվ՝ ուր միայն կը ծաղկի իր
Կես սուգին մեջ՝ եղրևանին։

Հոն շարված են իրարու մոտ
Մութ փոսերը իմ իզձերուս,
Հիշատակներ՝ հիմա աղոտ,
Անուններ՝. զոր չըսեր լեզուս։

Խոլ տենչանքներ, թռիչք անհուն,
Զոր ձեռքովըս ավի հողին,
Մեռելներ՝ որ ուրիշներուն
Գեր հարության հույսը չունին։

Հետո ունի կրակոտ և ըղձավառ պահեր, մութին մեջ՝ ուր կնոջ հույը գեղեցկությունը կայծերուն իսկ գինովի ոստոստումներ կու տա.

... Եվ տեսնելով մարմնդ լեցուն խոստումով
Քեզի նայող բոցը այդ լուռ կրակին,
Խելքը գլխեն գացածի պես, աղվոր կին,
Կը ցատկըռտեր հոս հոն հիմար ոստումով։

Եվ հետո՝ անսովոր հանդիպումներ, անծանոթ կին մը՝ որ երազի պես գեղեցիկ ու խուսափուկ կ՝անցնի ամբոխին մեջեն. հազիվ թե նայվածքներ կը շոշափեն իր դեմքին գիծերը, և ահա անիկա փախած է արդեն, թռչունի մը պես. և սակայն ի՞նչ փույթ, բանաստեղծը իր երազքի մը պես է զոր կըզգաս առանց ծաղիկին հպելու. երաժշտության մը նման, որ հեռուներեն կու գա, անտես նվագարաններու կուրծքեն անջատված ու գրավիչ. և ո՞վ չէ ունեցեր այդ երազային դողը. տեսիլքի մը պես վաղանցուկ այդ դեմքը գիտես թե անգամ մըն ալ տեսնալիք չունիս. և այդ անմատույց ու փախչող էակին իտեալային քաղցրությունը անհունորեն հեշտագին համակրության մը ծաղիկը կը փթթեցնե հոգվույն մեկ սիրական խորշը.—

Աղվո՞ր, տգե՞ղ, ի՞նչ փույթ, բավեց որ մտքես
Մարմին մը տամ ես ուզածիս պես իրեն,
Վրդովիչ հով, պչրանք մը լուռ, վերջապե՞ս
Ամեն բաներն որոնց համար կը սիրեն։

***

«Ո՞վ չէ սիրած իր «Ապրիմ-Մեռնիմ»ը, նույնիսկ անոնք որ դույզն համակրություն մը իսկ չէին տածած անխղճորեն փետռտած պահերնուն այդ լքուն ծաղիկը։ Քանիներ գիտեմ ես, որ այնուհետև իրենց լամբակին միակ ծաղիկը ըրած են այդ խոնարհ երիցուկը, որուն մահացումին մեջ կը փնտռե մարդ բռնադատված մարգարեությունը իր երկարատև կյանքին. և ապրիմին հիմարական խանդավառությամբ լեցվելե վերջ՝ անզգած անգոսնումով մը ճամբաներու փոշիին կամ ցանկորմի փշտուքին մեջ կը նետե լերկ դեղին կոճակը «Ապրիմ-Մեռնիմ»ին...

...«Ամեն անգամ որ քաղեմ քեզի, ո՜վ պզտիկ դեղին ծաղիկ, կը հիշեցնես ինծի այն ահավոր մերձավորությունը զոր քու անունդ կը կազմե. Ապրիմ-Մեռնիմ. երբոր ամեն տեղ Կյանքը կը ջանա ըստ կարի խուսափիլ, հեռու կենալ Մահեն, քու վրադ միայն երկուքն ալ իրենց ճշմարիտ ու պատշաճ տեղը կը գտնեն։ Այն քաղաքին պես որ իր գերեզմաննոցը իր ծոցին մեջ զետեղած է՝ փոխանակ հեռուն, շատ հեռուն, անտեսանելի անկյուն մը տանել դնելու, դուն ալ Ապրելուդ մեջ Մեռնիլդ պարփակած ես»։

Սակայն պետք է խոստովանիլ թե ինք, աշխատության դույզն հանձնառությամբ մը, թերևս մեզի պիտի կարենար տալ արձակ բանաստեղծության հիանալի էջերեն մեկը. ինչպես իր մյուս բանաստեղծությանց մեջ, նմանապես հոս ալ զգալի է ոճի անխնամությունը. այս չփույթը, որ մեծ բան մը չի պակսեցներ իր խիստ տաղանդալից արտադրությանց արժանիքեն, պիտի կրնար ջնջվելով՝ անոնց վրա ավելցնել գեղագիտական վայելքի մը հմայքն ալ, և ես կը հավատամ թե Զոհրապ շատ ճարտարորեն պիտի կրնար տալ իր ոճին արաբ-արվեստի խնամված գեղեցկություն մը։ Շատ դյուրին է զգալ թե գրչի մեկ հարվածով արտադրած է իր գրությանց մեծամասնությունը, եթե ոչ բոլորը։ Ջանդրադառնալու և մեկ նայվածքով անցնելու իր այս բնավորությունը ինքն ալ խոստովանած է արդեն ուրիշ պարագայի մը տակ, որ նկարագրի միևնույն մասնահատկության արդյունքն է։

«... Ես կը կարծեմ որ կարդացված գիրք մը մոռցվելու է... ասոր համա՞ր է արդյոք որ այն սուղ վայրկյաններուս մեջ զոր ընթերցանության կը հատկացնեմ, ակնարկ մը կը նետեմ ու կ՝անցնիմ գրքի էջերուն վրայեն, զանոնք ավելի աչքե անցուցած ըլլալու քան թե անոնցմե բան մը հիշելու նպատակով»։

Այս փակագծեն վերջ, որ սահմանված չէ՛ երբեք իր տաղանդը արտավորելու, պետք կզգամ հայտնելու ըղձանք մը՝ որ շատերուն է. պիտի փափաքեինք որ իր գեղեցիկ ոտանավորներուն երիտասարդությունը անդադար խոսեր մեզի, փոխանակ այս լռության որ մեզի զգալ կու տա անոնց կարոտը. և արդեն ինք, դեռ երիտասարդ ու կորովի, տակավին պիտի կրնար տալ մեզ իր եղրևանիներուն մելանույշ երազեն քիչ մը երազ և քանի մը կայծ՝ իր սիրավառ հոգվույն կրակեն...

1906

ԻՆՔՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ՄԸ*
«ԾԻԱԾԱՆ» ԻՆ ԱՌԻԹՈՎ

«Ծիածան»ի հեղինակը գավառացի երիտասարդ մըն է. Ակնցի՝ Մեբուժան Պարսամյանին պես. սա՛ տարբերությունով որ մինչ Պարսամյան թոթափած է իր ծննդավայրին ազդեցությունը, Մեծարենցի մեջ տեղ տեղ նշմարելի է անոր հետքը։ Բինկյան՝ Մեծարենցին գյուղը՝ Արածանիի ափունքը[2] ժեռուտ խորշի մը մեջ ամփոփված է. բայց քերթողին թողունք իր գյուղին նկարագրությունը.

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գյուղանըկարը փռված,
Տարտամորեն, հսկայական արծիվի մը ձևերով,
Մագիլները խորասուզած խորշերու մեջ մրթամած։
(«Ծիածան»,—Այգերգ)

Այս գյուղը՝ որ իր ծառաստաններն ու արոտավայրերը իր դիմացը առած նստեր է, թեև ինքնին համակ բանաստեղծություն, զարմանալի է որ ժամանակին չէ ունեցած իր սիրերգակները, աշուղները. իր երգերը ամենն ալ Ակնա մտքին ծնունդներն են՝ կամ անոնց այլացումները (variante). ուրեմն Մեծարենցին մնացեր է անոր առաջին «Մտքի գինով»ը ըլլալու փառքը. սակայն, որքան ալ որ հպարտ զգա ինքզինքը այս մասին, մյուս կողմեն ալ չի կրնար չցավիլ, որ իր հաճույքը անասիկա անկարելի չէ. հերիք է որ ենթական սնամիտ փառատենչություններու և նույնքան սնամիտ ու կեղծված համեստություններու կապանքեն ազատելու չափ արի ըլլա։

* Ինքնամենադատության այս պզտիկ փորձը՝ թերևս աննախընթաց** ու անսովոր՝ արդյունք չէ սակայն պարզ քմայքի կամ սնապարծության. այլ թելադրված է լուրջ մտածումե մը, որ հեղինակին համոզումն է. այսինքն, որևէ երկի մը հեղինակը իր գործին քննադատը, անկատ ու անաչա՛ռ քննադատը, ըլլալու վիճակին մեջ պետք է գտնվի.

** Այս փորձը՝ գրված 1906 Հոկտեմբերին՝ բնական է, չէր կրնար նախատեսած ըլլալ Ինտրայի պարագան[1]։

Ինչպես որ արտաքին քննադատը կը ջանա հեղինակին հոգիին թափանցել, նույնպես ալ, փոխադարձաբար, հեղանակը ինք՝ պայմանագրականության փոշին թոթված՝ պետք է որ ձգտի իր հոգիեն դուրս ելլել. արտադրող եսեն անջատելու է պահ մը դատող եսը՝ որ պաղարյուն լուրջ զննությունով թերևս նոր կողմնալույսեր (side-ligh) կարենա սփռել մութ մնացած անկյուններու մեջ։

Ամեն պարագայի տակ ասիկա պարզ փորձ մըն է՝ կրնա իր դեպ ու անդեպ կողմերը ունեցած ըլլալ։ Ես՝ որքան ալ որ մեկ կողմեն համոզված՝ մյուս կողմեն ալ պիտի հետաքրքրվեի սակայն ուրիշներու կարծիքն ալ ունենալ այս մասին։ Մ. Մ.

խառն չէ. որովհետև «Միածան» իր ծննդավայրին հարազատ ցոլացուցիչը չէ, կամ չէ՛ կրցած ըլլալ՝ այնքա՞ն կանուխ բաժնված ըլլալով անկե. ինչ որ մնացած է իր քով անկե, խանդաղատելի մանկականությամբ մը հիշակերտված, անշուշտ չպիտի բավեր հզոր լիություններ արտահայտելու։

Հիմակ որ «Միածան»ին մեջ գյուղին դերը ճշդվեցավ, կարելի է ըսել անմիջապես թե իրեն գլխավոր ազդակ եղած են Պոլսի միջավայրը, ֆրանսիական գրականությունը կամ քիչ մըն ալ անգլիականը. այս ազդեցությունները սակայն բացարձակ եղած չեն, քանի որ Մեծարենց երբեք անոնց մենամոլությունը ունեցած չէ։

«Միածան»ի հեղինակը, կամ Շավասպ Միածան, մեր նոր բանաստեղծներուն մեջ նորագույններեն է. 1903ին սկզբնավորված, ահա՛վասիկ քիչ ատենի մեջ խուրձ մը երգեր կը բերե մեզի. պե՞տք է բարեդեպ նկատել նորագույններուն այդ փութկոտությունը. «Անրջանք»ի բազմաբեղուն հեղինակը[3] վաղը իր մտքին երկվորյա՞կը պիտի ծնի... մինչ անդին, ավա՜ղ, Գալանճյան դեռ չէ տրցակած իր երկին նախհունձքը[4]։

Չ'ըլլա՞ որ օր մը այս աճապարկոտները զղջան իրենց եռանդին վրա, ինչպես ըրին երբեմն «Մրմունջք»ին և «Հիշատակաց ծաղիկներու»ն հեղինակները[5]. մեկը իր հատորին «Ներողամիտ ընթերցողը ըլլալե ավելի անոր անխնա քննադատը» դարձավ. իսկ մյուսը «մորուտի սեղեր» կոչեց իր երբեմնի ծաղիկները։ Ի՜նչ լեղի հեգնություն ըլլալու է, իրա՛վ, տարիներու ճշդացույց ապակիին մեջեն իր պզտիկությունը, իր ոչնչությունը դիտել. բայց այդ դառնությունը միևնույն ատեն առողջ քաջալեր մը, զտված հպարտություն մը չէ՞ միթե. միշտ արհամարհել, նույն իսկ ատե՛լ կարենալ երեկի գոյությունն ու արժանիքը դեպ ի բարեշրջում առնված երջանիկ քայլին մեջ, օ՜հ, ինչքա՞ն զգացված վայելք մը ըլլալու է ասիկա։

«Միածան»ի հեղինակն ալ կրած է անշուշտ այս ապավորությունները. որովհետև իր ընթացքը թվաբանական հառաջատվություն մը եղած է դեպ ի բարելավում, ինչ որ պիտի կրնանք տեսնել հետևելով իր հետզհետեական բարգավաճումին։

Երբ իր առաջին հրատարակությունները քննենք, կը տարվինք հարցնելու թե արդյոք կանուխ հրապարակ ելած չէ՞ Մեծարենց, և կամ պիտի չշահե՞ր սպասելով որ հակումները զարգանային իր մեջ. և ուժի կատարյալ գիտակցությունով սկսեր իր բանաստեղծական վերթևումներուն. այս հարցումին պատասխանը երևութապես դրական, կ'երկճղի սակայն երբ քիչ մը հոգեբանորեն քննվի խնդիրը. կամ այն է որ իրոք պիտի կրնար առանց հրապարակվելու աճեցնել իր ձգտումները, հա-

կումները ճշդել, խարհրդածել, զարգանալ, լիանա՛լ վերջապես. և կամ գուցե իր խարխափանքին մեջ չգտներ լուսավոր ճամբան, զուրկ ըլլալով լավագույնը արտադրելու փառասիրության օրըստօրեական մղումեն. այս մասին բացարձակորեն խոսիլ անկարելի է։

Իր առաջին հրատարակությունները, ուրեմն, որոնք իր առաջին արտադրությունները չեն սակայն, ունին իրենց մեջ անարժեքներ. հեղինակը արդեն խոհեմությունը ունեցած է անոնց մեկ մասը կապոցեն դուրս թողելու. տակավին նետվելիքներ կային անշուշտ. բայց հոս վարանած է հեղինակը. որովհետև իր կարծիքով, ինչպես առթ պիտի ունենանք տեսնելու, ի՛ր կարծիքով այդ զանցառելի հասկերուն թիվը ա՛յնքան շատ պիտի ըլլար, որ... հաղիվ քանի մը ատոքներ պիտի մնային։ Բայց ասիկա զուտ անձնական կարծիք մըն է, ու սահմանը մը կա՝ ուրկե անդին անցնելու իրավունք չունի հեղինակը. այդ սահմանը՝ ոչնչությունները կը գծեն զայն, ուրեմն ինչ որ աչքառու, բացարձակ ոչնչություն մը չէ, հեղինակը արտաքսել չի կրնար. ի՞նչ է որ բանաստեղծին կոչումը. «Բանաստեղծը Սիրո կը նմանի. և իր պաշտոնն է ճամբաները լուսավորել։ Անիկա կ'առնե կը տանի յուրաքանչյուր հոգի իրեն ճակատագրված վայրերեն և ցույց կու տա անոր հրեշտակային գանձեր»։ Այսպես կը սահմանե բանաստեղծին դերը Սեն Ժորժ տը Պուելիե՝ բնութենապաշտներուն ռահվիրան[6]. Որքան ալ որ այդքան գեղեցիկ դեր մը արժանավորապես կատարած ըլլալու հավակնությունը ունեցած չըլլար «Միածան»ի հեղինակը, դարձյալ ի՞նչպես չխղճահարեր մտածելով թե իր անարժեք նկատած մեկ ոտանավորը, ո՞վ գիտե, իրմեն շատ ավելի պարզ հոգիի մը համար պզտիկ լուսավոր ճամբա մը պիտի բանար թերևս...

* * *

Տեսնենք հիմակ թե բանաստեղծին մտքին մեջեն ի՞նչպես ծիածանվեր են հավիտենական զգացումներն ու մտածումները։

Կրնանք երկու շրջանի բաժնել իր ոտանավորներուն շարքը, սկզբնական շրջանը՝ որ խարխափանքի շրջանն է. և մյուսը՝ որ քիչ թե շատ գիտակից է ու ինքնավստահ։ Իր կանխագույն ոտանավորներուն մեջ, որոնք առաջին շրջանը կը կազմեն, նշմարելի է սկսնակի վերհերոտ թորթափումը. հոն զգացումներն ու անոնց արտահայտությունները սաղմնային անստուգություններ ունին. տեսակ մը տպավորական-նմանողական ազդեցության տակ գրված են անոնք՝ որ բնավ չենն դրեր եսին ցոլքը, ինքնության դրոշմը. այս կարգեն են, օրինակի համար, այս հատորեն դուրս թողվածները և անոնց անմիջական հաջորդները, ինչպես «Ցայգերգ»ը (Դադրեցան ձայներն ամեն...)՝ որ սիրա-

յին հասարակ ոտանավոր մըն է. նույնպես «Եկո՛ւր»ը, «Վայրկյաններ»ը, երկու «Աշնանային»ները, «Սեռենատ»ը և ուրիշ մեկ քանիներ. ասոնց մեջ երբեմն նույնիսկ զգացումը կեղծված է։

Ո՞վ, արդյոք ո՞վ,
Պիտի տանի սրտես հեռու
Վայելքն աղու
Գրգանքներու՝
Որոնց հոգիս հափրանքն ունի

Կ'ըսե բանաստեղծը, որ վերջեն պիտի երգե հաճախ սպասումը։ Զմոռնանք հիշատակել այս առաջին շրջանին հրատարակված ուրիշ երկու ոտանավորներ ալ. «Քուն»ը և «Ա՛ն իմ սիրտս է...»ն. քննադատ մը[7] «Վեղենյան վարնոց կեղծարարություն» պատվանունը տված էր ասոնցմե առաջինին. մինչև հոդ երթալու պետք կա՞ր, չեմ գիտեր, ըսելու համար պարզապես թե այդ ոտանավորը մեծ բան մը չէր արժեր. ես որ Վեղենը[8] դեռ կարդացած չեմ, փոխանակ ուրախանալու այդ մերձեցումին վրա, պարզապես զարմացա որ ինքնին շա՛տ քիչ նշանակություն ունեցող բանաստեղծություն մը Վեղենին հետ բաղդատության եզր կազմելու կը ծառայեր։ Ուրիշ քննադատ մը[9] լալկանություն կը հռչակեր «Ա՛ն իմ սիրտս է...»ն. օ՜հ, աս լալկանություն բառը շա՛տ չարշարված է, իրա՛վ որ. մեկը որ մեր բանաստեղծները դատափետելու մարմաջեն կը բռնվի, երգիծանքը բանաստեղծութենեն զանազանել չկրցող օրիորդ մը ըլլա ան թե հարգելի եկեղեցական մը, նեցուկ մը ունի արդեն պատրաստ՝ «լալկանություն»ը. չե՛մ ջատագովեր երբեք, ու մանավանդ կ'ատեմ, անջիղ, հիվանդագին ու մանավանդ ուզված, բռնադատված տխրությունը. սակայն մյուս կողմեն չմոռնանք ալ հոգեկան տրամադրություններն ու պարագաները՝ որոնց տակ կ'արտադրվին էապես զգացված տխրությունները։ Դառնալով հիշված ոտանավորներին, ըսեմ դարձյալ թե հեղինակին աչքին մեծ բան մը չ'երևար անիկա. ու հետո, պզտիկ մեջբերում մըն ալ, եթե չեք ձանձրանար.

... Թույլ խազերու մեղկություններ չունի ան,
Այլ կը սահին հըզոր կուրծքին բյուր ձայներ,
Բամբ թառաչներ՝ հոծ ու մրոայլ,
Հովն երբ պոնդեր կու տա նամետ գիշերին։

(գիշերը՝ Եվրոյան տավիղի նմանցված)

Ակնածանքով դիտել կու տամ թե ասիկա լալկանություն չէ՛ երբեք։ Այս հիշվածներուն հատուկ սովորականութենեն շեղած են «Սոնադին»ը, «Նոպաներ»ը, «Թրթռումներ»ը. առաջին երկուքը զորեղ, իսկ երրորդը վճիտ ու խորհրդավոր։

Երկրորդ շրջանին մեջ բանաստեղծը կը ցնցվի, քիչ մը ու փոփոխություններ կը կրե, թեև դեռ չի կրնար ամբողջովին սկրթել նետել սովորականությունը, ու երբեմն բոլորովին կ'ենթարկվի անոր՝ ինչպես «Աղերսանք»ին մեջ։ Իր սիրերգությունները՝ այս շրջանին՝ կը դադրին ձուլված բաներ ըլլալե. և կ'սկսի իր սերը միշտ բնագեղ տեսարանով մը շրջանակել. զգացումին ընկերացող տեսարան մը կա, և կամ տեսարանեն վերջ զգացումը կու գա.

Իրիկունը արագորեն կը խոնարհի դեպ ի խավար.
Բուրմունքներու հաշիշն հոգվույս մեջ կը ցանի հեշտանք մը թույլ,
Երգի խազեր կը կրքոտին տակավ տենդոտ, հուզումնավար.

հետո.

Մութ սենյակիս մեջ կը շրջիմ առջի համբույրն անրջելեն...

ուրիշ օրինակ մը. նախ.

Սարերուն մեջ կը կոծկոծի այգուն՝ կոչնակը վանքին,
Եղնիկները՝ մրթնշաղին՝ դեպ ի գետափ կը դիմեն.

հետո,

Ես կ'երազեմ ծառերուն տակ ու կըսպասեմ խոլաբար
Լույս-պարիկին՝ որ իղձերս պըսակելու պիտի գար։

Եվ ուրիշ մըն ալ՝ որ սապես կը սկսի.

Այգն է ծաղիկ երազով լի, ու բալաձիգ՝ թեթևորեն.
Մշուշն անծալ շրվեժի պես ամբարտակեն վար կը հոսի,
Իր շրփույթին մեջ կը շիկնի ոսկի աղջիկն արշալույսի.

և ապա.

Քիչ մըն ալ դո՜ւն ժպտեիր, ա՜հ, հոգվույս համար որ հիվանդ է.
Նայվածքի խաղ՝ որով դառնա աշխարհն ինծի ծափ ու ծաղիկ։

Ասոնցմե զատ ունի զուտ նկարագրական ոտանավորներ՝ որոնք զինքը կը բնորոշեն։ Այսպես՝ «Ցնորոտ Անդորրություններ»ը.

Հեշտ փալփլուն գիշերներու անդորրություն մը ցնորական...

Ցայգն է ժայթքած իր շողակի շատրվաններն անրջական.

Շանթե աչքեր, բոցե թևեր մտածումիս կ'անցնին քովեն.

Դաշտերուն վրա հարսնուկներու բոսոր իղձերը կը ցամքին.

«Աքասիաներու Շուքին Տակ»ը՝ քնքույշ.

Ստղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան.

Ջուրը ցայտքին ծաղիկ ծաղիկ կը կաթե,
Վրնիտ՝ ինչպես լույսե ստվերները մանկան.

«Գետափի Երազանք»ը՝ արևոտ ու բուրումնավետ.

Գյուղն համորեն կը մըրափե ծոցն արևոտ ժայռերուն.
Տիվանդորրի պահն ըմպած է մեղի հեշտություն մը սյուքի.

Գետեզերյա ծառատտաններ, միշտ օրեցքի այս պահուն,
Ինձ անծանոթ թավուտքներե կը խրկին բույրն հեշտանքի...

«Երազի Պահեր»ը՝ գիշերով ու երազով լի.

Մըտածումը, ինչպես համբորդ ուղեկորույս,
Կ'անցնի փութով, անձկագին,
Մերթ լուսավետ ու մերթ անլույս
Ճամբաներեն իմ մտքին։

Ու կը հոսի գիշերն ինչպես ծով անհուն
Դեպ ի ափունքն երազիս։

«Տապի Նոպաներ»՝ը տաղտկալի ու բարբարիկ.

Արեգակի բորբ ընձյուղներ կ'այրեն ամեն իր անիրնա.

Ամենուրեք կը խըլրտի նոպան տապին ահավոր.

Շինականներ արևահար ծերունի մը գյուղակ տարին.

Բայց կը տևե դեռ ցորեկին բազմալեզու տենդն հրավառ։

«Հովին Անցքը»՝ միստիք ու երկյուղալի.

Անդնդազալար օվկիանի պես
Կ'ուսի այս գիշեր հովն ալիք ալիք.
Կը ծծեմ լեզի սարսափն իր ճամբուն...

Ծ՞րբ պիտի հասնի իր հանգրվանին
Արհավրոտ Ուխտին այս զոռ կարավան.

Մարած է քրքում լույսը լամպարիս
Հորդող մութին մեջ հեալեն տրտում.

Ա՜հ քո՛ւկդ եմ, ո՞վ ձայն, ո՞վ միստիք ցնցում,
Մինչ դուն կաթոգին հոգվույս կը փարիս։

«Սիրերգ»ը, «Պետրոս Դուրյան»ը, «Վերադարձի երգ»ը, եթե ոչ հասարակ, գեթ հասարակ կերպով արտահայտված են։ «Մինչաղներ»ը, «Այգերգ»ը հիվանդագին, ընկճող տխրություն մը ունին՝ որ քիչ մը կ'արդարանա թերևս սա՛ նկատումով թե ճշմարիտ հիվանդ մըն է խոսողը. ասոնցմե տարբեր է անշուշտ «Աբևին»ը՝ սանձարձակ բանաստեղծություն մը՝ ուր հեշտագին, գրեթե այրող ջերմություն մը կա։

Գիշերերգությունները, լուսավետ կամ մթաստվեր, երկար տողանցք մը կը գծեն ամբողջ հատորին մեջ։ Գիշերը երկար ատեն իր ազդեցության, իր խանդաղատանքին մեջ պահած է բանաստեղծը. սկիզբները քաղցր ու զվարթ է անոր գրգանքը.

Գիշերն անո՞ւշ է, գիշերն հեշտագի՞ն.

կամ.

Քերթված մըն է ցայգն համորեն, ջի՞նջ գեղոն՝
Որ կ'երփներգե ծափ ու ծիծաղ ու ծաղիկ.

և կամ.

Ցայգն է պայծառ անհունորեն,
Ցոլցլանքովն իր խոլապար.
Օդանուշներ՝ որ մեղմաբար
Կը մոտենան հոգվույս նորեն։

Պարզկա ցայգուն անուրջին մեջ
Լրվալ կ'ուզեմ հիմակ հոգիս.
Եվ հրարհրիլ՝ երրեմնի շեջ
Աշտանակներն իմ երազիս։

(«Ցայգն է Պայծառ...»)

Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երազները ավելի վառ ու արագ վերթևումներ կ'ունենան. գիշերին մեջ, ուր շրջանակը ա՜յնքան հմայիչ կ'ըլլա, և սպասումը՝ ա՜յնքան քաղցրորեն տաժանագին.

Մութ սենյակիս մեջ կը շրջիմ առջի համբույրն անրջելեն,
Ու շրթունքներս են բոցավառ՝ ջերմութենեն երազային.
Փա՜կ են աչքերս, և կամ հանկարծ մերթ անհամբեր դուրս կը նային.
Ա՜հ, լրոությունն որ կը տևե, և ըստվերներն՝ որ կը քալե՞ն։

(«Խոնջ Իրիկունն Աբազորեն»)

Շրթունքս են ծարավ միակ համբույրին...
Ցնծագին գիշերն է լույս ու լուսին,
Բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ կը մաշի՞։

(«Սիրերգ»)

Բայց գիշերվան սերը միշտ կը վերածաղկի.

Զգացում մը բյուրեղե,
Ծիածանի երանգով,
Ըսպասումի մութին քով
Լույս ակոսներ կը պեղե։

Ու այս սերը կ'երկարաձգվի մինչև պաշտամունք. և այդ պաշտամունքը ա՜յնքան խանդոտ է որ բանաստեղծը կ'ուզե նույնիսկ գիշերին հավիտենությունը, բացարձակ, անկապտելի Աստվածությունը.

Կ'ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
Ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ.
Կ'ուզեմ որ դադրին տիվ ու ժամանակ,
Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր։

Հետո երկյուղած աղերսանք մըն ալ.

Ցնորաբե՜ր գիշեր, ա՜հ, ընդունե՜ զիս.
Ընդունե՜, միստիք ո՜վ անդորրություն,
Իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն,
Եվ համբույրն անանց՝ զոր կու տա հոգիս։

Բայց վերջապես կու գա ատեն մը՝ որ գիշերներու այս տարփանքը ժամանակ մը տեղ կու տա արևին ու տիվին հրայրքին.

Պիտի ըմպեմ բոցն արևին, ճառագայթի եմ ծարավի.

(«Այգերգ»)

Ու թող նըշուլե բաղձիկ հոգվույս մեջ,
Ճառագայթը նախածին,
Վաղորդայններու քրքում արևին։

(«Դեպի Մառացում»)

Շողա՜, ո՜վ արև, շառափներովդ ոսկեծայր,
Մառախլապատ երկունքիս մեջ՝
Ուր մըտածումը կը դեգերի ուղեմոլար.

(«Արևին»)

Հոգիես նե՞րս կը խուժե
Քրքումն՝ ալիքի նըման

(«Առտվան Արևին Մեջ...»)

Ամբողջ հատորը գրեթե սպասման երկարաձիգ գիշեր մըն է աղերսանքներով, հոգերով, ցավերով, ու երբեմն ալ կայծկլտուն հույսերով լեցուն.

Անձուկին բոցը զիս պաշարեց, ըսպասման հիվա՜նդն եմ,
Գիշերներ միշտ անքուն կըսպասեմ ծիրանի ես դարձին։

Դարձուցե՜ք նավակներս հողմավար, ջըրանո՜ւյշ պայիկներ,
Դարձուցե՜ք նավակներս դյութավար, իրիկվա՜ն հովիկներ։

Փորձած է քանի մը աղատ ոտանավորներ՝ որոնցմե ոմանք չափին ավանդութենեն թեև զերծած՝ չեն կրցած սակայն տեղ տեղ վտարել արտահայտումի սովորական դարձած, մաշած թելատած կերպերը։ Օրինա՞կ կ'ուզեք՝ «Դաշտերու Մեջ»ը՝ որ խճողված թանձրություն մը ունի.

Կյանքի թարմ կաթը ծծելու
Հեշտին այգուն ստինքներեն քաղցրածոր.

Այս կարգեն է նաև հետևյալ տողը «Ցնորոտ Անդորրություններ»ուն մեջ, որ մյուս տողերուն բնական խաղացքին մեջեն մարախի մը պես դուրս կը ցատկե.

Եվ հուրիներ նոր հոլանած ալապաստրը իրենց կուրծքին։

Ուրիշ տող մը «Գետափի Երազանք»են.

Ու կը նիրհեմ արբշիռ՝ հովին դյութիչ նեկտարն ըմպած հող։

Այս նեկտար բառին կրած չարչարա՞նքը հապա։
Տափակ տուն մըն ալ «Այգերգ»են։

Սեր-Արևիդ բոցն երկարե խորերն հոգվույս իմ պատանի.
Ջերթ արևին լեզվակն ոսկի՝ որ կը ծծե մշուշն այգուն.
Ո՞ւր է ճաճանչն, հուրքը ջերմին՝ որ մառախուղն առնե տանի,
Սեր-արևիդ (են, են.)

Անոնց թվումը տաղտկալի հարկ մըն է. մինակ պետք է խոստովանիլ թե եթե ոչ շատ, գեթ բավական կարելի էր երկարել։

Հորինվածի տեսակետին գալով, ըսենք թե Մեծարենց ընդհանրապես հնչուն ու ինքնեկ հանգեր ունի, եթե ասիկա արժանիք մըն է. «ը» ձայնին հաճախությունը շատ զգալի է. բայց նորերը ատիկա ներդաշնակության պայման չեն նկատեր. ճաշակի խնդիր, թերևս։ Գալով հատածի կազմության միջոցին բառերու վանկատումին, նորերը կը կարծեն թե եթե վանկը նայ տառերով կազմված ըլլա, ներդաշնակության դեմ չըլլալե ավելի արտասանության նրբություն մը կու տա. օրինակով խոսի՞նք.

Իր երանդնե/ը նրբին.

«ը» ձայնը, հոս ըստ տաղաչափության, ներելի չէ, իբրև դիմորոշ հոդով ավարտող. նորերը անճաշակ չեն գտներ այս բանը, ըսի՛։

«Միածան»ի բարբառը ունի երաժշտականություններ. իբրև օրինակ հիշենք «Շերամին Նինջը» և «Մտերմիկ Տեսիլներ»ը։ Երկուքն ալ քերթության թանկ գեղորներ։

Կրճատումի խորթ ձևեր բնավ չունի «Միածան»ին հեղինակը, որչափ որ կը հիշեմ. ասիկա իմ աչքիս արժանիք չի թվիր. դար մը վերջի սերունդը ապահովաբար մեզ ամենս ալ մեկ ջրով պիտի լվա. մեջը ըլլալով այս մասին ամենեն խղճամիտները. և կամ, օրինակի համար, լեզվական խորթություններ, ոչինչ, բայց ոչի՛նչ կը պակսեցնեն արժանիքեն. ինչպես որ անոնց չգոյությունը դրական արժանիք մը չենթադրեր։

Իր ձայնյակները անստգյուտ հորինված մը ունին, կարծեմ ասիկա դրական արժանիք մը չէ անշուշտ, բայց մեկը որ ձայնյակներ (sonnet) գրել կ'ուզե՝ հարգելու է եղած կանոնները և կամ հրաժարվելու է ձայնյակ գրած ըլլալու հավակնութենեն՝ որ մաղի չափ իսկ արժեք չունի։

***

Վերջակետեն առաջ կրնանք ըսել թե «Միածան»ը ունի թերություններ՝ ինչպես արժանիքներ. մետը անշուշտ արժանիքին կողմը պետք է ծռի, այլապես գոյության իրավունք ձեռք բերելու չէր. սակայն այդ արժանիքը, հարաբերապես, այսինքն բանաստեղծության ընդհանրական ըմբռնումով՝ մեծ բա՞ն մըն է արդյոք. օ՜հ, ո՛չ անշուշտ։ Եթե «Միածան»ը հասուն ու բազմակողմանի գործ մը չէ, տարակույս չկա, որ վիժած մըն ալ չէ։ «Միածան» մութին մեջ խարխափանք մը չէ. նշմարված ճամբաներուն լույսը կը թրթռա հոն. ճամբորդը դեռ կը դեգերի սակայն, եթե չի վարանիր. ասիկա բնականու ներելի է դեռ շա՜տ երիտասարդ հեղինակի մը համար՝ որ տակավին իր մտային զարգացումին լիությանը մեջ թևակոխած չէ։ Ակներև է, որ համաշխարհիկ բարախումներ չունի իր սիրտը. պզտիկ կամ մեծ, անձնականություններ միայն ունի դեռ. ամբողջովին բնությունով տոգորված չէ. բնությունը գլխագիրով, (ինչպես պիտի ուզեր ըսել Հարությունյան ճարտարամտորեն) լեռն ու դաշտը, հեղեղատն ու առուն չեն մինակ բնություն, ըսելու հա՞րկ կար։

Փափաքելի էր ուրեմն, որ Մեծարենց ջանար իր էութենեն դուրս ելլել. չէ թե մինակ «Միածան»ի հեղինակը այլ մեր բոլոր բանաստեղծներն ալ մերկանալու են այլևս եսին տաղտկալի ոչնչաբանություններեն. մեկդի թողունք քիչ մը անմարդկային անձնաբանությունները, բաբախելու համար Բնության սիրով. բանաստեղծը Բնության ցոլացումը պետք է ըլլա. թե ոչ բանաստեղծ չէ՛ իրապես. քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լերան մշտանույն զորությունը։ Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա, բոլոր գոյություններուն համադրական թրթռումովը տրոփուն։

«Միածան»ի գրախոսականներեն մեկը ըլլալու սահմանված այս գրությունը եթե այսքան ուշ կը հրատարակվի, իսկապես ժամանակավրեպ մը չէ՛ սակայն, քանի որ այս «ինքնադատություն»ը (ինքնադատության փորձը) կրնա կերպով մը «նոր Տաղերդ»ուն հառաջաբանը նկատվիլ. վասնզի «Միածան»ի հեղինակը գեթ մասամբ իր խոստումը հարգած ու հավատքը իրագործած ըլլալու գիտակցությունը ունի, իրեն և մանավանդ ուրիշներու ուրախության համար։

<1906, հոկտ. 9>

1907

ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ

Ի՜նչ ուրախություն ու մանավանդ ի՜նչ հպարտություն, հանապազօրյա դանդաղ ու միակերպ տեսարաններու մշտանույն ձանձրույթին մեջեն, հանկարծ, ճաուսգայթող դեմքով ու գիտակից ցնծությամբ ձայն բարձրացնել ու գոչել,— ահա՜ նորություն մը, ահա՜ ճշմարիտ նորություն մը։ Քանզի, ավա՜ղ, գրական հովիտին ծաղիկները, բանաստեղծները՝ իրենց առաջին փթթումին ուրախացուցիչ հուսադրութենեն վերջ՝ ինչ դառնություն, հուսախաբություններ կը դառնան մեր աչքին։ Հեռուեն տեսնված բաց բալերանգ թույրեր, մարմանդին ալեծուփ կանանչին վրա սփռված, նոր ծաղիկներու թափորի մը պատրանքը կու տան մեզ. բայց երբ արևին հուրքը կը բանա անոնց շափրակները, երբ ժամանակը աչքերը կը բանա՝ ի՞նչ հուսավրիպում. հավիտենական ճերմակ երիցուկնե՜րն են եղեր անոնք...

Ահավասի՛կ ուրեմն, նոր ու նորանշան բանաստեղծ մը. եթերահած, աննյութաբաղձ, քիչ մը տարաշխարհիկ, բայց լիովին բանաստեղծ։ Փառանյութաբաղձ, քիչ մը տարաշխարհիկ ռատենչիկ և ունայնասեր չէ՛ ինքը. անտարբեր ալ չէ անշուշտ փառքի ծաղիկներու հմայքին. բայց վերապահ է, որովհետև մշտախաղաց զարգացումին տենչը ունի, և իր երբեմնի ծաղիկները՝ իր աչքին այլևս թարմ-

շամած՝ կարեկից ժպիտ միայն բաժին կըստանան. և սակայն գուցե անիրավորեն անտարբեր կամ վերապահ. որովհետև մեզի համար անթոշ ու թարմ է, ինչ որ բանաստեղծը բարձրագույն հարացույցի մը հետապնդումին մեջ անպետ ու օթեկ մը նկատե։ Եվ ինչպե՞ս լքել մտքին երբեմնի սիրասուն զավակները՝ երբ մանավանդ Ջուրին պես ծիծղուն ու շնորհալի մանկուհիներ ըլլան անոնք.—

Ջուրն է ծիածան,
Ջանջիլ մը ջինջ,
Դիպակ մ'անհուն,
Փոփոխ ու ջինջ,

Հյուսված՝ ցիրցան
Ցոլքերով ջինջ.
Ջո՞ւրն է ծիածան,
Երիզ մ'է ջինջ։

Եվ լուսինկան,
Նո՞ր, ոսկեջինջ,
Շրթանըշան
Մ'է կախված՝ ջինջ
Ջուրին ծիածան։

Ծածանուտ այս տաղիկը՝ մթին ջուրերու վրա հանկարծորեն անդրադարձած լուսնային ճառագայթում մըն է, ջուրին խաղացքեն հալած, նրբերանգված. կամ մանտոլինի երաժշտության ժանեկահյուս երգյակ մը։

Եվ արդեն առավելապես նրբերանգությանց ու նրբաձայնությանց քերթողն է ինք, և իր հոգին անդրադարձությունը լուսնային ծիածանումի մը նրբակապույտ ու սաթի գույներուն. կամ զմայլագին խոնարհումի շարժուձև մը՝ լուսնային ջուրերու երազային ծփումին վրա.—

Եվ կամ մերթ հոգիս՝
Լուսնի ջուրերուն
Մեջ՝ ինչպես նարկիս՝
Կը նայի, զմայլուն՝...

Ի՞նչպես չթափանցվիլ այս զմայլանքեն, կարենալով դիմադրել գրեթե կանացի այս ձևքին փափուկ դյութանքին։

Այս բանաստեղծությունը պիտի կրնար նմանցվիլ անհունորեն թարմ, չքնաղ, գեղատեսիլ ծաղիկի մը՝ որուն բույրն ալ կ'երեվակայենք ու կըզգանք հեռուեն և որ սակայն քիչ մը կը տխրեցնե մեզ՝ վասնզի կը փորձե ու կը խաբե մեր հոտառությունը. բայց ո՞վ պիտի ժտեր պնդել թե բույրը միակ հմայքն է ծաղիկին։ Հետո, այս բանաստեղծությունը նրբության, բանաստեղծությունն է. քանզի երգիչին սիրտը, իր սիրելությանց ափին մեջ (իր իսկ գործածած նմանությամբ) մետաքսե թաշկինակ մըն է, փափուկ, մեղմածալ, թեք, տեղատու. և կամ իր բարբառը ցանկալի երաժշտության մը հոգիին մեջ երկարաձգված արձագանգը, կամ նույն

ինքն երաժշտության ընկերացող անանուն, բայց զգալի շրշյունն է, թելադրիչ, խաղաղածուփ. և իր վրձինը գրեթե աներևակայելի կերպով զանազանակ նրբերանգությանց ծորակ մըն է։ Իր գույները պոռոտ չեն՝ այլ նվաղուն. իր ձայները՝ շրշյուն, հծծյուն, մեղեդի։ Եվ ամբողջությունը կը նմանի քիչ մը, բայց քի՛չ մը իր երգած պերճուհիին՝ որ կ'անցնի,

Նոսր՝ ինչպես երազ,
Չքնաղ՝ ամպի պես,
Կ'անցնի՝ երկինքես
Միակերպ ու պարզ.
. . . . . .
. . . . . .

Բայց իր բանաստեղծությունը չըլլա որ շփոթվի անկշիռ թեթևությանց ու տարամերժորեն ձևապաշտ արտադրությանց հետ։ Իրա՛վ է, առաջին ընթերցումով լիազոր ներգործություններ չըներ ան, ու կը կարծվի անկապաշտ կամ ծայրահեղ խորհրդանշական մը ըլլալ. ասոր համար նորանշան անվանեցի զինքը. կ'ընդունիմ որ իր հոգին անցած ըլլա մանավանդ խորհրդանշական հոսանքի մը մեջեն, և այդ հոսանքին հետքերը կան իր մեջ, բայց երբեք մենամոլություններ կամ իրապաշտություններ։

Ինքը էապես խորհրդապաշտ մը չէ. անգիտակցորեն, թերևս. բայց ոչ թե դպրոցի մը հառելու միամիտ և ինքնուրաց կանխակալությամբ մը։ Ո՞վ ըսեր է արդեն թե բոլոր խորհրդանշականները արհամարհելի կամ հակակրելի են. կը հասկնամ որ գաղափարի և զգացումի կամ բառերու անհրապույր խավարարդումներու հերոս մը այպանելի նկատվի. բայց այս տիպարը, եսապաշտ, մենամոլ, ամուլ տիպարն է. Մալլարմենն է, կամ մեր մեջ, քիչ մը, Ինտրան ու Գոլանճյանն են։ Իսկ անդին կա թափանցիկ, գրավիչ ու մանավանդ թելադրիչ խորհրդանշականությունը՝ որ առողջ ու բեղմնավոր է։ Մեր բանաստեղծն ալ թերևս այս վերջին դասակարգեն է. իր նրբերանգությունները երբեմն աննշմար կ'անցնին. ու գիտենք թե շեշտ ձայներ ու աչքառու գույներ առաջին վայրկյանին իսկ գրավելու առավելությունը ունին, բայց ասոնք սեր մեջ տափակներու ծնունդ տված են։

Ըսել չեմ ուզեր թե առաջին վայրկյանեն իսկ գրավող բանաստեղծություններ տափակություններ միայն կրնան ըլլալ. ընդհակառակը միշտ նախընտրելի պիտի ըլլար վարակիչ գեղեցկության զգացում մը. բայց ի՞նչ ընել երբ գեղեցկությունները միշտ բացերև չեն կրնար ըլլալ։ Արվեստին մեծագույն դրդիչ գաղափարը դյուրամատույց ըլլալն է. և

հոս նոր բանաստեղծի մը ստվերոտությունները արդարացնել ջանալով, մթության և անհասկնալիության պաշտամունքին ջատագով հանդիսանալ չէր միտքս, ապահովաբար Լուսնին տակ երգերուն բանաստեղծն ալ պիտի չուզեր այս տեսակ ջատագովական մը. բայց մատչելի ընելու ըղձանքով չըլլա որ արվեստը ոչնչացնենք սահման մը կա՝ ուրկէ վար չի՛ կրնար իջնել գրագետը. թող ընթերցողը, եթե կ'ուզե, բարձրանա այդ աստիճանին ու ճաշակե գրագետին երկերը. բայց գրագետն ալ իր դիրքին հրապույրը ավելցնելու համար պետք չէ որ վերելակելու տենչեր ունենա և ասոր համար ստիպվի... գլխուն ծանրությունները պարպելու, օդապարիկի մը ըրածին պես։ Խնդիր է հիմակ թե մեր քնարահարը ուղված աստիճանին վրա՞ է. ես պիտի քսեի թե քիչ մը վեր է։ Ու պիտի չզարմանամ, եթե վաղը մյուս օր վճիտ, բյուրեղի պես թափանցիկ տաղեր արտադրե, ինչպես հզորագույն ու լայնազդեցիկ քերթություններ, ու այն ատեն, կարծեմ, ճշմարիտ աստիճանին վրա պիտի գտնվի ու հասած իր գաղափարականին՝ որ ամայության ու խավարին պաշտամունքը չէ։ Իր հրատարակելի նախապտուղ երկը ուրեմն, Լուսնին տակ երգեր, փոքրիկ, գրավիչ նրբերանգությանց գանձարան մըն է՝ որ պիտի սքանչացնե արվեստին սիրահարները ու բարեխառնե քիչ մը պոռոտագույն գեղեցկությանց տեսքով հղփացած ճաշակներու բթությունը։

Իր գեղորները, ինչպես ըսի արդեն, տարամերժ ձեռապաշտությանց արտադրություններ չեն, այդ պարագային՝ որքան ալ հորինվածքով արվեստագիտական՝ պիտի չկրնային հպանցիկ հմայքի ավելի բան մը ունենալ։ Լա՛վ գիտնանք սակայն թե բանաստեղծը ունայնափառություններով խայտացող մը չէ. իրեն արտահայտածները հոգեկան զգացումի մակերեսային նշուլանքներ չեն՝ վարդագույն մշուշներե թափանցված։ Իր նայվածքը գիտե խորերը սուզիլ, մինչև մայրական սիրտի ծովուն խորերը։ Ահավասիկ նմույշ մը իր Օրորեն՝ ուր մայրը իր սրտահատորին կ'ընծաերգե երեք գանձերու աղբյուր մը՝ ուրկե ծաղկավարս Կին մը կը խմե, գոհար Թռչնակի մը ապրշումե բույնը, ու փառահեղ Այգ մը. վերջավորությունը.

Երեք գանձ ունիմ,
քեզի՛ երեքն ալ...։
Հիմակ, լացիդ վրա,
Քունիդ եթերին
Շլացիկ ու ջերմին,
Թո՛ղ իմ երգս ըլլա

Սիրանի-Գոտին...։

Ու հետա պանդուխտի երգերը կան, գորովալիր, զգայազեղ. պանդխտավայրին առաջին իրիկունն է, երիտասարդը կ'ըսե.—

Երբոր ես այս իրիկուն
գոտիս քակեցի,
գրտա անոր մեջ թաքուն
ալունք մ'ու խեցի,
և գուզձ մ'ալ սին, բայց անհո՞ն,
— հուլինե՞ր կանացի,—
Երբոր ես այս իրիկուն
գոտիս քակեցի։

Իրա՛վ է այս երգերը ժողովրդային ինքնաբուխ պարզություններ չունին.—

Կարմիր վարդի նման բացվիս,
շուքդդ նստիմ, կանչեմ օրոր,
օրո՞ր, կապիմ գախօրան
ուռուն ոլկտին, ու շուքն ի վրան,
ցաքե պուտ պուտ արևն ի վրան.

Ջրրի՛կ, օ՞ր այնեն կու գաս
Դուն, պաղուկ ջրրիկ 'ւ անուշիկ.
Գիշեր ու ցորեկ կ'երթաս,
Քուն չունիս, անոր կու երթաս.
Քուն չունիս, անոր չի ունիս՝
Քու յարին պաշչան կու երթաս,

Դարձի՛ մըր պաշչան երթանք,
Վարդ ու նուշ ունիմ ջրրելու.
Վարդ ու նուշ ունիմ ջրրելու,
Ռեհանս է կունծ կապելու
Քաղեմ ու տեսնե անեմ,
Արմաղան անեմ խարիպես...»

Այլ սակայն գեղեցկություններ են՝ ուր մշակված միտքը խայտալով պիտի թառեր։

Այս բանաստեղծությունը երևակայել կու տա ինծի վերջալույսին խորը ընկղմած բլուրի մը կողքին վրա բարձրացող, նրբատաշ, գմբեթարդ շենք մը,— մեհյա՞ն թե տաճար. ո՞վ գիտե։ Շուրջանակի անտառներ ու մրգաստաններ կան. ծաղկանկար ածուներ ալ՝ դաշտավայրերուն մեջ. ծառաստաններուն մեջ թռչունի լիահագագ ճռվողումներ, նոր ծաղկած նշենիի ու սալորենիի բույրեր. վարը, հովիտին մեջ, հեղեղատին ձայնը, ուշացող հոտին աղաղակը։ Շենքին բակին մեջ բազմաձորակ աղբյուրներու շաչը, ու գրգացող տատրակի ու աղավնիի աղաչավոր հծծյուններ։ Կաթելի չէ՛ դիմադրել սրբենի ու հովվերգական կյանքի այս կախարդանքին. սիրանքով ու երկյուղածությամբ ներս կը մտնենք.

վերջալույսը տակավին կը դեղևի. գավիթին մեջ կ'ընդնշմարենք փափուկ, լուսաշող ձեռքի մը հրավիրակ շարժուձևը, հետո դեմք մը, ամբողջական հասակ մը. քո՞ւրմ մըն է, քահանա՞ մը. չենք գիտեր. որովհետև մթընշաղին մեջ դժվար պիտի ըլլար զանազանել թե զինքը պարածածկող շուրջառը քղամի՞դ մըն է արդյոք թե նափորտ մը։ Բայց ի՞նչ փույթ, կը հետևինք իրեն. դորշ, հետզհետե մութ, ու վերջապես գրեթե խավարչուտ նրբուղիներե կը տանի մեզ. քըչ մը երկար կը տևե գնացքը. կը դժամակինք ու վերադարձի հաստատ շարժուձև մը կ'ընենք. որովհետև մեր լայնաքթիթ աչքերը իրենց ծարավը հագեցնելու գրեթե ոչինչ կը գտնեն հուսադրական, պարապինդ մթություն. հանկարծ պատուհանիկի մը ծերպերեն նշուլանք մը կը վիտակի, հետո ուրիշ մը, ուրիշ մըն ալ։ Ու վերջապես ինքզինքնիս կը գտնենք դրան մը առջև, որ կը բացվի շենքի հետսակողմի պարտեզին վրա և լայնատարած դաշտերու, ճամբաներու, գրեթե հորիզոններու կ'իշխե։ Ամեն ինչ նոր է սակայն, նրբագայված, շարմաղված, անոսրացած. ձայները, բույրերը, լույսերը, ձևերը, ամե՛ն ինչ։ Կրզգանք անմիջապես թե մեր նայվածքին պարզվող տեսարանը գիշերասկիզբի տեսարան մըն է. ամենօրյա գիշերասկիզբներուն հարևնման, այլ սակայն անոնցմե տարբեր. առաջնորդող ձեռքին արժանիքն ու հրապույրը կա ուրեմն՝ տեսարանին վրա ցանցնված։ Ո՜րքան երախտապարտ ենք իրեն որ առաջին մարդու մը մանկականությամբ ու պարզությամբ հանդիսատես ըրավ մեզ տեսարանին, որ մեր գիտցածը չէր, հավիտենորեն կրկնված միօրինակ դանդաղությամբ. այլ կուսացած, քաղցր նորույթ մը՝ զոր ըմբոշխնելու հաճույքը պարգևեց մեզ՝ սիրելի՛ ձեռքը։

բացատքեն անդին, ճամբուն վրա բարակ,
իրիկվան ոսկի սեղանին դիմաց,
քահանա սոսին կ'ընե պատարագ,
մորչ շուրջառն ուսին՝ լույսերով բանված։

Նույն կուսությունը ունի այգն ալ՝ ուր հրեշտակները լույս նափորտ հագած այգուն դուռը կը բանան և

կու գան առնել իրը հաղորդ
լուսնին նշխարը մաքուր։

Լուսնին նշխա՞րը. այգուն դեմ, ճերմկոտած նշխարը լուսնին՝ որ կը սրբանա...

Վերջապես երբ կը բաժնվինք դյութական, նորատեսիլ երևույթեն, վերադարձին, նրբանցքին մեջ, արծաթյա դրան մը առջին, որ խորանի

երևույթ ունի, կը տեսնենք ռոնտելներու[2] կանթեղաշար մը՝ որ կ'աստղացոլա. ինչպե՞ս չնայիլ ուշադիր անոնցմե մեկուն.—

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

Ծովեն շատ անդին,
իրիկվան մեջ խոր,
շահապ գլուխին
լերան դարավոր՝

կը դնե արփին
բոց թագն իր բոսոր,
ծովեն շա՜տ անդին,
իրիկվան մեջ խոր։

Եվ այս մեծ տոնին
պայազա՜տ եկվոր՝
կատարնե՜րն են հին,
պարթև սոսն հզոր,
ծովեն շա՜տ անդին...։

Ու վերջապես, մի՛շտ հետևելով ձեռքին շարժումին՝ որ մեզ կ'առաջնորդե, կ'առանձնանանք խցիկի մը մեջ՝ որուն միակ մեծանիստ պատուհանեն լուսինը ներս կը նայի գորովագին, ու կ'առնե կը տանի մեզ տիեզերքին մեջ պտտցնել. ու վայրկյանե վայրկյան դիցըմպելիի կալյակներ կամ լեղի շիթեր կը ցողե մեր ծարավ հոգիին. լեղի՞ն. չհասկըցվիլը, համակերպիկ վշտակրությունը, լքումը.—

Ո՞վ մոռացավ, ավա՜ղ,
այս ծաղկեփունջը, թոշնած, քայքայված,
հոս, թմբին տակ...
Եվ ինչո՞ւ այսքան թուղթի կտորվանք...

Ինչպես լավագույն կերպով կարելի ըլլար անձնացնել լքումին գաղափարը՝ որ մտատանջ ու խորհրդավոր կը դառնա սա երկտողով.

Ա՜հ, այս զանգակն ալ ի՞նչ է,
որ այս ժամուն կը հնչե...

Ուրեմն այս եթերահյուս կուսաթելերու բանվածքը, իր երազը՝ զոր մեզի տվավ, երևութական ոսկեցոլ փաղփի մը տակ մթին գաղափարի մը խոցտուկը ունի. պետք պիտի ըլլար ուրեմն խորը սուզվիլ իր հոգիին.—

Ինչպե՜ս պիտի ուզեի
որ նայեին, ուշադիր,
հանդարտության ծովուն խորերը թաքնած
տենչանքիս բուստը կարմիր։

Տենչա՞նքը, ուրեմն հոգը. հո՞գը, ուրեմն երջանիկ երազի մը ոսկի բաղձանքը. ուրեմն մշտանույն հաջորդությունը հառաչին ու ծիծաղին. Կյան-

քը։ Անոր համար է որ իր քերթությունը արշնաթույր ագռավի թեռ-բախում մը չէ հարաժամ, այլ մերթ սպիտակ լայնաթև ճայի մը ճշմար-տապես խայտացուցիչ վերթևումները ունի, որ երբեմնի տխրության վրա ոսկի կապույտ քող մը կը քաշեն,

Օ՜, ջահերը վառեր են,
— օվսաննա՜, լույսնե՜ր,
օ՜, ջահերը վառեր են,
իրենց կարմիր ալեկուն եռ կը լրսեմ հեռուեն.
տո՜ն է այս գիշեր։

Ուրիշ մը.

Ահա՜ լճակը լուսին,
ահա սարսուռն իր վճիտ.
ահա աստղերն ու իրենց ձայնը, շիթ շիթ,

ահա լճակը լուսին,
ուր համբարուներ կ'երգեն միասին։

Իր սերը կիսովին համարձակված, խպնոտ ու սրբահույզ սեր մըն է. բաղձախտավոր քաղքենի առհավական ըղձանք մը՝ անձևազեղծ, նախ-նական կյանքի հովվերգականության համար. տրիփի գրկաբացումներ, կամ ցնորատենչիկ, շարշարող վայրկյաններ չունի. վազող ջուրին պես պարզ է ու համեստ՝ մորչ մարմանդին վրա հեղորեն ընկողմանած գառ-նուկի մը պես. շիկնոտ սեր մըն է՝ որ կ'ընծայվի։

Վայրկյանի մը մեջ ամոթի և իղձի։

Իր նվագը լուսնագիշերի հեշտերգություն մըն է, և լուսնային ճա-ռագայթի քուղեր են որ կը թելթելին իր երգերուն ցանցին վրա։

Նվագարանը քնար մը չէ, ո՜չ ալ տավիղ, ջութակ, ո՜չ մեկ ուրիշ բան։ Նեյի խորհրդամած, երկյուղավոր, փափկաձայն սլվլյուններ, մանտոլինի նրբագայտ, վճիտ կայլակիկներ, սրինգի ոգեկոչող շեշտեր՝ որոնք դաշ-տային ու հովվական տեսարաններ կը մանրանկարեն, ջութակի դող-դոչուն գիծեր, ու լարանվագի փափկատրոփ հծծյուններ. ասոնց հա-մադրությունն է Լուսնին տակ երգերու արվեստականին նվագարանը։

Լուսնին տակ երգերու վերջընթեր նվագը, Ձյունը՝ սխրալի քնար-երգություն մըն է. ձյունին սպիտակախաղաղ գաղափարը անսահման ուրախության ծաղկում մը կ'ըլլա քերթողին համար.

Հո՜, երբեկ գիշեր ձյունը ծածկեր է,
— ի՜նչ ուրախություն, ի՜նչ ուրախություն,—
ձյունը ծածկե՜ր է՝
իմ հորանջող ձանձրությիս,
իմ վհատության դաշտերը տղմուտ։

ու պանծալի վայրկյան մը՝ սա անձնուրաց ու խելահեղ կոչը կը խլե իր կուրծքեն, իր սուգին անզավակումը.—

Ձէ՛, անիկա որիներու պես հիմակ,
պիտի չփորե
Ներդաշնակությունեն այս լույս ու ճերմակ։

Վասնզի ի՞նչ կրնա ըլլալ իր սուգը այս լայնանիստ բովանդակին մեջ՝ որ տիեզերքն է կամ այլուրը. ի՜նչ փանաքի բան. ու նախ, վասնզի ինքն ալ պետք ունի լիալիր ուրախության մը՝ որ իրեն համար ձյունախաղաղ համանկարին ճերմակ գաղափարին հետ կը նույնանա.—

և ասիկա ճերմակ տո՜ն է իղձերուս,
և ասիկա բոլոր հարսնիքս է իմ կույս։

ի՜նչ գորովանք ու սքանչելություն.—

և ահա՜ շորս դին, բուռ բուռ,
պրիտակ, գանակ, ոգամանդ,
մաքրիտ ու սարսուռ...

Իսկ վերջին նվագը ներույժ ու ոգբական ավաշներ, երազամալ, հրուտ խանդավառություններ ունի։ Ամայի վերջալույս մը. դաշտերու վրայեն շարագուշակ ստվեր մը կ'անցնի. առկայծող ճրագի վերջին լիալիր ցոլ-քը ունի մթնշաղը։ Այս շրջանակին մեջ քերթողը կը ճանչնա իր հին երազները, խայտանքները, իր Հոգին՝ «անշրպետին մեջ ցրվուն». ու կ'արծարծի այդ հոգին խնկամանը, իր հին երազները, բաղձանքները, հույզերը՝ կրակ կ'ելլան, ատաշիս կ'ելլան, եթեր կ'ելլան. ու՝

խնկամանը կը տոնվառի, խնկամանը կ'արծարծի,
. . . . . .
եղբայրորեն, կարեկցորեն, քաղցրորեն.
. . . . . .
փասեզի այս խրիկուն նախատոնա՜կ է...

Իր վերհուշությանց նախատոնա՜կը. և ի՞նչ գրգալի անուրջ է, որ կը ծորի այդ հանդիսությենեն.—

Արդ, խոհերուս ծաղկավետ ոստերուն վրա,
ա՜հ, ըղձալի աղավնեկի փափկությամբ,
հիշատակ մը, ա՜յնքան մեղմ, ա՜յնքան աղու,
կու գա մեկեն կը թառի...

Եվ աղավնեկը կը կարկաչե, հին հին բաներ կը պատմե, ու վերջապես,

իր խոսքն ավարտած,
քիվի մը տակ կը ծածկվի, նիրհելու...

Հոս վերջ կը դնե, կամ սկիզբ կ'առնե, սրտի վիպերգությունը Վահրամ Թաթուլ բանաստեղծին...

<1907, ապրիլ>

1907

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՑՈՒՆՔ

Ո՜րքան շնորհապարտ եմ Ենովք Արմենին, որ իր գրական նկնդության մեջ տիտանի շարժուձև մը կը փորձե՝ օձիքս ի վեր ցատկել ուզելով։

...Ի՞նչ տեսակ բան է արդյոք այդ կապույտ հածումը. կրնան նկարագրել։ Կրնա՞ նույնինքն նկարագրել անոր հեղինակը։ Անիմաստ սենպոլիսմի [մը] նմանողական գայթումներն են մեկ քանի բանաստեղծներու փորձած այս մոլար կապկությունները...

Այսպես կը ծանոթագրե Ենովք Արմեն Մասիսի 28—29 թիվին մեջ հրատարակված Ջյոկյուրյանի գրախոսության տակ, զոր ուզածին պես կրճատեր է Մասիսի խմբագիրը՝ հավասար հարգանք ցույց տալով «գրողին իրավունք»ին ու տող մը իսկ չջնջելու մասին իր ըրած խոստումին։ Այսպես կը ծանոթագրե՝ ու առաջին անգամեն, առանց ոստումի ինքզինքը անտաշության շրջանակի մը մեջ կը դնե, մոլար կապկություն անվանելով բաներ՝ որ իր մտքին անձուկ պարունակին մեջ չամփոփվելուն միակ ու մեծ հանցանքը ունեցեր են։ Բայց ըսի արդեն թե շնորհապարտ կ'ընեն զիս Ենովք Արմենի արիական շարժումն ու համարձակությունը՝ որոնք առիթ կու տան ինծի գրականության անունով գործված կարգ մը պղծության դեմ ձայն բարձրացնելու։

Գանք ուրեմն կապույտ հածումներու մասին ըրած իր դիտողության՝ զոր պարզամիտ բարձրահոնությամբ գուցե անառարկելի կը կարծե։ Ենովք Արմեն սապես տրամաբանեց անշուշտ (կ'ենթադրեմ, քանի որ ինք հայտնապես տրամաբանելու քաջությունը չունեցավ). հածում=պտույտ, դեգերում, աննյութական, անտեսանելի բան մըն է՝ հետևաբար կապույտ չի կրնար ըլլալ։ Ջքնա՜ղ է տրամաբանությունը Ենովք Արմենին՝ զոր իր քննախույզի և ուրիշ գրական հավակնությանց մեջ բևեռելու միտողներ ալ պիտի ըլլային՝ որպեսզի կատարյալ ըլլար մեր գրական ողբալի հիքությունը։ Ենովք Արմեն թող ուզե կարդալ ու հասկնալ պզտիկ արտագրումները զոր պիտի ընեմ «Կապույտ Հածումներ» խորագրով ոտանավորես. նախ ըսեմ թե կապույտ հածում ըսելով կը հասկնամ կապույտներու մեջ հածում. ու հետո պետք է գիտնա թե այս պարագային հածումը կապույտե տարբեր չի կրնար ըլլալ, քանի որ օդը ինքնին կապույտ է։ Իսկ եթե անբավական կը թվի իրեն այս բացատրությունը, ինչպես ըսի, թող ուզե հասկնալ հիշված ոտանավորին հետևյալ տողերը.

Հապո՜ն, անցի՜ր, ծրծե՛ հեշտին համբույրն անույշ «լելակներուն»
Ու թևաբախ սուրա հոն ուր զույգ մը դաշտեր «բիլ» սմբուլի
Քեզ կրսպասեն՝...
Խորասուզե ծոպդ ոսկեզօծ՝ ծովածիծաղ ու թրթռուն
Քընարին «բիլ» նայվածքներուն ծփծփանքին մեջ հորդազեղ.

Եվ որպեսզի չգայթի Ենովք Արմեն, հոս անմիջապես ըսել պետք պիտի ըլլար, թե լելակը սովորական մանիշակագույնեն զատ կրնար ըլլալ նաև ճերմակ, կարմրորակ, կապտորակ։

Հոս տեղն է նկատելու որ եթե Ենովք Արմեն քիչ մը թափանցամիտ ըլլար ու պզտիկ հասկացողություն մը ունենար բանաստեղծության, փոխանակ կապույտ հածումին ծուղակը իյնալու, պիտի կրնար որոշակի դիտել թե այս ոտանավորը շատ ծանրաբեռնված է և հորդառատ բառերով կը քողածածկե բնականին ու պարզին վճիտ զգացողությունը։ Եվ այն ատեն մատնանիշ ըրած պիտի ըլլար իրական ու խոշոր թերություն մը՝ որ ընդհանրական է մեր բանաստեղծներուն համար։ Բայց Ենովք Արմեն անտեղերը չէ։ Հետաքրքրական ու հոգեբանական պիտի ըլլար եթե ուզեր ամբողջական գրախոսություն մը ընել «Ծիածան»ին վրա և այն ատեն անշուշտ դուրս կու գար բովանդակ խեղճությունը իր գրագետ-հասկացողության և անգեղագետ մտքին։ «Ծիածան»ը չնաշխարհիկ բան մը նկատելու չափ շլամիտ չեմ. ես իմ բոլոր գրախոսներես ավելի հստակորեն տեսնել կը կարծեմ անոր թերությունները, բայց թե-

rությունները՝ որոնց հրապարակային մատնանշումին՝ առիթը կ'ունենամ հարկավ։

Տակավին պահեստի դիտողություն մըն ալ ունի Ենովք Արմեն. «Արևին» բանաստեղծության մեջ սա երկտողը կա.

Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ
Մանուկներն ընդարմացած.

Այս տողերն ալ հպելով իր խտրոցին, Ենովք Արմեն պիտի գոչեր. «Ի՞նչ, հոգիին մեջ մանուկ կրնա՞ ըլլալ»։ Որովհետև Ենովք Արմենի միտքը ընդհանրապես գրականության ու մասնավորապես բանաստեղծության անընդունակ միտք մըն է։ Ու չի կրնար իմաստի զգտիկ կըրճատումները լայնել ու հասկնալ անմիջապես, թե, օրինակի համար, մանուկը ամփոփ փոխաբերությունն է հոս մանուկ զգացումներուն, տենչերուն, հույսերուն, բաղձանքներուն՝ որոնք երկար ատեն ընդարմացած՝ արևին կենսաբաշխ ճառագայթներուն պետք ունին վերսթափելու համար։ Ի՞նչ դժբախտություն պիտի ըլլար եթե բոլոր հասկացողությունները Ենովք Արմենին պես անձկանային. այն ատեն հարկ պիտի ըլլար մեր գրական հսկային՝ Նարեկացիին փոխաբերություններուն ալ դատավճիռը կարդալ («բուրվառ կենաց», «մանգաղ կամաց», «անկողին կամաց»)։

Ենովք Արմեն կ'ուզե անպատճառ ismeի մտակույր ու պանդույր տարփող մը գտնել իմ մեջս, մանավանդ բառամոլ խորհրդանշական մը, ծիծաղելի կապկող մը։ Եվ որովհետև սկիզբեն ի վեր գրեթե բնազդաբար, և հիմակ բացորոշակի, իմ գրական մեծագույն մտահոգությունս եղած է դպրոցի անճահ պիտակումներուն հիմարական հետավարող մը չըլլալ և խուսափիլ արտաքին ազդեցությանց նվաստացուցիչ դրոշմեն, մեկ խոսքով կարելի եղածին չափ ինքզինքս ըլլալ՝ ուժգնորեն կ'ընդվզիմ Ենովք Արմենի այդ անմտած վերագրության դեմ։ Ու բարբառուն ապացույց մը տալու համար թե սենպոլիսմը կրնա ստացական չըլլալ՝ դարձյալ մեջ կը բերեմ պանծալի Նարեկացիին օրինակը։

Պզտիկ հետախուզություն մըն ալ՝ որ երևան պիտի բերե Ենովք Արմենին ըմբռնումը՝ արվեստագետ բառին մասին։ Մինչ մեկ կողմեն Ենովք Արմեն զիս կապկող կը կոչե, մյուս կողմեն Պարսամյանը կը դավանի «արվեստագետ մը՝ որուն քնարը կորովի շեշտը ունի հուզիչ զգայությունների»։ Պարսամյան նոր սեռ մը փորձած ըլլալ կը կարծե, աստվածաշնչական կարգ մը անցքեր իր կաթոտ զգացումներով մակարդալով։ Ունինք իր վերջին ոտանավորը (Մասիս, թիվ 28—29), «Դալիլա», որ շարափոխումն է Աստվածաշունչին մեծավայելուչ պարզությամբ ու հանդարտ խաղացքով վիպերգության։ Հետաքրքրական պիտի ըլլար բաղդատությունը՝ ուր երևան պիտի գա գրականեն զատ լեզվական պղծագործությունն ալ՝ զոր կ'ընե Պարսամյան իր կոշկոռ կապած հայերենով։

Աստվածաշունչինը.—

...«եւ եղեւ յետ այսորիկ սիրեաց կին մի առ եզերբ ճեղեղատին Սորեկայ, և անուն նորա Դալիլա» (Դատաւորք, ԺԶ. 4)։

«...եւ նստեցոյց զնա ի մէջ ծնգաց իւրոց. և կոչեաց վարսավիրայ, և եզերեալ զեօթանասին գիսակս գլխոյ նորա. եւ սկսաւ թօշնել, եւ մեկնեցաւ ի նմանէ զօրութիւն նորա...» (նույն՝ 19)։

Պարսամյանինը.—

Դալիլայի գիրկին մեջ՝ իր գլուխը ընկլուզած՝
Սամսոն՝ կիրքին մեղապարտ արբշռությունովը մըթին,
Կը փայփայվեր Սորեկի հեղեղատի նայադին
Թունավորիչ, տոփանուտ զգվանքներեն հեշտախանձ։
. . . . . .
Գլխուն վրա մկրա՞տն է որ կը շարժի մեղմորեն...

* * *

Այս բաղդատությենեն դուրս դիտելի կետ մը կա, որ ամբողջ ոտանավորը ոչինչով կը տարբերի ձանձրալի արձակե մը։ Երրորդ տունին մեջ ընթերցողը կը փոխադրվի վայր մը՝ որ դաբիրան է Պարսամյանի սովորական ծանոթ զգացումներուն.

Ձանկապանը հարդարեց՝ շարժումով մը պչրավար,
Լերդ շառայլը ցույց տալով այդ կանացի երիզին,
Ուր ալիքի պես վետ վետ ժանյակներու մեջ նրբին,
Մարմնին ճերմակն ավելի շուշանաթույր կ'երևար։

Ի՞նչ է այդ երիզը. զանկապանը կանացի գուլպայե տարբեր նշանակությո՞ւն մըն ալ ունի արդյոք՝ ինծի անծանոթ։ Ո՞ւֆ, սա ժանյակը՝ որուն մեծաքանակ վաճառողն է Պարսամյան՝ որ փութաց մասնաճյուղ մըն ալ բանալ վերջերս... Դերերը որքա՞ն կը շրջվին երբեմն բանաստեղծը՝ որ ամեն գեղեցիկ բան սիրցնելու պաշտոն ունի, ատել կու տա երբեմն իր երգած իրերը. այսպես չէ՞ր որ մեր նախորդ սերունդին բանաստեղծները սրբապղծեցին ու ատելի դարձուցին «սոխակ»ը, «առվակը»ը ևն. և այսպեսով չէ՞ որ Պարսամյան ալ խեղդամահ ընել կը նկրտի ժանյակն ու իր նմանները...

Ու մտածել թե արվեստագետ կը կոչվի մեկը, որ ժողովրդային մեկ քանի զուլալ սիրերգներ իր աղավաղ զգացումներով պղտորելե վերջ՝ նույն բանը կը փորձե նաև աստվածաշնչական դեպքերու համար։ Ո՛վ արվեստագիտություն... (հետաքրքիր էի իմանալ թե Ենովք Արմեն արվեստագետ ըսելով հանգի ու ոտքի սովորական ինքնաշարժ մեքենայե տարբեր բան մը կ'ըմբռնե՞)։

Տեսնենք նախ թե ի՞նչ կ'ըմբռնե Ենովք Արմեն գեղարվեստ բառով։ Երբ Ենովք Արմենի փափաքով (այն ատեն երևի մոլար կապկող մը չէի) հոժարեցա «Մասիս»ի Մատենադարանին մեջ հրատարակել Միածանը՝ այս վերջինին կցվելու համար ազդ մը խմբագրեց «Մասիս»ի խմբագիրը. այս ազդեն մաս մը կ'արտագրեմ, իբրև նմույշ հեղինակին լեզվական գեղարվեստին.—

...Հիմնած ենք «Մասիս»ի Մատենադարանը», որուն լույս կ'ընծայենք ԱՌԱՋԻՆ հատորը, Միածան, իբր սկզբնավորություն Մատենադարանի շարքին։

Ես չկրցա հանդուրժել այս ճոզած հայերենով ազդին՝ զոր Ենովք Արմեն կ'ուզեր անպատճառ զետեղել գրքին ճակատը. հառաջաբանեն իսկ առաջ։ Որուն լույս կ'ընծայենք առաջին հատորը (dont nous publions le prémier volume). ահա՛վասիկ, ո՛ւր պետք է փնտռել մոլար կապկությունը. հայերեն մը՝ որ իսկենիսկ ֆրանսերենին վրա ձևված ըլլա։ Գալով իբր սկզբնավորություն, կամ անհարկի կրկնությունն է ան առաջինին արդեն բացատրած իմաստին, կամ կը նշանակե թե Միածանի միակ արժանիքն էր Մատենադարանին իբր սկզբնավորություն ծառայելը. բայց քանի որ Ենովք Արմեն անձնապես ժխտած է այս վերջին մեկնությունը, կը հաստատվի առաջին դիտողությունը։ Եվ այս ազդն է որ Ենովք Արմենի գրչին տակ գեղարվեստական խնդիր դարձած է[2]։ Ո՛վ գեղարվեստ։

Ենովք Արմենի լեզվին մեջ կը վխտան այս կարգի մոլար կապկություններ ու սխալներ՝ զորս ամեն հետաքրքիր կրնա որսալ լիաբուռն։ Ենովք Արմեն ուրիշ շատերու պես լեզվին մտահոգությունը չունի, գրաբարը կ'արհամարհե անպայման։ Գրաբարի մոլեռանդության, կամ գրաբար ու գրաբարախառն գրելու ցնորքին չափ հիմարական է կարծել թե աշխարհաբարը եղած լմնցած, ինքնուրույն, կազմված նկարագրով լեզու մըն է։ Ու մանավանդ, անգամ մըն ալ կրկնեմ, մոլար կապկություն է զայն եվրոպական լեզուներու վրա ձևելը. օգտվենք եվրոպական լեզուներու նորանոր ու թարմ արտահայտություններեն. բայց չմոռնանք գրաբարին հուռթի շտեմարաններեն օգտվիլ մանավանդ։ Ինչո՞ւ մեր հացը գետին ձգենք ու մուրացիկ՝ ուրիշին ետևեն վազենք...

Կրնա առարկվիլ թե ի՞նչ հարկ կար այս որակներով ա՛յսքան զբաղելու։ Բայց այս պղծագործությունները նվիրագործություն սեպվելու հավակնությունը ունին. ու մեղապարտ ու ցասուցիչ ա՛յսքան լռություններե վերջ, պետք էր որ հանուն գրականության և հանուն ցեղին լեզվական արժանապատվության ձայն մը բարձրանար գոնե...։

***

Իսկ Տիգրան Չյոկյուրյան պարզապես հուսահատեցուցիչ է։ Անիկա ազդեցություններ նշմարել կ'ուզե իմ մեջս Պարսամյանեն, Հարությունյանեն, Մալեզյանեն, Զրաքյանեն։ Ի՞նչպես կրնայի ազդված ըլլալ ես Պարսամյանի կնատ ու ճակաճան ու սամսարող բանաստեղծությենեն. ես՝ որ նույնինքն Չյոկյուրյանի բառերով «գավառացիի կատարյալ ավիշը ունիմ» ու բնության սերը. այս տեսակ ազդեցության մը տոկալե ավելի պիտի ուզեի յոթը անգամ գրիչս կոտրտել։ «Պարսամյանին երջանիկ բառերովը օծած է բանաստեղծը իր գործը» կ'ըսե Չյոկյուրյան. բայց երբե՞ն ի վեր բառերը սեպհականություններ են կամ մենաշնորհ։ Շնորհակալության պզտիկ պարտք մը ունինք անոնց՝ որոնք գործածությենե ինկած գեղեցիկ բառեր կը վերակենդանացնեն. բայց Պարսամյան այդ շնորհակալիքին ալ իրավունք չունի, քանի որ Սիպիլեն[3] փոխ առած է իր հաճախակի գործածած բառերը կարծելով որ անոնք, կնոջական անունի մը[4] միացած՝ պիտի կարենային հրապուրել արժանիքի առնացի աստվածությունը՝ որ ավա՜ղ... Իսկ եթե վերնագիրներս Հարությունյանե փոխ առած եմ, ծիծաղելիե ավելի բան մըն է կարծեմ մանավանդ նույն ինքն Հարությունյանի աչքին։ Ենթադրենք նույն իսկ որ անմտադիր կերպով Հարությունյանեն փոխ առած ըլլամ վերնագիրներես մեկ քանին (հավանորեն, չե՛մ գիտեր). ի՞նչ կշիռ ունի ասիկա։ Բոլոր գրականությանց մեջ ալ չկա՞ն միթե նույն մակագրությամբ անհամար գրություններ ու գիրքեր ալ. ի՞նչ կը պակսեցնե այս նույնությունը ներքին իսկական արժանիքին։ Ի՞նչ ողբալի կերպով բառերու հետ խաղացողներ ենք։ «Տապի Նոպաներ» վերնագրության ծիծաղելի նկատվիլը բազմապատիկ ծիծաղելի, հաճոյական և զբոսեցուցիչ թվեցավ ինծի։ Ի՞նչ ավելի արտահայտիչ ու բնական ու բանաստեղծական քան համագրավ տապի մը պահուն՝ բնության նոպայե բռնված նկատվիլը։ Բայց ի՞նչ հարկ ասանկ նուրբ դիտողությանց, քանի որ Չյոկյուրյան կ'ուզե որ «Տապի Նոպաներ» ոտանավորիս իբր վերնագիր փոխի «Հունիսի Արեվը» մակագիրը՝ ծանրաբեռն ու վաստակաբեկ գրաստի մը պես... Զանց կ'ընեմ մյուս վերնագիրներուն համար եղած դի-

տողությունները՝ որոնք ինքնին կը չեզոքանան ուշադիր ընթերցումներ վերջ։ «Ցնորոտ Անդորրություններ»։ «Անդորրություն մը որ ցնորոտ կ'ըլլա, տարօրինա՞կ բան» կը գոչե Զյոկյուրյան։ Այո՛, անդորրություն մը որ ցնորական կ'ըլլա, առանց տարօրինակ ըլլալու։ Հայտնի կ'երևա թե Զյոկյուրյան հանդիսատես չէ՛ եղած, կամ չէ՛ անդրադարձած մեծ լռություններու և անդորրությանց, ծովափը սարավանդի մը վրա, կամ դաշտերուն մեջ՝ լեռներուն դրացի, գիշերվան լուսախաղաղ համանկարին վրա իշխող անդորրությանց ու լռություններու՝ որոնք գլխու պտույտ կու տան։ Զյումբյութը քանիցս գործածած եմ դալարիքի համար. Զյոկյուրյան ձանձրալի կը գտնե այս վերադիրը, թե ի՛նչպես, ինք միայն կրնա գիտնալ։ Ապրշումե երազներուն համար եղած դիտողության չեմ պատասխաններ, իրմե չկորզելու համար սրամտություն մը ըրած ըլլալու վայելքը։ Դիտել կու տամ թե սատափին գույնը ո՛չ թե գորշ սպիտակ դեղնություն է, այլ գորշ սպիտակ հատակի վրա ծիրանի ու կապտերակ երանգներու ցոլք մը։ Եվ ի՞նչ արտահայտիչ է լուսնաժամին նախընթաց գորշ սպիտակ պայծառության մը պես վերջալուսային հետամնաց ծիրանի երանգներուն ու մշշական կապույտ երակավորումներուն համար՝ քան սատափի ծիածանումը։

Զյոկյուրյան կը քերե «Միածան»ի ճշմարիտ թերության եզերքը, երբ կը հակադրե իմ մեջս իրական ավիշով գավառացին ու քաղքենի ազդեցությանց նշավակ պոլսաբնակը՝ որ «Սոնադին»ը արտադրած է։ Բայց կը քերե մինակ եզերքը ու չի կրնար ցամաք նետել երկաթ ճապուռը և հաստատուն գետնի վրա գտնել ինքզինքը, որովհետև մակերեսային դիտողությանց հոսանք մը դարձյալ կը վարե իր մակույկը։

Զյոկյուրյան Միածանի մեջ զգացումներուն բնագեղ տեսարաններով շրջանակված ըլլալը ստգտանք մը սեպել կ'ուզե։ Բայց ինչո՞ւ զգացումները երաշտ անապատներու մեջ տարագրել, ինչո՞ւ մոռնալ մարդուն ու բնության անմիջական հաղորդությունը, ինչո՞ւ խզել այդ կապերը՝ փոխանակ ամրապնդելու զանոնք։ Զգացումներն ու տեսարանները զուգորդելը չէ թե անկատարություն կամ անկապակցություն է, այլ ընդհակառակը՝ կատարելության ձգտում մըն է, իրերուն ու մարդուն հարաբերությանց կապակից կցորդության համար եղած ջանք մըն է։ Եվ Միածանի միակ արժանիքը այս ձգտումն ու ջանքը կը ներկայացնեն։

Իսկ Զրաքյանի հետևած ըլլալու վերագրությունը անճահ լոդիկի մը պես վրայես կը նետեմ։ Հղացման ընդօրինակություն ըսելով Զյոկյուրյան հավանորեն ակնարկել կ'ուզե Կիրակմուտքը որ Ներաշխարհեն ամիսներ առաջ տպված էր արդեն Մասիսի մեջ։ Եվ արմատաքի ու ի

ոգաա ջնջելու համար Ներաշխարհի ազդեցության անհետեթ կասկածը, ըսեմ թե Միածանի հրատարակության ձեռնարկը Ինտրայի հատորին հրապարակումեն վեց ամիս առաջ եղած էր արդեն։ Եվ անկե վերջ գրիչ դպած չէ Միածանին, փորձի սրբագրության պահուն կարգ մը ոտանավորներու արտահանումեն զատ։

Անգա՛մ մըն ալ շնորհապարտությունս կը հայտնեմ Ենովք Արմենին։ Գալով Զյոկյուրյանին կը ցավիմ, որ շատ թեթևորեն ըմբռնած է քննադատությունը։ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈ՞ՒՆԸ...

1908

ՆԱՐԵԿԱՑԻԻՆ ՀԵՏ

Խուցիս ճերմակ վարագույրները կը սարսռան. գետընթաց հո՞վն է դարձյալ որ ապակիները կ'ալեկոծե ու կը փռվի մինչև բաղձանքիս ավազներուն վրա։

Հո՞վն է դարձյալ. խուցիս աշունը՝ դեղին ու կարմրակ տերևի անդրադարձ խոշոր կայլակներով արցունքոտած՝ իղձի ու թախծության ամպոտ վայրկյանի մը մեջ՝ կրսպասե աղոթքին։ Նախնականության բաղձանք մը՝ երկյուղով մակարդված, առհավության հեռալուր ձայն մը՝ կարծես հովին արհավրոտ ձայնին ընդխառնված՝ հետո անկե տարանջատ՝ կը կոթողվի մեկեն հոգիիս մեջ։ Ու բոլոր ուրվագիրներուն ու պատկերներուն մեջեն, որոնք անոր շրջանը կ'ընեն հիմակ, բոցով շրջանակված դիմագիծ մը, հայեցողի միստիք, մշուշոտ, աղոթավոր ելևդանագիր մը կ'որոշագծվի հոն մինչև ճակատին ակոսները՝ զորս Մեղքի գաղափարին արորն է քաշած. մինչև աղերսարկու աչքերուն թախծոտ նայվածքը՝ աստվածյան հուրով մը տոգորված. ու մինչև շուրթերուն աղոթկեր երերումն ալ։ Նարեկացի՞ն է. սրբության իղձին կրաէովը վառված անշեջ մորենին[1], մեծ աղոթասաց բանաստեղծը՝ որ կը հառաչե.

«Մատուցեալ եդեալ 'ի ճառ թախծութեան անձին տոչորման՝ զպատուղ բղձից ճեռեռոյ սասանեալ մտացս, բուրվառաս կամացս առաքել առ քեզ...»

Հո՞վն է գարձյալ. և անոր հետքին հետ, իրար բաղխող ձայներու մակընթացության մեջեն՝ անտես ու զգալի Աստվածն է որ կ'անցնի, և

հոգին կը տարվի հորձանքներեն, երկյուղի խորանին առջև իր աղոթքը աղաղակելու.

«Ընկալ քաղցրութե՛ամբ, Տէր Աստուած, ճգոր, զդառնացողիս զաղաչանս... բացադրեա, վերնային, զմոլելոյն մառախուղ... պարփակեա զն ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա զն արեամբդ զմուտ սեմոց սենեկիս... Տուր ճանգիստ բերկրութեան մանանանգոյնս նիրճման...»

Որքա՜ն քաղցր պիտի ըլլար այս ամպամած գիշերուտ տիվին մեջեն ընդնշմարել հանկարծ կապույտ բարութիւնը՝ որ ճառագայթով մը ժպտեր շոգիի սրահակներուն մեկ ծերպեն՝ և աղերսագին կանչե՛ր.

«Պաղատիմ առ զեզ լուսոյ ճառագայթ...»

Բայց, ահա՛ ճառագայթն է. «ամենափայլ ճառագայթը», «խոստովանեալ լոյսը», «արփիացնցուղ ցօղը», «տօնելի խոնարհութիւնը», «փրկական համբոյրն» է այդ ոսկեթել նուրբ շառայլը՝ որ կը սահի հոգիին խորը՝ քայքայված երազներու տրցակը ժապավինելու։

***

Նարեկը ալեկոծություն մըն է. հոգեկան վրդով մրրիկ մը և ալեկոծություն մը՝ ուր բառերն ու կշռությունները ալիքներու բաղխումին չափակցությունը՝ անոնց ինքնակործան շաչումները՝ անոնց իրարահալած խաղացքն ու անկումները ունին։

Եվ այս ալեկոծություններուն մեջ, հորձանքներու ափը ինկած պըզտիկ նավակ մը կա՝ զոր կոհակները ոչինչի մը պես ձեռքե ձեռք կը նետեն, մինչև խորտակում.

«... Ուստի նաւն 'ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ»:

Հոս պատկերի խիստ ու նկարչական ճշգրտություն մը կա, իր մանրամասնություններուն ու ամբողջական ներկայացումին մեջ ալ՝ այնքան հուժկու և իրախնդիր՝ որ նմանությունը հրաշալի կերպով կ'անձնացնե.

«Թևոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման 'ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին թոչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ, շինուածոյն շուք անզարդեցաւ, առասանք ձգողականացն խզեցաւ, տեսարան գլխոյն դիտակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան՝ կտրեցաւ, ապաւինութիւն խարսխին լուծաւ... սամիք ուղղացն ճեռոց գալարեցան..., դեկացն կառուցմունք անդրէն սուզան..., գոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան, խելք շրթանցն եզերաց խախտեալ ոստեաւ...»:

Բայց դեռ չէ՛ վերջացած նկարագրությունը այս նավաբեկության. հապա նավուղիղին անձկությո՛ւնը.

«Նաւուղիղն ճանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն 'ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջեցուցանէ»:

Եվ հուսկ ապա խլյակներու թախծագին երերումը ջուրերուն վրա...

«Նշմարք սակաւ մնացուածոցն՝ 'ի ծայրից ծփմանց ազդելոյ ծովուն, իբր խողխողեալ բանաւոր, ողորմագին բախծանօք հեծէ»:

Նմանությունը հոս կը վերջանա՝ բայց անդին հոգեկան վերականգնումին հույսը կա՝ թեև քիչ մը երկվական՝ ինչպես ճառագայթ մը մշուշի մեջ նշուլացած.

«Իցէ՞ արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ... արդեօք մտի՞ց 'ի խրախճանութիւն խորանին լուսոյ եւ առաջնորդեալ...»

Բայց վերջապես մշուշը կը փարատի, ու ոսկի ճառագայթը կը փայփլի հստակ.

«Իսկ եթէ լոյս ողորմութեան բարեբար կամաց զոց ցուցցի, գթութեան զոյ դուռն բացցի, ճառագայթ փառաց զոց ծաւալեսցի..., առաւտիդ ըղձալի տեսիլ մերկասցի, սառատութիւն քայքայութեան զոյ աղբերասցի...»

Ու հոգիին ցանկալի ցոլարձակ Վաղորդայնը...

Ահավասիկ ուրիշ նմանություն մըն ալ՝ խղդվողին նմանությունը՝ ուր բառերը պատկերին տեսողական ու ձայնագրական ճշդությունները միայն կը ցոլացնեն.

«Եւ քանզի 'ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զգաւեալ ուժգին լլկանօք 'ի սպառ տագնապմամբ 'ի ծովին, փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս զմատուցս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր ի'նոսանաց գետոց զարնանազայր գետոց, արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման, ջրակուլ ոգեսպառ պղտորարբութեամբ, դաժանանուտ սկսխառն մամուռամատ խառնախուր մանաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յուղխիցն հեղեղիցն հեղձուցեալ...»

Եվ այս ալեկոծումներուն ու ծփծփանքներուն վերև միշտ կը փթթի՝ փրփուրներուն շուշան ծաղիկին պես՝ «լոյսի հարս» Աստվածամարին՝ ցնծության ու կուսության ճերմակ գաղափարը.

«... Անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան զբնակութիւն անկոխելին արքութեանց, երանաւոր խոստմանն տեղի, Եդեմ շընչական, ծառ կենացն անմահից բոցեղէն սրովն պարունակեալ...»

Եվ ի՜նչ ավելի տոնելի ու ցանկալի է քան այս խավարամած հոգիին մեջ կայլակող կուսության ձյունաթույր շիթը.

«Անա կաթիլ մի կաթին ֆումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ...»

Բայց պահեր կան ուր վերստին կը բարձրանա, կը շրջրջի հոգիին մէջ Մեղքի դաղափարին միահեծան մրրիկը՝ խուռնամբոխ անթվելի տարրերով լեցուն.

«Իսկ մեղանք իմոցս յանցանաց՝ անթիւ... ոմն եւ բիծք իւր... ոմն եւ փուչք իւր, ոմն եւ արմատք իւր... ոմն եւ ճիրանք իւր... ոմն եւ շանթք իւր, ոմն եւ հրդեհմունք իւր... ոմն եւ վիհք իւր... *(Բան. Զ.).*

Եվ դեռ անհամար, անհամա՛ր...

Ուրեմն պետք է աղաղակե՞լ դարձյալ, խղձի կրակին մէջ աղոթքի խունկովը բուրվառանալ՝ և հառաչել թախծության երգը.

«Ընդ աչացուացն ճեղելոց մշտագիշերն խարխափանօք՝ մեծական ձայնիւ հառաչեմ»: *(Բան. ԺԷ.)*

«Անա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո, հզօր...» *(Բան. ԺԸ.)*

«Լուր լռութեան սրտիս, տե՛ր Յիսուս, որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար զոչելոյ» *(Բան. ԾԳ.)*

«Թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմօք այլայլութեան, տատանմամբ մատանցս, կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութեամբ, նրբական ձայնիւ, յոգի թախծութեան յոգնամասնեայ տարակուսանաց՝... ողբալով հառաչեմ.» *(Բան. ՀԳ)*

«Եւ արդ ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բեկութեամբ հոգւոյս մտացս լիմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի...» *(Բան. ՁԸ.)*

Եվ սակայն այս ողջույններուն մեջեն նորեն պիտի ծագի արևը. լուսաշող այն արևը՝ որուն առջև աղերսագին կը հնծեծե աղոթողը.

«Միասցի կնիքդ լուսոյ ի գեղ տեսակիս, ամրութեանդ նշան հաստատեցսի 'ի տիպ դիտակիս, երևակ կենացդ փայտի ձեւասցի'ի պատկեր այսիս, արուեստդ հրաշից 'ի ճակատիս շուք նշանակեսցի: Մի՛ այլայլեսցի յինէն դրոշմդ լուսապանոյն, մի՛ բարձցի ի՛ տեսանելեացս քաց ճանանչդ օրհնութեան...» *(Բան. Կե.)*

Կամ սա լուսախնդիր աղաղա՞կը կ'երկնե.

«Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութիւն քո ծագեա, ընդ ելից արևուն՝ արդարութեան արեգակնդ 'ի յանձկութիւն սրտիս մտցէ. հառագայթ քո փառացդ 'ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի.» *(Բան. ՁԴ.)*

«Ամպով կամաց քոց հավանացիր հրաշապէս, հանդարտեցո փայտիւդ կենաց զծովս մրրիկ.. » *(Բան. Ձե.)*

Եվ այդ սրեգակը, «անբաւութեան այդ ձայնը», «անմատչելի հեռաւոր և անընդմիջելի մերձաւորը» այնքա՞ն պայծառ, այնքա՞ն բարի է որ...

«Ոչ կիզեր զբերանս լցեալ ճաճրութեամբ... ոչ ստուերացուցեր զտեսիլ աչացս 'ի ֆումդ ակնարկութեան... ոչ խորտակեցեր ըզդաստակ բազկիս որ անմամբոպես առ քեզ համբառնար, ոչ մանրեցեր զոստս իմոց մատանցս 'ի շոշափելն զքանդ կենաց...» *(Բան. Ե.)*

Եվ իր ինքնությանը մեջ լոկ որքա՞ն բաղձալի է այդ «անմուտ արեգակը»՝ որուն կը վազե մեծ աղոթողին հոգին՝ ինչպես մարած մոլորակ մը իր մայր արևին.

«Ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբուրելի. ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւն միշտ ճենճերիմ... ոչ հարսնարանին խնճոյիւք, այլ փեսային անձկութեամբ մաշիմ...» *(Բան. ԺԲ.)*

* * *

Իր մեծ ու քայքայիչ տխրություններեն զատ Նարեկացին ունի նաև հիվանդագին մելամաղձություններ. աղերսարկու, միջանկյալ բացասականներու թախծությունը՝ որ հոս հոն մանիշակի պես կը նշուլի.

«Մի՛ լիցի ինձ երկնել և ոչ ծնանել... քնքանալ և ոչ հասանել, ինձ ձայնել և քեզ ոչ լսել... զոհել եւ ոչ ճենճերել...» *(Բան. Բ.)*

Եվ կամ՝ լուսեղեն վայրկյաններու մեջ իսկ՝ մեղքի նախազգացման տրտմությունը.

«Մի՛ ընձիւղեր զծաղիկ մեղացս...»:

Ու վերջապես հետևյալ աղաչանքը.

«Մի՛ մատուցաներ բաժակ դառնութեան 'ի ժամ ծարաւու... մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ գիշեր մահուն ինձ պատահեսցէ. մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն զարմատս հատեալ ցամաքեցուսցէ... մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն...» *(Բան. ՁԲ.).*

Բայց բոլոր այս խավարներուն ու մշուշներուն, ծփծփումներուն ու հորձանքներուն ետին, հավիտենական, երջանիկ անշիջանելի գաղափարը կա պահված. և կու գա կամքի ու գիտակցության արևոտ այն վայրկյանն ալ՝ ուր երջանիկ ձայնարձակությունը կը լսվի.

«Տօնեա զկեալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ»:

Եվ այս վայրկյա՞նը...

Փայլակ անունով գրիչ մը,— պիտի տեսնենք, ավա՜ղ, թե «գրիչ»են «գրչակո՜թ» միայն կա,— «Նոր Տաղեր»ուս մասին գրվածք մը սապես կը վերջացնե.—

...Ամեն մարդ ալ կարող է հրատարակության մը վրա իր անկախ կարծիքներն հայտնելու հրապարակավ՝ ինչպես պատիվն ունեցա ընելու:

Իսկ ես կ'ավելցնեմ. այո՛, ամեն մարդ. այսինքն ամեն ճշմարիտ Փայլակ, որ երկինքն ու մեծությունն ու կապույտը կը հիշեցնե, որ լույս ու էլեկտրականություն է, այսինքն ամեն բնազոր մարդ, ոչ թե ածուխով գծագրված փայլակներ...*

Փայլակ *բեմբասացի հատկություններ ունենալ կը կարծե, և այս հավակնությունը կը բավե որ փայլատակելու տխուր փորձեր ընե. ուրեմն* Փայլակ *կ'ելլե ամպիոն, բարձրավիզ սիգանքով ու գոհունակությամբ կը վճռե.—*

...Ուրիշին բրածը չընելու մարմաջը տեսակ մը մտի չվավորություն կը հայտնե ըստ իս:

Այս տողերը կը գրե ոտանավորներս գլխագիրերով չսկսելուս պարագան հիշելով, և այս իրողության խորը մարմաջ և անտրամաբանություն նշմարել կարծելով.—

...Նորություն մը իր շեղումին մեջ պզտիկ տրամաբանական հենակետ մը պետք է ունենա...

Իսկ ես կը հարցնեմ. ի՞նչ տրամաբանական հենակետ կա ոտանավորին բոլոր տողերն ալ գլխագրով սկսելուն մեջ. ու միևնույն ատեն կը պարզաբանեմ թե, ըստ կետադրության, վերջակետեն վերջ միայն պետք է գլխագրել (զանց ընելով կարգ մը իմանալի բացառություններ). այս օրենքն հարկ է գործադրել անխտիր, արձակին ու ոտանավորին համար. քանի որ ոտանավորի այդ գլխաղարդերն ավելորդ պճինքե ու սիրունութենե տարբեր պաշտոն չունին ու գլխովին հակառակ են տրամաբանության: Խնդիրն ինքնին ոսպի մը չափ արժեք չունի, և ես արդեն այդ նորությամբ պանծալու ո՜չ պետք ունեի, ո՜չ ալ իրավունք, քանի որ աննախընթաց չեմ: Բայց կ'ուզեի հասկցնել Փայլակին թե ի՜նչ ձախող բան է «մտքի չքավորություն» և անտրամաբանություն տեսնել արարքի մը մեջ որ պարզապես տրամաբանության սիրույն կատարված է:

Փայլակ կը բարբառի դարձյալ.—

Ասկե զատ իմաստի աղքատություն մը կրսկսի շեշտվիլ առնասարակ բոլոր կտորներուն մեջ... *ու կը կարծե, չէ՜, կը հաստատանե, թե գիրքին քսան ոտանավորները չեն վերջացած. ի՞նչ կուզեր Փայլակ իբրև վերջավորություն. սա տեսակ տողե՞ր արդյոք,—*

Ու կը խորհիմ թե, պաշտելի սիրուհիս,
դո՜ւն ալ վարդին ու շուշանին կը նմանիս...

կամ,

կյանքն ալ այս է, առավոտին պես կը սահի,
անձրևներով կը մատնե ան զիս ահի:

Անշուշտ «Նոր Տաղեր»ուն մեջ կան զուտ նկարագրական ոտանավորներ՝ ուր իմաստասիրություն չկա. այսինքն ընթերցողին թողված է կրած տպավորութենեն մեկնիլ դեպ ի որոշ իմաստասիրության մը՝ որ դյուրավ կը ծնի ամեն վառ տպավորութենե. բայց տխուր ու տգիտական բան է մակերեսիկ նկատողությամբ մը գինովցած՝ ելլել կարծեցյալ սնանկություններ մունետիկելը:

Փայլակի *գրվածքին առանցքներն են անհասկացողություն, որ լուրջ մասը կը կազմե հոդվածին, և* սրամտություն, *որ հոդվածիս վերնագիրը կը հիշեցնե. զբաղինք քիչ մ'ալ այդ լուրջ (՞) մասով:*

Փայլակ *չի՜հասկնար սա տողը.*

Սիրտքս՝ բո՜ց մը՝ մթընշաղին մեջ անհետ.

որովհետև նախընթաց տողն իսկ միասին տեսնելու չափ հորիզոն չունի իր աչքը, ո՜ւր կը մնա նախընթաց տունը.

...Ճամբուն վրա իր քայլերուն հետքը վարդ՝
Ուր հեշտորեն կը հածի դեռ իմ մենիկ
Սիրտքս՝ բո՜ց մը՝ մթընշաղին մեջ անհետ...

Փայլակ *ո՜չ թե միայն չի հասկնար «Ջուրեն Դարձին» ոտանավորս, ինչ որ մեղադրելի չէ, այլ և կը ստե՜, ինչ որ աղաղակելի՜ է. երբի մը պոչին կապված են, կ'ըսե, քսան տողեր, մինչդեռ այդ երբն հետևակ վեց տողեր միայն ունի:*

Փայլակ *չի՜ հասկնար թե ի՞նչպես «Ջրտուք»ին մեջ թխմվեր է «հոյ-հո՜յ» բացագանչությունը՝ որ Արտաշես Հարությունյանին կը վերաբերի եղեր. (նորե՞ն սեպհականության խնդիր). միանգամ ընդ միշտ պետք է կրկնել սակայն թե բառերը բառեր են միայն. ու Բանն է որ հոգի կու տա անոնց, ընելով զանոնք եռանդուն, հառաջխաղաց ձիեր՝ կամ հա-*

* *Իրապես՝ մարդը փայլակներու խուրձ մ' է: Էմբրսըն!*

տարակ բեռնակիրներ։ Փայլակ կը կարծէ որ «հոյհո՛յ»ը նշ ու կով վարելու բացագանչություն մ'է. այդ բացագանչության «հո՛» կ'ըսեն, անհասկացո՛ղդ Փայլակ, «հո՛» իսկ «հոյհոյ»ը (մեկ բառ) ուրախության և հիացումի աղաղակ մ'է։

Փայլակ չի՛ հասկնար նաև «կարմիր կարոտ»ը. պիտի հասկնար անշուշտ եթե ըսեի «հրավառ կարոտ». իսկ «հրավառ»են «կարմիր» մեկ քայլ միայն կա՝ զոր առնել տալու համար անպատճառ տատի՞ս ըսել պետք էր։

Փայլակ իր անհասկացողությունը կը շարունակե տակավին. աղատ էր այդ բանին՝ եթե վերապահություն գիտնար. (մեղքը վի՛ղը, պիտի ըսեի, բայց ուզեր է լրագրության վիզին ալ փաթթել զայն)։

Մինչև ո՞ւր կ'իջեցնե Փայլակ *քննադատությունը՝ զոր հայտնաբարբառ տգիտությամբ պղծելե վերջ, չի՛ վարանիր զայն շրջեցնել խանութպանական ավլուք սրամտության աղբյուսին մեջ, զայն տարուբերել Կեսարական ապուխտին ու բանջարանոցի կաղամբին միջև. ահա՛վասիկ այդ սրամտութենեն նմուշներ.—*

«Համբույրն անձրևին կը թրջե շափշափ» ըսելե հետո, ինչո՞ւ չըսենք. «Ձին կը վազե՝ բաթ բաթ. դուռը կը զարնվի՝ շաթ շաթ. շունը կը հաչե՝ հա՛վ հա՛վ. էշը կը զոռ...»։

Հետո կ'ըսե անպատկառ ու անպարկեշտ տգիտությամբ.—

«Լուրջ» իբր «անուրջ»-ին հանգ կ'ելբա, բայց շուշանին ածական տալ ուզելնուդ պես, լրջության վերարկուն կը նետե վրայեն ու բարեկենդանի «մասկարա» կ'ըլլա կարծես։

Պիտի չշիկնի՞ս, ո՞վ Փայլակ, *եթե թևերդ վեր առնելով անոնց պարտկած դդումներն անութեդ վար ձգելե վերջ՝ հարկադրեմ քեզ խաղալ ու տխրեցնել մեզ՝ ո և է բարեկենդանա՛յան մասխարայի խամաճիկությամբ՝ սա՛ քեզի անծանոթ երգին եղանակով.—*

Լուրջ՝ կը նշանակե երկնագույն. իսկ լուրջ շուշան՝ հիրիկ զամբագ, iris։

Փայլակ *կը կրկնե, միևնույն անպատկառ ու անպարկեշտ տգիտությամբ.—*

«...Ցնծապատար»ը (այսինքն՝ ցնծպա«տ»ար) «լեղապատառ»ին վրա ձևեր ես (այսինքն՝ լեղապա«տ»ա«ռ»ին) դերձակի մը պես որ կյանքին մեջ առաջին անգամ «ֆրագ»մը կը շինե ինչ որ «էնքարի»[2] մը կը նմանի։

Հոս Փայլակ *դպրոցականե մը շա՛տ վար կը մնա, դպրոցական մը*

* Բառերը գաղափարի ձիերն են, կ'ըսե էմբրսըն, հայ բանաստեղծ մ'ալ, անկե անկախաբար՝ ըսած է արդեն թե բառերը գաղափարի բեռնակիրներ՝ են։ Պետք է նայի՞ս այս խոսքերուն խորը։

բառարան նայիլ գիտե, իսկ Փայլակ... *իր տգիտությո՛ւնը մինակ։ Ուրեմն նոր եղանակ.—*

Ցնծապատարին «պատար»ը պատարիմ բային արմատն է. պատարիմ կը նշանակե լեցուն ընել, առատացնել. *ուրեմն՝* ցնծապատար՝ կը նշանակե ցնծությամբ պատարուն, լեցուն. *եթե* Փայլակ *դասատության պետք չունենար՝ ավելորդ պիտի ըլլար ըսել թե ո՛չ մեկ առնչություն կա* ցնծապատարին պատար *վերջավորության և* լեղապատառին պատառին *հետ, Ռայով՝ պատառ՝ իր պարզագույն նշանակության մեջ, որով* լեղապատառ *կը նշանակե* լեղին պատառ պատառ եղած։

Երբ լեզվական այսքան պարզ կետերու մեջ իսկ բացարձակ տգետ մ'է Փայլակ, *ի՞նչ կրնայի սպասել իրմեն ավելի բարդ խնդիրներու մեջ, ինչպես են Գեղեցկագիտությունն ու Բանաստեղծությունը. ի՞նչ կրնայի ակնկալել արդարև, եթե ոչ ավելի բարդ ու թանձրամած տգիտություն։ Դժբախտաբար* Փայլակ *չի՛ կրնար արդեն այդ ակնկալությունը դերևել, դժբախտաբար իրեն ու գրականության համար՝* Փայլակ *կ'ըսե, կը վճռե՛.—*

«Նայ շոգոլի»ն անճաշակ է, «փողփողենէջ»ը նմանապես «լուրան»ը՝ նույնպես.

Այս վերջինին առթիվ անգիտակից համեստություն մը չէ Փայլակինը, *երբ կը հարցնե.—*

Հոգի՛դ սիրես, Պ. Մեծարենց, աս ի՞նչ ըսել է... *այլ նորեն, ավա՛ղ, փայլատակելու ունայնատենչությունը. այլապես իր մյուս տգիտություններն ալ նույն հարցական կաղապարին մեջ պիտի ձուլեր, որով գեթ կ'ըլլար* պարկեշտ տգետ մը. *ինչ որ դրականություն մը պիտի սեպվեր հավակնոտ ու անհամեստ տգիտության մը բացասության դեմ։ Ուրեմն նորագո՛ւյն եղանակ։—*

Լուրան, տղա՛ս, կը նշանակե լուռ կենալու տեղ. *(ի՞նչքան շահած կ'ըլլար* Փայլակ, *եթե գիտնար ու հարգեր* լուրանին *նշանակությունը՝ լուռ կենալու տե՛ղ...)։*

Դիտելի է որ Փայլակի *իրեն* անճաշակ *դատապարտած բառերը՝ առավելապես նախնյաց մատենագրության մեջ գործածվածներ են. նույն բառերու առատությունն է որ ըսել կու տա «սիրունատենչ» պարոնիկին.—*

Հրիկուը՝ էջ 36՝ գլուխ գարծոց մ'է անճոռնի, անճաշակ խժալուր բառերու։

Այդ անճոռնի, անճաշակ *ու* խժալուր *բառերն են «փողփողենէջ», «անանանչավուխտ», «լուրան», «կզկաթիմ», «վարագիտակ», «զարմանհոգի», «բազմաբեղուն».— այս խոսուն, հնչուն, բզզուն բառերն՝ ասոնք*

ամենքն ալ գեղեցկության քվեն չեն ստանար Փայլակի *կողմեն,* վասն զի *«շիք» չեն, սիրուն» չեն,* «moderne»[3] *չեն, այլ նախնի մատենագրության մեջ հաճախված, «բրածո՞» բառեր են. բայց ինչո՞ւ բանտել Գեղեցիկը «սիրուն»ին սահմանափակության մեջ. ինչո՞ւ չխոստովանիլ թե տգեղությունն այդ բառերը ծամածողող շրթունքին, և անոնց ուժեղ մերձեցումին տոկալու անկարող՝ իգացյալ, ուժասպառ լսելիքին մեջ է. այդ բառերը գործածող նախնի մատենագիրներ՝ մենե՞ շատ ավելի լավ կ'ըմբռնեին լսելության և առոգանության Գեղեցիկը.— գիտեին վեհաշուրթ արտասանել բառերը ու լսել անոնց վեհանդորդ ձայնը. իսկ ի՞նչ գիտեն փայլակներ. ոչի՞նչ, ո՛չ իսկ իրենց տգիտությունը։ Նախնի մատենագիրը գիտեր ծովաձայն հնչեցնել բառերը.—*

Ջիա՞ռդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մեծիդ ճառագայթից, զիա՞ռդ ճամբարձցի կշռեսցի ընդ խաչի fn կրից՝ խակուբիւն հեշտութեան մարմնոյս տկարութեան...

—Ընկալ fաղցրութեամբ, Տէր Աստուած ճզor, զդառնացողիս զաղաչանս...

Գիտեր ծիծաղախիտ ժպտեցնե՞լ բառերը.—

Աչքն ծով'ի ծով ծիծաղախիտ ծաւալանայ...

(Եթե գիտնար Փայլակ *Նարեկացիին այս նմանաձայնությունը, գուցե չծաղրեր իմինս՝ որ չքնաղ բան մ'ըլլալու հավակնությունը չունի, բայց ունի՞ անճաշակ որակումին դեմ բողոքելու արժանապատվությունը).—*

Արև ծիծ«աղ»ի, ծ«աղ»իկ ծամերու.

Այս ցուցումներեն վերջ ո՞վ կը զարմանա եթե Փայլակ *կը դատապարտե.*

«Միածան աչքեր»ը, «ատրուշան բերնակ»ն ու «չարանճար ճովիկ»ը՝ որ «պզտիկ երգեր կը կարդա» (եթե գիտնար խեղճը թե Սիպիլ գործածած պիտի ըլլար «ճովերը կը խոսակցին» բացատրությունը, գուցե չդատապարտեր զիս):

Ով կը պշնու եթե Փայլակ *Սենպոլիզմի Մեծարենցյան դպրոցի գյուտեր անվանե զանոնք։ Հոս Հարցում մը կը ծագի,— ի՞նչ է այս դպրոցը կազմողի պիտակը՝ զոր նկնահասակ* afficheur[4]*-ներ կ'ուզեն փակցնել ճակատիս՝ որ շա՞տ բարձր կը մնա իրենց հասակեն։ Ի՞նչ են այն խոշոր բառերը՝ (ռահվիրա, ռահահորդ, առաջավորդ, առաքյալ) զորս անունիս կցելու տխրահռչակ պատիվը կ'ընեն. չէ՛, ես լեզվական առաքելության փառատենչիկ ցանկացողներուն[5] կը թողում այդ բոլոր*

լպրծուն տիտղոսները, ու կը դատեմ ըսել ու պնդել թե ես երբե՞ք դրպրոցի մը հետևելու կանխակալությունը կամ նոր մը հիմնելու ունայնափառությունը չեմ ունեցեր։ Ամեն մարդ որ իր անհատականության և արժանապատվության գիտակից է, ինքնին դպրոց մը կը կազմե արդեն։ Հետո, տեղն է ըսել նաև թե ես երբեք խորհրդանշանակության ստրուկ մը չեմ։ Փոխաբերության ու նմանության ուժգնություններ ու նորություններ՝ զորս կը սիրեմ գործածել՝ կարծել տվին թե սենպոլիսք *մ'եմ. բայց ադոնցմով կը հիշեցնեի միայն* սենպոլիզմը՝ *որուն բոլորանվեր ուխտադիր մը չ'ըլլալե զատ՝ հակընդդեմ բնութենապաշտ հակումներ ալ ունիմ անոր հանդեպ. այսինքն կը նախընտրեմ ճաճանչավետ Կյանքը, բաբախուն ու եռուզեռ Բնությունը՝ խորհրդանշանական զուսպ ցերտություններեն։*

Գեղագիտական հասկացողությունն ալ զննելե վերջ պետք էր որ հանգեինք Փայլակի *բանաստեղծական անհասկացողության։ Օրինակի համար* Փայլակ *Հովհաննու Հայտնության*[6] *չափ անմեկնելի կը գտնե հետևյալ տողերը՝ որոնց* մեկնությունը *պիտի տամ, (ի՞նչ մեկնություններ տվինք որ) առանց Հովհաննու Հայտնությունը հայտնագրելու հավակնոտ մ'ըլլալու.—*

Օ՜ճ, գաղջ ավիշն՝ որ չորս կողմեն կը պոռթկա՝
Ընձյուղներով, շաքիլներով անճամար.
Օ՜ճ, արևոտ խայտա՜նք արքուն աղջրկա՝
Որ կը գեղու բորբոք, արբշիռ ու ճիմար,
Կուրծքեն գարնան՝ որ թեերովն իր բաղեղ՝
Տարփո՜տ հյուղին կը պրլլվի, ու հեղեղ
Կանանչով մը կու տա ճամբույրն իր դալար։

Մեկնությունը.—

Հողին գաղջ ավի՜շը՝ որ անհամար ընձյուղներու և շաքիլներու (չգիտցած բառերնիդ բառարանը նայեցեք, պ. Փայլակ) *ձևով կը պոռթկա ամեն կողմե. օ՜հ, այդ գաղջ ավիշը, վարար աղջկան այդ արևոտ խայտանքը՝ որ գարնան կուրծքեն կը զեղու արբշիռ, խոլ ու բորբոքուն, ու տարփանքով կ'ընդգրկե հյուղը՝ զոր կանանչի հեղեղով մը կը համբուրե կարծես։ (Կը կրկնե՞մ,* պ. Փայլակ, *չգիտցած բառերնիդ...)։*

Փայլակ *«Հովվերգություն Մը» վերնագիրը նյութին անհամապատասխան կը գտնե շուկայիկ սրամտության մը առիթին հետ. մերինները՝ Մոտեռնության այս կեղևանքները մամռարմատ ավանդամոլներ են էապես. կ'ուզեն որ* ճովվերգություն *մը երբեք չշեղի բորբոսած բանաձևին մատնանշած ուղղութենեն.—*

Սիրախանձ հովվուհի մը կար, օձի նման մազերով, մարմարյա ծիծերով, ու սարսուռ պարգևող բումբերով: Հեշտախանձ հովիվ մ'ալ կար. որ զայն տեսավ, անավոր սարսուռով մը գալարվեցավ: Ըրին շրջին՝ գիրկընդխառնվեցան և երջանիկ ժամեր անցուցին: Ենողոք բախտը սակայն զանոնք անջատեց:

Կ'ուզեն մեր պարոնիկները որ այսպես գրված ըլլա որ և է հովվերգություն. այլապես քիթ պոչ կ'ընեն, նորեն կը ծամածռե՛ն իրենց պաշտելի շուրթերը...

Փայլակ *կրնա հանգստանալ այլևս, պիտի չզիջանիմ իր* խոհարարիկ *սրամտություններուն ալ գարշահոտութենեն աղաղակելու։ Հանգիստ կը թողում գրականության այս* cordon-bleu՝[7] *իր* լանանայե, ապուխտե, **յալանճի տոլմասիե**[8] *պսակներուն հետ...*

Հ. Գ.—*Վերջին հանձնարարություններս են.— Սիրելի՛ Փայլակ, չգիտցած բաներդ բառարան նայելու չմոռնաս. բայց մոռցի՛ր խոհանոցի, բանջարանոցի ախորժակներդ։ Ու մանավանդ կարդա՛, կարդա՛, կարդա՛, բան մը զոր կը հանձնարարեր Գոլանճյան՝ մեկ բարեկամիդ ու բախտակիցիդ*[9]*։ Այն ատեն եթե դարձյալ փայլակ, գոնե չես ըլլար այլայլակ։*

ԱՂԵՂ ՈՒ ԿԱՊԱՐԾ

Ենովք Արմենի դեմ.— *Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք...*

Եվ հարվածը, արդար ու անհրաժեշտ հարվածը, դպա՜վ իր թիրախին։

Վրեժ մը չէ ասիկա,—ո՛չ մեկ դրդապատճառ ունիմ այդ բանին համար,—և որքա՜ն ծիծաղելի ասպետականություն մը պիտի ըլլար ատ՝ եթե ունենայի իսկ,— հապա՝ արդարության գործ մը։

Ոչ ոք կ'անգիտանա թե գրականության կապիկներու այսօրվան տիրող, խաժամուժ, այլանդակ, աղմկահարույց բազմության մեջ Ենովք Արմենն... աննշան դեմք մը չէ։ Ոչ ոք կ'անգիտանա այլ ևս իր ամեն մեկ շարժուձևին հոգեբանությունը, ոչ ոք այլ ևս կը տարակուսի իր ապիկարությանց, իր նենգությանց, իր շահախնդրությանց, իր գրական մեղքերուն վրա, բացի տակավին երկու գավառացիներե, պ. պ. Արտ. Հարությունյանե և Հովհ. Գազանճյանե։

Իր գրական մեղքե՛րը... ի՞նչ հարկ սակայն մանրամասնել, միայն կարելի է երկու մասի բաժնել զանոնք. նախ իր գռեհիկ բամբասանքները, զորս պ. Գազանճյան (կը զարմանամ, արդարև թե ինչո՞ւ տակավին պ. Գազանճյան կը համառի կրել գրագետի վերարկուն, որ ա՜յնքան չի վայելեր իրեն) իր տարեկան տեսության մեջ «կուռ քննադատականներ» անվանած էր, փոխանակ այս ածականը ինք իր վրա կրկնելու՝ դատված նյութին ճշգրիտ որակումը ունենալու համար. հետո՝ իր գրական մաքսանենգությունները, որոնց վրա ոչ ոք անդրադարձած է, և որոնց ամենեն վերջիններեն ու վավերականներեն հատ մը մանավանդ մատնանշեց ինծի բարեկամ մը։ Բարեկամս, առանց որևէ դիտողության մը, ինծի ներկայացուց Le Journal *թերթին կտրոն մը,* Illusion...» *վերնագրով և* Maurice Level *ստորագրությամբ, որպեսզի կարդամ. հետո, առանց բան մը ավելցնելու դարձյալ, «Մասիս»ի Բ. շրջանի վեցերորդ թիվը, զոր ատենին տեսնելու պատեհությունը չէի ունեցած։ Կը խոստովանիմ որ ես, ընթերցող մը, ե՛ս ամչցա այն հոդվածեն («երկու Մուրիկ») զոր ստորագրելու չէր ամչցած պ. Ենովք Արմեն։ Ա՜ո ի՜նչ հացկատակություն և,— աս ի՜նչ կրկնակ աներեսություն. մարդ մը, որ առանց* որևէ զգացումի, *կրնա հանդուրժել իր գոյության պայմանը ուրիշին քսակին մեջ փնտրելու նվաստության, և որ կրնա՜ հրապարակավ անվանարկել իրական քրտինքներու վարձքը եղող արդար վաստակներ. բայց ասիկա տրված է միայն Ենովք Արմենի պես նկարագրի մը, որ անամոթաբար պաղատագին ու բաց ափը կ'երկարե դեպ ի անկոթով կարեկցություններ.*

«Ա՜հ, գնահատությո՜ւն մը ողորմեցեք թշվառիս...»։

Դառնանք սակայն մեր խնդրին. ահավասիկ՝ երկու բառով՝ Երկու Մուրիկին *պատմությունը. ծերունի մուրացկան մը, որ գեշ աղեկ, ավելի գեշ՝ քան թե աղեկ, «ավուրշեք»-ը հանած է, իր ճամբուն վրա կը հանդիպի կույր բաղդակիցի մը, բոլորովին լքված, որուն ողորմելու սրբատուռ բարությունը կ'ունենա։ Տարբեր բան մը չէ պատմած նաև՝ ընթացիկ արվեստով մը Մոռիս Լըվել, որ գթած մուրացկանին անհատականությունը ավելի կնճռոտ ու վերլուծելի դարձնելու համար թերևս, անձնասպանության ավելորդ պարագա մըն ալ ավելցուցած է։ Այս պարզ ու հուզիչ պատկերը, որ այնքան տպավ<որ>ող պիտի ըլլար զգայուն ոամիկի մվ բերնին մեջ, ամենեն անհամ քաշքշուկներու ենթարկված է պ. Ենովք Արմենի մոտ։ Անդուր, անգույն, անկենդան նախադասություններ՝ տգիտություններով համեմված (՞՞), որոնց վրա ավելցուցեք նաև այն տեսակ մը անհավատալի կերպով գոռող և ինքնահավան պըշրանքը (՞), այն եզական (՞) հանգրիճումը, զոր պիտի ներկայացներ բազմագույն, բազմազան գրգռյակներով... պճնված գլթիկ մը. ահավասիկ* Երկու Մուրիկի *արվեստը (՞) և ընդհանրապես պ. Ենովք Արմենի գրականությունը (՞՞՞)։ Թող չկարծվի, սակայն, թե «եկամուտ»ի կամ «փոխառու-*

թյան» այս դրությունը կամ սովորությունը նոր է պ. Ե. Արմենի մեջ. չէ՞ որ Հավատք վերնագրով իր մեկ արձակը Սիպիլի Ծաղկազարդի հիշատակն էր, ուր պարոնը՝ իր չտեսած բաներուն վրա կը խոսեր, ուր չէր կրնար ծածկել իր անվարտի տգիտությունը. չէ՞ որ, ավելի կամ նվազ հեռավոր, Թլկատինցիի և Արամ Անտոնյանի մեկ հետևականությունն էր թատերախաղաձև իր ուրիշ մեկ էջը, որ հրատարակված է Մասիսի վերջին թիվերեն մեկուն մեջ։ Եվ տակավին ըսե՞լ թե պ. Հարությունյան, որուն ճաշակներն ու դատաստաններն ընդհանրապես վստահելի էին, այս տեսակ հեղինակի մը մոտ «իսկատիպ բաներ» տեսնելու պատրանքը, կամ ավելի ճիշտը՝ ճարպիկությունն ուներ։ Այս հորջորջումը, սակայն, ճշմարիտ քննադատության մը արժեքը ունենալ ավելի—իրականություն, զոր պ. Հարությունյան ինքն ալ չ՝անգիտանար հարկավ,— «պարտավորված» ու փոխադարձ մեծարանքի այն տկարություններեն է, որոնցմե պ. Հարությունյան ա՞յնքան ունեցավ վերջերս՝ զինքը գետնամած բարեկամներուն հանդեպ, որոնցմե է Ենովք Արմեն։

Ավա՜ղ, արգահատեցե՛ք, արգահատեցե՛ք այս ինքնագոհ և անդարմանելի միջակությունը ու ծիծաղեցե՛ք իր մեջ մեծամի՛տ ամբարտավանը, պարզամի՛տ կեղծարարը, տգետ ու տղայամիտ պոռոտախոսը, բայց մանավանդ հոպի՛տը, հոպի՛տը, հոպի՛տը...

ՆԱՄԱԿՆԵՐ

1907

<ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ>

<Կ. Պոլիս, 25 Հունիս, 1907—Մալկարա>

Կը տեսնեմ որ «Միածան»ը նշանակելի խոստում մը եղած է բոլոր գրախոսներուս համար ալ ու կը դողամ մտածելով թե այդ խոստումը պիտի կրնար գուցե լուսավոր խաբուսիկ պատրանք մը ըլլալ՝ մեր գրական նորածագ բոլոր երևույթներուն պես։ Բայց ուրախությունը ունիմ վստահացնելու ձեզ թե՝ բավական արիություն ունեցեր եմ սնապարծության և վատորեն ռոհունակ ծուլանքի ճահիճներուն մորին մեջ բռնըված չմնալու, և թե՝ «Նոր Տաղեր»ս առանց ծարավիս հագեցումն ու փառքիս լրումը ըլլալու, պիտի կարենա սակայն կատարված խոստումին ճակատաբաց շարժումները զդացնել։

Իմ մտահոգությունս, իմ մեծ ծարավս իսկատիպ գրականության մը գաղափարին իրականացումն է։ Եվ ասոր համար, գեթ իմ մասիս, անհրաժեշտությունը կըզգամ հողին ու ջուրին ու քարին հետ ապրելու։

<ՕՖԵԼԻԱ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ-ԳԱՍԱՊՅԱՆԻՆ>

<1907>

Ազնիվ և սիրելի Օֆելիա,

Դարձյալ ճառագայթի պետք ունիմ, անգամ մըն ալ ծագեցնեմ մտքիս մեջ, քու գաղափարիդ լույսը՝ ու մոտենամ քաղցր ու սփոփարար հոգիիդ, ո՜վ ճառագայթ քույրս, որովհետև այս առտվան բոլոր արփային ճառագայթներուն մեջեն քույր մը չգտա ինծի,— ամենն ալ երջանիկ ու անտարբեր անցան սեղանիս հոգիին ու հոգիիս սեղանին վրայեն. և որովհետև բոլոր քույրերուն մեջեն ալ ճառագա՜յթ մը չգտա որ հոգվույս

մթությունը լուսավորեր... Թղթիկ մը ծրարեմ ըսի. որովհետև պետք ունի որ մանիշակագույն տողերուս ընդմեջեն քու պատկերիդ կենսավետ ճառագայթո՞ւմը տեսնեի. չպիտի մոռնամ թե դուն հավատքի մը շափ քաղցրը ու ամոքիչ ու կորովի նեցուկ մը եղար իմ գաղափարիս՝ որ կը գահավիժեր հայ աղջիկներու ապագային մասին կազմած հուսահատությանս փոսին մեջ. դուն ճառագա՞յթ մը եղար, այդ փոսին վրա նշուլող ճառագա՞յթ մը։

«Լույս»ի հոդվածդ[1] կարդացի. օ՜խ, ի՜նչ հանգիստ՝ վերջապես հայ աղջի՜կ մը՝ որ լուրջ ու գաղափարական բան մը գրելու կորովը կ'ունենա, փոխանակ մեղկ սարսուռներու մեջ օրորվելու, փոխանակ հեշտախտավոր թարգմանություններ ընելու և պշրասիրական խտղտանքներ պատեցնելու հոգիներուն մեջ այն աղջիկներուն՝ որոնց իտեալն է պուպրիկներ ըլլալ. ո՞րն է այսօրվան քաղքենիներուն հատկանիշը. հարգվի՜լ, երեվալ—չըլլալ. քիչ մնացեր էր որ շնչահեղձ ըլլայինք այդ վատառողջ կազերեն. վերջապես այս հոսանքին մեջ ըլլալուն ջատագով մը կը հանդիսանաս դուն՝ ու ճիշդ վայրկյանին կը հասնիս բժշկելու։

Չկարծես թե միակ հոդվածդ բավական եղավ ինծի՝ տպավորությանդ ենթարկվելու. այդ հոդվածը ինծի կը խոստանար ու երևակայել կու տար. նմանօրինակ գրություններու ամբողջ շարք մըն է որ կ'երևակայեմ ու մանավանդ իրավունք ունենալ կը կարծեմ սպասելու մեկեն՝ որուն մեջ բավականեն ավելի զորավոր մնացած են բնազդները՝ հակառակ կարծեցյալ քաղաքակրթական շոշափումներու և փայփայանքներու։

«Ծիածան»ի կույսը, ավա՜ղ, չէ կրցած փարատել հոգիիս վրա ամպացող մթությունը՝ զոր ես կենսաբաղձությամբ ուռճացած ու տարածված պատատեցի նեղ վերարկուի մը պես. իսկ դուն, օ՜հ, ինչպե՞ս կըրնայիր նախանձիլ անոր՝ որ իրեն վիճակված խեղճ դեր մը նույնիսկ չկրցավ կատարել, դուն՝ որ եթե «Ծիածան»իս վրա պտղող սև մելանի կաթիլը շոգիացնող ճառագայթը պիտի չըլլայիր, եղար այն կենսավետ ճառագայթը՝ որ անդադար «ծիածան»ներ կը հորինե հոգիիս արցունքներով՝ որ կը շոգիանա՜ն, կը շոգիանա՜ն. ի՜նչ փույթ թե ալ ծիածան չպիտի ունենամ՝ արցունք ունենալով. կը բավե ճառագայթ մը ունենալ՝ արևին հասնելու։

Որքա՜ն տխուր կու գան ինծի քու և Տիգրանին համակրությունները՝ բանաստեղծությանս մասին. ինծի՝ որ թերևս հոգեկան շրջափոխումի վայրկյանի մը մեջ կըզգամ թե ապաժամ ունայնություն մըն է տնիկա, զվարճասիրության վայրկյանի անպտուղ ծաղի՜կ մը, ավա՜ղ։

Կ'երևա անհասկնալի բաներ կ'ըսեմ. գիրս ալ չի՞ հայտներ արդյոք մտքիս տենդային վիճակը. անհասկնալի բաներ. զարմանալի չէ, որ

«Ծիածան»իս մեջ ալ գտած ըլլաս անոնցմե. որովհետև «Ծիածան» չէ ունեցած բավականաչափ հասկնալի հանգամանք, այսինքն կենսական, հանրամատչելի, հոգեզրավ հատկություններ. կա «Ծիածանի» մեջ ջերմություն մը՝ որ սակայն ամպերուն տակեն շողացող արևին ջերմությունն է՝ ցուրտը զգացնող ավելի։ Իսկ Տիգրաննիս հրեշտակասիրտ կ'անվանե զիս, հրեշտակասի՞րտ. եթե ուզեի ըլլալ՝ պիտի չկարենայի, եթե կարենայի ըլլալ՝ պիտի չուզեի՜։

Անհասկնալի բանե՞ր. շատ ըսի՞ արդյոք. մեկ վայրկյանով հասկըցանք զիրար՝ ու այդ մեկ վայրկյանն է զոր կ'ապրինք տակավին. ապրելու համար այդ վայրկյանը բավական է թեև, բայց ինչո՞ւ չոսկեզօծել և շուրջանակի չլուսավորել զայն, ինչո՞ւ հոգեկան աչքին հետ մարմնավոր աչքին ալ նայվածքներով չպայծառանալ—կը խորհի

Նավասպը

<ՕՖԵԼԻԱ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ-ԳԱՍԱՊՅԱՆԻՆ>
<1907>

Ազնի՜վ Օֆելիա,

Նամակիդ թվականին կը մտածեմ. Հունի՞ս.—երկու ամիս մը եղավ։ Անտարբերություն չէ, անհոգություն ալ չէ, ծուլություն ալ, այս հիվանդությունը. հապա, ինծի համար գոնե գեղեցիկ քերթված մը գրելու խտեալիս մեջ, լայն ու հանդարտ տրամադրության մը ապավինելուս նմանող բան մը՝ պատասխանի այս ձգձգումը, այս հիվանդությունը։ Բայց հարկ կա՞ր, սիրելի՜, լեղի դեղահատով մը դարմանել փորձել այս հիվանդությունը։ Բայց կ'ընդունեմ... բժիշկ ես, ուրախանալով նաև որ առանց ատոր իսկ, քանի օր առաջ պատրաստեր էի նամակս։ Այսքանը գոնե ըսել ու շեշտել ուզեց՝

Նավասպը

<ՕՖԵԼԻԱ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ-ԳԱՍԱՊՅԱՆԻՆ>
<1907>

Ստեփանավան[2]

Ազնի՜վ Օֆելիա,

Մե՜ղք, որ չպիտի կարենամ գալ հոդ՝ օդափոխության համար, որովհետև «Նոր Տաղերս» ալ հրատարակելու ձեռնարկով զբաղած եմ։

...Վարդը հոտոտեցինք, վարդին հետ Վարդ բանաստեղծը՝ Պեյպին[3]. մեռնիմ իր գեղեցկության ծարավ աչքերուն՝ ուր ամեն ձև ու գույն, ամեն տերև ու ծաղիկ իր լուսատիպ պատկերը կը գծե, և իր լսելիքին՝ որ մայրիներու կատարներեն անցնող գետին՝ հովին ձայնովը կ'օրորվի, և ոնգունքին ուր բարակ բուրումները կը հանգչին վայրի անանուխներու, և քաղցրագին հոտը՝ ընտանի կարմիր վարդերուն. համբույր իր բանաստեղծ հոգիին՝ որ շատ կանուխ գեղեցիկին ծարավը ունի։

Շավասպ

<ՏԻԳՐԱՆ ԳԱՍԱՊՅԱՆԻՆ>

Տիգրա՜ն,
Ա՜խպբուկ,

Ուրեմն ահավասիկ կյանքը, ուրեմն ահավասիկ կյանքը՝ զոր կ'ապրիս ու կը տժգունի՜ս ալ անով, մինչև մենք, սենյակի ապրողներ՝ տակավին մեր պատուհաններեն կը դիտենք զայն ու կ'իմաստասիրենք։

«Տժգույն է» կը գրե Օֆելիան. ինչպե՜ս չտժգունիլ հիվանդներուն հետ, քանի որ լերան քարերն անգամ հոգեքաղ վերջալույսին հետ կը դալկանան։ «Իմ գեղջուկներս», «իմ հիվանդներս»... կ'ըսես անշուշտ յուրովի և իտեալներդ շոշափելու հազվագյուտ երջանկությունը կ'ունենաս։ Ու հետո կը փայփայես ծաղիկներդ ալ, ու վարդը՝ էն առաջ. ո՞ր դյութաշխարհի վարդենիքեն ծնած արդյոք. և միթե իր հոպոպիկներուն, իր այտերուն բույրնուերանգը չծծեցի՞նք միասին հոս, Օֆելիային նամակին մեջեն. որքա՜ն կը ճանչնամ զինքը։

«Պիտի ջանամ կազդուրիլ» կը գրե Օֆելիան. բաժակին դառնութենեն վերջ հետամնաց համագրավ քաղցրությո՜ւնը ուրեմն՝ որ վերստին տոչորել տա շրթունքները՝ լեղի բաժակին ծարավով. բայց ինչո՞ւ լեղի բաժակ անվանիլ կյանքը՝ որ աչքդ պարտականության կը բանա՝ լուսոռոգ պատուհանի պես՝ փոխանակ «երջանիկ կուրության» մը մեջ զայն փակելու։ Կյանքը միշտ պիտի ունենա իր հիվանդները, իր տառապողները, և անձնական երջանկություն մը, հետևաբար, մեծագույն անիրավությունը պիտի ըլլար միշտ։ Հիվանդի խուցերուն տխրությունով սարսրա՜լ, ու բազուկը բազուկի՜ն երկարել քիչ մը կյանքի հույզ ու հույս ներարկելու բաղձանքով և հետո սփոփի՜լ. պիտակված դարմաններուն հետ մանավանդ տալ անպիտակ ու հարազատ դարմանները, հոգի՜ն դեղերը,— հույսի ճառագայթալիր վիրակապեր, համակրության գորովի բալասանին վրա. օ՜հ, այս ամենը, ամե՜նը... ու պզտիկ լռություն մը,

սիրտերու համատրոփ զարկը, ու գորովով եղբայրացած աչքերուն անանյութ ու հոգեշոշափ վճա՜ռը... բայց ուրիշ ո՜ւր կարելի է փնտռել երջանկությունը, միակ ու հարազատ երջանկությունը՝ պարտականության կատարումին գոհունակ ճառագայթումը. ուրիշ ո՜ւր կարելի էր փնտռել ու գտնել զայն... առանց ամպերու տակ սքողելու այն այգաստղը՝ որ խիղճ կը կոչվի։ Կը քակեմ փունջդ[4]. կ'ուզեմ գգվիլ ծաղիկներդ, ինծի անծանոթ սիրականներ.—Խաչծաղի՜կդ, հի՜ն հավատալիր ժողովուրդ՝ որ իր նայվածքները ժամուն արծաթ ու ոսկի խաչերուն պատկերովը ողողած, կը ցանե զանոնք դաշտերուն ու բլուրներուն վրա ալ. հողին հեթանոսությունը կ'առնե, ժամուն մեջ զետեղելու, և հոգիին քրիստոնեությունը կը նվիրե անոր իբրև փոխընծա։ «Առյուծբերան»ը շա՜տ կը խոսի ինծի, հակադարձաբար «Լադենի»ն, համր ու համակրելի՜ անծանոթ՝ որ ոչինչ ունի ըսելիք եթե ոչ իր սիրելությունը։ Որքա՜ն կ'ուզեի խմել հիմակ արևակեզ «թավշածաղիկ»ին բարկ բույրը, ու զույգ ձեռքերուս մեջ բռնել «մոմծաղիկ»ներ բոլոր ժամվոր բլուրներուն ու դաշտերուն հետ՝ այն պատարագին մեջ՝ որ արևներով կենսավետ տիեզերքին շարժումն ու ուժը կը կազմե։

«Քափուր»ը[5] այդ անծանոթ մանուկը՝ զոր կը գրկես վեր կ'առնես աչքերս համբուրել տալու համար, պիտի դարձնե քեզի այն համբույրները՝ զոր շրթունքներս կը հորինեն ճերմակ ճակատիդ համար, դեղին ու ճերմակ ու կարմիր վարդերով երջանկացա՜ծ ճակատիդ։

Շավասպ

<ՏԻԳՐԱՆ ԳԱՍԱՊՅԱՆԻՆ>

Սիրելի Տիգրան,

Կարդացի թոքախտի վերաբերյալ գիրքը. թոքախտը իր բոլոր նոպաները փորձեց իմ վրաս ու հաղթական ելավ. արդեն կը քրտնեի, արյուն ալ փսխեցի, ուրեմն ամեն ինչ կատարյալ է. հազս շատ է, մեղմացուցիչ դեղ մը կ'ուզե նորեն...

Շավասպ

Կ. Պոլիս, 14 սեպտ. 1907
Զիմառա[6]

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ՎԱՐԴԱՆ ՔՀՆ. ԱՍԼԱՆՅԱՆ

Սիրելի Տեր Հայր,

«Միածան»ի առթիվ գրված նամակը անգամ մըն ալ կը կարդամ զգածվելով. «Ինչո՞ւ տիեզերքի հոգիին հետ չես խոսակցիր» կը գրեք. բայց դիտելի է որ իմ գրեթե բոլոր քերթվածներս այդ մեծ խոսակցության կը նկրտին, որքան որ ալ իմինս չըլլա Աստուծո հետ դեմ հանդիման խոսակցություն, բայց ո՞չ ապաքեն Աստված ամեն տեղ է. Զմրան Պարզ Գիշերվան մեջ հծծած աղոթքս ու Արևին ուղղած պաղատանքս իրենն ներուն, հետևաբար և իրեն համար էր. ի՜նչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջեն տեսնել տիեզերական զորության գաղտնիքը ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպ ի անհունը. «իրերը անհունության վրա բացվող պատուհաններ են իմաստասեր աչքին համար (Քարլայլ)[7], ու զարմանա՜լի չէ որ էմբրսըն «ժամադրած ըլլա Աստուծո հետ՝ մացառի մը ծոցին մեջ»։ Ուրախ եմ որ երկրորդ հատորիս մեջ ավելի լայնորեն տեղ տված եմ այս գաղափարիս, հունավորը կը բարձրանա ու կ՚երկարաձգվի դեպի անհուն, ինչպես արահետ մը՝ որ լերան կողն ի վեր մինչև կատարը կը հասնի. ինչո՞ւ սպասել ստորոտը ու կատարին գովքը կարդալ, փոխանակ հանձնվելու արահետին որ պիտի բարձրանար։

Գյուղին տեսարանները իմ մեծագույն ներշնչարանս կը կազմեն. որքա՜ն կը ցավիմ որ էապես իրենց զավակը չեմ իմ բանաստեղծությանս մեջ. այն ատեն ավելի ինքնատիպ ու ապրող կ՚ըլլայի։ Անշիջանելի բաղձանքս եղած է վերստին տեսնել ու ապրիլ գյուղիս ծոցը՝ նորոգվիլ իր տեսարաններուն ու գեղեցկություններուն ավիշով, ֆիզիքական վիճակս որ արդեն թելադրիչ է այս բաղձանքին, ծննդավայրիս գգվական օդը ամոքիչ ըլլա թերևս, բժիշկս ալ այս պատվերը տվավ. շատ հետաքրքիր կ՚ըլլայի իմանալ Զիմառայի աշխարհագրական դիրքը, ծովեն ունեցած բարձրությունը, օդին վիճակը. թերևս կարենամ հոն վերջնապես կազդուրվիլ մարմինով ու միտքով ալ։

Սիրալիր կ՚ողջագուրեմ քրոջդ ինները, քրոջս ձեռքը կը համբուրեմ և ձեր սուրբ աջը։

ՄԻՍԱՔ ՄԵՍԱՐԵՆՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1905

Ճիոֆրի Չոսըրի հետևյալ եռանգը (rondeau) *ինծի կը հիշեցնե գրեթե իրեն ժամանակակից մեր սիրերգակներուն բանաստեղծությունները՝ սիրային զգացումի միևնույն կրակովը վառված։*

Չոսըր տիրապետած է իր անունովը կոչված ամբողջ գրական շրջանի մը, որ անգլիական գրականության երկրորդ շրջանն է. իր արժանիքը կը կայանա մասնավորապես իրապաշտ վիպագրի իր տաղանդին մեջ, որ ծնունդ տված է «Ganterbury Tales» *անունով հեքեաթունակ պատմվածքներու կիսավարտ շարքի մը, Պոգաչիոի* **Տասնօրյակին** *նմանող, սակայն ամեն տեսակետով անկե գերազանց։*

ԵՌԱՆԳ

Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մեկեն,
Իրենց գեղին ա՛լ չեմ կրնար դիմանալ,
Սլաքն անոնց անցավ սրտիս իմ մեջեն։

Բառերդ լոկ շուտով պիտի դարմանեն
Վերքը սրտիս, մինչ նոր է դեռ անիկա՝
Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մեկեն,

Հավատարիմ բզքեզ ես միշտ կը կարծեմ,
Ըլլաս կյանքիս կամ մահվանս տիրուհին.
Քանզի մահես վերջն ալ սերդ պիտ՚ լսեմ.
Երկու աչքերդ պիտ սպաննեն զիս մեկեն։

ՉՈՍԸՐ

1906

ՁՅՈՒՆԻՆ ՏԱԿ

(Ճամբու պատմվածք)

I

Օդը բաց էր, ցուրտը տասը աստիճան ցույց կու տար, և ձյունի քանի մը նուրբ բաղիլներ միայն կը տեղային. գրեթե ամբողջ դեկտեմբերին մեջ օդը այսպես կ'երթա. մթերանոցին առջև երկու ձիով լծված ճամբու կառք մը կեցած էր։

—Է՛ ուրեմն, Իվան Տուրա՛ք, ըսավ Կոլոխվաթով, ոսկիի վաճառականը՝ մեծ մուշտակի մը մեջ փաթթված՝ վերնագավթակին վրա երևվալով։

Իվան Տուրաք, նիհարկեկ ծերունի մը, բարակ վերարկուով մը ծածկված, մոտեցավ, ամբողջ հասակը շտկելով ու ծիծաղաշարժ կերպով կոպերը շարժելով.

— Սեմեն Ավտեիչ, ահավասի՛կ եմ, մրթմրթաց. ես այլևս պիտի մեկնիմ սա՛ կողմեն, ճիշդ քու ճամբուդ հակառակ կողմեն։

— Անհեթեթ բան է ատիկա. թո՛ղ թե քու հանգիստիդ համար եմ. կես գիշերին ատենները պիտի կրնանք վերադառնալ, և ես քեզ իմ ձիերովս տուն կը վերադարձնեմ։ Կը հասկընա՞ս. և հետո, Մարֆա Անտրիևնա մեզի մատ ծծել տվող բելմեններ (ռուսական անուշեղեն) պիտի շինե. ու վերջապես, խորհե թե որքա՞ն պիտի ձանձրանամ այս ճամբան միս մինակ երթալով։

— Անոր համար է որ, Սեմեն Ավտեիչ մուշտակս...

—Ի՞նչ փույթ, անգամ մը կառքին նայե, նույն իսկ ժողովրդապետը ասանկ կառք մը չունի։

Իվան Տուրաք խորհեցավ. մեկ կողմեն տուն երթալ կ'ըղձար,— հինգ վերսդի հեռավորություն մը լոկ—և մյուս կողմեն ի՞նչպես վիրավորել Սեմեն Ավետիչը՝ որմե կախում ունին ամենքը. որովհետև Սեմեն Ավտեիչ շա՛տ պիտի զայրանար եթե մերժվեր և այն ատեն խոստացված դրամը պիտի չտար։ Ծերունին սրտի ճմլումով մը Ռաձթանա գյուղի իր տանը վրա խորհեցավ, իր տունիններուն՝ որոնք անհամբեր իրեն կը սպասեին... Չէ՛, հաստատապե՛ս, ուրիշ ընելիք չկար, պետք էր տեղի տալ։

—Ձեզի հետ կու գամ, Սեմեն Ավտեիչ, ըսավ. իմ ճամբաս չէ ատիկա, բայց հոգ չէ՛, կ'ուզեմ հաճելի ըլլալ ձեզի։

— Վե՛րջապես, մրմռաց մյուսը. գալով տաքության, հոգդ մի՛ ըներ. ու ճամբու կազմվածքին վրա իր տիրոջ ակնարկը կը պտտցներ։

Երբոր կառքին մեջ տեղավորվեցան, Իվան Տուրաք բոլորովին անկյուն մը կծկած մնացած էր. Սեմեն Ավտեիչ հաղթամարմին էր, և ինքը մինակ նստարանին կեսեն ավելի կը գրավեր։

—Տեղս նեղ է, հառաչեց ծերուկը։

—Անմի՛տ, ավելի՛ աղեկ, տաք կ'ըլլա։

Վերնագավթակին վրա Կոլոխվաթովի կինը, մանկամարդ տիկին մը, և ծերունի մը մեկնումը կը դիտեին, և մերձակա պատուհանի մը ապակիին հենած մանկական դեմքեր կը նշմարվեին։

—Օ՛ն, ըրավ վաճառականը։

Կառապանը ձեռքերը իրար շփեց, սանձը ժողվեց, ու կառքը մեկնեցավ։

Լայնարձակ տափաստանները՝ ուր ցանցնված են ոսկիի գործատուներ՝ ձմեռը շատ տխուր պատկեր մը կը ներկայացնեն. նայվածքի հասողության չափ ամեն ինչ մեռած է։ սպիտակ բացաստանը անընկճելի, հիվանդագին թուլություն մը կը հաղորդե անցորդին։ Ցանցառորեն տեսնված ավանները ձյունին տակ թաղված են, և ճամբաները՝ փոթորիկներեն բոլորովին տակն ու վրա։ Տեղացիները սակայն, ու շրջիկներն ալ, գեղեցկություն մը կը գտնեն այս ամայի և անշարժ անհունության մեջ։

Իվան Տուրաքի ջիղերը ոտք կ'ելլեին հիմակ՝ որ սկսած էր հեղձնուլ։

— Համբերությո՛ւն, կ'ըսեր Կոլոխվաթով, երեք ժամ մնաց. և հետո Մարֆա Անտրիևնայի բելմենները, օղին և աղանդերները...

Իվան Տուրաք շահեկան տեղացի մը կը սեպվեր. 15 տարի առաջ հարուստ էր և ընդհանուր մեծարանքով շրջապատված։ Բայց բախտը անկայուն է, մասնավորապես ոսկիի ճարտարարվեստին մեջ. շատ քիչ ժամանակեն մարդ կը հարստանա ու նաև շա՛տ քիչ ժամանակեն ավերակ կը դառնա։ Նույն բանը պատահած էր Իվան Տուրաքի ալ. նեղությունը զինքը շրջապատած էր, ու քիչ վերջը թշվառությունն ալ. և այն որ երբեմն փարթամ Իվան Նիքիթիչ Լեկաքով եղած էր, հիմակ ուրիշ բան չէր, բայց մակաբույծ մը, որ իր ապրուստը կը ճարեր ոսկիի վաճա-

ռականներեն. բան մը որ սուղի կը նստեր իրեն, որովհետև Իվան Տուրաք, այսինքն՝ տկարամիտ Իվանը, իր պաշտպաններուն իբրև միմոս և souffre-douleur կը ծառայեր։ Վերջապես վարժված էր ուրիշներու ծաղրանքին ու այն դերին՝ զոր կատարել կու տային իրեն. իր ճակատագրին հետ հաշտված էր՝ բոլոր վիճակազուրկ արարածներուն պես։

Այս վայրկյանին կը խորհեր թե ի՞նչ ստահակ մըն էր, օրինակի համար, Կոլոխվաթով՝ որ երբեք առիթը չէր փախցներ զինքը սպասորյարին առջև պզտիկ ձգելու։

Կառքը կը սահի, կարծես կարագի վրայեն. ատեն ատեն կառապանը ձիերուն կոչ մը կ՚ուղղե. Իվան Տուրաք իր անկյունին մեջ կը մխվի, աչքերը կը խփե և իր անցյալին վրա կը խորհի։ Ի՞նչ երջանիկ էր այդ կյանքը. կրնա՞ր երբեք երևակայել թե ա՛յսքան խղճալի տարիներ պիտի հաջորդեին անոր։ Վերջապե՞ս, է՞հ։ Աստված այնպես ուզած էր... հոգ չէ՞. եթե ինք իսկ եղած էր իր աղետքին պատճառը, իր դրացին ալ մասնակցություն մը ունեցած էր անշուշտ ատոր մեջ։

Քնացավ, որքա՞ն ատեն, չէ՞ր գիտեր. դադարե մը արթնցավ հանկարծ։

—Ի՞նչ կա։

— Է՞հ, Սադանն է որ կը զվարճանա։

—Ի՞նչ, փոթորի՞կ կա։

Հարվածը երկու ճամբորդները իրենց թմբիրեն սթափեցուց։

Տափաստանին տեսքը բոլորովին փոխված էր, ցուրտը սաստկացած. այլևս չէր ձյուներ. ամբողջ դաշտավայրը կը դողար կայծակի պես սրընթաց հովերուն տակ՝ որոնք գետինը կը քերեին՝ ճերմակ բարակ փոշիի հորձանքներ բարձրացնելով։

—Կը սխալի՞ս, գոչեց Կոլոխվաթով պզտոր երկինքը զննելով։

—Սադանն է, կրկնեց մյուսը համոզված։

Կարծես այս խոսքերը հաստատելու համար, հովի կատաղի հորձանք մը անցավ, որմե ամբողջ տափաստանին տարածությունը հեծեց։ Ամպերը կը թանձրանային ու կը թանձրանային, և կարծես անսպատում բան մը կ՚առկախվեր մթնոլորտեն՝ իյնալու պատրաստ՝ ահռելի՞. մանրահատ ու չոր ձյուն մը ամեն կողմե կը պաշարեր անցորդները ու սանձահարված ապակիի անձրևի մը պես դեմքերնուն մորթը կը ծեծեր։

Իվան Տուրաք իր խեղճուկ մուշտակին մեջ կը կծկտեր։

—Սառ ցուրտ մը կա, մրմնջեց։

—Ճամբադ կորսնցուցիր, գոռաց Կոլոխվաթով։

—Ի՞նչ ճամբա. երկար ատեն է, որ ճամբաս կորսված է արդեն։

Ճամբորդները սոսկումեն դողացին. ա՛լ ճամբա չկա, և փոթորի՞կը,—մա՞հ էր, մա՞հ։

Վաճառականը վար իջավ. ձյունին մեջ խորամխված կառքին շուրջը դարձավ, պարտասուն ձիերը քննեց, և բարկությունը իջավ. ի՞նչ ընել, հարցուց ինքնիրեն հուսաբեկ, ո՞ր կողմեն ջանալ ճամբան վերստին գտնելու, գիշերը հոծ էր, և ոչ մեկ լուսավոր կ՚երևար մթագին երկինքին վրա։

—Ի՞նչ ընենք, հարեց բարձրաձայն։

—Առա՛ջ երթանք, նետեց երկչոտ, Իվան Տուրաք։

—Շլամի՞տ, ոռնաց վաճառականը. երթա՞լ, ի՞նչպես, և առա՞ջ, դեպի ո՞ւր, Սադանի՞ն... հո՛ս նայե. կը տեսնե՞ս, խե՞ղդ պիտի անիծեմ, և իրավունք պիտի տան ինծի։

Այս նոր բարկության ճայթումները ընդմիջվեցան ոռնումովը մոլորած շունի մը՝ որ մինչև հոն կառքին հետևած էր և հիմակ նստած, խղճալի ու հեծեծագին, կը դողդղար ամբողջ մորթովը՝ առջևի մեկ թաթը վեր վերցուցած։

—Ա՜, դուն, սպասե։

Ու Կոլոխվաթով ցատկեց։

—Թողե՛ք այդ կենդանին, ըսավ Իվան Տուրաք. գուցե անոր հետ մեկտեղ սառինք։

Վաճառականը, մինչև ծունկերը ձյունին մեջ. ձիերուն մոտեցավ և անոնց վիզը շոշափեց. հաստատապե՞ս, ա՛լ չէին կրնար հառաջանալ, և իրենց կյանքը անոնցմե՞ կախում ուներ...

Այլ սակայն պետք էր բան մը ընել, հուսահատական փորձ մը. ու երեք մարդիկը գործի սկսան. ձյունը բարդելով երկու կողմին վրա նստղեցին, որպեսզի կարելի ըլլար կառքին չվանները քակել. և հետո, կառապանը առաջ անցավ, Կոլոխվաթով հետևեցավ անոր, ձիերուն սանձը բռնած. հուսկ հետո կու գար Իվան Տուրաք, որ դժվարավ կը քալեր, յուրաքանչյուր քայլափոխին մինչև սրունքներուն կեսը սուզվելով, հովը այնքա՞ն կատաղորեն կը փչեր որ անկարելի էր շնչառությունները ճշդել. աչքերը կը կսկծեին՝ կիսովին կուրացած. սարսափելի ցուրտ մը շարժումները կը հաշմեր. Իվան Տուրաք շատ չանցած գետին ինկավ։

—Սեմեն Ավտեի՛չ, մրթմրթաց, ա՛լ ուժաթափ եղա. շունը քովս նստավ։

II

Հովը փչեց տարավ հեք մարդուն խոսքերը. կառքը արդեն կ՚անհայտանար մրրիկին մեջ։ Ներունին, սառնամանիքին մեջ նստած, վայրկյանե վայրկյան տկարանալը կըզգար։

—Տե՛ր, գթա՛ ինծի, սկսավ աղոթել բարձրաձայն։

Կոլոխվաթով ճիշդ ժամանակին հիշեց ծերունին ու վերադառնալով շուտով գտավ զայն։

—Իվան Նիքիթիչ, ի՞նչ կ'ընես հոդ։

—Կը մեռնի՞մ, պատասխանեց խոնարհաբար ծերունին. դուն երիտասարդ ես, պետք է ապրիս. զիս հո՛ս թող, չեմ ուզեր այլևս քեզի արգելք ըլլալ։

Վաճառականը զայն ուժգնակի վեր բարձրացուց ու մինչև կառքին քով տարավ։

—Եթե մեռնիլ կա, միասին պիտի մեռնինք, մրթմրթաց հուզումեն շնչահեղձ։

Կառքը ա՛լ չէր շարժեր. կառապանը գետին նստած էր. անգամ մը որ ծերունին կառքին կաշեծածքին տակ պատսպարեց, Կոլոխվաթով, ձեռքի հարված մը տվավ կառապանին՝ զայն սթափ պահելու համար. ու ձիերուն քով գնաց. ձիերեն մեկուն ոտքը գայթած էր, ու ձյունը ա՛յնքան խոր էր որ ձին մեջը կը մխվեր, այնպես՝ ինչպես մարդ կը խղդվի։

Վաճառականը լուցկի մը զարկավ, ու դողդոջուն պզտիկ լույսը իրեն ցցուց թե կենդանիին աչքը պղտոր ու անշարժ էր։

Ամեն ինչ լմնցա՛ծ էր... ձյունը զիրենք պիտի լափեր։

—Շո՛ւտ, լուծը քակե։

Կառապանը, իր ընդարմացած մատներով, հնազանդեցավ տաժանագին։

—Ձին կորսվա՛ծ է, ըսավ անտարբեր։

—Անգամ մը որ քակենք, թերևս կարենան երկուքը մեկ տուն հասնիլ։

—Կորսվա՛ծ, կրկնեց կառապանը միևնույն շեշտով։

Երկու կենդանիները ոտքի ելան, և Կոլոխվաթով զանոնք կառքեն հեռացուց. հուսալով որ անոնք բնազդաբար տուն պիտի դառնային գույժը տանելու. բայց անոնք դարձան կաշեծածկին ետին ապաստանելու, մեծ գութ մը վաճառականին սիրտը սեղմեց... ձիե՞րն ալ իրենց հետ մեռնիլ կ'ուզեին։

Կառապանը դարձյալ կծկտած էր և ամեն վայրկյան կ'աներևութանար մրրիկին հորձանքներուն մեջ. երկու քայլ անդին այլ ևս ոչինչ կ'երևար։ Կոլոխվաթով կըզգար թե անդիմադրելի քնեածություն մը զինքը կը շրջապատեր. դույզն շարժում մը մահու չափ ցավազդու էր. սրունքները կը սայթաքեին։

Մոտեցավ կառքին, որ քառորդ ժամվան մեջ կիսովին սուզված էր.

— Իվա՛ն...

—Ահավասի՛կ եմ, պատասխանեց ծերունին, որ կ'աղոթեր։

—Ի՞նչ պիտի ընենք կառապանը. եղած տեղը պիտի սառի։ Եվ իր մուշտակը ա՛յնքան թեթև է, ու հովը այնքա՛ն խիստ կը խածնե որ... եկո՛ւր, երեք հոգիով ավելի կը տաքնանք։

Իվան Տուրաք լուռ էր. կառքը երեքը միասին պարունակելու համար շա՛տ նեղկուկ էր, թո՛ղ թե սպասավորը կը մերժեր ներս մտնել. բայց տերը զայն բռնի բերավ։

—Ստահա՛կ, պիտի սառի՛ս հոն՝ ձյունին մեջտեղը։

—Սադանը կը զվարճանա, մրմնջեց մյուսը իր հանդարտ շեշտովը, ու արդեն հովին ազդեցության տակ իր լեզուն կը թանձրանար։

Այս տեղափոխությունը բողոք մը բարձրացուց շանը կողմեն՝ որ այսպեսով միս մինակ կը մնար ճամբուն վրա. ու այս զրկանքին դեմ ոռնաց։

Կառքին մեջ մութ էր. երկու հովի միջև կը լսվեր դոփյունը և ուժգնակի փռնգտուքը ձիերուն՝ որոնք գլուխնին կաշեծածքին կը քսեին, ի զուր հուսալով պաշտպանվիլ։

Կոլոխվաթով շունին վրա խղճաց. եթե ներս առնե՛ին, ա՛լ ավելի պիտի տաքնային։

—Անկարելի՛ է, գոչեց Իվան Տուրաք, արդեն այս անիծյալ սպասավորը ոտքերս կը ճմլե։

Երկար ժամանակ բառ մը չարտասանեցին. ատեն ատեն վաճառականը լուցկի մը կը վառեր և ակնարկ մը կը նետեր դռնակին վրա բացված լուսամուտեն դուրս. ձյունը հիմակ այդ պատուհանիկին կը հասներ. շունը թարթափուն լույսին կը վազեր ու կը հեծեր սրտաճմլիկ։

—Կը խեղդվիմ կոր, ըսավ վերջապես Իվան Տուրաք, գլուխս կը դառնա։

—Եվ սակայն, Իվան, դիտեց Կոլոխվաթով, կառապանը ստույգ մահվան մը չենք կրնար խրկիլ, ա՛ն ալ հոգի ունի։

—Լա՛վ, ես դուրս կ'ելլեմ. կը նախընտրեմ սառիլ, քան շնչահեղձ ըլլալ։

Իրավ ալ անկարելի էր շնչել կառքին մեջ, որուն ամենափոքր ծակերն իսկ գոցած էր ձյունը. այն վայրկյանին որ Իվան Տուրաք դուրս ելլելու կը պատրաստվեր, սպասավորը ըսավ թե ինք պիտի ելլեր։

—Իմ հայրս այսպեսով վերջը գտած է, ձյունին մեջ... դուն կեցի՛ր, ան գիտե իր ընելիքը։

Ա՛լ վարանելու ժամանակ չէր. իրենցմե մեկը պետք էր հանձնառու ըլլար մյուսներեն առաջ սառելու. դռնակը կիսովին բացվեցավ. կառա-

պանը սահեցավ դուրս. շունը իրեն եկավ հրճվագին կաղկանձելով, վրստահ հիմակ՝ թե միևնակ պիտի չմնար։

Կառքին մեջ՝ դամբանի մթություն. շուրջանակի մրրիկը կը պոռչտա թռչուններու անծայր անցքի մը պես. երկինքն ու երկրեն ինչ որ կը զանազանվի կարծես խառնակված է թևերու առասպելական հորձքերու մեջ։

Կոլոխվաթով կը խորհի իր կառապանին վրա, որ հո՞ն, մոտիկը, կ'ոգևարի։

Իվան Տուրաք՝ աղոթկեր՝ մահվան կրսպասե. վայրկյան մը կը սարսռա, իր քովեն լսելով հեծկլտուքներ՝ որոնք մանուկի մը լացին կը նմանին։

—Սեմեն Ավտեիչ, աղա՜վնիս, պետք չէ քաջությունը կորսնցնել։

Հեծքերը կը կրկնապատկվին։

—Սեմեն Ավտեի՜չ, հուսահատությունը մեղք մըն է։

—Ես իմ վախճանես չեմ վախնար. բայց, ա՜հ, որքա՜ն սարսափելի է մեռնիլ այս մեղքերու բեռան տակ... Իվա՜ն, հաճախ վիրավորած եմ սիրտդ... շա՜տ հաճախ... ներե՜ ինծի։

— Ա՜ստված պիտի ներե քեզի, բայց դուն ալ ինծի՜ ներե։

Լռությունը դարձյալ տիրեց անոնց միջև, ուրվականը կ'ոռնար ու կը հեծեր. մերթ կարծես անսվաղ ճիվաղներու ամբոխներ միջոցին մեջ կը պայքարեին։

Հեծկլտուքները դադրած էին. Կոլոխվաթով, հանդարտած, ըսավ.

—Իվան Նիքիթիչ, դուն ծերունի՜ մըն ես, խոստովանեցո՜ւր զիս։

—Ի՞նչպես կրնամ ընել ատիկա, ես բոր չեմ։

—Ծայրահեղ պարագաներու մեջ արարողություն կրնա ընել մարդ. դուն գիտես Եկեղեցիին ծեսերը... չեմ ուզեր մեղավոր մեռնիլ. այո՜, որքան ալ որ երիտասարդ, սակայն շատ մեղք գործած եմ։

Իվան Տուրաք հազաց՝ ձայնին ուժգնություն տալու համար և արտասանեց հանդիսավոր.

—Տե՜ր, մաքրե՜ զիս, ողորմե՜ մեղավորիս. հետո հարեց.

—Գլուխդ բաց, Սեմեն Ավտեիչ՝ Ծառայ Տեառն։

Մյուսը հնազանդեցավ. ծերունիին սառուցիկ ձեռքը հանգչեցավ մատաղ գլխուն վրա, ու դողդոջուն ձայն մը արտասանեց առաջին աղոթքը։

Կոլոխվաթով կու լար. իր կարգին, Իվանի պատվերին համաձայն. «Հաւատամք»ը ըսավ, և հետո սկսավ ճշմարիտ խոստովանանքի մը։

—Սեմեն Ավտեիչ՝ Ծառայ Տեառն՝ կը հիշե՞ս թե Աստուծո կը խոտիս և ոչ ինծի։

Գրեթե ամեն հարցումի զղջացյալը կը պատասխաներ.

—Մեղա՜ Աստուծո...

—Հիմակ չե՞ս հիշեր, հարցուց վերջապես ծերունին, մասնավոր մեղքեր։

—Ամեն բանի մեջ մեղք գործեցի... նախանձեցա, և իմ վիճակս ինծի երբեք բավական չէր թվեր. միշտ իմ ունեցածես ավելիին պետք ունեի, ու միշտ ավելի՜ն. ինքզինքս գոհացնելու համար ուրիշին ստացվածքին աչք կը տնկեի. իմ ծերության տարիներուս պիտի զղջամ, կ'ըսեի ինքնիրենս. Աստված չուզեց որ այդ տարիքին հասնիմ... Եվ հիմակ իմ հեգ հորաքույրս՝ Քաթերինա Ստեֆանովնա՝ բացը պիտի մնա իր զավակներով, որովհետև զինքը խաբեցի և պզտիկներուն ապրուստը ապահովելու բնավ հոգ չտարի.—և ոչ իսկ իմ հոգիիս փրկության փույթ կ'ընեի. կը կրկնեմ, ամեն կերպ մեղքերով հանցավոր եմ...

—Աստուած թողութիւն շնորհեսցէ...

—Իմ խնամակալությանս հանձնված երկու քեռորդիներուս ժառանգությունը յուրացուցի... տափաստանին մեջ շատ մը աղջիկներ առեվանգեցի։

—Աստուած թողութիւն շնորհեսցէ...

Կոլոխվաթով զգաց թե վերջին քունը կը ծանրանար իր վրա. իրեն կը թվեր, հիմակ, մրրիկը չէր այլևս որ, հոն, վերը, կը գոռար, այլ նախախնամության ձայնը։

—Արձակեսցէ քեզ Աստուած յամենայն մեղաց քոց, Սէմէն Ավտէիչ՝ Ծառայ Տեառն,— արտասանեց անգամ մըն ալ Իվան Տուրաքի հաստ ձայնը...

Երեք օր վերջը, երբ վերջապես փոթորիկը դադրեցավ, կառքը գտան իր ձյունե փոսին մեջ։ Մարդ ու անասուն սառած էին ու մեռած՝ իրարու քով. ինչպես ապրած՝ նոյն քովի։

ՄԱՄԻՆ ՍԻՊԻՐԻԱՔ

ՊԻՄԻ

(Կապիկի մը պատմությունը)

Օրանկութանը ոչխարներու գոմին կապված վանդակին մեջ սկսավ ոգորիլ. գիշերը հեղձուցիչ տաք էր. ու մինչ Հանս Պոայթմանին հետ մեր անկողինները նավին հառաջակողմը տանելու համար իր առջևեն կ'անցնեինք, ոտքի ելավ կապիկը ու սկսավ ակռաները կրճտել։ Մալայան Արշիպեղագոսին կղզիներեն մեկուն մեջ բռնած էին զինքը և Անգլիա կը տանեին մեկ շիլինով ցուցադրության հանելու համար։ Չորս օր ամբողջ մաքառած ու կաղկանձած էր հոն և անդադար իր վանդակին երկաթ ձողերը կը ծեծեր ու քիչ մնացեր էր որ մեռցներ նավաստի մը՝ որ անզգույշ՝ անոր խոշոր մազոտ ճիրանին տակ ինկեր էր։

«Քեզի համար շատ շա՛տ լավ պիտի ըլլար, բարեկամս, եթե քիչ մը ծովախտե բռնված ըլլայիր», ըսավ Հանս Պոայթման, վանդակին քովը կենալով. «Քու Տիեզերքիդ մեջ խի՛ստ շատ ես ունիս»։

Օրանկութանին բազուկը անփութորեն դուրս սահեցավ ձողերուն մեջտեղեն. ոչ ոք պիտի հավատար թե կապիկը օձի մը պես հանկարծուստ գերմանացիին կուրծքին պիտի խոյանար։ Գիշերազգեստին բարակ մետաքսը պատռտեցավ. Հանս անտարբեր ետ եկավ, նավակի մը ճիշդ քովին կախված պանանայի խուրձեն ճյուղ մը փրցնելու համար։

«Խի՛ստ շատ ես...», ըսավ Պոայթման պտուղը կեղևելով ու կենդանիին տալով, մինչ ան մետաքսը կը փեթռտեր։

Մեր խշտյակները տարինք նավին հառաջակողմը, քնացող նավաստիներուն քով, հովին բերանը։ Ծովը ծխալից յուղի պես էր, բացի նավին հառաջամասեն, ուր կը հրավառեր ան, ու դարձյալ կը շրշրշեր կ'երթար խավարին մեջ, տժգույն բոցի բիծերով։ Քանի մը մղոն անդին փոթորիկ կար, փայլակին շոշյունը կը տեսնեինք։ Նավին կովը, կապիկին արտադրած գոլեն ու հոտեն անհանգիստ, ատեն ատեն տառապագին կը բառաչեր, ճիշդ ինչպես գիշերապահը կը պատասխաներ կամրջակեն եղած կոչերուն. մեքենաներու ճռինչը որոշակի կը լսվեր։ Հանս քովս երկնցավ ու գիշեր-բարիի սիկառ մը վառեց. ասիկա խոսակցության մը սկսելու նշան էր բնականաբար. ծովին ձայնին պես հանդարտեցուցիչ ձայն մը ու ծովածավալ փորձառություն ուներ ան. որովհետև իր գործն էր աշխարհի չորս դին պտտիլ, միաբլթակ տունկեր, վայրի կենդանիներ ու ազգագրական նմույշներ ժողվել՝ գերման ու ամերիկացի վաճառականներու համար. ես կը դիտեի իր սիկառին լուսափայլ ծայրը որ կը ծավալեր կամ կը հատներ մութին մեջ՝ խոսքերուն ելևէջին

համեմատ. ու այսպես գրեթե քունս տարավ. օրանկութանը, իր արձակ անտառներուն երազներեն խռովված, սկսավ քավարանի հոգիի մը պես կաղկանձել ու մոլեգին՝ վանդակին ձողերը քաշկոտել։

«Եթե թող տրվեր հիմակ, մենե քիչեր պիտի կրնային ողջ մնալ հոս», ըսավ Հանս հուլորեն, «աղե՛ կը ճչե, տե՛ս թե հիմակ ի՞նչպես պիտի խելոքցնեմ զինքը, երբ հանդարտի». աղմուկը դադրեցավ, և Հանս օձի պես սուլել սկսավ. նմանությունը այնքա՛ն կատարյալ էր, որ տեղես վեր ցատկեցի, անդուլ մահացու ձայնը սահեցավ գնաց կամրջակին վրայեն ու կապիկը դադրեցավ վանդակը ճանկռոտելե. կենդանին արհավիրքի նոպայի մը մեջ կը դողդղար։

«Ձայնես էր որ կանգ առավ», ըսավ Հանս. «Այս խաղը սորվեցա Մոկունկ Թանճոնկի մեջ, ուր փոքրիկ կապիկներ կը հավաքեի Պերլին ղրկելու համար. աշխարհի վրա ամեն ոք կապիկեն կը վախնա—բացի օձեն, ուստի կապիկներու հանդեպ օձ կը ձևանամ ու զանոնք բոլորովին կը հանդարտեմ. չափազանց եսասեր են անոնք, իրենց գեշ սովորությունն է այդ։ Կը քնանա՞ս թե ոչ. արթուն ես. կամ մտիկ կ'ընե՞ս եթե քեզի անհավատալի պատմություն մը ընեմ»։

—Ամբողջ աշխարհի վրա ինծի համար անհավատալի պատմություն չկա, ըսի իրեն։

—Լա՛վ, եթե հավատալ գիտես ուրեմն բան գիտես. հիմա փորձեմ հավատքդ։ Երբ այս պզտիկ կապիկները կը ժողվեի, 79—81ի ատեններն էր, ու ես Արշիպեղագոսի կղզիներուն մեջ կը գտնվեի. հոն, հո՛ն, մութի՛ն մեջ.— ու Նոր Կինեաի հարավակողմը ցույց կու տար.— Մայն Կոթ. (Աստված իմ) քիչ մնաց, որ կյանքս վրա տայի այդ կապիկները բռնել ուզելով. այդ կենդանիները եթե մատներդ չխածնեն չփրցնեն՝ անպատուզելով. այդ կենդանիները եթե մատներդ չխածնեն չփրցնեն՝ անպատճառ հայրենաբաղձութենե կը մեռնին. որովհետև անոնց հոգին անկատար մնացած է ու ետը չափազանց զորացած, գրեթե ամբողջ տարի մը հոն կեցած էի, ու Պեռթրան անունով մեկը գտա հոն. բարի ֆրանսիացի մը՝ մինչև ոսկորներուն ծուծը բնապատում. կ'ըսեին թե փախստյա հանցապարտ մըն էր, բայց լավ բնապատում էր, ու այդքանը հերիք էր ինծի. անիկա կենդանիները անտառներեն կը կանչեր, ու անոնք կու գային իրեն. ու կ'ըսեի իրեն թե ինքը Ս. Ֆրանչիսկոս մըն էր. կը խնդար ու կը պատասխաներ թե երբեք ձուկերուն քարոզած չուներ։

«Եվ այդ մարդը, որ կենդանիներ ընտելացնելու մասին անզուգական էր, իր տունին մեջ ճիշդ այս վանդակի օրանկութանին պես հատ մը ուներ, զայն պզտիկուց ձեռք ձգած էր, և անիկա Պեռթրանին համար զավակ, եղբայր, օբերա-քոմիք, ամեն ինչ էր. տունին մեջ հատուկ սենյակը ուներ—վանդակ չէ՛, սենյակ—անկողինով ու սավաններով. գիշերը

հոն կը քնանար ու երբ առտուն արթննար, սիկառը կը ծխեր Պեռթրանին հետ ու կը ճաշեր. հետո թեթեւի պտույտի կ'ելլեին, ինչ որ ամենեն սոսկալին էր։ Հետ Կոթ, (Տե՛ր Աստված) տեսած եմ այդ կենդանին որ աթոռին մեջ ետ ընկրկելով կը խնդար երբ Պեռթրան կես-կատակներ կ'ըներ ինծի. անիկա անասուն չէր, մա՛րդ էր. Պեռթրանին կը խոսեր ու ան կը հասկնար, աչքովս տեսեր եմ, ու միշտ ինծի հանդեպ քաղաքավար էր, բացի երբ խիստ շատ խոսակցեի Պեռթրանին հետ ու իրեն բնավ բան մը չըսեի. այն ատեն զիս մեկդի կը քաշեր,— այո՛, այդ մեծ սև սատանը, իր ահագին թաթերով,—ճիշդ տղու մը պես, անիկա անասուն չէր՝ մա՛րդ էր. այս բանը հասկցա դեռ երեք ամիսը չըրացած, Պեռթրան ալ գիտեր. և Պիմին ինքն ալ կիսովին կը հասկնար մեզ, սիկառը կապույտ լինտերուն ու խոշոր շնատամներուն միջև։

«Հոն տարի մը մնացի, երբեմն կապիկներ ու մերթ ալ թիթեռնիկներ ու միաբլթակներ ժողվելու. անգամ մը Պեռթրան ըսավ ինծի թե կ'ուզեր կարգվիլ, որովհետև հարմար աղջիկ մը գտած էր, և հարցուց ինծի թե աղեկ կ'ընե՞ր. հետո շարունակեց գովել աղջիկը—կես-ֆրանսացի աղջիկ մը.—շատ աղվոր է, օ՜ շատ աղվոր, կ'ըսեր ան. մինակ թե, կ'ըսեմ իրեն. Պիմին մտածեցի՞ր. եթե զիս մեկդի կը քաշե քեզի խոսած պահուս, ուրեմն ի՛նչ պիտի ընե կնոջդ. բզիկ բզիկ պիտի ընե զայն. եթե քու տեղդ ըլլայի, Պեռթրա՛ն, կնոջս իբրև հարսանեկան նվեր Պիմիին հարդալիր դիակը պիտի տայի ապահովաբար. այդ ժամանակներուն կապիկներու բարքին լա՛վ գիտակ էի։ Զարնե՞մ, ըսավ Պեռթրան. կենդանին քուկդ է, ըսի, բայց եթե իմս ըլլար զարնված պիտի ըլլար արդեն։

«Այն ատեն վզիս վրա Պիմիին մատները զգացի. Մա՛յն Կոթ. կը վստահեցնեմ թե այդ մատներով կը խոսեր ան. անոնք խուլհամրի այբուբենն էին. ամբողջակա՛ն. իր մազոտ բազուկը պարանոցիս շուրջ սահեցուց, դունչս վեր վերցուց ու երեսս նայեցավ, ճշդիվ տեսնելու համար թե կը հասկնայի՞ զինքը, ինչպես ինքը զիս կը հասկնար։

«—Տե՛ս, տե՛ս, ըսավ Պեռթրան, և դուն պիտի զարնեի՞ր զինքը, մինչ ան քեզ կը գգվե. ատիկա տեսոնյան ապերախտություն է։

«Բայց ես գիտեի թե մշտակա թշնամիս ըրած էի Պիմին, որովհետև իր մատները պարանոցիս մեջեն մահը գուշակել կու տային. հաջորդ անգամ որ տեսա Պիմին, մեջքս ատրճանակ մը կար, որուն երկարեց թաթը, ես ալ բացի զենքը՝ ցույց տալու համար թե լեցուն էր. անտառներու մեջ տեսած էր պզտիկ կապիկներու զարնվիլը, ու հասկցավ։

«Այսպես, Պեռթրան ամուսնացավ ու բոլորովին մոռցավ Պիմին որ իր կուրծքին տակ կես-մարդկային սիրտ մը կը կրեր. կը. տեսնեի զին-

քը, որ կը ցատկոտեր ու մեծ ճյուղ մը առնելով ավազը կը փորձկեր, մինչև որ գերեզմանի պես մը բանար, ու կ'ըսեի Պեռթրանին, ի՛նչ կ'ընես ըրե, Պիմին մեռցուր, որովհետև նախանձեն խենթ կտրած է։ Իսկ Պեռթրան կ'ըսեր.—Բնավ խենթ չէ ան, անիկա կինս կը սիրե ու կը հնազանդի անոր, ու երբ հրամայե հողաթափները կը բերե. ու սենյակին ընդմեջեն կը նայեր իր կնոջ՝ որ շատ գեղանի էր։

«Այն ատեն ըսի իրեն. կը կարծե՞ս թե կը ճանչնաս կապիկները, և այս կենդանին՝ որ ավազին վրա մոլեգին ինքզինքը կ'ուտե. երբոր տուն գա՝ մեռցուր զայն, որովհետև իր աչքերուն մեջ լույս մը կա՝ որուն իմաստն է մեռցնե՛լ, մեռցնե՛լ։ Պիմին տուն եկավ, բայց աչքերուն մեջ լույս չկար, ամբողջովին մարած էր, խորամանկ, շա՛տ խորամանկ էր ան, ու անխռով հողաթափները բերավ. Պեռթրան ինծի դարձավ ըսավ, ի՞նչ, դուն ինը ամսվան մեջ ավելի լա՞վ կը ճանչնաս զինքը քան ես տասներկու տարիե ի վեր. զավակ մը իր հայրը կը վշտացնե՞ միթե. ես զինքը կերակրած եմ. ինք ինծի տղա եղած է. այդ ոչնչաբանությունները կնոջս կամ ինծի անգամ մըն ալ չընես։

«Հետևյալ օրը Պեռթրան ինծի եկավ որ միասին նմույշի համար փայտե տուփեր շինենք, ու ըսավ թե կինը քիչ մը ժամանակի համար Պիմիին հետ պարտեզը թողած էր. հետո պատով տուփեր շինեցի և ըսի. եկուր տունդ երթանք ու բան մը խմենք. խնդաց ու ըսավ. երթա՛նք, մարդուկս։

«Կինը պարտեզը չկար, ու Պիմին չեկավ երբ Պեռթրան ձայնեց։ Կինն ալ չեկավ. ննջասենյակին դուռը զարկավ Պեռթրան, բայց ան ալ ամուր փակված էր. այն ատեն ինծի նայեցավ՝ երեսը ճերմակ. ուսերովս դուռը վեր վերցուցի, ու ձեղունին վրա խոշոր ծակ մը բացված տեսանք, ուրկե արևը կ'իջներ տախտակամածին վրա. զամբյուղը նետված թուղթեր, կամ սեղանին վրա ցրված խաղի քարտեր տեսա՞ծ ես երբեք. կինը մեջտեղ չկար, ու կ'ըսեմ քեզի թե ոչինչ կար այդ սենյակին մեջ կնոջ նմանող. տախտակամածին վրա բզկտուքներ կային, ու այդքան անոնց նայեցա ու չափազանց անհանգիստ եղա. բայց Պեռթրան քիչ մը ավելի նայեցավ տախտակամածին, պատին ու ծակին վրա գտնված բաներուն, հետո սկսավ խնդալ, մեղմ կամ բարձրաձայն, ու ես հասկցա։ Փա՜ռք Աստուծո, խենթեցեր էր. բնավ չլացավ, ոչ ալ աղոթեց. դուռին մեջ անշարժ կեցավ, ու շարունակեց խնդալ. հետո հարեց. կինս այս սենյակին մեջ առանձնացեր է, ու Պիմին ձեղունը ծակեր իջեր է. օ՜ն ուրեմն, այս այսպես է. ծակը գոցենք ու Պիմին սպասենք, անպատճառ պիտի գա։

«Սենյակը կարգադրելե վերջ տասը օր սպասեցինք այդ տունին մեջ. ու մեկ քանի անգամ Պիմին երևցավ, որ քիչ մը անտառեն դուրս կու գար, բայց կը վախնար, որովհետև գիտեր իր հանցանքը. տասներորդ օրը երբ դարձյալ եկավ, Պեռթրան զայն կանչեց, ու Պիմի եկավ ծովեզերքեն՝ ոստոստուն ու աղմկոտ. ձեռքին մեջ սև մազի երկայն գիսակ մը կար. Պեռթրան խնդաց ու ըսավ. օ՜ն. օ՜ն. ճիշդ որպես թե սեղանին վրա հայելի մը լոկ կոտրած ըլլար. ու Պիմի ավելի մոտեցավ. Պեռթրանին ձայնը մեղրի պես քաղցր էր, ու կը խնդար. այսպես երեք օր սիրով վարվեցավ անոր հետ, որովհետև Պիմի իր վրա ձեռք դպցնել չէր տար. այն ատեն Պիմի վերջապես ճաշի եկավ մեզի հետ. ձեռքի մազը արյունեն բոլորովին սևացած ու թանձրացած էր. Պեռթրան անոր համեմավոր գինի խմցուց, մինչև որ բոլորովին գինովցավ, ու հետո—

Հանս կանգ առավ հոս, սիկառը քաշելու համար.

—Ու հետո՞, ըսի իրեն.

«Ու հետո, Պեռթրան զայն իր իսկ ձեռքով սպաննեց, ու ես գացի ծովափը ժուռ գալու, որովհետև խնդիրը Պեռթրանին կը վերաբերեր. երբ վերադարձա կապիկը մեռած էր, ու Պեռթրան ալ մեռնելու վրա. բայց դեռ բարձրաձայն կը խնդար, բոլորովին գոհունակ։

«Հիմակ, գիտես օրանկութանի ույժին տարազը—մարդուն հետ համեմատելով մեկի դեմ յոթը—բայց Պեռթրան զայն մեռցուց բնատուր զենքերով, հո՜տ է հրաշքը»։

Վանդակին մեջ դժոխային դղորդը սկսավ։ «Օհո՜, մեր այդ բարեկամը տակավին խիստ շատ ես ունի իր Տիեզերքին մեջ. օ՜ն, հանդա՜րտ կեցիր»։

Ու Հանս սկսավ սուլել, երկարաձիգ ու թունալից. կրնայինք լսել հսկա անասունին վանդակին մեջ դողալը։

—Բայց ինչո՞ւ, հարցուցի ես, Պեռթրանին չօգնեցիր, փոխան թողելու որ մեռնի։

«Բարեկամս, ըսավ Հանս ընկողմանելով, նույն իսկ ինծի համար աղեկ բան մը չէր ապրել այդ սենյակը ձեղունին բացվածքովը տեսնելե վերջ. ու Պեռթրան ամուսինն էր... բարի գիշեր ու բարի քուն»։

ՐԸՏԵԱՐՏ ՔԻԲԼԻՆԳ

1907

ՍԻՐՈ ԹԱՂՈՒՄԸ

Նոճիին շուքին ներքև պեղեցի
Փոս մը մանկական գերեզմանի պես.
Ու թաղեցի հոն խոստումներըդ ես,
Խոստումներ՝ զոր մերթ տրվավ սերդ ինծի։

Զանոնք մրղեցի հողերուն տակ գորշ.
Ու մամոռտ քար մը դրի վրաննին.
Ու բոլորտիքը սիրո դամբանին
Պըսակ հյուսեցի վարդեն վաղաթոշ։

Մեռան ծաղիկներն՝ անզոր՝ սիրույդ պես,
Արևմարքեն ալ առաջ իրիկվան.
Սակայն՝ իմ ցավիս նըման անսասան
Նոճին՝ տարինե՜րն են հանդիսատես։

ԹՈՎՄԱՍ ԼԸՎ ՓԻՔՈՔ

ՀՈԼԱՆՏԱԿԱՆ ՕՐՈՐ

Գիշեր մըն էր, Վինքըն, Պլինքըն, Նոտ, միասին
Փայտ մուճակին մը մեջ նստած՝ նավարկեցին.
Նավարկեցին՝ գետին վրայեն մըշուշալույս՝
Դեպ ի ծովակ մը ցողերու։
«Տըղա՜ք, ո՞ւր կ՚երթաք, տըղա՜ք, ի՞նչ կ՚ընեք»
Հարցուց երեքին ծեր լուսնակն հեռուն.
«Մենք եկած ենք հարինգ ձուկեր որսալու
Մեջն աղվորիկ այս ծովերուն։
Ու մենք ցանցեր ունինք ոսկի, արծաթահյուս»
Ըսին Վինքըն, Պլինքըն և Նոտ։
Փայտ մուճակին մեջ մինչ կ՚երերային,
Խնդաց ծեր լուսնակն ու երգ մը երգեց.

Զանոնք վարող քաղցր հովիկն ալ գիշերային
Ցող ալիքները փոթփոթեց։
Փոքրիկ լուսավորներն էին՝ ձուկերն այն հարինգ.
Փոքրիկ լուսավորներ՝ մեջն աղվորիկ ծովակին։

ԷՈԺԵՆ ՏԻԼՏ

ՓՈՔՐԻԿ ԿԱՊՈՒՅՏ ՏՂԱՆ

Փոշին պատեր է խաղալիքը շընիկ,
Բայց կը կենա հաղթ ու մեծզի։

Մարդ-պուպրիկն ալ ժանգին գաթեր է կարմրիկ,
Գավազանիկն՝ իր ձեռքին մեջ՝ բորբոսե՛ր։
Կար ատեն մը՝ որ շնիկը դեռ նո՛ր էր,
Ու աղվոր էր փոքրիկ մարդուն ալ պուպրիկ.
Այն ատեն՝ երբ Պզտիկ Կապույտ մեր Տղան
Զանոնք պագավ ու զետեղեց խոքն անկյան։

«Օ՜ն, տեղ չերթա՛ք, մինչև ես գամ,
Ըսավ, չըլլա՛ որ ձայն հանեք»։
Ու նիրհեց մեջն իր ճոնիկին.
Հոն երազեց խաղալիքներն իր անգին.
Ու՝ երազեն՝ հրեշտակի երգ մ'այս անգամ
Ըսթափեցուց մեր Պզտտիկ Կապույտ Մանչն հեք...
Երկա՜ր, երկա՜ր տարիները, օ՜հ, շո՛ւտ անցան,
Բայց բարեկամ պուպրիկները դեռ կը մընան։

Կապույտ Տըղուն հավատարիմ՝ դեռ կը մընան
Անձնյուրն իր հին տեղը կեցած։

Ու կըսպասեն փոքրիկ ձեռքի մը հըպումին.
Ու կըսպասեն փոքրիկ դեմքի մը ժըպիտին։
Եվ, մինչ հոն են, այսքան երկա՜ր, երկա՜ր ատեն,
Կը զարմանան թե ո՜ւր մնաց Փոքրիկ Տըղան,
Թե ի՜նչ եղավ մեր Պզտտիկ Կապույտ Տըղան՝
Որ զիրենք հոն դըրավ, պաչիկ առավ, գընա՜ց։

ԷՈԺԵՆ ՏԻԼՏ

ԵՐԿԱՐԱՁԻԳ ԽԱՎԱՅԻՆ ԵՐԿԻՐԸ

Հանկարծ անբերկրային տարօրինակ փայլ մը շողաց մթին տեսարանին վրա. վարդագույն ցոլարձակություն մը՝ հետզհետե մթագնելով կը վերածվեր հրավառ պիսակներու։ Խավարշուտ երկինքը պատառ պատառ եղած էր, ու պատռվածքներուն ընդմեջեն կը սահեին լույսի պայծառ դրոշակներ, կարմիր, կապույտ, կանանչ ու ոսկեհոս գինիի նման. սաթերանգ, լուսավոր ժապավեններ, ծփին, գոգդոջուն ու կայթող, հետզհետե ավելի լայն, ավելի բարձր, ավելի ակնախտիղ կերպով լուսապայծառ, զարմանահրաշ փառքը կը շողշողար հորիզոնն ի վեր բարձրանալով ու նահանջող մթար ամպերուն մեջեն բոցի երկաթ տեգեր նետելով։ Մինչև որ փոփոխուն ճառագայթներու հրաշալի հրավառության մը մեջ բոցարծարծ ոսկեղեն կամար մը ոստոստեց արևելքեն արևմուտք՝ ծովածոցին տեսանելի լայնքը չափելով ու վերևի ոպիտակ լեռնագագաթներն ի վեր վառվուն կայծեր ու մարգարտափայլ ու մարգարտագույն ցոլքեր արձակելով։ Հոս էր ապահովաբար Օտինի ծիածանկամուրջը, Վալհալլա տանող շողշողուն արահետը։

Ջյումրյութի ու լեղակի երկար, նյարդավոր թելեր՝ վայրահակ կ'իջնեին անկե. զայն երկրին կապող ըղձական ծաղիկներու առասաներ. և անոր վրա կ'առկախվեր գեղմնակերպ, միգամածային ճերմակություն մը. ամպհովանի՝ որուն մեջեն կը թրթռային մեղեսիկք հանկարծածին ցոլքեր։ Հետո իբր թե այդ կամարը երկրային որսկանի մը ձեռքին լարված աղեղը ըլլար, բոտոր ճառագայթներ կ'արձակվեին անկե, արագ հաջորդությամբ, երկրին մթագին թիրախին նետված փքիններու պես։ Գույնի այլազան շրջանակները դարձդարձիկ կը պտուտքին, մերթ հառաջանալով, մերթ վերջացնելով, մերթ վարի ջուրերը պողովատիկ դողդոջուն կանանչի մը վերածելով ու մերթ ալ ձյունապատ բլուրներուն զարնվելով՝ մինչև որ կուտակված մարգարիտներու և ադամանդներու սուտակներ թվեին անոնք։ Ամբողջ վայրանկարը փոխված էր, ու ծովափին վրա մարդոց ու կիներու մթաստվեր խումբեր, իրենց աշխատությունը թողած, տժգույն դեմքերնին կը դարձնեին այդ ծփանուտ շքեղանքին, ու ծանր դույլերը կ'իյնային իրենց ձեռքեն, հսկայական սարդերե հյուսված մռայլ ոստայններու պես։

(ԹԵԼՄԱՅԻ անգլ. բնագրեն)

ԴԱՏԱՍՏԱՆԱՏՈՒՆԸ

Լռությունը տիրեց Դատաստանատան մեջ, և Մարդը՝ մերկ՝ երևցավ Աստուծո առջև։

Եվ Աստված բացավ Մարդուն Կյանքին Գիրքը։

Աստված ըսավ Մարդուն.—Դուն գեշ կյանք մը ունեցար, անգութ գտնվեցար անոնց հանդեպ, որ օգնության կը կարոտեին, և անոնց որ օժանդակության պետք ունեին. դաժան ու կարծրասիրտ եղար։ Աղքատները քեզի կը դիմեին, ու դուն չէիր լսեր, և ականջներդ գոց կը մնային Իմ վշտահարներուս աղաղակին։ Որբերուն ժառանգությունը յուրացուցիր ու դրացիներդ այգիներուն մեջ աղվեսներ արձակեցիր։ Մանուկներուն հացը առիր և շուներուն կերցուցիր. ու պողոտաներուն վրա ետևեն ինկար Իմ բորոտներուս՝ որ ճահիճներու մեջ կ՝ապրեին և որոնք հանգստավետ՝ զիս կը գովեին. և Իմ երկրիս վրա՝ ուրկե շինվեցար՝ շատ մը խողխողանքներ ըրիր։

Ու Մարդը պատասխանեց.—Ըրի՛ այդ ամենը։

Աստված բացավ կրկին Մարդուն Կյանքին Գիրքը։

Եվ ըսավ Աստված Մարդուն.—Դուն գեշ կյանք մը վարեցիր ու փնտռտկեցիր Գեղեցկությունը՝ զոր աչքիդ առջև դրի. ու չկրցար պահել Բարին՝ զոր ծածկեցի։ Սենյակիդ պատերը պատկերներով նկարեցիր ու սրինգներու ձայնով ելար պղծության անկողինեդ։ Ցոթը սեղաններ կանգնեցրիր այն մեղքերուն՝ որոնց համար մեռա, ու կերար բաներ՝ զոր ուտելու չէիր, և հանդերձանքիդ ծիրանին ամոթի երեք նշաններովը բանված էր։ Կուռքերդ ո՛չ ոսկի էին, ո՛չ ալ արծաթ՝ որոնք կը տեսնեն, այլ միսե՝ որ կը մեռնի։ Անոնց վարսքը անուշույքով կ՝օծեիր ու նուռեր կը դնեիր անոնց ձեռքերուն մեջ։ Անոնց ոտքերը քրքումով կը լվայիր ու գորգերդ կը փռեիր անոնց առաջին։ Անոնց թարթիչները ծարիրով կը ներկեիր ու զմուռսով կը ծեփեիր անոնց մարմինները։ Անոնց առջև կը ծնրադրեիր ու կուռքերուդ գահերը արևին տակ կը բարձրանային։ Արևին ամոթ՝ և լուսնին շամբշանք ցուցուցիր։

Մարդը պատասխանեց.—Ըրի՛ այդ ամենը։

Երրորդ անգամ մըն ալ Աստված բացավ Մարդուն Կյանքին Գիրքը։

Եվ Աստված ըսավ Մարդուն.—Կյանքդ չարիք եղավ։ Բարիին չարիք ըրիր ու վնաս հասցուցիչ քեզի բարիք ընողներուն։ Վիրավորեցիր ձեռքերը՝ որ քեզ սնուցին և անգոսնեցիր ստինքները՝ որ քեզի կաթ տվին։ Քեզի ջուրով եկողը ծարավ ետ դարձավ և արշալույսեն առաջ մատնեցիր քեզ իրենց վրաններուն մեջ պահող տարագիրները։ Որոգայթի մեջ ձգեցիր թշնամիդ՝ որ քեզ խնայեց, ու դրամով ծախեցիր քայլակից

բարեկամդ ու քեզի Սեր բերողներուն փոխարեն Չեղխություն տվիր։

Մարդը պատասխանեց.—Ըրի՛ այդ ամենը։

Աստված գոցեց Մարդուն Կյանքին Գիրքը և ըսավ.—Վստահա՛բար, քեզ Դժոխք պիտի խրկեմ. Դժոխք խրկել կ՝ուզեմ քեզ։

Մարդը պոռաց.—Չե՛ս կրնար։

Աստված ըսավ Մարդուն.—Ինչո՞ւ համար և ի՞նչ պատճառով չեմ կրնար եղեր քեզ Դժոխք խրկել։

—Որովհետև Դժոխքի մեջ անցուցի կյանքս, պատասխանեց Մարդը։

Ու լռությունը տիրեց Դատաստանատան մեջ։

Վայրկյան մը հետո Աստված խոսեցավ ու ըսավ Մարդուն.— Քանի որ քեզ Դժոխք չեմ կրնար խրկել, ապահովաբար քեզ Երկինք պիտի խրկեմ. Երկի՛նք խրկել կ՝ուզեմ քեզ։

Մարդը պոռաց.—Չե՛ս կրնար։

Եվ ըսավ Աստված մարդուն.—Ինչո՞ւ համար և ի՞նչ պատճառով չեմ կրնար քեզ Երկինք խրկել։

—Քանզի երբեք և ոչ ուրեք կարող եղած եմ Երկինքը երևակայելու, պատասխան տվավ Մարդը։

Ու լռությունը տիրեց Դատաստանատան մեջ։

ՕՍՔԱՐ ՈՒԱՅԼՏ

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՐՎԵՑՆՈՂԸ

Իր մանկութենեն ի վեր կատարյալ աստվածգիտությամբ լեցված էր և նույն իսկ երբ պատանի էր. բազմաթիվ սորբեր, ինչպես նաև մեկ քանի սրբուհիներ՝ որոնք իր ծնած արձակ ոստայնին մեջ կը բնակեին՝ զարմանալու չափ զգացված էին իր պատասխաններուն ծանրալուրջ իմաստութենեն։

Երբ իր ծնողները առնության պատմուճանն ու մատնին տվին իրեն, համբուրեց զանոնք, հրաժեշտ առավ աշխարհի մեջ շրջելու և մարդոց Աստուծո վրա խոսելու համար։ Որովհետև այն ատենները շատեր կային աշխարհի վրա, որ Աստծուն բնավ չէին ճանչնար, կամ թերի ծանոթություն մը ունեին անոր մասին, և կամ կը պաշտեին չաստվածներն որոնք անտառակներու մեջ կը բնակին և փույթ չեն ըներ զիրենք պաշտողները։

Երեսը արևին դարձուց ու ճամբա ինկավ, քայլելով՝ առանց տրե-

խի՝ ինչպես սուրբերը զորս տեսած էր, ու մեջքեն անցուցած կաշեպարկ մը ու թրծուն կավե սափորիկ մը։

Մինչ պողոտայեն կ՚անցներ, ինքը լեցուն էր այն հրճվանքով որ Աստուծո կատարյալ ճանաչողութենեն կը բխի, և անդադար Անոր գովքը կ՚ըներ։ Ժամանակ մը վերջ հասավ օտար երկիր մը՝ ուր բազմաթիվ ոստայններ կային։

Տասնըմեկ ոստայններե անցավ։ Այդ քաղաքներեն մեկ քանին հովիտներու մեջ էին, ուրիշներ մեծ գետերու ափունքը և ուրիշներ՝ բլուրներու վրա։ Յուրաքանչյուր քաղաքի մեջ զինքը սիրող ու իրեն հետևող աշակերտ մը գտավ, ու նաև ամենմեկ քաղաքե ամբոխ մը կը հետևեր իրեն, և Աստուծո գիտությունը կը տարածվեր բովանդակ երկրին մեջ. շատ մը իշխաններ դավանափոխ եղան, ու քուրմերը այն տաճարներուն, ուր կուռքեր կային՝ տեսան թե իրենց շահուն կեսը կորսված էր, և երբ միջօրեին իրենց թմբուկները կը զարնեին, հազվագյուտ հավատավորներե զատ ոչ ոք կու գար սիրամարգներով և ուտեստի ընծաներով՝ ինչպես սովորություն էր անոր գալեն առաջ։

Եվ սակայն քանի՛ ժողովուրդը իրեն կը հետևեր ու քանի կը ստվարանար իր աշակերտներուն թիվը, այնքան ալ իր ցավը կ՚աճեր, և անիկա չէր գիտեր, թե ինչո՛ւ իր վիշտը այնքան մեծ էր։ Որովհետև միշտ Աստուծո վրա կը խոսեր, ներշնչվելով կատարյալ աստվածգիտության այն լիութենեն՝ զոր Աստված տված էր իրեն։

Իրիկուն մը դուրս ելավ տասնըմեկերորդ քաղաքեն, և իր աշակերտներն ու մեծ բազմություն մը իրեն կը հետևեին. լերան մը վրա ելավ ու հոն ժայռի մը վրա նստավ, և իր աշակերտները շուրջը հավաքվեցան, ու բազմությունը ծնրադրեց հովիտին մեջ։

Գլուխը երկու ափին մեջ առավ ու լացավ. և ըսավ իր Հոգիին.— Ինչո՞ւ ցավով ու երկյուղով լեցուն եմ, և ինչո՞ւ իմ աշակերտներես անձնյուրը միջօրեի արևին պայծառությանը մեջ քալող թշնամի մըն է։

Եվ իր Հոգին պատասխանեց.—Աստված քեզ լեցուց իր կատարյալ գիտությունով, և դուն այդ գիտությունը ուրիշներուն հանձնեցիր. մեծազույն մարգարիտը բաժնեցիր և անկար հանդերձանքը բզքտեցիր։ Այն որ իր ունեցած իմաստությունը ուրիշին կու տա, ինքը բացը կը մնա. անիկա իր գանձը ավազակին տվողին կը նմանի։ Միթե Աստված քենե ավելի մաստուն չէ. ո՞վ ես դուն որ ուրիշին տաս Աստուծո քեզի վստահած գաղտնիքը։ Ատենոք հարուստ էի, ու դուն զիս աղքատացուցիր։ Երբեմն Աստված կը տեսնեի, և հիմակ դուն զայն ինձմե ծածկեցիր։

Վերստին լալ սկսավ, քանզի գիտեր թե իր Հոգին ճշմարտությունը

կ՚ըսեր իրեն և թե ինք կը նմաներ մեկուն, որ Աստուծո հանդերձին կը պլլվի՝ և որուն հավատքը զինքը կը թողու՝ քանի Աստուծո վրա հավատացողները շատանան։

Եվ ըսավ ինքնիրեն—Ա՛լ Աստուծո վրա պիտի չխոսիմ. այն որ իր իմաստությունը ուրիշին կու տա, ինքը բացը կը մնա։

Քանի մը ժամ անցնելե վերջ իր աշակերտները եկան իրեն, երկրը-պագեցին ու ըսին.—Տե՛ր, Աստուծո վրա խոսե մեզի, որովհետև դուն կատարելապես կը ճանչնաս զայն, ու քենե զատ ոչ ոք ունի այդ ճանաչողությունը։

Անիկա պատասխանեց.—Կը խոսիմ ձեզի Երկրի ու Երկինքի մեջ գտնվող բոլոր բաներուն վրա, բայց ձեզի Աստուծո մասին չեմ խոսիր։

Բարկացան անոնք ու ըսին.—Մեզի անապատը բերիր՝ որպեսզի կարենանք քեզ լսել. անոթի՞ ետ պիտի խրկես մեզ ու մեծ բազմությունը զոր ետևեդ ձգեցիր։

Անիկա պատասխանեց.—Չպիտի խոսիմ ձեզի Աստուծո վրա։

Ամբոխը տրտնջաց, ըսելով.—Մեզ անապատը առաջնորդեցիր և մեզի ոչ մեկ սնունդ տվիր։ Աստուծո վրա խոսե մեզի, և այդ բանը կը բավե։

Բայց անիկա բա՛ռ մը չպատասխանեց անոնց, քանզի գիտեր թե երբ անոնց Աստուծո վրա խոսեր, իր գանձեն պիտի կապտվեր։

Եվ իր աշակերտները տխրությամբ հեռացան, ու ժողովուրդին բազմությունը իր բնակությունը դարձավ։ Շատերը ճամբան մեռան։

Երբոր մինակ մնաց, ոտքի ելավ և դեմքը լուսնին դարձուցած ճամբորդեց յոթը ամիս, ոչ ոքի խոսելով ու ոչ ոքի պատասխանելով. յոթերորդ ամսուն վերջերը հասավ այն անապատը՝ որ Մեծ Գետին անապատն է։ Քարայր մը գտնելով ուր Հուշկապարիկ մը բնակած էր ատենոք, զայն բնակարան ըրավ ու վրան հանգչելու համար եղեգե անկողին մը շինեց ու եղավ ճգնավոր։ Եվ ամենմեկ ժամ ճգնավորը Աստված կը գովեր, անոր համար որ անիկա թույլ տված էր իրեն պահել անոր և անոր հրաշալի մեծության մասին քիչ մը ծանոթություն։

Արդ, իրիկուն մը երբ ճգնավորը նստած էր քարայրի առջին՝ զոր բնակարան ընտրած էր, շարաբարո երիտասարդ մը տեսավ, որ շատ գեղեցիկ դեմք մը ուներ և որ կ՚անցներ բարակ հագուստով, ձեռքերը պարապ։ Ամեն իրիկուն, ձեռքը պարապ, երիտասարդը անցավ և ամեն առտու վերադարձավ, ձեռքերը ծիրանիով ու մարգարիտներով լեցուն. որովհետև ավազակ մըն էր անիկա՝ որ վաճառականներու կարավանները կը կողոպտեր։

Ու Ճգնավորը դիտեց զայն ու գթաց անոր վրա։ Բայց բան մը չըսավ. որովհետև գիտեր թե ով որ կը խոսի, հավատքը կը կորսնցնե։

Առտու մը, երիտասարդը երբ կը վերադառնար, ձեռքերը ծիրանիով ու մարգարիտներով լեցուն, կանգ առավ, հոնքերը պռստեց, ոտքը ավազին զարկավ ու ըսավ Ճգնավորին.—Ինչո՞ւ անցած պահուս ինծի այդ կերպով կը նայիս։ Ի՞նչ է ան զոր աչքերուդ մեջ կը տեսնեմ, որովհետև ոչ մեկ մարդ ինծի այդ կերպով նայած չէ, և այդ բանը ինծի համար փուշ է ու տաղտուկ։

Ճգնավորը պատասխանեց.—Իմ աչքերուս մեջ տեսածդ գութն է։ Գո՛ւթն է որ իմ աչքերուս մեջեն քեզի կը նայի։

Երիտասարդը արհամարհոտ քրքիջ մը արձակեց ու դառն շեշտով մը ըսավ Ճգնավորին.—Ես ծիրանի ու մարգարիտներ ունիմ ձեռքերուս մեջ, և դուն մեջը հանգչելու համար եղեգե անկողին մը լոկ ունիս։ Դուն ի՞նչ գութ կրնաս ունենալ իմ մասին. և ի՞նչ պատճառավ ունենայիր այդ գութը։

—Կը գթամ քու վրադ, ըսավ Ճգնավորը, որովհետև Աստուծո գիտությունը չունիս։

—Այդ գիտությունը թանկագի՞ն բան մըն է, հարցուց երիտասարդը, քարայրին մինչև մուտքը հառաջանալով։

—Անիկա ավելի թանկագին է քան աշխարհի բոլոր ծիրանին ու մարգարիտները, պատասխանեց Ճգնավորը։

—Ու դուն ունի՞ս զայն, հարցուց ավազակը, ա՛լ ավելի հառաջանալով։

—Ատենոք, հապա՜, պատասխանեց Ճգնավորը. Աստուծո կատարյալ ծանոթությունը ունեի։ Բայց, իմ անմտությենես, ինձմե հանեցի ուրիշներուն ցրվեցի զայն։ Եվ սակայն, նույն իսկ հիմա, ինչ որ կը մնա ինծի այդ ծանոթությենեն, ինծի համար ավելի՛ թանկագին է քան ծիրանին ու մարգարիտները։

Երբ երիտասարդ հելուզակը ասիկա լսեց, ձեռքը գտնված ծիրանին ու մարգարիտները նետեց ու պողպատե կորածայր թուր մը քաշելով ըսավ Ճգնավորին.—Տո՛ւր ինծի անմիջապես այդ Աստուծո գիտությունը՝ զոր ունիս, եթե ոչ անկասկած քեզ կսպաննեմ։ Ինչո՞ւ չպիտի մեռցնեմ մեկը՝ որ իմինես ավելի մեծ գանձ մը ունի ձեռքի տակ։

Ճգնավորը թևերը բացավ ու ըսավ.—Ինծի համար լավագույն չպիտի՞ ըլլար մինչև Աստուծո արքայության սահմանները երթալ ու գովաբանել զինքը, քան աշխարհի մեջ ապրիլ անոր գիտությենեն զրկված։ Մեռցո՛ւր զիս, եթե այդ է փափաքդ. բայց ես քեզի պիտի չտամ աստվածգիտությունս։

Երիտասարդ ավազակը ծնրադրեց ու թախանձեց, բայց Ճգնավորը չուզեց անոր խոսիլ Աստուծո վրա, ոչ ալ անոր տալ ուզեց իր գանձը։ Երիտասարդը ոտքի ելավ ու ըսավ Ճգնավորին.

— Թո՛ղ ուզածիդ պես ըլլա։ Գալով ինծի, ես Յոթը Մեղքերուն քաղաքը պիտի երթամ, որ ասկե քալելով երեք օր մինակ հեռու է, և իմ ծիրանիիս փոխարեն հաճույքներ պիտի տան ինծի, ու մարգարիտներուս տեղ զբոսանքներ պիտի ծախեն։

Եվ ծիրանին ու մարգարիտները ժողվելով արագորեն հեռացավ։

Ճգնավորը զայն կանչեց ու թախանձագին հետևեցավ անոր։ Երեք օրվան միջոցին, ճամբան բռնեց գնաց երիտասարդ ավազակին ետևեն, հորդորելով որ ետ դառնա ու Յոթը Մեղքերու քաղաքը չմտնե։

Ատեն ատեն երիտասարդը Ճգնավորին կը դառնար, կը կանչեր զայն ու կ'ըսեր.—Կ'ուզե՞ս տալ ինծի Աստուծո այդ գիտությունը՝ որ ծիրանիեն ու մարգարիտներեն ավելի թանկագին է։ Եթե կ'ուզես տալ զայն ինծի, քաղաքը չեմ մտներ։

Եվ միշտ Ճգնավորը կը պատասխաներ.—Կու տամ քեզի ինչ որ ունիմ, այդ միակ բանեն զատ։ Որովհետև զայն քեզի տալ թույլատրված չէ ինծի։

Ու երրորդ օրվան վերջալույսին, Յոթը Մեղքերու քաղաքին ծիրանեգույն մեծ դուռներուն մոտեցան։

Ու քաղաքեն մեծ հաճույքի մը աղմուկը կու գար, որուն հանդեպ երիտասարդ ավազակն ալ ուրախացավ ու ձեռքը վեր առավ դուռը զարնելու համար։

Այս վայրկյանին, Ճգնավորը առաջ վազեց, երիտասարդին քղանցքեն քաշեց ու ըսավ անոր.

—Երկաթե՜ ձեռքերդ ու բազուկներդ վզի՛ս անցուր. ականջդ լավ մը շրթունքներուս դիր, ու քեզի պիտի տամ ինչ որ կը մնա ինծի Աստուծո գիտությենեն։

Երիտասարդը կեցավ։ Եվ երբ Ճգնավորը տվավ իր աստվածգիտությունը, հողին վրա կքեցավ ու լացավ, ու մեծ խավար մը իր աչքերեն ծածկեց քաղաքն ու ավազակը, այնպես որ ա՛լ չտեսավ զանոնք։

Մինչդեռ հոն կը մնար արտասվագին, զգաց որ մեկը իր քովը ոտքի կեցած էր. արույրե ոտքեր ու բարակ բուրդի պես մազեր ուներ ան։ Եվ անիկա վեր վերցուց Ճգնավորը և ըսավ անոր։ Մինչև այսօր Աստուծո կատարյալ գիտությունը ուներիր. հիմակ Աստուծո կատարյալ սերը պիտի ունենաս։ Ինչո՞ւ ուրեմն կու լաս։

Եվ համբուրեց զայն։

ՕՍՔԱՐ ՈՒԱՅԼՏ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միսաք Մեծարենցի՝ մեզ հասած բանաստեղծական ժառանգությունը կազմված է «Բաբախումներ», «Միածան», «Նոր տաղեր» ժողովածուներից և տարբեր տարիներին հեղինակած 46 քերթվածներից։

«ԲԱԲԱԽՈՒՄՆԵՐ»

Ժողովածուն Մեծարենցը կազմել է Կ. Պոլիս տեղափոխվելուց հետո և 1903-ի գարնանը հանձնել է Կեդրոնական վարժարանում իր հայերենի ուսուցիչ, հրապարակախոս ու բանաստեղծ Հրանտ Ասատուրին (1862—1928)։ Հեղինակը ժողովածուից տպագրության է հանձնել երկու բանաստեղծություն։

Հիշատակը — *գրված է ուսուցիչ և բանաստեղծ Կորյուն (Սարգիս) Մկրտիչյանի (1866—1892) մահվան տասներորդ տարելիցի առիթով։*

Փունջերը — *տպագրվել է՝ «Հանրագիտակ», Հանդես, Կ. Պ., 1903, մարտի 10, թիվ 10, էջ 214։ Ստորագրությունը՝ Մ. Մեծատուրյան։ Զոնված է մանկավարժ, բանաստեղծ ու հրապարակագիր Գրիգոր Շահինյանին (1876—1902)։ Մեծարենցի տպագիր առաջին ստեղծագործությունն է։*

Արևագալը — *տպագրվել է՝ «Հանրագիտակ», 1903, հոկտեմբեր 12, թիվ 28, էջ 579։ Ստորագրությունը՝ Միսակ Մեծատուրյան։*

Անդարձ — *բանաստեղծության մեջ հիշատակված Կապույտ-Դարը բլուր է Մեծարենցի ծննդավայրում։*

«ԾԻԱԾԱՆ»

Ժողովածուն, «Ոսկի արիշին տակ» խորագրով Մեծարենցը մտադրվել էր հրատարակել 1906-ին Վահրամ Թաթուլի «Լուսնին տակ երգեր» շարքի հետ՝ միևնույն գրքույկում։ Գրաքննությունը արգելեց այդ հատորիկի տպագրությունը, և բանաստեղծը հարկադրված եղավ հրատարակության ներկայացնել առանձին ժողովածու՝ «Միածան» վերնագրով։ Զանազան պատճառներով գրքույկի տպագրությունը ձգձվեց և լույս տեսավ 1907-ի մայիսի կեսերին։ «Միածանը» իր վրա բևեռեց ժամանակի գրական քննադատության ուշադրությունը և առաջ բերեց կրքոտ վեճեր։

Կայծեր — *տպագրվել է՝ «Մասիս», Հանդես, Կ. Պ., 1905, սեպտեմբերի 10, թիվ 28, էջ 444։*

Թրթռումներ — *առաջին անգամ տպագրվել է՝ «Մաղիկ», Հանդես, Կ. Պ., 1903, ապրիլի 19, թիվ 12, էջ 140։ Ստորագրությունը՝ Սիրանույշ Պերպերյան։ Երկրորդ անգամ հրատարակվել է՝ «Մասիս», 1905, սեպտեմբերի 10, թիվ 28, էջ 444։ Մեծարենցը կանացի կեղծանուն է ընտրել՝ տուրք տալով ժամանակի գրականության մեջ տարածված սովորությանը։*

Ցայգանվագ — *«Սեռնատ» վերնագրով տպագրվել է՝ «Մասիս», 1904, հոկտեմբերի 2, թիվ 40, էջ 634։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։*

Նրագի պահեր — *տպագրվել է՝ «Մասիս», 1905, մարտի 26, թիվ 5, էջ 73։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։*

Մտերմիկ տեսիլներ — *տպագրվել է՝ «Մասիս», 1905, դեկտեմբերի 17, թիվ 37, էջ 59։ Ջրանիվներ ծերունի արտահայտությամբ ակնարկել է ծննդավայրի անվավոր ջրաղացը։*

Ամպահաներու շուքին տակ — *տպագրվել է՝ «Մասիս», 1905, մայիսի 21, թիվ 13, էջ 196։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։*

Այգերգ — *տպագրվել է «Մասիս», 1905, ապրիլի 30, թիվ 10, էջ 154։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։ Կոչնակը վանքին արտահայտությունը վերաբերում է Մեծարենցի ծննդավայրի Քառասուն մանկանց վանքին, որ կառուցված էր Եփրատի ափին։*

Խոնջ իրիկունն առագաստն... — *առաջին անգամ «Սիրո թափառումներ (Զայնակ)» վերնագրով և Նավասդ Սիածան ստորագրությամբ տպագրվել է՝ «Մաղիկ», 1904, հունիսի 26, թիվ 26, էջ 174, երկրորդ անգամ՝ «Մասիս», 1905, հուլիսի 9, թիվ 20, էջ 314։*

Ցնորամ անդորրություններ — *տպագրվել է՝ «Մասիս», 1905, մայիսի 28, թիվ 14, էջ 13։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։*

Վերադարձի երգ — *«Սիրերգ» վերնագրով տպագրվել է՝ «Մասիս», 1904, օգոստոսի 14, թիվ 33, էջ 519։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։*

Կիրակմուտ — *տպագրվել է «Մասիս», 1906, մարտի 1, թիվ 1, էջ 7։ Բնաբանն առնված է «Երգ կիրակմտից» ժամերգից («Լոյս զուարթի» շարունակությունը)։ Քրիստոնեական եկեղեցին շաբաթվա առաջին օրը՝ կիրակին, համարում էր Քրիստոսի հարության հիշատակին նվիրված (տերունական) օր։ Կիրակիին նախորդած երեկոները նույնպես տոնական էին, տներում խունկ էին ծխում և մոմեր վառում։*

Նոպաները — *տպագրվել է՝ «Մասիս» 1905, հունիսի 25, թիվ 18, էջ 284։ Հեղինակը այս բանաստեղծությունը տպագրելիս առաջին անգամ գիտել է Միսակ Մեծարենց ստորագրությանը, որից այնուհետև չի հրաժարվել։*

Տապի նոպաներ — Կապույտ-դար — *տե՛ս «Բաբախումներ» ժողովածուի «Անդարձ» բանաստեղծության ծանոթագրությունը։*

Աշնանային նեծություններ — *«Աշնանային խոհեր (Սիրերգ)» վերնագրով տպագրվել է՝ «Մասիս», 1905, նոյեմբերի 26, թիվ 34, էջ 539։*

Գարունը կ'ապրեցնե — *տպագրվել է՝ «Մասիս», 1904, նոյեմբերի 3, թիվ 44, էջ 698։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։*

Սոնադին — *տպագրվել է՝ «Մասիս», 1904, դեկտեմբերի 31, թիվ 52, էջ 825։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։ Սոնադինը (սոնատինա) կամերային երաժշտության փոքր տեսակ է։*

Վայրկյաններ — *տպագրվել է՝ «Մասիս», 1904, դեկտեմբերի 24, թիվ 49, էջ 775։ Ստորագրությունը՝ Նավասդ Սիածան։*

Մթնշաղեր — *տպագրվել է՝ «Մասիս», 1906, ապրիլի 15, թիվ 8, էջ 115։*

Արևին — *տպագրվել է՝ «Մասիս», 1906, մարտի 18, թիվ 4, էջ 61։*

Ցիրերգ — *տպագրվել է՝ «Մասիս», 1905, նոյեմբերի 11, թիվ 34, էջ 603։*

Ցայգն է պայծառ... — *տպագրվել է՝ «Մասիս», 1905, մայիսի 7, թիվ 11, էջ 170—171։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։*

Երիկվան ծայներ — *տպագրվել է՝ «Մասիս», 1906, ապրիլի 29, թիվ 10, էջ 151։*

Առտվան արևին մեջ — *տպագրվել է՝ «Մասիս», 1906, մայիսի 20, թիվ 13, էջ 206։*

Ժողովածուն լույս է տեսել 1907-ի նոյեմբերի կեսերին և «Միածանի» նման, գրական քննադատության մեջ դարձել վիճաբանությունների առարկա։

Ջուրեն դարձին — տպագրվել է՝ «Մասիս», 1906, հունիսի 3, թիվ 15, էջ 227։

Անդարձ — տպագրվել է՝ «Մասիս», 1906, հուլիսի 22, թիվ 19, էջ 291։

Ջրտում — տպագրվել է՝ «Մասիս», 1906, օգոստոսի 5, թիվ 21, էջ 323։ Աստվածամայրն է կայներ — նկատի ունի հայրենի գյուղի Աստվածամոր եկեղեցին։

Աստվածամա՞ր — «Աստվածամա՞ր, աստվածամա՞ր» խորագրով տպագրվել է՝ «Մասիս», 1906, օգոստոսի 19, թիվ 23, էջ 306։ Բնաբանն առնված է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմից (բան 2, գ)։ Սրբության կույսը — խոսքը Մարիամ Աստվածածնի մասին է, որն ըստ Նոր կտակարանի լինելով կույս, ծնեց Հիսուս Քրիստոսին։

Մեռելոց — արձակ տարբերակը հավանաբար տպագրվել է Կ. Պոլսի «Սուրհանդակ» թերթում, ապա արտատպվել՝ «Գեղարվեստ» հանդես, Թիֆլիս, 1908, № 2, էջ 65։

Դամասկյան վարդը պատատվող կամ հյուսվող նուրբ վարդի տեսակ է, որ իր անունն ստացել է Սիրիայի Դամասկոս քաղաքից։ Ամեն մեռելոցի — քրիստոնեական եկեղեցին մեռելոցի (գերեզմանատուն այցելելու և հանգուցյալների գերեզմանն օրհնելու) օրեր էր համարում ծննդյան, Զատիկի (Հարության), Վարդավառի, Վերափոխման (Համբարձման) և Խաչվերաց (խաչի վերացման) տոներին հաջորդող օրերը։

Անանուն — տպագրվել է՝ «Մասիս», 1906, հունիսի 3, թիվ 15, էջ 227։ Վահրամ Թաթուլը բանաստեղծության գրության շարժառիթի մասին վկայել է. «Թոփ Դարու Մեծարենցը տեսնելու գացած էի. առաջարկեց քիչ մը դաշտ բարձրանալ, ճամփան ցորենի արտի մը եզերքը պատահմամբ ցանկապատի մը տակ պզտիկ ծաղիկ մը գտնելով հարցուց. «Վայրի՞ ծաղիկ, անունդ ի՞նչ է»։ Ու քիչ անդին ծունկերու վրա «Անանունը» ստեղծագործեց...» («Նավասարդ», հանդես, Բուքրեշ, 1925, պրակ Գ, էջ 75)։

Բաղձանք — ձոնված է բանաստեղծ, թարգմանիչ ու քննադատ Արտաշես Հարությունյանին (1873—1915)։

Հովը — առաջին անգամ արձակ ձևով տպագրվել է՝ «Սուրհանդակ», 1906, դեկտեմբերի 2, թիվ 2380, երկրորդ անգամ, չափածոյով՝ «Մասիս», 1907, մարտի 31, թիվ 19, էջ 375։

Իրիկվան մեջ խորին...— տպագրվել է՝ «Մասիս», 1907, մարտի 17, թիվ 17, էջ 335։

Իրիկվան իրն — օրիորդ Նարդիկը, որին ձոնված էր բանաստեղծությունը, գրասեր անձնավորություն էր։

Իրիկունս — Վահրամ Թաթուլի մասին տե՛ս «Անտիպ բանաստեղծ մը» հոդվածի ծանոթագրությունները։

Ի՞նչ արբեցությամբ...— տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», հանդես, Զմյուռնիա, 1907, օգոստոսի 1, թիվ 31, էջ 784—785։ Գեղամ Բարսեղյանը (1883—1915), որին ձոնված է քերթվածը, բանաստեղծ էր, արձակագիր ու հրապարակախոս։

Այս բաժնում ամփոփված են Մեծարենցի՝ ժողովածուներում չամփոփած, «Նոր տաղերից» հետո հեղինակած, ինչպես նաև ետմահու հայտնաբերված ու հրատարակված բանաստեղծությունները։

Իրիկվան դեմ — տպագրվել է՝ «Մասիս», 1905, հունիսի 25, թիվ 18, էջ 284։

Փոշին — ձոնված է արձակագիր, բանաստեղծ և հրապարակախոս Ռուբեն Զարդարյանին (1874—1915)։

Դեղին վարդեր — տպագրվել է՝ «Ծաղիկ», 1903, ապրիլի 19, թիվ 12, էջ 140։ Ստորագրությունը՝ Սիրանույշ Պերպերյան։

Հիշատակ (Սիրերգ) — տպագրվել է՝ «Հանրագիտակ», 1903, ապրիլի 26, թիվ 17, էջ 361։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։

Տղու մը մանը — տպագրվել է՝ «Հանրագիտակ», 1903, մայիսի 10, թիվ 19, էջ 396։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։

Բաժնված սիրտեր — տպագրվել է՝ «Մասիս», 1903, հունիսի 14, թիվ 24, էջ 377։ Ստորագրությունը՝ Միսաք Կ. Մեծատուրյան, Միածան։ Բանաստեղծության թեման իր հայտարարած մրցությամբ հայտարարել է «Մասիսի» խմբագրությունը։ Մեծարենցը ներկայացրել է ոչն քերթվածը և շահել հինգերորդ մրցանակը։

Պետրոս Դուրյան — տպագրվել է՝ «Մասիս», 1905, ապրիլի 2, թիվ 6, էջ 94։ Ստորագրությունը՝ Նավասպ Միածան։

Սիրտ ուղին — տպագրվել է՝ «Մասիս», 1903, հուլիսի 12, թիվ 28, էջ 444։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։

Հիշատակդ — տպագրվել է՝ «Մասիս», 1903, սեպտեմբերի 27, թիվ 39, էջ 619։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մ.։

Աչքերդ — տպագրվել է՝ «Հանրագիտակ», 1903, նոյեմբերի 15, թիվ 46, էջ 941։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։

Աչեան ծաղիկներ — տպագրվել է՝ «Մասիս», 1904, հունիսի 5, թիվ 23, էջ 365։ Ստորագրությունը or.[իորդ] Ս.[իրանույշ] Պ.[երպերյան]։

Քուն — տպագրվել է՝ «Մասիս», 1904, հոկտեմբերի 16, թիվ 42, էջ 664։ Ստորագրությունը՝ Նավասպ Միածան։

Եկուր — տպագրվել է՝ «Մասիս», 1904, հուլիսի 24, թիվ 30, էջ 469։ Ստորագրությունը՝ Նավասպ Միածան։

Ցայգերգ — տպագրվել է՝ «Մասիս», 1904, մարտի 20, թիվ 12, էջ 185։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։

Երազ օրեր — տպագրվել է՝ «Մասիս», 1904, մարտի 20, թիվ 12, էջ 186։ Ստորագրությունը՝ or. Ս. Պ.։ Քանքիլենը միջնադարի եվրոպական պոեզիայում բանաստեղծության տեսակ է, որ երգվում էր երաժշտական գործիքների ընկերակցությամբ։

Սպասում — տպագրվել է՝ «Մասիս», 1904, ապրիլի 2, թիվ 17, էջ 267։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։

Իրիկունը — տպագրվել է՝ «Մասիս», 1904, մայիսի 8, թիվ 19, էջ 302։ Ստորագրությունը՝ or. Ս. Պ.։

Ա՜ն իմ սի՞րտս է...— տպագրվել է՝ «Մասիս», 1904, նոյեմբերի 19, թիվ 46, էջ 732։ Ստորագրությունը՝ Նավասպ Միածան։ Տավիղն եվոլական — հունական դիցաբանում էոլը (եվոլ) քամիների տիրակալն էր, որի տավիղի լարերը արևածագի ժամանակ հնչում էին ամենաթեթև քամուց իսկ։

Ազերսանք — տպագրվել է՝ «Մասիս», 1905, մարտի 12, թիվ 3, էջ 44։ Ստորագրությունը՝ Շավասպ Միածան։

Սիրածայն նեծյուններ — «Գիրկընդխառնում» վերնագրով և Շավասպ Միածան ստորագրությամբ առաջին անգամ տպագրվել է՝ «Մաղիկ», 1904, հունիսի 26, թիվ 26, էջ 174, երկրորդ անգամ՝ «Մասիս», 1905, դեկտեմբերի 10, թիվ 5, էջ 64։

Հոգենոսգիստ — տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», 1907, դեկտեմբերի 5, թիվ 49, էջ 1216։

Կաղը, Խուլը, Համրը — տպագրվել են՝ «Տարեցույց Նշան Պապիկյան», Կ. Պ., 1908, էջ 185—186։

Առտուն — տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», 1907, հոկտեմբերի 31, թիվ 44, էջ 1092։ Հեղինակը մտադիր է եղել քերթվածը զետեղել «Նոր տաղերի» «Ըլլայի՜, ըլլայի՜» շարքում, բայց ինչ-ինչ պատճառով դուրս է մնացել։

Թղթիկը — տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», 1907, նոյեմբերի 7, թիվ 45, էջ 1126։

Տա՜ւր ինձի, Տեր... — տպագրվել է՝ «Լույս», հանդես, Կ. Պ., 1908, հունվարի 1, թիվ 1, էջ 22։ «Հայր մեր» — տերունական աղոթք, որը ըստ քրիստոնեական եկեղեցու, արտասանվել է Հիսուսի շրթերով և որի իմացությունը պարտադիր էր յուրաքանչյուր քրիստոնյայի։ Դուրյան Սրբազանի մասին տես «Եղիշե եպիսկ. Դուրյան» հոդվածի ծանոթագրությունները։

Մանիշակ ու մամռուռ — տպագրվել է՝ «Մաղիկ տղոց», հանդես, Կ. Պ., 1908, հունվարի 3, թիվ 34, էջ 418։

«Սենպոլիզմ»ը — տպագրվել է՝ «Լույս», 1908, հունվարի 26, թիվ 5, էջ 150—152։ Ստորագրությունը՝ Հրայր։ Բանաստեղծության մեջ Մեծարենցն անդրադարձել է «Միածան» և «Նոր տաղեր» ժողովածուների մասին արտահայտված կարծիքներին։ Գրության շարժառիթը «Լույսում» տպագրված Ալփալսանի (Ալեքսանդր Փանոսյան, 1859—1919) «Քննադատը. Անկեղծություն» երգիծական ոտանավորն է, որտեղ նա պատմում էր իր գրական մուտքի և բանաստեղծական անդրանիկ ժողովածուի նկատմամբ քննադատության վերաբերմունքի մասին։ Մեծարենցի բանաստեղծության մեջ կեղծանուններով հանդես են բերված ժամանակի գրական մի շարք դեմքեր. Դավիթ Կուլան — անհայտ, Աոյուծ Ալփյան — Ալ. Փանոսյան, Մեռեան Բայսամյան — բանաստեղծ, արձակագիր և քննադատ Մերուժան Պարսամյան (1883—1944), Ավանդ Տեր-անցյան — ուսուցիչ, հրապարակագիր և քննադատ Երվանդ Տեր-Անդրեասյան (1865—?), Նովիք Առման — խմբագիր, հրապարակախոս ու արձակագիր Ենովք Արմեն (1882—1968), Անկոպ Քարակոփ — բանաստեղծ և հրապարակագիր Հակոբ Տեր-Հակոբյան (1881—1960), Դրանիկ Ճրագ — բանաստեղծ և արձակագիր Տիրան Զրաքյան (Ինտրա, 1875—1921), Ճանանչ Եկուրյան — բանաստեղծ, արձակագիր, քննադատ ու արվեստաբան Տիգրան Զյոկյուրյան (1884—1915), Թագվոր Զատիկյան — Արտաշես Հարությունյան (տե՛ս «Նոր տաղերի», «Բաղձանք» բանաստեղծության ծանոթագրությունը), Օնան Ապտակցի — ուսուցիչ, լեզվաբան ու գրականագետ Հովհաննես Գաղանճյան (1870—1915), Երամ Տետոնյան — հրապարակախոս, արձակագիր և խմբագիր Արամ Անտոնյան (1881—1952), որի առաջաբանով լույս է տեսել «Միածանը», Զանդիկ Քոշյան — հրապարակախոս և խմբագիր Բյուզանդ Քեչյան (1859—1927), Եղյամ Պաստեղյան — Գեղամ Բարսեղյան (տե՛ս «Նոր տաղերի», «Ի՜նչ արբեցությամբ» բանաստեղծության ծանոթագրությունը), Եղուարդ Արփիյան — հրապարակախոս ու խմբագիր Տիգրան Արփիարյան (1854—1914), Զատիկ Արգաքիր — բանաստեղծ ու պատմաբան Հարությունն Մրմրյան

(1860—1926), Գիստրոս Փաքեքյան — Փայլակ (տե՛ս «Հեռամանց բարեկենդան» հոդվածի ծանոթագրությունները)։ Բանաստեղծությունում հիշատակված Զագմագճրլարը փողոց է հին Պոլսում, ուր գտնվում էին նաև գրավաճառանոցները, Սեյլանը Ցեյլոնն է։

Սիրերգ — տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», 1908, փետրվարի 27, թիվ 9, էջ 211։

«Զարթի՜ֆ, փառ իմ, զարթի՜ֆ» — օգտագործված է Ներսես Շնորհալու «Երգ ի պաշտման գիշերուց» սաղմոսի սկզածքը։

Միտք ու բնություն — տպագրվել է՝ «Լույս», 1908, մարտի 18, թիվ 12, էջ 407։

Իրիկնավերջ — տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», 1908, մարտի 18, թիվ 12, էջ 272։

Սիրերգ — տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», 1908, ապրիլի 1, թիվ 14, էջ 318։ Հեղինակի կենդանության օրոք հրատարակված վերջին ստեղծագործությունն է։

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

Ցայգայիկ — տպագրվել է՝ «Մասիս», 1905, հունիսի 11, թիվ 16, էջ 254։ Ստորագրությունը՝ Մ. Կ. Մեծատուրյան։

Ցայգանվագ — տպագրվել է՝ «Բյուզանդիոն», օրաթերթ, Կ. Պ., 1905, հունվարի 5, թիվ 2529։ Ստորագրությունը՝ Շավասպ Միածան։

Հատվածիկներ — տպագրվել է՝ «Մասիս», 1905, ապրիլի 16, թիվ 8, էջ 120։ Ստորագրությունը՝ Շավասպ Միածան։

Ջրին ծառը — տպագրվել է՝ «Սուրհանդակ», 1906, օգոստոսի 5, թիվ 2278։

Ուրթին տեղը — տպագրվել է՝ «Սուրհանդակ», 1906, օգոստոսի 26, թիվ 2296։

Աշնարեզ — տպագրվել է՝ «Սուրհանդակ», 1906, սեպտեմբերի 16, թիվ 2314։

Տեկարին երգը — Տպագրվել է՝ «Սուրհանդակ», 1906, սեպտեմբերի 30, թիվ 2326։

Առտուն — տպագրվել է՝ «Սուրհանդակ», 1906, դեկտեմբերի 2, թիվ 2380։

Մեծմայրիկը — տպագրվել է՝ «Մանգումեի էֆքյար», լրագիր, Կ. Պ., 1907, օգոստոսի 11, թիվ 1888։

Այս իրիկուն... — տպագրվել է՝ «Փունջ», հանդես, Կ. Պ., 1908, հունվարի 1, թիվ 16—17, էջ 261—263։

Ջեռերը — տպագրվել է՝ «Մաղիկ», հանդես, «Կաղանդչեք», բացառիկ, Կ. Պ., 1908, հունվարի 1, էջ 48—50։

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Եղիշե եպիսկ. Դուրյան — տպագրվել է՝ «Մասիս», 1905, ապրիլի 9, թիվ 7, էջ 101—103։ Ստորագրությունը՝ Շավասպ Միածան։ Հոդվածում ուրվագծվում է Պետրոս Դուրյանի եղբոր՝ հոգևորական գործիչ, բանասեր ու պատմաբան Եղիշե (Միհրան) Դուրյանի (1860—1930) գրական դիմանկարը։ Սկսած 1904-ից Ե. Դուրյանը մամուլում տպագրել է կրոնական քերթվածներ, որոնցից մի քանիսը քննության է առել Մեծարենցը։

Գ. Զոհրապ — տպագրվել է՝ «Մասիս», 1905, մայիսի 14, թիվ 12, էջ 188—190։ Ստորագրությունը՝ Շավասպ Միածան։ Հոդվածում բնութագրված է նովելիստ ու հրապարակագիր Գրիգոր Զոհրապի (1861—1915) բանաստեղծական հիմնական ժողովածուն. 1899—1902 թթ. Զոհրապը հրատարակել է ինը քերթված, որոնցից Մեծարենցը քննության է առել վեցը («Համակերպություն», «Հարցում», «Նար-

կիլեն», «Զատկի առթիվ», «Վառարանը», «Անծանոթը»)։ Սրանցից բացի հոդվածում մեջբերումներ են կատարված Զոհրապի «Վերադարձը» նորավեպից, «Ապրիմ-մեռնիմ» արձակ քերթվածից և «Ռեթեոս Պերպերյան» գրական դիմանկարից։

Ինքնադատության փորձ մը «Միածան»ին առիթով — *1906-ի մայիսի վերջերին, «Միածանը» հանձնելով հրատարակության, Մեծարենցը գրել է սույն հոդվածը՝ հույս ունենալով, որ «թերևս նոր կողմնալույսեր կարենա սփռել մութ անկյունները մեջ»։ Ինչ-ինչ պատճառներով մնացել է անտիպ, հրատարակվել է 1932-ին։*

1 Ինտրայի պարագան — *նկատի ունի 1906-ի նոյեմբեր-դեկտեմբերին հրապարակած Ինտրայի «Ներաշխարհն» իր հեղինակն դիտված» հոդվածը։*

2 Բինկյան ... Արածանի — *Բինկյանը գտնվում է Մեծ Հայքում, Եփրատ գետի վտակ Արածանիի (Արևելյան Եփրատ) ձախ ափին։*

3 «Անրշանք» — *Մ. Պարսամյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն (Կ. Պ., 1904)։* «Մտքին երկվորյա՞կ» *արտահայտությամբ ակնարկված է նույն բանաստեղծի «Պատրանքի ծաղիկներ» նոր ժողովածուն (Կ. Պ., 1907)։*

4 Գոլանճյան դեռ չէ տրցական... — *խոսքը Էդուարդ Գոլանճյանի (1880—1957) մասին է, որի բանաստեղծությունները առանձին գրքույկով («Արևելքի ծաղիկներ») հրատարակվեցին 1910-ին միայն։*

5 «Մրմունջք» ... «Հիշատակաց ծաղիկներ» — *առաջինը Վահան Մալեզյանի (1871—1967) ժողովածուն է (Կ. Պ., 1890), երկրորդը՝ (Կ. Պ., 1893) Ռուբեն Որբերյանինը (1874—1931)։ Երկու հեղինակներն էլ հետագայում, 1900-ին, հրապարակորեն դժգոհել են իրենց առաջին ժողովածուներից։*

6 Սեն-Ժորժ դը Պուելիե — *ֆրանսիացի բանաստեղծ, արձակագիր ու թատերգակ Ստեֆան Ժորժ դը Բուելիե-Լեպելիտեն (1876—1947) նատյուրիզմի (Մեծարենցի արտահայտությամբ՝ բնութենապաշտության) գրական ուղղության հիմնադիրներից է։*

7 Քննադատ մը — *նկատի ունի բանաստեղծ Վահան Թեքեյանին (1878—1945), որը Մեծարենցի նշած դիտողությունը արել է Ալեքսանդրիայի «Շիրակ» հանդեսում (1905, թիվ 1)։*

8 Վերլեն Պոլ *(1844—1896) — ֆրանսիացի սիմվոլիստ բանաստեղծ։*

9 Ուրիշ քննադատ մը — *խոսքը մխիթարյան բանասեր ու բանաստեղծ Կարապետ Տեր-Սահակյանի (1882—1915) մասին է, որը Մեծարենցի բանաստեղծության մասին իր կարծիքը հայտնել է 1905-ի նոյեմբերին «Բազմավեպ» հանդեսում։*

Անտիպ բանաստեղծ մը — *տպագրվել է՝ «Արևելյան մամուլ», առաջին եռամսյա հավելված, էջ 92—99։ Հոդվածը նվիրված է կեդրոնական վարժարանում Մեծարենցի դասընկեր Վահրամ Թաթուլի (1887—1943) «Լուսնին տակ երգեր» բանաստեղծական շարքի քննադատությանը (տե՛ս «Միածանի» ծանոթագրությունները)։ Համոզվելով, որ ընկերոջ քերթվածներին վիճակված չէ առանձին գրքույկով լույս տեսնել, Մեծարենցը որոշել է դրանք ներկայացնել հասարակայնությանը։*

1 Մալարմե Ստեֆան *(1842—1898) — ֆրանսիացի սիմվոլիստ բանաստեղծ։*

2 Ռոնտել — *բանաստեղծության տակ, որ ունի ինքնատիպ հանգավորում։*

Քննադատությունը — *տպագրվել է՝ «Մանզումեի էֆքյար», 1907, հունիսի 16, թիվ 1840։ Գրված է Տիգրան Զյոկյուրյանի «Միածան», Միսաք Մեծարենցի» գրախոսության և դրա կցված Ենովք Արմենի ծանոթագրության («Մասիս», 1907, հունիսի 9, թիվ 28—29, էջ 581—583) առիթով։*

1 Հրապարակային մատնանշումին...— *ակնարկը վերաբերում է իր «Ինքնադատության*

փորձ մը «Միածանին» առիթով» հոդվածին, որ հեղինակը մտադիր էր հրապարակել։

2 Գեղարվեստական խնդիր դարձած է...— *Ե. Արմենը, որ 1906-ի դեկտեմբերից «Մասիս» խմբագիրն էր, ապրիլի 7-ին ընթերցողներին հայտնել էր, թե նորաստեղծ «Մասիս»ի Մատենադարան» շարքով հրատարակելու է Մեծարենցի «Միածանը», սակայն, գժտվելով հեղինակի հետ, մայիսի 19-ին ծանուցեց, որ «տիրոջը (Մեծարենցի — Ա. Շ.) հետ գեղարվեստական խնդրի մը մասին անհամաձայնության պատճառով նախընտրեցինք Մատենադարանին չկցել անոր («Միածանի» — Ա. Շ.) հրատարակությունը»։*

3 Սիպիլ *(Զապել Ասատուր, 1863—1934) — բանաստեղծ, արձակագիր։*

4 Կնոջական անուն — *ակնարկում է այն, որ Մերուժան Պարսամյանը սկզբնապես իր չափածո և արձակ ստեղծագործությունները տպագրել է՝ թաքնվելով Մարի Հովհաննիսյան կեղծանվան տակ։*

Նարեկացիին հետ — *տպագրվել է՝ «Լույս», 1908, հունվարի 19, թիվ 4, էջ 133—137։*

1 Անշեջ մարեմի — *համաձայն Աստվածաշնչի, երբ Մովսեսը հոտ էր արածեցնում անապատում, վառվող, բայց անշեջ մորենու միջից նրան հայտնվեց աստվածը։*

Հետամնաց բարեկենդան — *տպագրվել է՝ «Բյուզանդիոն», 1908, մարտի 13, թիվ 3488։ Հոդվածը պատասխան է «Նոր տաղերին» նվիրված մի գրախոսականի, որի հեղինակն է բանաստեղծ ու արձակագիր Ժակ Սայապալյան-Փայլակը (1880—1915)։*

1 Էմերսոն (Էմերսոն) Ռալֆ *(1803—1882) — անգլիացի արձակագիր, թատերգակ և քննադատ։*

2 «Էնթարի» — *կնոջ կամ տղամարդու երկար վերնազգեստ։*

3 Moderne *(Ֆր.) — նոր, նորագույն, մոդեռն։*

4 Affiicheur *(Ֆր.) — հայտարարություններ և ազդագրեր փակցնող։*

5 Լեզվական առաքելության փառատենչիկ ցանկացողներուն — *հեգնանքն ուղղված է Ե. Արմենի դեմ, որը իր որոշ գեղարվեստական երկեր գրում էր «ապագա աշխարհաբարով»։*

6 Հովհաննու Հայտնություն — *Նոր կտակարանի գրքերից մեկը, որի հեղինակն է համարվում Հովհաննես առաքյալը, ուր նկարագրվում է նրա տեսիլը։*

7 Cordon-bleu *(Ֆր.) — հմուտ խոհարարուհի։*

8 Լանանայե, ապուխտե, յալանճի տոլմասիե — *Փայլակի բառերն են։ Նշանակում են՝ կաղամբով, ապուխտից, թփով (պասուց) տոլմա։*

9 Կը ճանաչարարեր Գոլանճյան մեկ բարեկամիդ... — *Էդ. Գոլանճյանը Մ. Պարսամյանին «Պատրանքի ծաղիկներ» ժողովածուի առիթով խորհուրդ էր տվել անկեղծ ու ինքնատիպ գրել չկրողանալու դեպքում կարդալ ու վայելել ուրիշների գրածը («Լույս», 1908, թիվ 9, էջ 309)։*

Աղեղ ու կապարճ — *Մեծարենցը մտադիր է եղել հոդվածը տպագրել Սուրեն Համազասպ կեղծանվամբ, սակայն մնացել է անտիպ և հրատարակվել է 1934-ին։ Ուղղված է Ենովք Արմենի դեմ։*

ՆԱՄԱԿՆԵՐ

Պահպանվել է յոթ նամակ։ Սրանցից հինգն ուղղված են Տիգրան և Օֆելյա Գասապյան ամուսիններին, մեկը՝ բանաստեղծ Արտաշես Հարությունյանին և վերջինը՝ Վարդան Ալանյանին։

Տիգրան Գասապյանը (?—1915) մասնագիտությամբ բժիշկ էր, բայց զբաղվում էր գրականությամբ, գրել է բանաստեղծություններ ու հոդվածներ։ Օֆելյա Ներկարյան-Գասապյանը (մհց. 1954) բժշկական կրթությունն ստացել էր Ամերիկայում, վերադարձել Կ. Պոլիս, ուներ գրական հետաքրքրություններ։ Գասապյանները Մեծարենցի մտերիմներն էին, հաճախ են այցելել նրան ու ցույց տվել մասնագիտական ու բարոյական օգնություն։ Վարդան Ասլանյանը (մհց. 1915) Մեծարենցի քրոջ ամուսինն էր, հետաքրքրվել է գրականությամբ, մամուլում հաճախ է հանդես եկել հոդվածներով։

1 «Լույս»ի հոդվածը — խոսքը Օ. Ներկարյանի «Հալքիի մեջ» հոդվածի («Լույս», 1907, օգոստոսի 25) մասին է, որով հեղինակը հորդորում էր հայ կնոջը աշխատել ու օգտակար լինել հասարակությանը։

2 Ատաբազար — հայաշատ քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմուտքում, Օ. Ներկարյանի ծննդավայրը։ Հաստատվելով Ատաբազարում, Գասապյան ամուսինները Մեծարենցին հրավիրել են իրենց մոտ։

3 Պեպի — Օ. Գասապյանի մտերիմ զավակը։

4 Փունջ — Գասապյանները Ատաբազարից Մեծարենցին են ուղարկել թաղարով ծաղիկ։

5 «Քափուր» — անուշաբույր մուգ կարմիր վարդ։

6 Ջիմաոա — գյուղ Սեբաստիայի նահանգում, Եփրատի աջ ափին։

7 Քարլայլ (Կարլեյլ) Թոմաս (1795—1881) — անգլիացի հրապարակախոս, պատմաբան, փիլիսոփա։ Էմերսոնի մասին տե՛ս «Հետամնաց բարեկենդան» հոդվածի ծանոթագրություններում։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նռանգ — տպագրվել է՝ «Մասիս», 1905, մայիսի 7, թիվ 11, էջ 171։ Ստորագրությունը՝ Նավասպ Միածան։ Ճիոֆրի Չոսրը (Ջեֆրի Չոսեր, 1340—1400) անգլիացի բանաստեղծ է և արձակագիր։ Մեծարենցի ծանոթագրության մեջ հիշատակված է Չոսերի «Քենտրբերյան պատմվածքներ» չափածո պատմվածաշարը։ Պոգաչիոի Տասնորյակ — նկատի ունի իտալացի գրող Ջիովանի Բոկաչչոյի (1313—1375) «Դեկամերոն» ժողովածուն։ Նռանգ — բանաստեղծության տեսակ, ռոնդելի տարատեսակներից։

Ջյուճին տակ (նամբու պատմվածք) — տպագրվել է՝ «Մասիս», 1906, հուլիսի 15, թիվ 18, էջ 284—288։ Մամին-Սիբիրյակը (Մամին Դմիտրի Նարկիսովիչ, 1852—1912) ռուս գրող է։ Նրա պատմվածքի բուն վերնագիրն է «Խոստովանություն», առաջին անգամ լույս է տեսել 1894-ին Պետերբուրգի «Մեր բոժի» ամսագրում։ Պատմվածքը 1906-ին ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակվել է Փարիզի «Ռեվյու դե ռևյու» հանդեսում, որտեղից էլ Մեծարենցը կատարել է իր փոխադրությունը։

Թլմեն — պելմեն։ Souffre-douleur (Ֆր.) — քավության նոխազ։

Գիմի (Կապիկի մը պատմությունը) — տպագրվել է՝ «Սուրհանդակ», 1905, դեկտեմբերի 23 (1906, հունվարի 5), թիվ 2388։ Ըստեարտ Քիպլինկը (Ջոզեֆ Ռեդյարդ Կիպլինգ, 1865—1936) անգլիացի գրող է։ Նոր Կինեա — Նոր Գվինեա (կղզի խաղաղ օվկիանոսում)։ Ս. Ֆրանչիսկոս (Ֆրանցիսկ Ասիզիցի) — քարոզիչ, մուրացկանների օրդենի հիմնադիրը (1182—1226), որին վերագրվել են հրաշագործ հատկություններ։

Միրս թաղումը — տպագրվել է՝ «Մասիս», 1907, ապրիլի 21, թիվ 22, էջ 434։ Թոմաս Լրվ Փիքոքը (Պիկոկ, 1785—1866) անգլիացի բանաստեղծ է, արձակագիր և քննադատ։

Հալանական օրոր — տպագրվել է՝ «Ծաղիկ տղոց», 1907, մայիսի 26, թիվ 39—40, էջ 20։ Էոժեն Ֆիլդը (Ֆիլդ, 1850—1895) ամերիկյան բանաստեղծ է, հռչակվել է մանկական բանաստեղծություններով։

Ֆերիկ կապույտ տղան — տպագրվել է՝ «Ծաղիկ տղոց», 1907, հունիսի 30, թիվ 49—50, էջ 80։

Երկարաձիգ խավային երկիրը, Դատաստանատունը, Իմաստություն սովորեցնողը — հրատարակվել են Եմահու Հայանի չէ, թե «Թելման» որ գրողի հեղինակությունն է։

Օսքար Ուայլդը (Օսկար Ուայլդ, 1854—1900) անգլիացի արձակագիր է, թատերգակ և քննադատ։

Ալապաստր—*սպիտակ, թափանցիկ գաչի քար*
Ալուցք, ալք—*խորություն, խորք, խոր տեղ*
Ակաղձուն—*լեցուն, լիուլի*
Ակատ—*փայլուն, գեղեցիկ քար, ագատ*
Ակնվանի—*լեռնաբյուրեղ*
Աղբյուս—*աղրակույտ*
Աղոբկեր—*աղաշական*
Աղջուրյուն—*մթություն*
Աղտաղտուկ—*աղաշատ, աղի*
Աղփուն—*տկար, թույլ*
Ամբարձուղեշ—*բարձրաճյուղ*
Ամբրոս—*անուշահոտ բույս*
Ամպզոլ—*ամպշող*
Այծնորան—*այծերի հոտ*
Այծտերև—*բուրավետ թուփ*
Անդ(եր)—*հանդ(եր)*
Անդեռոդ—*նախրապահ, տավարած*
Անդնային—*անդրաշխարհի, հանդերձյալ*
Անդոնություն—*մտատանջություն, տխրություն*
Անկապաշտ—*անկումայնության հետևորդ, դեկադենտ*
Անկարծ—*անսպասելիորեն, հանկարծակի*
Անձնյուր—*ամեն մեկը*
Անվարտի—*բացահայտ, մերկապարանոց*
Անուշույք—*քաղցրավենիք*
Աշնաեերփել—*աշնան գույն տալ*
Առաձիգ—*երկարաձիգ, ձգվող*
Առիզած—*գոգնոց, ծածկոց*
Առնավական, առնավություն—*պապենական, վաղեմի(ություն), հնություն*
Ասղանի—*ասեղով կարելու թել, դերձան*
Ասմազուն *1. տե՛ս հիրիկ 2. երկնագույն, կապուտակ*
Ավաշ—*ձայն, մեղեդի*
Ավլում—*ավլված աղբ*
Ավոտ—*առավոտ*
Ատոմ—*լի, լեցուն հասկ*
Արիշ—*խաղողի որթի նեցուկ, խշմար*
Արծպա—*օճառախոտ*
Արմատաֆի—*արմատապես, հիմնովին*
Արեակ—*արևաքար, ծիածանիկ*

Բադրոն—*նստարան*
Բազմաստեղ(նյան)—*շատ ճյուղեր ունեցող*
Բալ—*մեգ, մառախուղ, մշուշ*
Բալանիզ—*մշուշոտ, մշուշի նման ձգված*
Բանվանդ—*ապարանջան*
Բացը մնալ—*աղքատանալ, ունեզրկվել*
Բնապատում—*բնագետ*
Բոբ (ոսո)—*քահանա*
Բուստ—*մարջան*
Բուրումնաճեղց—*բուրումնալի, բուրավետ*

Գաղիշ—*դեզ, բարդոց*
Գաղձ—*մոլախոտ*
Գեղոր—*զարդ*
Գլթիկ—*սյունի գլխին հագցրած փայտիկ*
Գուլա—*քուլա, ծվեն*
Գրգլյակ—*ցնցոտի*

Դաբիր (ա)—*սրբարան*
Դարիճենիկ—*դարչին, կինամոն*
Դեղնել—*վարանել*
Դեղձան—*բաց դեղնավուն, խարտյաշ*
Դերևել—*ձախողել, ի դերև հանել*
Դնդերոտ—*մսեղ, մկանուտ*
Դրասանգված—*ծաղկազարդված, զարդանկարված*
Եկիֆանիկ—*կարմրակատար ճնճղուկ*
Եղերդ—*դառնահամ արմատով բույս, որ բովելով խառնում են սուրճին*
Ետիս—*հետ*
Երկեվան—*կասկածելի, երկբայելի*
Երկնուշեղ—*երկինք ձգվող ճյուղերով*
Երփներփուն—*երփներանգներով փոփոխվող*

Ջակատիլ—*բաղձալ, կարոտել*
Ջամբուռ—*իշամեղու*
Ջանակ—*ոսկու և արծաթի կտոր*
Ջաղփաղփուն—*թույլ, տկար*
Ջարմանուն—*զարմացնելու չափ գեղեցիկ կին*

Ջրոսեցուցիչ—*զվարճալի*
Ջրումրյուք—*զմրուխտ*
Ջավացք—*զովություն*
Ջվարթուն—*հրեշտակ*

Ըղձանույշ—*հավերժահարս*
Ընդոստնել—*ոտքի տակ տալ, տրորել*
Ընթադրել—*կոխոտել, տրորել*

Թակաղ—*կոշնակի թակ (դուռը բախելու)*
Թարշիշ—*հակինթ*
Թեֆարիզ—*անուշահոտ բույս, որից օծանելիք են պատրաստում*
Թխմվել—*խցկվել*
Թմբի—*լորենի*
Թոզ—*թոշնած, թառամած*
Թպիսի—*խակ և խակ, հար և նման*
Թռան—*շրջազգեստի զարդ*
Թուրինջ—*նարինջ*
Թևնակ—*նավակի թի*

Ժաել—*համարձակվել, հանդգնել*

Իգա—*վարսանդ*
Իրախնդիր—*իրական*

Լալոն—*ողբ, լաց*
Լամբակ—*պինչակի կրծքակալի վրա թելից սարքած օղակ*
Լելակ—*եղրևանի, յասաման*
Լիաբակ—*լիաշրջան, լիովին լուսավորված*
Լիսթա (ֆր.)—*ցուցակ, ցանկ*
Լյուզ տալ—*լողալ*
Լոդիկ—*թիկնոց*
Լոռածամ—*լոռով՝ ջրիմուռներով պատած, լոռե ծամեր ունեցող*
Լանակապույտ—*սպիտակավուն կապույտ*
Լուսամեջ—*լուսեղեն մեջք ունեցող*
Լույծ—*հեղուկ, հեղուկային*
Լուրջ—*լուրթ կապուտակ, երկնագույն*

Խաղացք—*վետվետանք, ծփանք*
Խամանիկություն—*խեղկատակություն*
Խատա-պելա—*խաթաբալա, գլխացավանք*
Խավաբարդում—*կուտակում, խճողում*

Խելխալ—*խելահեղ, կատաղի*
Խեռ—*անհնազանդ, ստամբակ*
Խնծիղ—*ցնծություն, ուրախություն*
Խնկապատար—*խնկալից*
Խշտի—*հարդանկողին*
Խորխ—*օձի շապիկ*
Խայտուկ—*մորմոք, կսկիծ*
Խուզի (թրք.)—*գառնուկ*
Խպնոտ—*ամոթխած*
Խտրոց—*չափանիշ, սահման*
Խուղ—*խրճիթ*

Մարիին—*բուրավետ խոտաբույս, ծոթրին*
Մաղկապատար—*ծաղիկներով լի*
Մայրի—*ծառի տեսակ*
Մխան—*ծխնելույզ*
Մործոր—*ձոր, ձորակ*

Կաթնաձիր—*կաթ տվող, պարգևող*
Կախիլ—*իլիկ*
Կախորան—*կախովի ճոճք*
Կարի—*սաստիկ, ուժգնորեն*
Կարկեհան—*նռնաքար, թանկարժեք քար*
Կայթել—*թոչկոտել, ցատկոտել*
Կափույր—*փական, պատյան*
Կապտել—*հափշտակել*
Կեղերջ—*ցավագին աղաղակ*
Կերպել—*կերպարանք տալ*
Կթտել—*տկարանալ, թուլանալ*
Կլկլալ—*ծխելու հարմարանք, նարգիլե*
Կղկաթել—*կարոտել, անձկալ*
Կնատ—*կնամարդի, կնոջը վայել*
Կնդրուկ—*անուշահոտ խեժ*
Կոծկոծել—*մեղմ կարկաչել*
Կոշկոռ կապած—*քոսոտ, փառակալած*
Կոտտանք—*խիստ ցավ, կսկիծ (վերքի)*
Կուճ կապել—*փունջ անել*
Կուր—*մակույկ*
Կրկներևույթ—*օդատեսիլ, միրաժ*

Հակուրջի—*ճոճք*
Համագրավ—*ընդգրկելով*
Համբարու—*առասպելական հրեշ, հուշկապարիկ*
Համբուն—*շարունակ, անընդհատ*

Համել (համենալ), համեցում—հապաղել, ուշանալ, ուշացում
Համոբեն—ամբողջ, բովանդակ
Համպար—բուրավետ բույս, մշկենի
Համուրդի—ուշացած, հապաղող
Հայտնաբարբառ—հրապարակով ասած
Հայրատ—ցանկասեր, վավաշոտ
Հանգրիճնում—կցմցում, կարկատանք
Հանգույն—նման, պես
Հանի—մամիկ, տատ
Հապո՞ն—հապա՞, դե՞
Հարացույց—նախագաղափար, աստվածային կամք
Հելպեր—հավանաբար, անշուշտ
Հեղակարծ—անսպասելի, հանկարծակի
Հեղգ—ծույլ, դանդաղ
Հեմեն—բոլորդ էլ, բոլորով էլ
Հեշտական—ախորժելի, քաղցր
Հեշտություն—հաճույք, բերկրանք
Հեստ—անհնազանդ, ըմբոստ
Հետեակ(ություն)—հաջորդ(ում)
Հեց—հենված, ապավինած
Հիր—1. երկնագույն կապույտ կամ ծիրանագույն, 2. եռաբույն մանուշակ
Հիրիկ—գեղեցիկ ու բուրավետ ծաղիկ
Հիմություն—խեղճություն
Հնամի—հնամյա
Հողվրտի(ք)—գերեզման(ներ), գերեզմանատուն
Հատեան—հոտավետ, անուշաբույր
Հոլորեն—դանդաղորեն, ծուլորեն
Հույր—գեր, պարարտ
Հունա(նոն—այնտեղ բառից)—հրեն
Հուսամ—նարդոս (ծաղիկ)
Հուսկ—վերջին
Զայնյակ—սոնետ (բանաստեղծության տեսակ)
Զյունաձիր—ձյունաճերմակ

Ղենչակ—գոգնոց, սրբիչ

Ճակատեան—իգամոլ, վավաշոտ
Ճանանչավոխտ—բազմագույն
Ճամուկ—նախշավոր, զարդարուն
Ճայիկ—էգ ձի
Ճանճկեն—ճերմակ ու սև բիծերով

Ճապկտուն—արագաստակ
Ճապոտ—երկաթյա ճանկ
Ճոկան—գավազան
Ճուկ տալ—կոանալ, խույս տալ
Ճոզած—վտիտ, թույլ
Ճոնիկ—մանկական սայլակ

Մազտամ—բուրումնավետ խեժ
Մաղմաղ—մարմանդ կրակ
Մածնում—կպչելը, փակցնելը
Մասխարա—խեղկատակ
Մարախ—մորեխ
Մարմաշ—շղարշ
Մեղեսիկ(ե)—ազնիվ քար(ից)
Մետ—կշեռքի նժար
Մետամասուէջ—մետաքսյա շարքերով, հեն քով
Մբար—խավար, մութ
Մոլոշ(ազույն)—փիփերթ(ազույն)
Մրկող—այրող, խանձող
Մուրտ, մրտենի—մշտադալար թուփ

Նամետ—նամոտ, խոնավ
Նայ—խոնավ, թաց
Նայադ—գետերի հավերժահարս, ջրահարս

Նատիր—զենիթի հակադիր կետը
Նափորտ—շուրջառ, պատմուճան
Նեյ—երաժշտական գործիք
Նիմֆարան—հավերժահարսերի (նիմֆերի) բնակատեղի
Նկան—հաց, բլիթ
Նկեռություն—խեղճություն
Նյուս—ձիու կոնակ, ուս
Նորզնոր—նոր, բոլորովին նոր
Նրբազայված—նրբացված
Նկեռանասակ—կարճահասակ, թզուկ

Շահապ(ած.)—իշխանական, նախարարական
Շահասպրամ—հոտավետ բույս, ռեհանի տեսակ
Շահարիկ—անտառային ոգի
Շանպրակ—անուշահոտ բույս
Շառազույն—կարմրագույն, շիկակարմիր
Շառայլ—ցոլք, ճառագայթ

Շառափ—տեղատարափ, հորդ անձրև
Շարամանված—հյուսված
Շափյուղա—կապույտ գույնի թանկագին քար
Շափրակ—պսակ (ծաղկի)
Շամիլ—ծառից թափված տերև
Շեր—գեղջկական երգ
Շերաս—շերամ
Շիղ—փոքր տերև
Շոգի, Շոգալի—գոլորշի

Ոսին—սին, դատարկ
Ոսկեման—ոսկեհյուս, ոսկիով մանված
Ոսկեսար—ոսկյա, ոսկեգեն
Որի—արշագռավ

Ջարանեար—չարաճճի
Ջեխով—հանդիմանանքով
Ջփույթ—անհոգություն

Պակուցում—ահ, վախ, սարսափ
Պանար—ընտանի եղջերավոր անասուն
Պայ, պայիկ—դիցաբանական ոգի, դիցանույշ, ֆեյա
Պանանա—բանան (արևադարձային պըտուղ)
Պանդույր—հիմար, ապուշ
Պասուտ—ծարավ, պապակ
Պատարուն—լցված, հորդացած
Պարանցիկ—պար բռնող, պարող, պարելով
Պարապնդում (ել)—ամրապակում (ել)
Պարեզոտ—պատմուճան, փարաջա
Պարեխ—ժայռ
Պարիկ—հնքիաթային ոգի, փերի
Պարտասած (ուն)—սաստիկ հոգնած(ություն), ուժասպառ եղած
Պարունակ—շրջանակ, շրջան
Պառուտակ—թաղանթ
Պիսակ—բիծ, պուտ
Պճինք—պճնանք, զարդարանք
Պոշ (թրք.)—դատարկ բան
Պողովատիկ—պողպատյա
Պանդ—բթամատով ու միջնամատով հարված հասցնելը

Պոռչտալ—գոռալ
Պոր—կարապ
Պորփյուր—կարմրագույն գեղեցիկ քար
Պտուտակել—պտույտ գործել
Պրիսմակ—պրիզմա
Պուպրիկ—խաղալիք, տիկնիկ

Ջամբել—կերակրել, սնուցել
Ջանջիլ—ազնիվ կտավ
Ջերուտ—տաքուկ, ջերմին
Ջնջին—չնչին

Ռահանորդ—ճանապարհորդ

Սամսարող—ծնքծնքվող, կոտրատվող
Սարակ—փոքր սար
Սարքինա—1. խչմար 2. շտեմարան
Սիրաշեր—սիրով ջերմացած
Սիկ—տիղմ
Սկրթել—հեռացնել, պոկել, ազատվել
Սղոխ—զով քամի
Սնդուս—մետաքսյա կտոր, դիպակ
Սորել—հոսեցնել
Ստաշխ—ինկի տեսակ
Սոգտանք—հանցանք
Սրանակ—առագաստ, վարագույր
Սրսկան (սրսկարան)—տաշտ կամ սկավառակ զոհերի արյան համար
Սրտապատար—սիրտը լեցուն
Սույլ—սուլոց, սուլելը
Սուտակ—կարմիր գույնի թանկագին քար

Վայրավատին—ցիրուցան, խառնիխուռն
Վարատական—աստանդական, հալածական
Վարնոց—ատորին տեսակի, էժանագին բան
Վարշամակված—վարշամակ՝ թաշկինակ կամ քող կապած
Վարսադիտակ—վարսավոր
Վերելակել—վեր ելնել, բարձրանալ
Վիժակ—վարագույր
Վիտակ-վիտակ—Վիտակել—վետվետալ, մետաքսյա ընտիր կտորի՝ վիտակի պես վետվետացող

Տախտապարող—գետնատարած, գետնին պառկեցնող
Տաղտապանք—չարչարանք, նեղություն
Տեսքե—կապուկ, կապ
Տերտ—դարդ, ցավ, վիշտ
Տիվ—ցերեկ
Տիվագոլ—ցերեկվա տաքություն
Տողանցք—շարք
Տրեզ—ոսկյա, արծաթյա կամ մետաքսյա թելերից հյուսած բարակ ժապավեն

Ցասուցիչ—զայրացուցիչ

Ուլ(ն)—վիզ, պարանոց
Ուծազուրկ—չսառած
Ուղ—ուղի
Ուղեշ—ծառի ճյուղ, որթի մատ
Ուղխ—գետ
Ուրեք-ուրեք—տեղ-տեղ

Փաղփ(ուն)—փայլ(ուն)
Փանափի—չնչին, նվաստ, անարգ
Փապար—խոռոչ, անձավ
Փարփառ—փայլուն, վառվռուն
Փողփողենէջ—փայլուն իջվածքով, շողշողալով
Փոսուռա—կայծոռիկ, լուսատիկ
Փին—նետ

Քայռ—գոհարազարդ մանյակ
Քարմարցանկ—կապարե նյութ կավե ամանները փայլեցնելու համար
Քարշեպ—քարե պատվար
Քմշոտ—քմահաճ
Քոզեք—ապարանջան
Քրթել—նվագել
Քրքում—բուրավետ բույս
Քցաք—կրոնավորի գլխարկ, ծածկոց
Քուղ—թել
Քումայք—արմավագույն

Օդանույշ—օդային ոգի

Օթեկ—հնացած

Ֆուլիա—ոսկինարգեմ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Միսաք Մեծարենց

ԲԱԲԱԽՈՒՄՆԵՐ

Գիշերին երազանքը 17
Հիշատակը (Զմրան ցրտին հովերեն վերջ) 17
Փունջերը 18
Նոր տարին 18
Աստղերը 19
Արևագալը 19
Մարմնի վերք, սրտի վերք 20
Կյանքի երգը 21
Հիվանդի հևքեր (Ցայգերգ) 22
Դեղին վարդեր (Փթթեցեք՝ ք միշտ, դեղին վարդեր, լքվա՜ծ վարդեր) 23
Հիշատակ (Գիշերն է լուռ, մութը պատած է չորս դին) 24
Տեղատարափ 25
Անդարձ (Գյուղին արևը կը հատնի լռին) 25

ԵՐԱԶԱՆ

Զմրան պարզ գիշեր 27
Սիրերգ (Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն,) 28
Կայծեր 29

Թրթռումներ 30
Ցայգանվագ 30
Երազի պահեր 32
Շերամին նինջը 33
Մտերմիկ տեսիլներ 33
Ճերմակ վարդեր 34
Աքասիաներու շուքին տակ 34
Այգերգ (Սարերուն մեջ կը կոծկոծի այգուն՝ կոչնակը վանքին) . . . 35
Գետափի երազանք 36
Խոնջ իրիկունն արագորեն... 36
Ցնորոտ անդորրություններ 37
Վերադարձի երգ 37
Կիրակմուտք 38
Նոպաները 39
Տապի նոպաներ 39
Աշնանային հեծություններ 40
Գարունը կապրեցնե 41
Հովին անցքը 42
Ծոնադին 43
Վայրկյաններ 45
Այգերգ (Այգն է ծաղիկ երազով լի ու բալածիգ՝ թեթևորեն.) . . . 46
Մթնշաղներ 46
Ծավակները 47
Մեղուները 48
Բյուրեղի դյութանք 49
Ղզեր 50
Ցայգանիար 51
Արևին 52
Ցայգային 53
Մթերգ (Ճառագայթի պես, ոսկեվարս ու նրբին,) 55
Ուռիներու շուքին տակ 56
Ցայգն է պայծառ... 58
Իրիկվան ձայներ 59
Առտվան արևին մեջ 60
Կապույտ հածումներ 62

Վայրկյան 63
Ջուրեն դարձին 64
Մառախուղ 65
Անձրև (Բացատանը վարագուրեց անձրևին քողքն ամպային) . . . 65
Անդարձ (Լուսնի լույսը ծառերեն ծաղիկի պես էր կախվեր.) . . . 66
Սիրերգ (Տրցակ մը հուսամ ու տրցակ մը ուրց) 67
Ջրտուք 68
Աստվածամա՜ր 69
Անձրև (Համբույրն անձրևին կը թրջե շափշափ) 70
Առնչություն 71
Ջյունի ցնծություն 72
Մեռելոց 72
Երկու սրինգ 73
Անանուն 73
Իրիկնային 74
Այգային 74

Հովվերգություն մը

Գարնան Հյուղը 75
Հյուղին Գարունը 75
Երգը 76
Մրուրը 77
Հյուղին Աշունը 78

Ըլլայի՜, ըլլայի՜

Իրիկունը (Սա իրիկունն ըլլայի ես) 79
Հովը (Ալիքներուն վրա ոստոստող հովն ըլլայի) 80
Հյուղը 80
Բաղձանք 82
Հովը (Գատուհանքս մատնահարեց ու անցավ,) 83

Տերևները կըսեին 84
Կերթա արևն իր զատիկին... 85
Իրիկվան մեջ խորին... 86
Իրիկվան իղձ 87
Իրիկունս (Իրիկունս է բարի՜, բարի՜, ու լիաձեռն ու հոտեան,) 88
Լուսնակ քուրիկիս 88
Ի՜նչ արբեցութեամբ... 91

ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Երգը (Լուսինն հայլվուն մեջ առվակին հեզասահ) 93
Մութին տակ (Սոսկում) 94
Իրիկվան դեմ 95
Հուշապսակ 95

Արեամարեանք

Փոշին 96
Ծաղկե քառյակ 96
Մերժում 97
Դեղին վարդեր (Դեղին վարդեր մայիսի) 98
Հիշատակ (Սիրերգ) (Մութ ըստվերներ, ծավի լույսեր ցիրուցան՝) 98
Տղու մը մահը 99
Բաժնված սիրտեր 100
Պետրոս Դուրյան 101
Սիրո ուղին 102
Աշնան ծով 102
Հիշատակդ 103
Աչքերդ 103
Աշնան ծաղիկներ 104
Մշուշին մեջեն 105
Քուն 105
Եկո՜ւր (Սիրերգ) 107
Մահը (Մանուկները կը խոսակցին) 108
Ցայգերգ 109
Երազ օրեր (Քանթիլեն) 109
Սպասում 110

Իրիկունը (Ածուներուն մեջ հիրերուն քընքույշ) 111
Ա՛ն իմ սի՜բտս է... 111
Աղերսանք 113
Սիրաձայն հծծյուններ 114
Տեսիլ 115
Հոգեհանգիստ 116
Կաղը 117
Խուլը 118
Համրը 118
Առտուն 119
Թղթիկը 119
Տո՜ւր ինձի, Տե՜ր... 121
Մանիշակ ու մամուռ 123
«Սենպոլիզմ»ը 124
Սիրերգ (Ձյունին վրայեն կերթաս, ա՜ռև ձյունածաղիկ,) 127
Միտք ու բնություն 128
Իրիկնավերջ 129
Սիրերգ (Երբ մը մեկնիմ ես քու քովեդ,) 129
Խունկ ու արցունք 130
Տվայտանք 130
Խենթե՜ր 131
Երգ (Քո՜ւյր, մոտեցի՜ր կըրակին,) 133

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

Ցայգային 135
Ցայգանվագ 136
Հատվածիկներ 137
Ջրին ծառը 139
Որթին տերևը 141
Աշներգ 142
Տկճորին երգը (Արձակ բանաստեղծություն) 144
Առտուն 146
Մեծմայրիկը 147
Այս իրիկուն... (Արձակ բանաստեղծություն) 152
Ձեռքերը 154

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Եղիշե եպիսկ. Դուրյան 157
Գ. Զոհրապ 169
Ինքնադատության փորձ մը «Միաձան»ին առիթով 165
Անտիպ բանաստեղծ մը 175
Քննադատությունը 184
Նարեկացիին հետ 191
Հետամնաց բարեկենդան 196
Աղեղ ու կապարճ 202

ՆԱՄԱԿՆԵՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նաանգ 212
Ցյունին տակ (ճամբու պատմվածք) 212
Պիմի (Կապիկի մը պատմությունը) 220
Սիրո թաղումը 225
Հոլանդական օրոր 225
Փոքրիկ կապույտ տղան 226
Երկարաձիգ խավային հրկիրը 227
Դատաստանատունը 228
Իմաստություն սովորեցնողը 229

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

Երկեր

Библиотека армянской классики
МИСАК МЕЦАРЕНЦ
Сочинение
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1986

Խմբագիր՝ Ա. Ս. Քիշոյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Յու. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ե. Մամիկոնյան

ИБ 5148

Հանձնված է շարվածքի 11.06.86 թ.։ Ստորագրված է տպագրության 31.07.86 թ.։ Ֆորմատ՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 14,88 պայմ. տպ. մամ., 15,22 պայմ. ներկ. թերթ., 11,8 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51 000։ Պատվեր՝ 403։ Գինը՝ 1 ռ. 30 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.